

A. or 2237

Moses.

ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՏՈՀՄԻՆ ՅԱԲԵԹԵԱՆ

Յօրինեալ 'ի Մովսիսէ Խորենացւոյ Յեռամեծ Վարդապետէ, և Յոգ-նեբախտ Քերթողահօրէ. 'Ի խնդրոյ Պայազատապետին Սա-հակայ Բագրատունւոյ:

Տպագրեցեալ երկրորդումն Սարգսի Վար-դապետի և Արքեպիսկոպոսի Կոստանդ-նուպօլսեցւոյ: Ընդ խնդրոյ Յօհաննէս Չէլէպւոյն Սեղբոսեան. առ 'ի լի-նել յիշատակ հօրն անուան' Հովսէփենց Մահտեսի Յարութեան Գերապատուին Իւր խանին 'ի Քրիստոս հանգուցելոյ:

'Ի Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի. Տն Մինասայ Ակնեցւոյ' Հայոց Կաթողիկոսի:

Յամի Տն. 1752. 'ի Մայիսի 12:



'Ի ՎԵՆԵՏԻԿ.

'Ի Տպարանի Անտոնի Պորթօլի.

Հրամանաւ Մեծաւորաց:



Սեռէն Ջերնաղ՝ Տոկեն Ընչեղ.
Արեամբ Անդէն, Ռամամբ Հրեղ։

Առ ընթերցօղս Բարեմիտս :

Խօսս աւանդեն լեալ Սոկրատայ, և Սենեքայի առ ու_սումնասիրական աշակերտս գոլ. Թէ պարտ է իմաստասիրականաց ե_ղելոցն պարապել նոսա յանցելոց պատմագը_րութեանց վերծանութիւն առ ՚ի հաստատութեանն լրագէս : Վ՚մ զի՝ եթէ ուսանիցեք և յի_շատակեք վաղնջականաց իրաց, և իրա_կութեանց նոր յիշողականութեան նոցին տպաւորիցին, բայց ՚ի մէջ բանագէտս գործելոյ, ներգործէ նաև ՚ի նմ զմար թացումն կանոնաւորելոյ բարոյական_նաբար զկեանս, և ճողոպրելոյ զեն_քեանս ՚ի ներհակ դիպուածոց վերա_պատահեցելոց . քանզի յանցելոց առեն փէսակաւորել զիտունք սպասոնի ստոն_ճէոց խորհրդոց : Ուստի զմեծէն միայն պատմաբանն զԱյէքսանդրու . Թէ ո՛ր յօժարամիտ ընկալնոյր նա զխորհուրդ յանձնեցանէ, որք վաղեմնագունից էին պատմութեանց զխօսակք, քան ՚ի ճռտ_մաբան Փիլոսոփայից՝ որք էին զանա_զան խմաստից զաակք : Քանզի թէև զայերձնաշուէքս արգելանաւորեցան ՚ի հը_նութն զփառս զերահամբաւ զօրակա_նից՝ յաղթութք ՚ի Կորավամիս հանճարու

նակաց, որք զերևելի գործ ինչ զօրե
ցին հաստել մինչ կեինն 'ի կենի յայս_
միկ: Բայց և ո՛չ սակաւ ներբողենից
համարժանք գտանին և ըստ իմ վարկման՝
նաև այնք ընաւք Քաջաջանք, որք ջա
նացին գերազանց ոճիւ իւր մատենա_
գրել զանցս վաղեմնականս ճշգրտա_
պէս, զորս եթէ չգրէցէին, անհետա
ցեալք լինէին ամենևին հնութեան բազ_
մանցից ժամանակաց՝ ոպ զայլ անթիւ
չգրեցեալս: Եւ՛ ստուգուտ է, որ քա
ջիմաստ Հայրն մեր Մովսէս Խորե_
նացի, որոյ և Պատմագիրն է. 'ի Գրակն
2. Առաջնոյ հատորին, հակեցուցա_
նէ զքան իւր 'ի պարսաւութեան իմաստա
սեաց բարուց մերայնոց, և 'ի բարե_
բանութիւն Քաղդէացւոց, Հելլենաց_
ւոց, Ասորւոց, և Եգիպտացւոց՝ մինչ
ասէ: Արդարև գովութեան արժանի այնք
'ի Թագաւորաց էցեն, որք գրով և պատ_
մութեամբ զիւրեանցն կարգեցին հաստատել
զժամանակս, և զգործս իմաստութեան, և
զքաջութիւն խորախաճնէր արքայնացուցին 'ի
վէպս և 'ի պատմութիւնս. և այլն:
Ես՛ մեծաւ իրաւամբ համարիմ զայս
ասել նաև. վասն զի եթէ հեղգացեալք
լինէին նաև սոքա հանգոյն մերայնոց՝
արձանագրել 'ի մատենս զանթիւ մե_
ծագործութիւնս իւրեանց, զոր իրակե_
ցին, զայնքան երջանկութիւնս՝ զոր վայե
լեցին, և զտարաբախտ ձախորդութիւնս՝

զոր երբեմն կրեցին․ արդարև չէր հնար մեզ գիտել զիր ինչ յայնքան նշանաւոր գործոց, որովհետև ՚ի խորս ունայնութեան սուղեալք լինէին աննշմարաբար իբր զչեղեալս երբէք։ Ո՞ զի՝ այնքան յաղթանակմունք, հնարագործութիւնք, և հանդիսավեհութիւնք Մակեդոնացւոյն Աղեքսանդրու՝ ո՞ւր արդեօք եղեէին, եթէ դանդաղէր վիպագրել Կոյնթիոս պատմիչն իւր զայնցանէ։ Մի՞ թէ կարելի իցէր յիշատակել Յունաց, Լատինացւոց, Պարսից, և այլոց՝ բաց ՚ի մէնջ, այնքան հազարաւոր հատորիւք Պատմագրութեանց, եթէ չիցէին ՚ի զանազան դարս ծաղկեալք բազմազան պատմաբանք հեղինակաւորք։ Ե՞ւ եթէ չէր ծնեալ յաշխարհի Յովսեփոս Եբրայեցին, ո՛ կշխեր ասել զստոյգ իմն զհնութեանցն հրէից, նաև զթշուառութեանց նոցին Տիտոսի և Վեսպիանոսին կրակեցեալ։ Ե՞ւ ՚ի վեր քան զմնաւս, եթէ չքահեղձ իչեր լեալ ՚ի խաղն Նեղոսի կայսրաաւանսիլն Մովսէս, ո՞վ էր այն՝ որ ճառէր մեզ՝ յոչնչէ լեալ զստեղծումն աշխարհի միով ակնարկութեամբ Ածային կամաց. նաև զպատրիլն Նախկին մարդոյն ՚ի սաղնյէ, զԱրտաքսիլն ՚ի դրախտէն, ըզմահն Աբելի, զվերացումն Ենովքայ, զշինումն Տապանին, զյորդումն Ջրհեղեղին, զբաժանումն Լեզուաց, և զայլ

այսպիսիս բաղձումս ։ Ե՞րբ հանկիմ յառա կատար եւս 'ի խօսել առ մերայինս . ո՛ թերեւ կարէր գիտել 'ի մէնջ մատենաւոր պարագայիւք՝ զուստն, եւ զզիարդն կացութեան Արփիաւորչին հօգւոյ մերոց , եւ Հօրն հաւատոց Սրբոյն Գրիգորի , եթէ զինչ առնուցոյր զաշխատասանօք ճշմարտապատումն Ագաթանգեղոս ։ Սոյնգունակ, վարկեմ թէ հաճրանայրաք մեք 'ի պատասխանել հարցողաց այլոց՝ լինել Ազգի մեր յառաջացեալ 'ի Յաբեթական գաւառաց , 'ի Թորգոմական սերնդոց , 'ի Հայկածնունդ տոհմից , եւ 'ի յԱրամեան շառաւղաց ։ Նաեւ ունել զԿարգ պատկազարդ թագաւորաց , զԳուսառ նշանաւոր , զԼեզու հնագոյն , զԱրիութիւն կարովի , եւ զՀամբաւ պայծառափայլ , եթէ չաղաչեցեր Բարձրագունից գովութեանց արժանաւոր Սահակ Բագրատունի իշխանն մեր՝ առ Եռամեծն Մովսէս Խորենացի՝ զայսցանէ ընաւից վիպաբանել մի ըստ միոջէ ։ Ե՞րբ այսքանեօք առաբերեցելովք բանիւք՝ ցուցանել կամիմ բանաւէր անձանց զօգտակարութիւն Պատմագրական մատենից եւ արձանագրութեանց անցից վաղնջականաց , 'ի ձեռն որոց վերստեղծանին չքացեալ ներգործութիւնք , կենդանանան մահացեալ վէպք , սաղարթանան խամրացեալ յիշատակք , ներկայանան անցեալ ժամանակք , պայ

ծա

ծառայեան ընթերցասիրաց միոջ, և
ծնանիցին զանազան օգտակարութիւնք
Եւ՛ ստուգուստ է, որ տակաւին անգա
գամ շարադրիլ ուսանելիք 'ի մէջ այ-
լոց ազգաց զմեծամեծ հատորս պէտ-
պիտեաց պատմութեանց նոր 'ի նորոյ
թէ և ունիցին զհազարաւորս : Եւ այս
այնքան յաճախ, մինչ զի ոմն գիտողաց
քաղաքայա է՝ սպառեալ զպատմել ի
նքութիւ իւրայնոցն, գրեն նաև տարա
ծաւալ զգազմարդկին գործոց և դիպ-
ւածոց այլոց գաւառաց, և ազգաց
աշխարհի : Ըստ որում և մի ոմն յայս
պիտեաց ընտիր հեղինակաց մնէժաց-
ւոց, որ արդէն աշխատասիրէ 'ի մատե
նագրել զկեանքն հատորս լայնատարած
պատմութեց, եցոյց ինձ զոմանս մե
ծամեծ Ս՚տանեանս հնագունից պատմա
գրութեց 'ի Լատին լեզու շարադրեալ,
'ի յորս գրեալք կային մի մեր սքանչա
նալի պատմաբանութիւնք ոմանք, զորս ոչ
երբէք լուեալ էր իմ յումեքէ, և ոչ ևս
ընթերցեալ 'ի գիրս յայսքան ժամանակ :
Բայց գիտեմ իսկ ամենևին 'ի զուր աշ
խատել ինձ 'ի գրել զայսոսիկ. որովհե
ւև գիտակ եմ գտանել արդէն յԱզգի
մերում աւելի քան զքսան Պատմագիրս :
Եւ չէ բնաւին խայթ ինչ 'ի մտաց, կամ յայ
լոց շարադրեցեալ ընկեն նոցին, և կամ ըն
թեր, և ոչ ընթեր գտանիցին. այլ ցաւիմ
միայն առ այս, զի զերկս միայն ստա

նեմ յայնքանեաց տպագրեցեալ գոլ մինչև ցայժմ. իսկ զմնացելոցն կարեմ ասել՝ ոչ՛ և տեսեալ եմ բազմիցս, թաղեալք լինիլ՝ ի խորշս գրադարանց վանորէից՝ ի մէջ փոշեաց ։ Եւ՛ պատճառն ոչ՛ յայտ է բանագիտաց, է սեփհական ախտն անուսումնասիրութեան մերոյ, որ ոչ թոյլատրէ մեզ փորձառել զքաղցրագոյն ճաշակն պատմագրական մատենից, ոչ՛ նաև այլոց գրեանց ։ Եւ՛ գիտեմ ևս հաւաստապէս, զի թէպէտ յԱզգէ մերումէ ոչ պակասեն միշտ ուսումնական և գիտուն անձինք եկեղեցականաց՝ և աշխարհականաց, որոց պատկան էր պարապիլ ըստ կարեաց յայսպիսի գործ ինչ, մինչ ճանաչեմ ունիլ այժմ Ազգի մերոյ՝ զպակասուի պէսպիսեանց պիտանաւոր գրեանց ։ Բայց սքանչանամ յոյժ, ոչ գիտելով թէ յոր մէ ոգւոյ թելադրին ՚ի բաց թողուլ զարդիւնական աշխատասիրութիւն յառաջ ածելոյ զօգտաւէտ գրեանս, յորոց օգտին բազումք, և պայծառանայ բոլոր Ազգ մեր. և բաղձան չարչարել զինքեանս ՚ի շարագրել միայն զգրեանս վիճաբանութեան և կռուոյ, իբր թէ մինչև ցայս վայր գրեցեալքն յոմանց՝ չիցէին բաւական՝ ՚ի լինել լուցիկ ատելութեան և երկպառակութեան ։ Խղճեմին ասացեալ գոլ ընթեռնումք բարառնա պէսցծառս, որք խնդրէին վնին օծա

նել Թագաւոր ինքեանց. (Դատ. 9.11:)
Զի՞նչ թողեալ զքաղցրութիւն իմ, և զբերս բարութեան իմոյ, և երթայցեմ իշխան լինել փայտից: Այնպէս ուրեմն, զիա՞րդ է և մեզ ախորժելի իմ, 'ի բաց լքել եթէ կարեմք զշարագրութիւն քաղցրագունից գրեանց, յորս փառաւորի ամ՝ և հեշտանան մարդիկք, և երթայցեմք աշխատիլ առ 'ի լինիլ հեղինակ կուռաքանութեանց, որովք ոչինչ օգտեցան, որք այնպէսն զընացին. Վա՜յ զի՝ ո՛ կարէ արդեօք յազգի մերում ցուցանել ումեք՝ արդէն շարադրեալ զոլ բուն իւր լեզուաւ մերով, և յատուկ 'ի մերոց հեղինակայ՝ զԱծաբանական գրեանս լիակատար, զՓիլիսոփայական մատեանս նրբամտու, և զՄեկնաբանութեն հատորս մի գրոց լայնատարր: Ո՛ կարէ թերեւս հաւատել՝ լինիլ նաև 'ի մեզ, որպ և ենն յայլ ազգ Քրիստոնէայս՝ անհամար գրեանք յոգնազանից մակացութեանց, և հնանալեաց գիտութեանց, և ամ կերպ աուեստից, խրատուց, կրթութեանց, բարոյականութեանց, աղօթից, պատմագրութեանց, և այլոց նիւթոց, զորոց անուանս միայն 'ի ցուցակի գրել՝ վարկեմ թէ ճաշոցն հանդերձ յայսմաւուրաւ մերով ոչ բաւականանայ: Ընդ է՞ր է մեզ ուրեմն ոչ երկնաւորել յանդգնս այսպիսեաց՝ առնեցելովքն 'ի մեզ քանքարօք, և մանաւանդ 'ի փոյշ զօշաքա_

ղութեն հեղձուցանել զանբանանցեալսն
'ի մեզ զբան Տն. և որ վասնթարա-
գոյն է՝ զերկասիրօղսն ոչ գիտեմ որ-
պիսի Ամենասաստուտ բարբառանօք թշնա
մանել, և վատաբանել:

Այո՞ լաւագոյն համարիմ թողուլ զայս
պիսի զառանցական բաջաղմունս ս-
մանց՝ յուղիղ ենթադասութեն շրջա-
հայեցից, առ 'ի կշռողապես մտածել
զմ չարալոյ այժմ ընթերցասիրացդ ըզ
ձանձրոյթ: Եւ՛ դառնամ ծանուցանել
խոսն ինչ զտպագրութէ Պատմագրու
թեանս, որոյ ներկայ տպագրութիւն եղև
աշխատութբ անարժանութե մերոյ,
վմ խնդրոյ և աղաչանաց Ջենազապարմ
Յօհաննէս Չելէպւոյն Մեղբսսեան: Որ
յաղագս մեծի սիրոյն, զոր ունէր, և
ունի առ կայքն առ մեծապատիւ Սոհաղ
ողոյն հօր. ցմ առ հանգուցեալ Հո-
վուե՛նց Մահտեսի Յարութե Բարե-
պաշտօն Իշխանն, կամեցաւ նո՛րոգել և-
արձանագրել զգիրքս այս 'ի ձեռն որ
պագրել տալոյ, իբր արձան սիրոյ բա
րեհամբաւ անուանն որոյ. զի թէ նոյն
քնքն հանգուցեալ Հովուե՛նց Մահ-
տեսի Յարութեն իցէր տպագրել տու-
ողն: Բայց վայելչապէս պատահեցաւ
այսպէս տնօրինելն յոյ. զի ով յայն-
ժամ անուանք Սահակոյ Բագրատու-
նւոյ Բարձրապատիւ Իշխանի Հայոց
շարագրեցաւ սորա 'ի Մաւսիսե խո

րե

րենացւոյ, որ յայտ է 'ի յառաջաբանու-
թեն նորին: Սոյնդունակ և այժմ տ-
պագրեցաւ յինէն անուամբ վերոգրե-
ցեալ Գերապատիւ իշխանին հանգու-
ցելոյ 'ի Քրիստոս. զհոգի որոյ Տէր
լուսաւորեսցէ, և Շքեղազարդ որդ-
ւոց նորին՝ զերջանկափառ կեանս պար-
գևեսցէ:

Արդարակէս յայտ լիցի նաև այս, զի
կամեցաք 'ի միասին տպել և զհամա-
ռօտ Աշխարհագրոյն՝ արարեալ Նոյնոյ
Երանելւոյ Հօր մերոյ Մովսիսի Խո-
րենացւոյ. քանզի՝ միականի լինիլ ա-
սեն պատմագրութիւնքն՝ թարց ժամանա-
կագրութեան և աշխարհագրութեան: Եւ
յաղագս չունելոյ մեր աստ զձեռագիր
դաղափար, միայն 'ի Ցամօթէլօրամ տ-
պագրեցելոյն օրինակեցաք. և ոչ իշխե-
ցաք նաև 'ի բծախնդրացն ահէ՝ փոխել
զոմանս նշանաւոր անուանս, զորս 'ի
ձեռագրաց ուղղագրեալ տեսաք 'ի տ-
պագրեցեալն Ցիննէյլնէայ: Այլ ե-
դաք զայնս ուրոյն, 'ի վերջն մերոյ տպա-
գրեցելոյն. Թուագրովք համանշանել
զերեսս, և զտողս. և նոյն գրով ևս ցու-
ցեալ զորքագրեցեալ գիրն, բառն, և
բանն, առ 'ի դիւրաւ ծանուցիլ յընթեր-
ցասիրաց: Եւ որքան առ սխալանս
տպագրութեան, անմեղադիր առնել
զմեզ աղաչեմ. զի սակս դոլոյն իմ
միայնակ, վերիպէլին յաչաց՝ թէև ըզ-

գու

պաշտանեայք, որպէս ասացեալ եմ և յայլ գրեանս տպագրեցեալ յինէն ։ Եւ ոչ կամեցայք բառնալ նաև զբազմութիւն աւելորդ բծանշանից, որք եղեալք էին 'ի վերայ բառից բազմաց, նոյնպէս զստորակէտս, և զմիջակէտս, և մանաւանդ 'ի բազում ուրեք զԳլխագիրս, վասն վերոյիշեցելոյ դիտման ։ Եւ որքան առ թիւն ծանիցէ բանասէրըն թերցօղն . զի և մեզ բարւոք տեսանեցաւ սակաւաւոր թուով տպագրել, ըստ որում և այսպէս լինիլ պատահել էր նախկին տպագրեցելոյն 'ի մեծէ Վանանդեցւոյ ։ Եւ զայս արարեալ մեր 'ի փառս Աստուծոյ, և 'ի յօգուտ Ազգի մերոյ .

որոյ միշտ մնամ պատրաստական ծառայ

Սարգիս Վարդապետ Կոստանդնուպոլսեցի . և Արքեպիսկոպոս Կեսարիոյ Ձծէ ։



Մովսէս Խորենացի Իսահակայ Բագրատունւոյ՝ խնդալ:




ԶԱՆՍՊԱՌ ԽԱղացմունս Ա՟ծայնոցն 'ի քեզ շնորհացն, և զանդուլ հոգւոյն 'ի վ՟ր քոյ իմացուածոցդ զշարժմունս՝ ծանեայ 'ի ձեռն գրեցելոց խնդրոյս, առաջի քան զմարմնոյդ, զհոգւոյդ ընկալեալ զծանօթութի՟. որ և սիրելի իմոց իսկ ախորժացս է, առաւել ևս սովորութեցս: Վ՟ն որոյ, և ոչ միայն գովել արժան է զքեզ. այլ և 'ի վ՟ր քո աղօթել՝ առ 'ի լինիլ քեզ միշտ այսպիսի: Զի եթէ վ՟ն բանին. Ս՟եք (ո՟պ ասի՝) Պատկեր Ա՟Յ: Եւ դարձեալ՝ առաքինութի՟ բանականին, է խոհականութի՟, և քո յայսոսիկ անհատ ցանկութի՟. ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ զխոհականութեդ քո՝ վառ, և բորբոք պահելով զկայծակն, զարդարես զբանն, որով մնաս առ 'ի լինիլն

պատկեր . 'ի ձեռն որոյ և զայսորիկ
զՍկզբնատիպն ասխս ուրախացուցա-
նել. գեղեցիկ, և չափաւոր մոլութի
յայսոսիկ մոլեալ և զակատեալ: Սո-
րով տեսանեմք և զայս . զի եթէ ,
որք յառաջ քան զմեզ՝ և կամ առ մեօք
եղեն Հարուստք , և իշխանք աշխար-
հիս Հայոց , ո՛չ ընդ ձեռամբ անկե-
լոց իւրեանց արդեօք գտեցելոց իմաստ
նոց , զայսպիսեացս հրամայեցին կար-
գել զյիշատակս բանից , և ո՛չ յարտա
քուստ ուստեք այսոցիկ 'ի ներքս ա-
ծել խորհեցան , զօժանդակութիւնս
իմաստից , և քեզ այսպիսի այժմ ե-
ղեալ ծանեաք : Այս յայտ է ու-
րեմն՝ թէ ամենեցուն քան զքեզ նա-
խադունիցն ճանաչիս վեհագոյն , և
բարձրագունից արժանաւոր գովու-
թեց , և յայսպիսիս պատկանաւոր դը
նիլ յարձանագրութիւս բանից : Յա-
ղագս որոյ , հեշտաբար ընկալեալ ըզ
քո խնդիրդ՝ աշխատասիրեցայց ածել
'ի կատարումն , յանմահ 'ի յիշատակ
թողուլ զայս քեզ . և որ զկնի քոյ-
ինքն են գալոց ազգք : Զի և ազգի ես
նախնականի , և քաջ՝ և արգասաւոր ,
ո՛չ միայն 'ի բանս և 'ի պիտանաւոր խո
հականութիւս . այլ և 'ի մեծամեծս և
'ի բազում գործս արժանափառս՝ զորս
յիշատակեսցուք 'ի կարգի պատմու-
թեան , յորժամ զորդի 'ի հօրէ ծնըն-

դա

գաբանելով, ազգաբանիցեմք զբովան դակն ։ Իսկ զՀայաստանեայցս նախարարութիւն զանձնեցուն զո՛ւսոն ․ և ըզ զե՛որդն՝ յայտնելով համառօտ, որպէս հաւաստի ․ ՚ի Յունականս ոմանս կայ պատմութիւնս ։




Zucchi



ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Գլուխ Ա.

Թէ՝ ընդէ՞ր վասն ոչ է 'ի Քաղդէացւոց՝ և յԱսորեստանեայց մատենից, ցանկագոյն էն մեր իրք. և 'ի Յունականէն նա մեցաք մեք ցուցանել:



ԵՒ ԸՆԴ ԱՅՍ մի՛ ոք Զարմասցի, եթէ բազում ազգաց լեալ Մատենագիրք, որ՛ ամենեցուն է յայտնի, մանաւանդ Պարսից, և Քաղդէացւոց. յորս առաւել ազգիս մերոյ գտանին բազում ինչ՝ եբաց յիշատակք. մեք զՅունացն միայն յիշեցաք զՊատմագիրս, և անդուստ

զյայտարարութիւն մերոյ աշխարհագրու-
թեան՝ խոստացաք յանդիման կացու-
ցանել։ Քանզի, ո՛չ Թագաւորք Յու-
նաց միայն, ոչ աշխարհակալութիւն.
այլ և որ ինչ իմաստութեանն լինին՝ փիլիսոփ-
յանձինս կալան, առանձինն Յունաց՝ յետ
զառաւելս իւրեանց յայտնագործեալ էին։
Ոչ և Պտղոմէականն, որ և Եգիպտոսի ա-
ւերին, դէտ աշխարհաց՝ զամ ազգաց ըղ
Մատեանս և զդէտս՝ ՚ի Յոյն լեզու
փոխարկեալ։ Բայց մի՛ որք աստանօր՝
անուսումն զմեզ համարեալ քամբասի-
ցէ՝ իբր զանհմարթս ոմանս և զողդէտս՝
ոչ թէ Եգիպտացւոց լեալ Թագա-
ւոր. մեք այժմ զնա Յունաց գրեցաք։
Քանզի նուաճեալ նր և զՅոյնս՝ ընդ
իւրով ձեռամբ՝ անուանեցաւ Աղեք-
սանդրի և Յունաց Թագաւոր. ոչ և
ո՛չ մի զօք ՚ի Պտղոմեանցն. կամ յայ
լոցն տիրելոյ Եգիպտացւոցն, անուա-
նեցաւ օք երբեք։ որ և մեր առաւել
Յունաստէր քաջս ունելոյ՝ ՚ի Յոյն լե-
զու՝ զիւր աշխատութիւն ժողովեաց։
Է և այլ քաղաքում այսպիսի ինչ պատ-
ճառ՝ վասն ասելոյն մեր զնա Յունաց
Թագաւոր։ այլ մեր համառօտելոյ մեզ
զճառս՝ բաւական լիցի ասացեալս մեր
նոր։ Այլ և քաղաքում Արք անուանեալք՝
և իմաստութեան պարապեալք ՚ի Յու-
նաց աշխարհէն հոգացան, ո՛չ միայն
զգիր Գիրճանաց այլոց ազգաց Թագա

ւորաց՝ և զՄեհենից յեղուլ 'ի Յոյն
քան. ոչ զատանեմք զայն, որ և զԲե_
րիա ամն յայս յորդորեաց. Այր փքաղ
դեպքի՝ և վարժ ամս խստութ՟ք: Այլ
և զմեծամեծս՝ և զզամանակաւոյ արժա
նաւորս յարուճեայից. և ուրեք ուրեք
զամե՟ աշխատութ՟. Հաւաքեւ փոխեցին
'ի Յոյն լեզու: ոչ, զայս՝ առ քէ: և ըզ՝
զայ, և ըզ՝ թոյ, առ փիւր: և ըզ՝ կենն,
առ եչ: և ըզ՝ շայ, առ սէ: (Այոյիծն,
Այեֆ՝ քաղդեացւոց՝ առ խիֆ՝ Յունաց:
Ձէ՝ և Թէ՝ քաղդեացւոց՝ առ փօյ՝ Յու_
նաց. Ղայփ՝ քաղդեացւոց՝ առ փոփր՝ Է
Յունաց. Շին՝ քաղդեացւոց՝ առ Սիգ_
մա՝ Յունաց:) Եւ ժողովեալ զպայսոսիկ
տրամեց՝ զորոյ և մեք զանուանեալն Հա_
ւատոյ զիտեմք նշանակեցին 'ի փառս
Հեբրայեցւոյ աշխարհին: Եւ զոմեմեք
եւ՝ ոչ խմաստասիրեցեալքն յազգա_
ջանիքն և խմաստութեն՝ առ 'ի յայլոցն
լինելոյ զատակք, առաւել և՝ որք լի_
կալեան՝ և պատուեցին զայսպիսի Գի_
տըս խմաստից: Վ՟ որոյ՝ և զըոլոր իսկ
զՅոյնս, ոչ զանեղակմ, Մայր՝ կամ
Դայեակ առեալ խմաստից. և վ՟ Յու_
նացն զըստ.ցանսանս՝ զակնարկութե մե
րոց ողխայիցս առնելոյ՝ քաւական է
այսչափ:

Գլուխ 2.

Յաղագս անիմաստասէր բարուց. Առաջնոյն մերոց Թագաւորաց՝ և իշխանաց։



Այժմ և ո՛չ զանիմաստասէր բարս՝ Առաջնոցն մերոց Նախնեաց, առանց յիշատակի բամբաստանաց թողուլ, այլ և աստէն իսկ 'յսկզբան մերոյ գործառնութեան, զվասն նո̃ կշտամբութեան յարմարել զբանս։ Զի թէ՝ արդարև գովութեան արժանի այնք 'ի Թագաւորաց իցեն. որք գրով և պատմութե̃՝ զիւրեանցն կարգեցին հաստատել ըզ ժամանակս, և զգործս իմաստութեան, և զքաջութիւն իւրաքանչիւր՝ արձանացուցին, 'ի վէպս և 'ի պատմութիւնս։ Ըստ նոցանէ, և պարապեալքն այսպիսեաց ճգնութեանց. Դիւանագիրք մատենից. ներքողականաց 'ի մէնջ արժանի եղեն ասից։ 'Ի ձեռն որոց, և մեր ընթեռնուլն՝ զառ'ի նոցանէ շարածս բանից, ըստ աշխարհօրէն կարգաց, իմաստնանալ ասեմք, և քաղաքականս ուսանիլ կարգս։ յորժամ զայսպիսիս ընթերցասիրեմք իմաստութեան ճառս և զրուցատրութիւնս, որք են Քաղդէացւոց, և Հելլենացւոց, Ասորեստանեայց՝ և Եգիպտացւոց։ Առ այսոքիւք, և փափագիցեմք ևս արդեօք՝

իմաստութեան արանցն այնոցիկ, որք զայսպիսի փոյթ յանձին կալան: Ապա ուրեմն անհնեցուն մեզ յայտնի է՝ Թագաւորացն մերոց, և այլոց Առաջնոց, առ՚ի յիմաստն աղամարութենի, և անկատարութեն ոգւոյն բանականի: Զի թէ պէտ, և եմք ածու փոքր. և թուով յոյժ՝ ընդ փոքու սահմանեալ՝ և զօրութե՛ն ակար, և ընդ այլով՝ յոլով անգամ նուաճեալ Թագաւորութե՛ն: Սակայն՝ բազում գործք արութեան գտանին գործեալ և ՚ի մերում աշխարհիս. և արժանի գործոյ յիշատակի. զորոց և ո՛չ մի ոք ՚ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել: Արդ այնոքիկ՝ որք և ո՛չ անձանց խորհեցան բարի առնել՝ և անուն յիշատակի աշխարհի թողուլ. զի՞արդեօք և մեզադրութեն մեր՝ այնպիսեացն ՚ի ձայն պատահիցէ. զեւս մեծագոյնս ՚ի նոցանէ պահանջել՝ և որ ինչ հնագոյն քան զնա: Այլ՝ ասիցէ ոք արդեօք. զի՞ ո՛չ լինելոյ Գիր, և Դըպրութեն ՚ի ժամանակին, կամ զի՞ պէսպէս պատերազմացն, որ կուռ զմիմեանց զկնի անհեա ՚ի վերայ գային: Աղ ո՛չ արդարև՝ այսոքիւք կարծեցեալք լինին. քանզի՝ գտանին և միջոցք լեալ պատերազմացն՝ և զեր Պարսից, և Յունաց՝ որովք այժմ, գեւղից՝ և գաւառաց, և ս և իւրաքանչիւր տանց առանձնականութենց, և հանուրց հա

կառավարութեանց , և դաշանց այժմ առ մեզ գտանելն անբաւ զրուցաց մատեանք . մանաւանդ՝ որ անփոփոխական ազատութէ Պայազատութիւն ։ Այլ քեզ թուի՞ ոչ այժմ, և առ հինսն Հայաստանեայց , լեալ անտիրելութէ իմաստութէ, և երգարանաց բանաւորաց . վն որոյ , աւելորդ է մեզ , և այլ՝ յաղագս անբանից արանց՝ թուլամտաց վայրենեաց ճառել ։ Բայց է քո յոյժ զարմացեալ եմ, ընդ մտացդ ծննդականութէ . որ 'յիսկզբանց մերոց Ազգաց մինչև ցայժմուս միայն դու՝ զայսպիտոյ իրէ բուռն հարկանել . և մեզ յայս խնդրոյս առաջի արկանել՝ երկար, և շահաւոր գործով՝ զազգիս մերոյ կարգել զՊատմութէ, ճշդի՞ զԹագաւորացն և զՆախարարականացն ազգաց և տոհմից . թէ՝ ո՞վ յումմէ . և , զի՞նչ իւրաքանչիւրոք 'ի նոցանէ գործեաց . և ո՞վ ոք 'ի ցեղից որոշելոց՝ ընտանիք, և մեր ազնիւ՞ . և ո՞յք ոմանք ե՛կք ընտանացեալք , և մերազնացեալք ։ Եւ զգործս՝ և զժամանակս իւրաքանչիւր գրով դրոշմել՝ 'ի ժամանակէ անկարգ Անբարտակելին շինուածոյ՝ մինչև ցայժմ ։ Գեղեցիկ զայս քեզ համարեալ 'ի փառս՝ և անջան հաշտութէ ։ Այլ որ այսչափ միայն ասացից ։ Մի՛ թէ մատեանն մերձ կայցէ քեզ՝ ոչ ասէ Յօբ . կամ դպրութիւք քոց Հայրենեաց . որովք նմանա

գոյին արդեօք Եգիպտացւոցն Պատմագրաց. ՚ի վերուստ ՚ի քեզ իղուցանեմ անսխալ. կամ ՚ի քեն՝ և այլոց սկսեալ՝ անդր ՚ի վեր հանիցեմ, ՚ի սկիզբն ։ Բայց սակայն՝ սկսայց Թէպէտ և ջանիւք մի- այն. Թէ և շնորհակալ ոք մերոցս գը- տանիցէ լեալ աշխատութեանց ։ Եւ ըսկ- սայց յորոց և այլքն. որք յեկեղեցւոյ, և ոյք ըստ քեզ ։ Առաւելորդ համարելով զպատմաքնոցն երկրորդել՝ յաղագս ՚ի ըս- կզբանն առասպելս ։ Բայց եթէ՝ ըզ կնիքն ժամանակ ինչ արդեօք, և զարս յայտնիս. որում և Աձայինքն ՚ի ճահ գայցեն պատմութեանք բանից. մինչև ՚ի հարկէ երթեալ հասանիցեմք ՚ի Հե- թանոսականսն զրուցակարգութիւնս. սակայն և ՚ի նոցանէ, զոր ինչ հաւաս- տին կարծեմք առնուլ ։

Գլուխ 3.

Յաղագս՝ զի ոչ սոյն Արամայ. և այլոց Նահապետացն՝ գաւառնեցան Այլ. ՚ի Պատմագրաց ։

Յաղագս Արմատոյն հանուրց մարդկութեանս. կամ թէ՝ հա ճոյ ումեք թուեսցի ասել՝ ծայրին. պարտ էր մեզ սա- կաւ ինչ անցանել բանիւ. թէ ընդէ՞ր հակառակ Հոգւոյն խորհիլ անմիաբա

նեցան Այլքն 'ի Պատմագրաց ։ զԲե
րիոս ասեմ, զքաղդմավիպէն՝ և զԱբիւ
դենայ ։ կամ զնոյն ինքն զՆաւակա-
ռուցէն՝ և զայլոց Նահապետացն ։ ո՛չ
միայն վն անուանց՝ և ժամանակաց, այլ՝
վն ո՛չ սկիզբն զառ 'ի մէնջն Հաւացն
կարգելայ ազգի մարդկան ։ Քանզի ա-
սէ վն նորա Աբիւդենոս՝ հանգոյն այ
լոցն ։ այսպէս և զնա ամենախնամն Ած՛
եցոյց հովիւ, և առաջնորդ ժողովրդ-
եանն ։ Յետ որոյ՝ ասէ թագաւորեաց
Աղօրոս շարս տասն ․ որք լինին ամք ․
36000 ․ Նոյնպէս և յաղագս Նոյի՝ այ
լով անուամբ վարին՝ և ժամանակօք
անքաւուիւք ․ թէպէտ և վն ջրոյն սաստ
կութե՛ և ապականութե՛ երկրի՝ զոյգ
հոգևորացն բարբառին բանից ։ Նոյն
գունակ՝ և զթիւ՛ Նահապետացն՝ տասն
Քսիսութրեաւ հանդերձ թուէն ։ որ
ո՛չ միայն ըստ բոլորման առ 'ի յարե-
գակնէ ․ չորեք ժամանակեան ը̃ մեզ
լինելոյ տարւոյն հեռանայ յամաց մե-
րայնոցն ; մանաւանդ՝ թէ և յԱծայ-
նոցն ։ այլ՝ և ո՛չ ոմ Եգիպտացիքն ըզ
լուսնականսն հաշուին ծագմունս ․ նա
և ո՛չ զառ 'ի դիցն ոմանս ասացեալս ․
եթէ տարիս ոք վարկցի զուգեալ հա-
մեմատեն Յոյն թուոց առարկութեցա
առ 'ի հաւատալ ճշմարտութեն ․ եր-
բեմն նուաղ՝ և երբեմն սաստիկ՝ զհա
ւաքումն գումարելով ։ Արդ՝ օրէն է

մեզ

մեզ աստուածոր զկարծիս նոցա յայտնել՝
թէ զի՞նչ իւրաքանչիւրոք ՚ի նոցանէ
խորհեցան այսպէս, զայսոսիկ գրել :
Այլ վա՛ երկարութեան առաջի կայ գոր-
ծոյս, այլում տեղւոյ՝ և ժամանակի զայ-
սոսիկ թողեալ՝ համառօտեսցուք աստուա-
ծոր զբանս : Ըսկսանելով յաղագս այ-
սորիկ՝ ոչ և հաւատացեալ եմք : Ա-
դամ նախաստեղծն : Սա կեցեալ ամս,
230. ծնանի զՍէթ : Սէթ կեցեալ
ամս՝ 205. ծնանի զԵնովս : սորա եր-
կուքն յարձանագրութեցն՝ ընդդէմ եր-
կուց հանդերձելոցն : ոչ ասէ Յովսէ-
փոս. թէպէտ և ուրանան յայտ : Ե-
նովս՝ որ յառաջին յուսացաւ կոչել
զԱծ : Եւ ընդէ՞ր արդեօք այս, և կամ
վա՛ որոց պատճառանաց նախնիս՝ կո-
չեցեալ կոչեցելոյն զԱծ : և կամ, ո՛ր-
պէս՝ կոչելն իմանի : Քանզի՝ է Ադամ
ճշմարտապէս Ածաստեղծ : Եւ սա ՚ի
բերանոյ Այ առեալ ասի պատուէր :
այլ և յանցուցեալ, և թագաւորեան
եղեալ : զո՞ւր եսն՝ յԱյ. և ո՛չ յայլմէ
ումեքէ հարցանի : սապէս՝ և զվճիռ
վարկին՝ ՚ի նորին բերանոյ լսէ : Իսկ յե-
տոյ՝ և Աբէլ մերձաւոր՝ և ծանօթ
Այ լեալ Պատարագ մատուցանէ՝ և
ընկալեալ լինի : արդ՝ սոցա այսպէս
յընդունելութեն և ՚ի ծանօթութիւն
Այ լինել. է՞ր աղագաւ՝ սա առաջին
ասի կոչել զԱծ, և այս Յուսով : Արդ՝

զայլն վշտ ասրա 'ի տեսութեց 'ի հրաւէ
րեալն մեր յուղարկեացուք տեղի : Իսկ՝
որ 'ի ձեռն պատրաստն է՝ տասացուք :
Քանզի՝ 'ի պատուիրանազանցութեան
գտեալ Ադամայիմն 'ի մարդկանէ . 'ի դը
րախտէն՝ և յԱՅ , չարութե ապագա՝
ամ աստացեալ է՝ զատան արտասահմա_
նեալ : Զկնի և ընտանեգոյն ԱՅ յորդ_
ւոցն Ադամայ , 'ի հարազատէն իւրմէ
սպանանի յեղբօրէն : Յետ որոյ՝ ո՛չ
բանի իւր Ածայնոյ՝ և ո՛չ յայտնութե
իւր երկրի եղեալ . 'ի տարակուսանս ,
և յանկյաւութե ազգ. մարդկան հա_
տեցեալ լինի : այլ՝ և խնքնահաճոյ ար
դարև գործս : Յորոց մեջն սա քաջա_
յայս եղեալ՝ ուղղութե հանդերձ կո
չէ զԱԾ : Իսկ կոչելդ՝ երկնային իմա_
նի . կամ անուանեալ ամ զմտացեալ ,
կամ յօգնականութե կարդալ : Այդ՝
անուանենն երբև զմտացեալ՝ ո՛չ է 'ի
դէպ : զի ո՛չ բազմութե ամաց՝ ընդմէջ
անցեալ՝ որ 'ի մոռացումն նշ զԱծդ ա_
ծէր անուն . և կամ զնոյն իւրն՝ որոյ
անուանեն : և ո՛չ դարձել մահու՝ և թաղ
ման գեռևս ըստեղծեալն յԱՅ հա_
սեալ : Այս ուրեմն՝ յօգնականութե
կոչէ սա զԱԾ : Սա կեցեալ ամս՝ 190.
ծնանի զԿայնան : Կայնան կեցեալ
ամս՝ 170. ծնանի զՄաղաղիէլ : Մա_
ղաղիէլ կեցեալ ամս՝ 165. ծնանի զՅա
րեդ : Յարեդ կեցեալ ամս , 162. ծնա

նի

նի զԵնովք : Ենովք կեցեալ ամս ,
165. ծնանի զՄաթուսաղայ . երկե-
րեւր ամս արժանի՝ եւ Հաճոյ վարս ստա-
ցեալ, ոչ գտանէ՝ որ Հաճեցաւն , փո-
խեալ աստի 'ի միջոյ ամբարշտաց՝ զո-
րոյ զպատուհասն յետոյ Հատուսցուք :
Մաթուսաղայ կեցեալ ամս , 167. ծը-
նանի զՂամէք : Ղամէք կեցեալ ամս ,
188. ծնանի որդի՝ եւ անուանեաց զա-
նուն նորա Նոյ :

Յաղագս Նոյի :

Ա՛ռ ընդէ՞ր արդեօք զսա միայն Որդ-
ւոյ անուա՛մբ յորջորջեաց :
Իսկ՝ վա՛ այլոցն ամենեցուն պարզաբար
ասէ թէ՝ ծնաւ . զոր ընդդէմ իմն մար-
գարէանոյ Հայրն . սա՝ ասէ Հանգուս-
ցէ զմեզ 'ի գործոց . եւ 'ի տրտմութէ
ձեռաց . եւ յերկրէ՝ զոր անէծ Տր Ած :
Որ եւս՝ ո՛չ Հանգիստ , այլ ընդդէմն՝ որ
ինչ տեսանգամ 'ի վ՛ր երկրի : Ինձ թուի
Հանգուցանելն՝ դադարեցուցանելն է .
Իսկ դադարեցուցանելն՝ զամբարշտու-
թի , եւ զչարիս սատանայակմամբ մարդկան
զազրագործաց՝ դարուն երկրորդի :
Քանզի՝ գեղեցկաբար ասաց՝ թէ 'ի
գործոց մերոց , որ է յանօրէնութենց .
եւ 'ի տրտմութէ ձեռաց , որովք կատա-
րեմք զպղծութիւս : Բայց՝ եւ Հանգչին
արդարքն ընդ այսմ մարգարէութե .
ո՛չ ամենեքին . այլ կատարեալքն յա-

քինութեն ոգիք ։ յորժամ չարիք՝ ոչ հեղեղաւ ընջեալ մաքրին, իբրև առ Նոյիւ, մոլեալքն ՚ի չարիս ։ Իսկ Որդւոյ անուամբ ծածարեաց զնա Գիր, իբր զյայտնի՝ և զնշանաւոր, և արժանաւոր ժառանգ հայրենականաց առաքինութեանց ։

Գլուխ 4.

Յաղագս հաստատուն գոլոյ Ազգաբանութէ երից որդւոցն Նոյի. զԱբրահամ, և զՆինոս, և զԱրամ։ Եւ եթէ Նինոս, ոչ Բէլ, և ոչ որդի Բէլոյ.


ԵՒ այս յայտնի է ամենեցուն՝ զի դժուարահաւաք, և տաժանելի է՝ ոչ զիւտ ժամանակացն ՚ի սկզբանէ մինչև առ մեզ. առաւելևս գիւտ որդէծնութեն նախարարականաց ծննդոց՝ յերից անտի որդւոցն Նոյի. զորքան կամք լիցեն խուզել ումեք ըստ իւրաքանչիւր դարուց ։ Մանաւանդ՝ զի Աճայնոյն գրոյ զիւրսն ՚ի բաց հատեալ յինքն սեփհականն ազգ Սեմայ՝ եթէ զայլոցն թէր զարհամարհելեացն. և իւրոցն անարժանն կարգելոցն բանից ։ Զորոց մեք սկսեալ ճառեսցուք, որքան է կարողութեն, որպէս գտաք զհաւաստին

՚ի

'ի հնոց պատմութենց, մերով մասամբ ամենևինմբ անսասուտ: Իսկ դու ո՞վ ուշիմ ընթերցասէրդ՝ հայեա՛ց աստանօր ընդ համառօտութիւն կարգի՝ երից ազգացդ, մինչև ցԱբրահամ, ցՆեռնա՝ և ցԱրամ, և զարմացի՛ր: Սեմ կեցեալ ամս, 100. յետ երկուց ամաց ջրհեղեղին, ըստ Ածային բանից՝ ծնանի զԱրփաքսաթ:

ՍԵՄ:

1 Սեմ ամս 100. ծնանի զԱրփաքսաթ:
2 Արփաքսաթ ամս 135. ծնանի ըզ Կայնան:
3 Կայնան ամս 120. ծնանի զՍաղայ:
4 Սաղայ ամս 130. ծնանի զԵբեր:
5 Եբեր ամս 134. ծնանի զՓաղեկ:
6 Փաղեկ ամս 134. ծնանի զՌագաւ:
7 Ռագաւ ամս 132. ծնանի զՍերուք:
8 Սերուք ամս 130. ծնանի զՆաքովր:
9 Նաքովր ամս 179. ծնանի զԹարայ:
10 Թարայ ամս 70. ծնանի զԱբրահամ:

ՔԱՄ:

1 Քամ ծնանի զՔուշ:
2 Քուշ ծնանի զՄեստրիմ:
3 Մեստրիմ ծնանի զՆեբրովթ:

4 Ներբովթ ծնանի զԲաբ :
5 Բաբ ծնանի զԱներիս :
6 Աներիս ծնանի զԱրբէլ :
7 Արբէլ ծնանի զՔայաղ :
8 Քայաղ ծնանի զմիւս Արբէլ :
9 Արբէլ ծնանի զՆինոս :
10 Նինոս ծնանի զՆինուաս :

ՅԱԲԵԹ :

1 Յաբեթ ծնանի զԳամեր :
2 Գամեր ծնանի զԹիրաս :
3 Թիրաս ծնանի զԹորգոմ :
4 Թորգոմ ծնանի զՀայկ :
5 Հայկ ծնանի զԱրմենակ :
6 Արմենակ ծնանի զԱրամայիս :
7 Արամայիս ծնանի զԱմասիայ :
8 Ամասիայ ծնանի զԳեղամ :
9 Գեղամ ծնանի զՀարմայ :
10 Հարմայ ծնանի զԱրամ :

Որդ՝ զԿայնան չորրորդ 'ի Նոյէ՝ ամենայնք 'ի ժամանակագրացն գրեն. և 'ի Սեմայ երրորդ : Նոյնպէս և ըզ Թիրաս՝ չորրորդ 'ի Նոյէ : Իսկ Յաբեթայ՝ երրորդ : Թէպէտ՝ ըստ մերում թարգմանութեան, ո՛չ ուրեք 'ի բնագրի գտանի : Իսկ՝ զՄեսորայիմ չորրորդ 'ի Նոյէ՝ և երրորդ 'ի Քամայ, ո՛չ 'ի մերում թարգմանութեան՝ և 'ի ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանեմք : Այլ՝ այսպէս զսա կարգեալ գտաք 'ի

յՈւշմարանեն առաքինեն՝ և Ընթերցողա
սիրելի Աստուծոյ: և Հաւատարմին Թուէն
ցոյց մեզ առաջնորդն: Քանզի Մեսո-
րայիմ է՝ Մեծրայիմ. որ խմանի՝ Եգիպ-
տոս: Եւ քաղաքս 'ի ժամանակագրա-
րաց. Նեբրովթ՝ որ է Բէլ Եթովպա-
ցի զօր առեալ. Հաւանեցուցին զմեզ
որոնելոյ Հաւատոյ լինել. յաղագս ըն-
կալութեան առաջնորդին է Եգիպտոսի:
Յետ որոյ աստուածոյ և զայս: զի Թէ-
պէտ և ասէ ժամանակագրութիւն Քա-
ղդէացւոց ցՆեբրովթ՝ ոչ է ուրեք գտանելոյ
Թուականաց. և կամ Թէ առ մեզ՝ ոչ է հա-
ւատալ. այլ հաստատեալ՝ և ոչ նորին
ճշգրտեն Նեբրովթ: Իսկ մերոյն Յաբե-
Թի ամենեւին ոչ: Սակայն աւանդեալ
աղգաբանութեան Հաւատարիմ է՝ Եբե-
րացւոց ցեղիցն մնացեալ զգալով ցԱբ-
րահամ. և ցՆեբրովթ. և ցմերս Արամ: զի
Արամայն երկրորդ ... է՝ յետ Նե-
բրովթ. մանաւանդ ... փոխանակեալ. և
է ... և մի՝ որք յերկրաւորացն. քանի
զի՝ ... մեզ զայսպիսի յայտնի ... .
Հաւատարմին Աբրահամեան՝ և ասէ,
այսպէս: Նինոս Արբէլեայ: Քաղաք
Արբեղայ. Նինուէ: Բաբելոնայ՝ Բէ-
լայ: Նոյ ... և զմերոյն 'ի Հայկայ մինչ
և ցԱրամայ զեղեցիկ՝ զոր սպանեալ
... Շամիրամ. թուի այսպէս:
Արայն գեղեցիկ. Արամեայ՝ Հարմեայ,
Գեղամեայ՝ Ամասեայ՝ Արմենակայ

Արա

Արամենակեայ. որ եղև հակառակ Բե
լայ միանգամայն՝ և կենախուզ. Ե՞ւ
զայս մեզ՝ Աթիւդենոս յիւրում առաջ
նում արձանականի 'ի մանր ազգաբա-
նութեն ասէ. զոր աստ ուրեմն՝ յետոյ
ոմանք բարձին։ Այսոցիկ վկայէ և Կե
փաղիմոս. քանզի ասէ 'ի միում գլխոյն
այսպէս, մանր զամենայնսն։ յիսկզբան
մերոյ աշխատութեանս. սկսաք գրել զազ
գաբանութիւնն 'ի Դիւանացն Արքու
նի։ այլ առաք հրաման 'ի Թագաւո-
րաց. Թողուլ զաննշանից, և զխստաց
արանց 'ի հնացն զյիշատակն. և գրել
միայն՝ զքաջսն, և զիմաստունսն, և
զաշխարհօկալսն՝ նախնիս։ և մի՛ անպէտս
զժամանակս մեր ծախել՝ և զայլսն ։
Այլ՝ այս մեզ ամենեւին օտար և արտա
քոյ ճշմարտութենն. որք զՆինոս Բե
լայ ասեն որդի. կամ թէ՝ նոյն ինքն
Բէլ։ զի ո՛չ ազգաբանութի, և ո՛չ ա-
մացն ժողովուածն այսոցիկ վկայէ, բայց
թէ՝ ըստ նշանաւոր, և անուանի լինե
լոյ՝ որք պատեհ համարեալ. այսպէս կար
գեցէ զհետուին մօտաւոր։ Ե՞ւ գտաք զայ
սոսիկ արդարև Յունաց դպրութե ։
Զի Թեպէտ և Յոյնք ինքեանք՝ 'ի
Քաղդէացւոցն փոխեցին յիւրեանց լե
զուն. և Թեպէտ՝ և Քաղդէացի որք
ինքնակամ յօժարութե. և կամ, 'ի հը
րամանէ Թագաւորաց հարկեալ զայս
իրագործել. ոպ Աւիոս ոմն՝ և այլք

բա

բազումք: Սակայն՝ մեք Յունաց համարիմք՝ որպէս 'ի նոցանէ ուսեալք:

Գլուխ Ե.

Յաղագս Բէլ է ինչ՝ որ հաստատուր: Եւ է, որ օտար 'ի Մովսէսէ պատմեն Այլքն Հնախօսք: Եւ յաղագս Ողոմպիոդորոյ փիլիսոփայի անգիր զրուցացն:



Հաւաստին՝ որչափ կարացեալ 'ի բազմացն ընտրեալ բանից. կարգեցաք զծնունդս երից որդւոցն Նոյի: ցԱբրահամ. և ցՆինոս. և ցԱրամ: որում ո՛չ զոք ընդդիմանալ կարծեմ 'ի միտս ունողացն: Բայց թէ՝ զճշմարտութեան ոք խորհելով քակել զոճ. տառապելս զճշմարիտ բանս ախորժելով փութայցէ: և այսոքիկ ինքնաքանչիւր միտք ոչ կամին ուրախասցին: այլ թէ՝ շնորհակալ և մերոյս տքնութեանց՝ և ջանից լինիցիս՝ ո՜վ Ուսումնասէր դու՝ և զմեզ այսմ աշխատեցուցող. անցից սակաւ բանիւք յիշատակաց: Յաղագս որոյ՝ վերագոյնդ կարգեցաք՝ թէ ոչ առաջինքն 'ի Վիպագրացն՝ յաղագս այսորիկ համձեցան շարագրել. թէպէտ՝ և ո՛չ ունիմ այժմ ասել՝ յամբարանոցս մատենից Թագաւորացն արդեօք գը-

տեալ:

աներալ : Եղեն ըստ ապարանիցս որք կա
մեցանն խաւարչանչիւթերցն փոփոխել զան
ուանանն՝ և զգրոյցս՝ և զժամանակս . և
կամ այլ զինչ և իցէ պատճառ : Բայց
որք 'ի սկզբանն՝ երբեմն 'ի ճշմարտէն ,
և երբեմն 'ի ստէն . որք յաղագս Նա-
խատակեցծին՝ ոչ ստուգին մարդ ասե-
լով զնա ; այլ Թագաւոր . Այսպէս ա-
նուն խժակման նմա՝ և անհնչանակ կոչե-
լով՝ և ամս տասրով նմա . 36000: իսկ
Թուով Նահապետաց՝ 'ի ջրհեղեղէն յի-
շատակաւ . զոյգ՝ և Հաւասար Մով-
սիսի : Նոյնպէս և յետ ջրհեղեղին՝
երկրս կարգելով ըստ անուանեն . յա-
ւալ քան զաշտարակաշինութիւն . զկնի
նաւարկութեան Քսիսութրեայ 'ի Հայս-
տանաբերեն : իսկ անուանցն փոփոխու-
մանցն՝ և բազմաց այլոցն սանե : Բայց
նա այժմ ուրախացայց՝ Հաւա ասենելով
առաջին կայսերս ինոց քանիցն 'ի սերկեղցն
հինէ . և քան զայս արդարախօսադէ
'ի Բերոսեանն Սիբիլեայ : Յառաջ
քան զցրուումն ասէ՝ և զաշտարակաշինու
թեանն մայրն ազգի մարդկան՝ և զկնի
նաւարկութեանն Քսիսութրեայ 'ի Հայս:
Զրուանն . և Տիտանն . և Յապետոս
թէ՝ լինէին իշխանք երկրի . Որք թուին
Թուին՝ Սեմ . Քամ . և Յաբեթ ; Եւ
'ի բաժանել ազգս ասէ զնոյն տիեզերս՝
ընդ իւրեանց իշխանութիւն , հաղորդա-
ցեալ ասէ 'ի վերայ երկրագունդն : Եւ

Զրու

Զրուանն՝ զոր ասա Զրադաշտ․ Մոգ․ առաջայ Բագտրիացւոց ; որ է Մեդացւոց՝ սկիզբն և հայր աստուածոցն ասաց լինել ։ և բազում այլ ինչ զնմա նէ առասպելեաց․ զոր անտեղի է մեզ այժմ երկրորդել ։ Այդ՝ 'ի բռնանալն ամէ Զրուանայ՝ ընդդիմացան նմա, Տիտանն և Յապետոսթէ․ 'ի մարտ այս ակերպազմի ընդ նմա գրգռելով․ վս զի թագաւորեցուցանել զորդիս իւր 'ի վր ամենեցուն խորհէր, և այսպիսում իր ամն, յափշտակեաց Տիտան՝ առէ, ըզ մասն ինչ 'ի ժառանգութենէ սահմանաց Զրուանայ ։ ասաի 'ի մէջ անցեալ քոյրն նց Աստղիկ՝ համոզեալ դադա րեցուցանէ զաղմուկն ։ և յանձնառու նուն թագաւորել Զրուանայ․ բայց զաշխնս ուխտից՝ և երդմանց 'ի մէջն հաստատեն, սպանանել զամ արու՝ որ ծնանիցի Զրուանայ․ զի մի՛ աջգա 'ի վր նց թագաւորեացէ ։ Ուստի՝ և այս հզօրս 'ի Տիտանեացն 'ի վր ծննդոց կա նանց նորա կարգէին ։ Եւ սպանեալ զերկուս ամանս վս երդմանն ուխտին համաստատուն կալեալ ։ Խորհին այնուհե տև քոյրն նց Աստղիկ՝ հանդերձ կա նամբք Զրուանայ՝ հաւանեցուցանել զոմանս 'ի Տիտանեացն․ ապրեցուցանել զայլ մանկանսն՝ և յարեւմուտս երկիր յա ղագեսլ․ 'ի լեառն՝ որ անուանեալ կար դայիմ՝ Դիցաբնակ ։ Իսկ այժմ կոչի՝

Ոլիմ

Ոլիմպոս ։ Այրդ զայսոսիկ՝ թէպէտ տռամաբանելով ոք՝ թէպէտ ճշմարտութե̅ հաշուել. համարեսցի․ բայց ես՝ ոչ̅ հաւանեալ եմ, բազում ինչ ճշմարիտ է։ Քանզի՝ և որ 'ի Կիպրացւոց Կոստանդեայ եպիսկոպոս Եպիփանոս 'ի հերձուածոցն յանդիմանութե̅, յորժամ ճշմարիտ՝ և արդարադատ՝ զԱծ ձեռնարկէ ցուցանել։ Եւ՞ վա̅ ջնջելոյ որդւոցն Իլի̅, զեօթն ազգսն․ ասէ՝ այսպէս ։ եթէ արդարադատապէս Ած̅ զազգսն զայնոսիկ ջնջեաց յերեսաց որդւոցն Իլի̅ ։ զի 'ի բաժնի որդւոցն Սեմայ՝ հասեալ էր երկիր կալուածոցս այսոցիկ՝ բռնութ̅բ̅ Քամ 'ի վ̅ր եկեալ յափշտակեաց ։ Իսկ Ա̅յ իրաւունս պահեալ զերդման ուխտին վրէժ հատուցանէ ազգին Քամայ․ 'ի բաց դարձուցանելով զծառանգութիւնն Սեմայ ։ Այլ զՏիտանեան և զՌափայիմեան յիշեն Ածային գիրք ։ Բայց պարտ է մեզ զոմանց անգիր հին զրոյցս՝ որ պատմեալ եղեն վաղ ուրեմն 'ի մէջ Իմաստնոց Յունաց․ և հասին մինչև 'ի մեզ այս զրոյցք․ 'ի Գորգի՝ և 'ի Բանան անուն կոչեցելոյ․ ևս՝ և երրորդ ումն Դաւիթ․ թէպէտ և յոյժ սակաւուք երկրորդել ։ յորոց մի ոմն 'ի նոցանէ վարժեալ փիլիսոփայութ̅բ̅՝ ասէր այսպէս ։ Թէ՝ ով ծերք, յորժամ էի 'ի մէջ Յունաց զիմաստութե̅ վարժելով

դէպ եղև միում աւուրց, զի վասն աշխարհագրութեանց՝ և բաժանմանց ազգաց. 'ի մէջ արանց իմաստնոց՝ և հըմտագունից բան ծագէր. ոմանք այլազգաբար՝ և ոմանք այլաբանաբար զրոյց մատենից տային: Իսկ որ կատարելագոյնն էր 'ի նո՛ Ոլոմպիոդորոս անուն՝ այսպէս ասաց: Պատմեցից ձեզ՝ ասէ, զրոյցս անգիրս. յաւանդութէ 'ի մեզ հասեալ. զորս՝ և բազումք 'ի գեղջկաց զրուցեն մինչև ցայժմ: Մատեան լեալ զՔսիսութրեայ՝ և զորդւոց նո՛, որ այժմ ո՛չ ուրեք երևի. յորժամ ասեն կարգ լեալ բանից՝ այսպիսի: Յետ նաւելոյն Քսիսութրեայ 'ի Հայս՝ և դիպելոյ ցամաքի, գնայ՝ ասէ, մի յորդւոց նո՛ կոչեցեալն՝ Սիմ. ընդ արևմուտս հիւսիսոյ՝ դիտել զերկիրն. և դիպեալ դաշտի միում փոքու. առ երկայնանիստ միով լերամբ, գետոց ընդ մէջ նո՛ անցանելով, 'ի կողմանս Ասորեստանի. դադարէ առ գետովն երկլուսնեայ աւուրս. և անուանէ յանուն իւր զլեառն՝ Սիմ, և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ՝ ուստի եկն: Իսկ՝ 'ի կրտսերագունից որդւոցն նո՛՝ Տարբան անուն 30. ուստերօք՝ և 15. դստերօք, և նոցին արամբք՝ մեկնեալ 'ի հօրէն բնակէ անդրէն 'ի նոյն գետեզերքն. յորոյ անուն՝ և զգաւառն անուանէ՝ Տարօն: և զա

նաւն տեղւոյն ուր բնակեցաւն, կոչէ՝ Տարօնս. զի անդ՝ զառաջինն ահիզքն եդիւ բաժանեալ որդւոց նորա 'ի նմանէ: Նորին դարձեալ՝ և առ եզերբն տանմանացն՝ Բակտրիացւոցն ասէին բնակիլ սակաւ աւուրս: Մնացեալ՝ և մի ոմն անդ՝ յորդւոցն նորա. քանզի կողմանցն արևելից՝ Զրուան, զՍիմ կոչեն: և Զարուանդ զգաւառն անուանեալ անձն՝ մինչև ցայժմ: Բայց առաւել յաճախագոյն, Հինքն Արամազնեացն 'ի նուագս բամբռան, և յերգս ցցոց՝ և պարուց: զայսոսիկ ասեն յիշատակօք. և այսոցիկ զրոյցք առ ամք: և կէմ, թէ արդարև ընդալ. մեզ էք՝ ինչ փորձ: Այլ՝ մեզ գիտելոյ քեզ պետ, որ ինչ 'ի լոյ, և որ ինչ 'ի գրոյ. անցանեմ ընդ բնաւն 'ի դերս յայս. զի՛փնտրեցես զառաքեզ պարզամտութիւն փոխոցս խորհրդոցս:



Գլուխ 6.

Ցայտարարութիւն առաջաբանս՝ թէ ըստ որպէս նոյն տասցեալէ Բէլ, ըստ Աճայեն բանից՝ Նեբրովթ է.

Զ Բէլայ՝ առ որով նախնին մեր Հայկ՝ բազումք բազմութիւնս այլ և այլոյ պատմեն. բայց ես ասեմ զԿրօնոսդ անուն. և զԲէլ. Նեբրովթ լեալ: որպէս Եգիպտացիք Թունեն Հաւատար Մովսիսի: Եփեստոս, արեգակն. Կրօնոս, որ է Քամ, Քուշ՝ Նեբրովթ. Թողել ըզ Մեստրայիմ: Զի առաջին ասեն իւ_րեանց մարդ լեալ զԵփեստոս՝ և զը_ատ կերպ. և ընդէ՞ր ազ գտակ Հը_րոյ. և կամ Պրոմիթեւս. գողացեալ զուն 'ի յԱճոյն Հուր. և շնորհեալ մարդկան. որ է այլաբանութիւն. և ո՞չ բերել ասել կարգ բանիս: որում և Հարցասութեանց Եգիպտացւոց կարգ՝ և ամ ժողովուրդ 'ի Հովուացն Հարըս_տութեան մինչև ցԵփեստոս՝ վկայէ Հա_ւատար Եբրայեցւոցն լեալ որ է Յով_սեփայ ժամանակացն: մինչև ցՍեմ. Քամ. և ցՅաբեթ: Ե՞ւ այսուքիկ բա_ւական լիցին ասել այսչափ: Զի եթէ զինչ եղեալ յառաջաբանակարգութէն մինչև առ մեզ. 'ի Հասարակութեն քեզ 'ի մէջ ածել ջանացեալք պատմութիւն: Եւ այս յըղձալին քո Հասանիցեմք

զրուցաց պատմութեն։ մանաւանդ զի առաջի կայս մեր՝ երկարէ՝ գործ․ և ժամանակ մանկանացուաց՝ սուղ՝ և անյայտ։ Այլ սկսեալ ցուցից քեզ ըզ մերն՝ թէ ուստի և որպէս․

Գլուխ 7․

Թէ ո՛րո՞վ հնար ո՛ւստի գտանելով եգիտ ըզ Զրուցաբանութիւնն։



Արշակ մեծ Արքայ Պարսից՝ և Պարթևաց․ որ և ազգաւ իսկ Պարթև։ ապստամբեալ ասեն՝ ՚ի Մակեդոնացւոցն․ և թագաւորեալ ՚ի վր̃ ա̃մ արևելից և Ասորեստանեաց․ և սպանեալ զԱնտիոքոս Թագաւոր ՚ի Նինուէ։ հնազանդեցուցանել զա̃մ տիեզերս ը̃ ձեռամբ իւրով։ Սա թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ ՚ի վերայ աշխարհիս Հայոց․ պատեհ իմն համարեալ այսպէս անշարժ իւրոյ թագաւորութեն լինել։ Եւ՛ քաղաք թագաւորութե տայ նմա զՄծբին՝ և սահմանս հատանէ նմա զմասն ինչ յարևմտեայ Ասորւոց՝ և զՊաղեստին, և զԱսիայ․ և զա̃մ Միջերկրեայս՝ և ըզ Թիտալիայ։ ՚ի ծովէն Պոնտոսի՝ մինչև ՚ի տեղին ո՛ւր Կաւկաս յարևմտեանն յանդի ծով․ և զԱտրպատական, և այլ

որ

որչափ միտք քո. և քաջութիւն հասանեն։ զի սահմանք Քաջաց՝ ասէ, զէնն իւր_եանց. որքան հատանէ՝ այնքան ունի։ Սորա կարգեալ զիշխանութիւն իւր մեծա_պէս. և հաստատեալ զթագաւորութիւնն իւր։ Կամ եղև գիտել մեզ, թէ ո՛յք՝ և ո՛րպիսի արք տիրեցին 'ի վերայ աշխարհիս Հայոց մինչև ցնա. զՔաջաց արդեօք. եթէ զՎատաց անցեալ ունի՝ զտեղի։ Եւ՛ գտեալ զոմն Ասորի, Մարիբաս Կատինայ, այր ուշիմ և վարժ. Քաղդեացի՝ և Յոյն դրով, զոր յղէ առ մեծ եղբայրն իւր Արշակ. արժանի ընծայիւք. բանալ նմա զԴիւանն Արքունի։ և գրէ առ նա ձև բանից օրինակ զայս։

Գլուխ 8.

Թուղթ Վաղարշակայ արքայէն Հայոց, առ մեծն Արշակ արքայ Պարթևաց։

Արշակ Թագաւոր՝ Երկրի, և ծովու. որոյ անձն և պատ_կեր՝ որպէս և է իսկ մեր աստուծոց, իսկ բախտ՝ և պատա_հումն 'ի վեր քան զամենայն թագաւորաց. և մտաց լայնութիւն որչափ երկնի 'ի վերայ երկրի. Վաղարշակ կրտսեր եղբայր քո՝ և նիզակակից. որ 'ի քէն կարգեալ Արքայ Հայոց. ո՛ղջ լեր ամենայն յաղթութեամբ։ Քանզի պատուէր ընկալայ 'ի քէն՝

քաջութեան, և իմաստութեան հող առ_
նել։ ո՛չ երբեք անփոյթ արարեալ ըզ
քոյոցդ խրատու. այլ խնամոտարեալ հո
գացայ նմի. որչափ միտք՝ և հասողու
թիւն բաւեցին։ Եւ՛ այժմ, 'ի քոյումդ խըր
նամակալութեան զետեղեալ թագաւո_
րութեանս։ խորհուրդ 'ի մտի եդի զգուշ
թէ ո՛յք ոմանք յառաջ քան զիս իցեն
ունելեալ աշխարհիս Հայոց. և ո՛ւստի
նախարարութիւնքս՝ որք առս կան։ Զի
ո՛չ կարգք ինչ լեալ առս յայսմիկ. և
ո՛չ մեհենից պաշտամունք, և ո՛չ զըլ
խաւորաց աշխարհիս առաջինն յայտ_
նի է, և ո՛չ միջինն. և ո՛չ այլ ինչ օրի
նաւոր. այլ խառն 'ի խառնուռ ամ, և
վայրենի։ Արդ որոյ աղաչեմ զքո Տէրու
թիւդ՝ հրամայես բանալ զԴիւանդ ար
քունի՝ ընդդէմ Անդեկելոյ առաջի
քոյոյ՝ Հզօր Տէրութեանդ. զի գտեալ
զղձալին եղբօր քոյ՝ և որդւոյ, բերցէ
զըստոյգն փութապէս։ և զմեր հաւ_
տութեան՝ որ 'ի կամակատարութէ լեալ.
քաջ գիտեմ խնդութեան քեզ լեալ. ո՛ղջ
լեր երևելիդ՝ բնակութ̃ 'ի մէջ Դից։
Եւ՛ ընկալեալ Արշակայ մեծի զգիրն
'ի ձեռաց Մարիբաս Կատինայ. մեծաւ
ըղձմամբ հրամայէ՝ առաջի տանել
նմա զԴիւանն արքունի՝ որ 'ի Նինուէ։
միանգամայն՝ և ուրախացեալ այսպիսի
միտս ունել եղբօր իւրոյ. որոյ զկէս
թագաւորութեան իւրոյ հաւատացեալ

էր: Եւ խուզեալ նր̃ զամ̃ մատեանսն. գտանէ մատեան մի Հելլէն գրով. որոյ վր̃ էր՝ ասէ, վերնագիրն այսպէս:

Սկիզբն Մատենին:

Այս մատեան՝ հրամանաւ Աղեքսանդրի, ՚ի Քաղդէացւոց բարբառոյ փոխեալ ՚ի Յոյնն. որ ունի զբուն հնոց՝ և զնախնեացն բանս. որոյ ըսկիզբն լեալ ասէ զԶրուանն, և զՏիտանն, և զԱպետոսթէ. յորում և զիւրաքանչիւրոք ՚ի ծննդոց երից նահապետացս այսոցիկ արանցս. զարանուանսն կարգաւ շարադրեալ. յիւրաքանչիւր տեղիս մինչև ցբազում ամս: Յայսմ մատենէ Մարիբաս Կատինայ. զմերոյ ազգիս միայն. հանեալ զպատմութիւն հաւաստի՝ բերէ առ Արքայ Վաղարշակ ՚ի Մծբին՝ Յոյն, և Ասորի գրով: Զոր առեալ Անձնագեղոյն՝ և քաջ աղեղնաւորին Վաղարշակ, կորովաբանոյն, և Հանճարեղի. առաջին իւրոյ գանձուն համարելով. զնէր յարքունիսն ՚ի պահեստի մեծաւ զգուշութեամբ. և զմասն ինչ ՚ի յարձանի հրամայէ դրոշմել: յորմէ մեր հաւաստի ՚ի վր̃ հասեալ կարգի զրուցացս. երկրորդեմք այժմ քեզ հարցասիրութեանդ՝ ձգելով զմեր բնիկ նախարարութիւնս՝ մինչև ցՔաղդէացւոց Սարդանապալայ՝ և ևս մօտագոյն: յորմէ

սկիզբն բանիցս այսպիսի ։ Ահեղք՝ և երևելիք, առաջինքն ՚ի դիւցն. և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք. որ սկիզբն աշխարհի և բազմամարդութեան ։ Եւ ՚ի սոցանէ հաստեալ գտան ազգ Հըսկայից. անհեդեդք՝ յաղթանդամք մարմնով՝ և վիթխարիք. որք յղացեալ ամբարտաւանութիւն ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեան. և ՚ի նոյն լինէին ՚ի գործ անկեալք. յոր հողմն ահագին իմն՝ և Ածային շնչեցեալ ՚ի դիւցն ցասմանէ, ցրուէ զԱմբարտակն ։ և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ. աղմուկ շփոթի՝ ՚ի մէջ արկանէին ։ Յորոց մի էր և Յապետոսթեանն Հայկ անուանի, և քաջ նախարարն կորովաձիգ՝ և հաստաղեղնն ։ Եւ այս կարգ զրուցաբանութեան դադարումն առցէ. զի հանդէս է մեր՝ ո՛չ զպատմութեան ողջաբանութիւն գրել՝ այլ ջանալ ցուցանել զառաջինսն մեր, և զբուն հին Նախնիս ։ Արդ՝ ՚ի նոյն մատենէ սկսեալ ասացից՝ Յապետոսթէ. Մերոդ, Սիրաթ, Թակլաթ՝ որ է Յաբէթ. Գոմեր, Թիրաս, Թորգոմ ։ Յետ որոյ՝ նոյն ժամանակագիր յառաջ մատուցեալ ասէ՝ Հայկ. Արամենակ. և զայլսն ՚ի կարգի՝ զորոյ յառաջագոյն ասացաք ։

Գլուխ Գ.


Յաղագս ապստամբութեան Հայկայ ։

Այս ասէ Հայկ՝ Գեղապատշաճ և Անձնեայ . Քաջագանգուր . Խայտակն , և Հաստաբազուկ ։ Սա 'ի մէջ Հսկայիցն քաջ և երևելի լեալ՝ ընդդէմ ամենեցուն . որք ամբարտաւանին զձեռն 'ի միապետել 'ի վր̃ ամ̃ Հսկայից և Դիւցազանց ։ Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեան Բելայ ։ 'Ի տարածանելն ազգի մարդկան՝ ընդ լայնութ̃ի ամ̃ երկրի 'ի մէջ բազմակոյտ Հսկայից . անհուն խօլաց՝ և ուժաւորաց ։ Քանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր սուր 'ի կող ընկերի իւրոյ ձգելով , ջանային տիրել 'ի վերայ միմեանց . ուր պատահմունք 'ի դէպ ելանէին Բելայ , բռնանալ ունել զամ̃ երկիր . որում ո՛չ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել Բելայ՝ յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամենակ 'ի Բաբելոնի . չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ . որ է 'ի կողմանս հիւսիսոյ . հանդերձ որդւովք իւրովք՝ և դստերօք . և որդւոց որդւովք արամբք զօրաւորօք ։ Թուով իբրև՝ 300ու և այլովք ընդոծնօք՝ և եկօք յարեցելովք 'ի նա . և բոլոր աղխիւ ։ Երթեալ բնակէ 'ի լեռ

նոտի միում 'ի դաշտավայրի. յորում սակաւք 'ի մարդկանէ յառաջագոյն ցրուեալցն դադարեալ բնակէին։ զորս հնազանդ իւր արարեալ Հայկ. շինէ անդ տուն բնակութեան կալուածոց՝ և տայ 'ի ժառանգութիւն Կադմեայ. որդւոյ Արամենեակայ։ այս արդարացուցանէ՝ զանգիր հին ասացեալ զրոյցս։ Եւ ինքն խաղայ՝ ասէ, այլով աղխիւն ընդ արեւմուտս հիւսիսոյ, գայ բնակէ 'ի բարձրաւանդակ դաշտի միում. և անուանէ զանուն լեռնադաշտակին՝ Հարք. այսինքն աստէն բնակեալք ազգ 'ի տանն Թորգոմայ։ Շինէ և գեւղ մի՝ և անուանէ իւր անուն՝ Հայկաշէն։ Յիշէ՝ և աստանօր պատմութիւնս հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ. առ երկայնանիստ միով լերամբ՝ բնակեալ յառաջագոյն արք սակաւք. ինքնակամ հնազանդիլ Դիւցազինն։ արդարացուցանէ՝ և այս զասացեալ զրոյցս անգիրս։

Գլուխ 10.

Յաղագս պատերազմին՝ և մահուանն Բելայ



Ւ յառաջ մատուցեալ ընբանս իւր, ասէ. Թէ 'ի հաստատել Տիտանեանն Բելայ զԹագաւորութիւն իւր առ ամենեսեան, առաքէ 'ի կողմն հիւսիսոյ

զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ․ ա-
րամբք հաւատարմօք՝ գալ նմա 'ի հնա-
զանդութիւն, և կեալ խաղաղութեամբ․ թը-
նակեցեր ասէ 'ի մէջ ցրտութեան սառ-
նամանեաց․ այլ ջեռուցեալ մեղկեայ
ցրտութիւն սառուցեալ քո հպարտա-
ցեալ բարուցդ․ և հնազանդեալ ինձ
կեաց 'ի հանդարտութեան․ ուր հաճոյ
է քեզ յերկրիս իմում բնակութեան : Եւ
'ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգա-
մաւորսն Բելայ՝ խստութեամբ պատասխա-
նեաց՝ Դառնայ առաքեալն անդրէն 'ի
բաբելոն : Ապա զօրաժողով լինի 'ի
վերայ նր Տիտանեանն Բէլ՝ ամբոխիւ
հետևակաց զօրաց, գայ հասանէ 'ի հիւ-
սիսի յերկիրն Արարադեայ՝ փախստա-
կան լինի Կադմոս առ Հայկ : քաջըն-
թաց իսկ առաջի իւր առաքէ : գիտեա՛
ասէ, ո՛վ մեծդ Դիւցազանց՝ զի դիմեալ
գայ վր քոյ Բէլ՝ Յաւէրժիւք քաջօք,
և երկայնադիզօք հասակօք՝ Հսկայիւք
մրցողօք : Եւ՞ իմացեալ իմ զմերձ լինելն նր՝
տունն իմ փախեայ, և գամ ահաւասիկ
տագնապաւ : Արդ՝ աճապարեա՛ խոր-
հել՝ որինչ գործելոց ես : Իսկ Բէլն՝ յան-
դուգն, և անձոռնի զօրութեամբ ամբոխին,
որպէս յորձանք ինչ սաստիկ է զառ 'ի վայր
հեղեալ՝ փութայր հասանել 'ի սահ-
մանս բնակութեան Հայկին․ 'ի սիրտ՝ և
'ի մարմին վստահացեալ արանց զօրա-
ւորաց : Այս Ուշիմ, և խոհեմ Հըս

կայն քաջազանգուրն՝ և խայտակն։ անձապարեալ հաւաքէ զորդիս իւր, և զթոռունս՝ արս քաջս, և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս. և զայլ ևս՝ որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ յեզր ծովակի միոյ. որոյ աղի են ջուրք. մանունս ունելով ձկունս յինքեան։ Եւ կոչեալ զզօրս իւր՝ ասէ, ցնոսա. յելանելն մեր հանդէպ ամբոխին Բելայ՝ դիպեալ ջանասցուք տեղւոյն՝ ուր անցեալ կայ 'ի մէջ խռան քաջացն Բէլ։ զի կամ մեռցուք՝ և աղխ մեր 'ի ծառայութիւն Բելայ կացցէ. կամ զաջողութիւն մատանց մերոց 'ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութեան ստացեալք։ Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս, հասանեն 'ի միջոյ ինչ դաշտաձև լերանց բարձրագունից, և յաջմէ ջուրցն հոսանաց 'ի բարձրաւանդակունս կուռ կալով 'ի տեղւոջ։ 'Ի վեր զերեսս ամբարձեալ՝ երևեցաւ նմա բազմութիւն անկարգ հասակի ամբոխոյն Բելայ. ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով։ Իսկ Բէլ, հեզ՝ և հանդարտ ամբոխիւ մեծաւ 'ի ձախմէ ջուրցն 'ի վ՟ր բլրոյ միոյ իբրև 'ի դիտանոցի։ Ծանեաւ Հայկ զխումբն վառելոյ ջոկատին. յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիւք և վառելովք

զինամբք.

ոմամբք. և երկար միջոց ճանապարհին ընդ նա՝ և ընդ ամբոխն։ և ինքն դըլխանոց ադուցեալ երկաթի՝ նշանաւորօք վերջօք՝ և տախտակս պղնձիս թիկանց՝ և լանջաց, և պահպանակս բարձից՝ և բազկաց, գօտևորեալ զմէջն. և ահեկէ զսուսերն երկսայրի. և նիզակն արի 'ի ձեռին իւրում աջոյ. և յահեկումն վահան. և ընտիրք յաջմէ և 'ի ձախմէ։ Եւ տեսեալ Հայկն զՏիտանեանն կուռ վառեալ. և արս ընտիրս ընդ նմա՝ աջիս՝ և ահեկինս։ Կարգէ զԱրմենակ երկու եղբարբք ընդ աջմէ. և զԿադմոս՝ և զայլս երկուց որդւոց իւրոց 'ի ձախմէ։ զի արք կորովիք էին յաղեղն՝ և 'ի սուսեր. և ինքն առաջի. և զայլս հրոսակին զկնի իւր կարգեաց՝ երեք անկիւնի իմն կարգեաց ձևով. հանդարտ յառաջ մատուցանելով։ Եւ հասեալ երկոցունց կողմանց հսկայիցն 'ի միմեանս, ահագին դղրդիւն 'ի վ̅ր երկրի առնէին շահատակելովն, և ահապակուցանօղս տարազօք յարձակմանցն։ զմիմեամբք հարկանէին. անդ ո՛չ սակաւք յերկոցունց կողմանց հըսկայիցն յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք տապալ յերկիր կործանէին. և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի։ Զայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց տեսեալ Արքայն Տիտանեան՝ զարհուրեցաւ.

և

և 'ի նոյն բլուր՝ ուստի էջն, վերջոտեալ երթայ. քանզի խորհէր 'ի միջոցի ամրանալ ամբոխին՝ մինչև հասցէ բովանդակ զօրն. զի միւս անգամ ճակատ յօրինեսցէ։ Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ աղեղն զլայնալիճն՝ դիպեցուցանէ զերեք թևեանն կրծից տախտակին, և շեշտ Ըմէջ թիկանցն թափանցիկ լեալ յերկիր անկանի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան, կործանեալ յերկիր զարուցեալ՝ և փչէ զոգին։ Իսկ ամբոխին տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան. փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց։ Եւ՝ վասն այսորիկ՝ այսչափ բովանդակ լիցի ասել։ Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ. և անուանէ կոչէ Հայք. վասն յաղթութեան պատերազմին, այսորիկ աղագաւ. և զաւառն այժմ անուանի Հայոց ձոր։ Իսկ բլուրն՝ ուր քաջամարտիկօքն անկաւ Բէլ. անուանեաց Հայկ՝ գերեզմանս. որ այժմ ասին՝ գերեզմանք։ Բայց զդիակն Բէլայ՝ պաճուճեալ իմն ասէ դեղօք։ Հրամայէ Հայկ տանել 'ի Հարք, և թաղել 'ի բարձրաւանդակ տեղւոջ՝ 'ի տեսիլ կանանց՝ և որդւոց իւրոց։ Իսկ անուն աշխարհիս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք։

Գլուխ II.

Յաղագս՝ որ 'ի Հայկայ ազգն՝ և ծննդոց, և թէ զի՞նչ իւրաքանչիւրոց 'ի նոցանէ գործեաց ։

Բազում ինչ զենի այսորիկ պատմի 'ի Մովսէսին · այլ մեք՝ որ ինչ պիտոյն մերոյ համառօտման է՝ շարագրեսցուք ։ Զենի այսորիկ դասանալ՝ ասէ, Հայկեան 'ի նոյն տեղի բնակութեան ։ և կարգմամբ Թոռին իւրոյ՝ բազում ինչ յանկարծէ պատերազմին պարգևեաց ։ և յիւրոց ընդոծնացն արս անուանիս, Հրամայէ զնոյն տեղի բնակութեան ու-նիլ նմա · զատուածնոյ իւրոյ սանն ։ և ինքն երթեալ զադարէ յանուանեալ տեղին Հայքն ։ Այս կեցեալ ամս՝ ծնանի զԱրամանեակ 'ի Բաբելոնի՝ ով վերա-գոյն ասացաք ։ յետ որոյ՝ կեցեալ և այլ ևս ամս՝ ո՛չ սակաւս՝ մեռանի, յանձնառանելով զգունովանդակ ազգին՝ Ար-մենակայ որդւոյ իւրոյ ։ Իսկ նր Թո-ղեալ երկուց եղբարց իւրոց զԽոռ · և զՄանաւազ ամ ազգաւն իւրեանց, 'ի կողմանցն Հարքն · և զորդի Մանա-ւազայ զԲազ · յորոց Մանաւազ ժա-ռանգէ զՀարքն ։ Իսկ որդի նր Բազ՝ յարևմտից Հիւսիսոյ, եզր ծովուն ազ-ւոյ · զգաւառն՝ և զծովն անուանէ իւ-

րով

րով անուամբն ։ Եւ 'ի սոցանէ ասեն
լեալ զնահապետութիւնս Մանաւա-
զեան, և զԲզնունեաց, և որ Գնու-
նին անուանել. որք սոսա ուրեմն՝ յետ
Սրբոյն Տրդատայ, բարձեալ ասեն 'ի
միմեանց պատերազմաւ ։ Իսկ Խոռն
'ի կողմանս հիւսիսոյ բազմանայ՝ կար-
գէ զչէնս իւր, և 'ի նմանէ ձգեալ ասի
մեծ նախարարութիւն ազգին Խորխոռու-
նեաց. արք քաջք՝ և անուանիք ։ ոպ՝
և որք առ մեօք են այժմ երևելիք ։
Իսկ Արմենակայ առեալ զամ բազմու-
թիւն՝ խաղայ յարևելս հիւսիսոյ. և եր
թեալ իջանէ 'ի խորին դաշտավայրի մի
'ի բարձրագագաթանց պարսպեալ լե
րանց. գետս կարկաջասահ 'ի յարև-
մտից ընդմէջ անցանելով. և զդաշտն
արևելից իմն գոգցեն իբր որսայել 'ի
'ի ձիգ յարեգակն կոյս զերկայնութիւն
պարզեալ. և ստորոտովք լերանցն բա
զում ակնակիտ բղխեալ աղբերք.
որք գետոց հաւաքումն եղեալ հեզա
բար առ սահմանօք նոցա, ծնիւք լե-
րամբք, և եղերօք դաշտին պատանիւ
ոմանք՝ իբր երիտասարդուհիք ձեմի-
ցին ։ Այլ հարաւայինն արեգակնա-
ձեմ լեառն սպիտակափառն ունելով
գագաթն՝ ուղղորդ 'ի յերկրէ բուսեալ
երեք օրէիւ ։ ոպ՝ ասաց ոմն 'ի մերոցն
քաջագօտւոյ առն շրջապատեալ ձա-
նապարհաւ, և առ փո՛քր փո՛քր 'ի շէջ

տումն

տուժն անկեալ : Ծեր ոմն արդարև լեառն 'ի մէջ երկտասարդացեալ լերանց : Յայսմ խորութե դաշտի բնակեալ Արամենակայ . չինէ զմասն ինչ 'ի հիւսիսոյ կողմանէ դաշտին . և զոտ լերինն 'ի նոյն կողմանէ : և զլեառն անուանէ յանգադոյն յիւր անուն' Արագած . և զկալուածսն, տուն Արագա գածու : Բայց սքանչելի ինձ' ասէ, Պատմագիրն, թէ 'ի յոլով տեղիս գըտան բնակեալք 'ի մարդկանէ յերկրիս մերում : ցան և ցիրք սակաւք յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ : Այս Արամանեակ կեցեալ ամս' ծնաւ զԱրմայիս : և յետոյ կեցեալ ամս շատ' մեռաւ : Իսկ որդի նորա Արմայիս' շինէ իւր տուն բնակութե 'ի վր ոստոյ միոյ' առ եզերբ գետոյն, և անուանէ իւր անուն' Արմաւիր : և զանուն գետոյն . յանուն թոռին իւրոյ Երաստայ, Երասխ : Եւ զորդի իւր զՇարայ, զյոլովածին, և զշատակեր . առաքէ ամին իւրով աղխիւ 'ի դաշտ մի մօտաւոր' արգաւանդ' և բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք 'ի թիկունս հիւսիսոյ լերինն' որ անուանեցաւն Արագած : յորոյ անուն ասեն' և զգաւառն անուանեալ Շիրակ : Վն' որոյ սորա թուի արդարանալ առասպելին' որ ասի 'ի մէջ գեղջկաց . թէ քո Արայի որկորն է' ասէ,

մեր

մեր Շիրակայ ամբարքն չեն։ Այս Ար մայիս կեցեալ ամս. ծնանի զորդի իւր զԱմասիա։ 'ի վեր որոյ կեցեալ՝ և այլս ամաց՝ մեռանի։ Ամասիա բնակեալ յԱրմաւիր՝ յետ ամաց ծնանի զԳե-ղամ, և յետ Գեղամայ զՓառոխարի, և զՑոլակ։ և յետ ծնանելոյն զսոսա՝ անցանէ զգետովն մերձ 'ի լեառնն հա-րաւոյ։ և շինէ անդ առ խորշիւք լեռ-նանին մեծապէս ծախիւք երկուս տունս. զմինն, յարեւելից կուսէ մօտ յակունս աղբերացն, որք առ ստորո-տով լերինն ելանեն։ իսկ զմիւսն յա-րեւմտաս կոյս նորին տանն բացագոյն։ իբր մեծ հասարակ աւուր միոյ հետեւա-կագնացի առն ճանապարհորդի։ և ետ զնս 'ի ժառանգութիւն երկուց որդւոց իւրոց, Արւոյն Փառախոտի, և Կայ տատունն Ցոլակայ։ յորս բնակեալ յիւ-րեանց անուն զանեղիսն անուանեցին։ 'ի Փառախոայ՝ Փառախոտ։ և 'ի Ցոլա կայ՝ Ցոլակերտ։ Բայց զլեառն, Ամա սիա՝ անուանէ իւրով անուամբ՝ Մա սիս։ և ինքն դարձեալ յԱրմաւիր, ե-կաց ամս սակաւս՝ և մեռանի։ Իսկ Գե-ղամ, յետ ամաց անցելոց ծնեալ զՀար մա՝ յԱրմաւիր. և թողեալ զՀարմա յԱրմաւիր. հանդերձ որդւովք բնա-կել. և ինքն գնաց զմիւս կողմամբն արեւելից հիւսիսոյ յեզր ծովակի միոյ, շինէ զեզր ծովակին՝ և թողու անդ ըն

նա

նակիչս ։ և յիւր անուանն՝ և առ զեկեղեցին անուանեալ՝ Գեորգ, և զշէնսն՝ Գեղարքունի, որում կոչի՝ և ծովն ։ Աստ ծնեալ որդի իւր զՍիսակ, զայր սեգ, և անձնեայ, բարեգեղ՝ կարովլարան, գեղեցկադէմն, ամս զմեծ մասն ընչեց իւրոց առեալ՝ և ծառայս անձինս բազումս ։ առհմանս հաստատեալ նմա ժառանգութիւն, 'ի ծովէն ընդ արևելս՝ մինչև 'ի դաշտ մի. ուր գետն Երասխ հատանէ զառապարանձաւս լերանց, անցանէ ընդ խոխոմս ձիգս՝ և նեղս, ահագին դըղրդմամբ իջանէ 'ի դաշտ մի ։ Այս բնակէ Սիսակ, ընդ շինութիւն զամենայն իւրոյ բնակութեան ։ և զաշխարհն կոչէ իւրով անուանբն՝ Սիւնիք ։ այլ Պարսք յստակագոյն ևս Սիսական կոչեն ։ 'ի սորա ծննդոց ասեն ուրեմն առաջին 'ի Պարթևաց Վաղարշակ Արքայ Հայոց՝ գտեալ այր անուանիս, Տեարս աշխարհէն կարգէ, ում Սիսակ անդ ։ և զայս առնէ Վաղարշակ. 'ի պատմութիւն առաւելեալ ։ այլ այս՝ թէ ո՞ր, յիւրում տեղւոջ պատմեսցուք ։ Բայց ինքն Գեղամ դառնայ 'ի դաշտ անդր, և առ ոտամբ նորին լերին՝ 'ի ձորակի միում առվոջ՝ շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նր՝ Գեղամէ. որ յետոյ 'ի Գառնեկայ թոռնէ նորա անուանեցաւ՝ Գառնի ։ 'ի սորա ծննդոց ասեն ուրեմն առ Արտաշէսիւ, թոռամբ

Վաղարշակայ՝ ոմ̃ն վարաժ անուն պատանի՝ յաջող յորս եղջերուաց՝ այծեմանց, և վարազուց․ գեղեցկութ̃բ նետից կորովի ։ զսա 'ի վերայ որսոց արքունականաց կարգէ ։ և շէն պարգևէ նմա առ եզր գետոյն, որ անուանեալ կոչի․ Հրազդան ։ և 'ի սմանէ՝ ասեն լինիլ զտոհմն Վարաժնունի ։ Այս Գեղամ, ո̃պ ասացաք՝ յետ ամաց ծնանի զՀարմայ․ յետ որոյ կեցեալ և այլ ևս՝ և մեռանի ։ և հրամայէ որդւոյ իւրում Հարմայ բնակիլ յարմաւիր ։ Այս Հայկ՝ որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամերայ, որդւոյ Յաբեթի, Նախնի Հայաստանեայցս, և այս ազգք նո̃ր, և ծնունդք, և աշխարհ բնակութ̃ե նց̃ ։ և յայսմ հետէ՝ ասէ, սկսան բազմանալ և լնուլ զերկիրն ։ Իսկ Հարմայ կեցեալ ամս՝ ծնանի զԱրամ ։ Արամայ բազում գործք քաջութ̃ե պատմին մարտից նահատակութ̃ե, և ընդարձակել զսահմանս Հայոց յամ̃ կողմանց ։ յորոյ անուն, և զաշխարհս մեր անուանեն ամ̃ ազգք ։ ո̃պ Յոյնք՝ Արմէն ։ Իսկ Ասորիկք՝ և և պարսիկք․ Արմէնիկք ։ բայց զընդարձակութ̃ի պատմութ̃ե սորա, և ըզգործ քաջութ̃ե՝ թէ զի արդ, կամ առ ո՞րով ժամանակի՝ թէ կամիցիս այսորիկ գրոց կարգեսցուք, և կամ թողցուք ։ ապաթէ ո՛չ 'ի սմին ։

Գլուխ. 12.

Յաղագս ընդ Արևելեայս պատերազմին՝ և յաղթութէ՝ և մահուանն Նիւքարն Մադէսայ ։



բուլեանց, սա է՝ պտողոմեանեանց։ Եկեալ առ Բաղափրան՝ Նահապետ Ռըշտունեաց, և Սպարապետ Հայոց, և պարսից, խոստանայ հինգ հարիւր կին գեղեցիկ՝ և հազար քանքար ոսկւոյ, զի օգնեսցէ նոցա ընկենլով՝ 'ի Թագաւորութենէ հրէից՝ զՀիւրկանոս, և թագաւորեցուցանել զԱնտիգոնոս։ Իբրև ետես Հիւրկանոս՝ հրէից Քահանայապետ, և Թագաւոր, և փասայէլաւ՝ եղբայր հերովդի, եթէ զզօրս Հռովմայեցւոց փախստական արարեալ՝ զոմանս 'ի ծով՝ զոմանս 'ի քաղաքս, խաղաղութիւն ընդ երկիրն անցանէ Բաղափրան, խօսէին զխաղաղութենէ առ Բաղափրան. և նա՝ զԳնէլ ոմն, որ էր Տակառապետ Արքային Հայոց՝ յազգէն Գնունեաց, առաքէ յԵրուսաղէմ, հանդերձ հեծելազօրաւ, իբր թէ՝ 'ի պատճառս խաղաղութեան. բայց 'ի գաղտնի օգնել Անտիգոնեայ։ և Հիւրկանոս՝ զՏակառապետն ամենայն զօրօքն ո՛չ ընդունէր յԵրուսաղէմ, այլ միայն՝ 500. հեծելով։ և Տակառապետն դաւով խրատ տուեալ Հիւրկանու, զի՝ առ Բաղափրան երթիցէ՝ վասն աւերածոյ աշխարհի, և ինքն խոստանայր լինել բարեխօս. և Հիւրկանու երդումն խնդրեալ՝ 'ի Բաղափրանայ. և Բաղափրան երդուեալ նմա՝ յարեգակն, և 'ի լուսին, և յամենայն պաշտամունս իւրեանց, երկնայինս՝ և

երկրպագութեամբ, և յարև Արշակի, և Տիգ-
րանայ: Ընդ որ վստահացեալ Հիւրկա-
նոս, թողու զՀերովդէս 'ի վերայ Ե-
րուսաղեմի, և զՓասայելոս՝ զերեց եղ-
բայր Հերովդի, առեալ ընդ իւր գայ
առ Բարզափրան 'ի ծովեզերս, 'ի գեօղն՝
որ կոչի Եքդիպոն: Եւ Բարզափրան խո-
րամանկութեամբ պատրէր զնոսա, և ինքն
յանկարծակի անտի գնացեալ, մնացե-
լոց զօրացն հրաման տայր, 'ի բռնել
առնուլ զնոսա, և 'ի ձեռն Անտիգո-
նի մատնել: Եւ Անտիգոնոս 'ի վերայ
Հիւրկանոսի անկեալ՝ զականջսն նորա ատա-
մամբքն 'ի բաց կտրէր. զի թէ՝ և այլ
ժամանակ փոխեսցի, անհնար լիցի նը-
մա զքահանայապետութիւն առնուլ.
քանզի օրէնքն զողջանդամսն՝ հրա-
մայեն կացուցանել քահանայս: Եւ
Փասայելի եղբօրն՝ Հերովդի իւրովի
զարկեալ զիւր գլուխն զքարի, առա-
քեցաւ բժիշկ յԱնտիգոնեայ, իբր թէ
բժշկել զնա՝ եդեալ զվէրսն նորա թունա-
ւոր դեղովք, և վախճանեցոյց: Իսկ Բա-
րզափրանայ հրաման տուեալ Պակորոյ՝
Տանուտեառնի Արքունի Հայոց՝ յԵրուսաղէմ
զՀերովդէս որսալ. իսկ Պակոր՝ զՀերով-
դէս՝ արտաքս քան զպարիսպն ելա-
նել պատրէր. զոր չառեալ յանձն Հե-
րովդի, և ոչ ևս՝ կալ 'ի քաղաքին իշ-
խեաց, երկուցեալ 'ի պատառամանէ Ան-
տիգոնեանցն, 'ի գիշերի ճանճուկ ընտա-

նեօքն

նեօքն հանդերձ՝ առ Եղամայեցին փախչէր, 'ի Մատանդամ յամուրն. Թողեալ զընտանիսն, իւրքն 'ի հուամ փութայր հասանել: Բայց զօրքն հայոց ձեռն առնութեամբ Անտիգոնեանցն յՆէմ մտանելին, ոչ ինչ ուժեք վնասեալ. բայց միայն զհիւրկանու զինչսն առնուբին ածեալ բանդ՝ 300. քանքար. և ընդ դատառուն առաքատակեալ Ա.. հիւրկանեանն առելեալն. և զՄարիկացւոց քաղաքն գեղջ առեալ Թալաւոր կեցուցանէին զԱնտիգոնոս. կապեալ զՀիւրկանոս ածեն Տիւրոնայ՝ հանդերձ զերութեամբն. և Տիգրան հրամանն առաս Բարզափրանայ՝ սուրուցանել զՀերքն Հրեից՝ որ 'ի Մակարայւոց, երաքայքն Շամիրամայ: և Տիգրանայ ոչ առեալ քաւեալ՝ քան զերեալ մի՝ յետ աղջարքն վախճանի:

Թագաւորեալ ամս՝ 33:



Գլուխ 19.

Այլ պատերազմ Հայոց, ընդ զօրս հռովմայեցւոց. և պարտումն Սեղոնի՝ և Բենդեգեայ։


Երավդէս անցեալ 'ի Հռոմ, առաջի Անտոնիոսի՝ և Կեսարու՝ և Սինկղիտոսին, զինքեան մեծամտութիւն առ հռովմայեցիսն պատմէ, և Թագաւոր հրէաստանի յԱնտոնիոսէ եղեալ, առնու իւր զօրավիգն օգնականութեան՝ զԲենդեգէոս հռովմայեցւոց Սպարապետն զօրօք պատերազմել ընդ զօրս Հայոց՝ մերձ յԵփրատ. և 'ի զՊակորոս սպանեալ՝ դառնոյ յԵրուսաղէմ 'ի վերայ Անտիգոնի։ Իսկ Հայոց միւս անգամ օգնութիւն զօրու 'ի պարսից գտեալ՝ դիմեալ 'ի վերայ Սիղոնի, և փախստական զնա 'ի Բենդեգէոս արկանեն, հեղձմունս արեանց առնելով անբաւս։



Պրակ 20.

Եթէ՝ զի որդ Անտոնիոս խորոմն դիմաւ 'ի վերայ զօրացն հայոց՝ առնու ըզ Համիդ ։

Զարթեալ Անտոնիոս՝ եւրովի հասանէ ըմ զօրօք հռօմայեցւոց . եւ հասեալ 'ի Համբագ , լսէ զմահն Տիգրանայ , եւ առեալ զքաղաքն , եւ թողեալ զՍոսիա՝ զօրավիգն հերովդի՝ մարտ դնելով ընդ Երուսաղիմի՝ 'ի վր Անտիգոնի , ինքն 'ի ձմերոցս գնայ յԵգիպտոս , փութայր հասանել՝ ըստ համբուշութե առն կնամոլոյ՝ ցանկութբ վառեալ 'ի Կղէոպատրայ՝ դշխոյն Եգիպտացւոց ։ Այս Կղէոպատրա՝ դուստր է Պտողոմէոս Դիոնիսի, թոռն Պտողեմայիդ Կղէոպատրայ՝ եւ սիրելի յոյժ հերովդի . վն որոյ , առաւել եւս յանձնէ Անտոնիոս Սոսիայ . որ եւ մարտուցեալ իսկ քաջապէս՝ առնու զԵրուսաղէմ . եւ սպանեալ զԱնտիգոնոս՝ թագաւորեցուցանէ զհերովդէս ամենայն հրէաստանի , եւ Գալիլեայ ։



Գլուխ ԺԱ.

Յաղագս թագաւորելոյն Արտաւազդայ, և պատերազմելն ընդ հռովմայեցիս։

Այսպէս Թագաւորէ Արտա-ւազդ՝ որդի Տիգրանայ։ սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր, և զքորս 'ի գաւառսն Աղիովտի, և Առբերանւոյ, թող-լով 'ի նոսա զհասս արքունի՝ որ 'ի շէնսն այնց գաւառաց, հանդերձ ա-ռանձին մտից, և ռոճկաց. ըստ օրի-նակի ազգականացն՝ որ 'ի կողմանց Հաշ-տենից։ ոչ՝ զի լինել նոցա պատուա-կանագոյն, և առաւել Թագաւորական քան զազգն Արշակունիս. մնալ օրէ-նադրէ, ո՛չ կեալ յԱյրարատ 'ի բնա-կութեան Արքային։ Բայց՝ այլ ո՛չ գործ արութեան, և քաջութեան եցոյց. այլ ու-տելեաց՝ և ըմպելեաց պարապեալ. յօ-րէց՝ և եղեգնապատ բոլորակաց Թաւ ա-ռեալ՝ շրջէր և առապարաց, զիշամոլեայ բես, և զխոզս արածելով. զինուորու-թենէ, և զքաջութենէ, և զբարի յիշա-տակաց՝ անփոյթ արարեալ. ծառայ՝ և ստրուկ որովայնի լինելով, արդա-րև զաղբիս մեծացուցանէր։ Սա քան-րելով յիւրոց զօրացն՝ վն առաւել պը-ղերգութեան՝ և սաստիկ որկրամոլութեան, մանաւանդ զի և միջագետս ստացոց՝

Ան

Անտոնիոսի հանեալ էր 'ի նմանէ. զի որ զայրացեալ Արտաւազդ, հրաման տայր զօր յարուցանել զքիւրդաւորս Արտաշատական նահանգին, և զընդակիցս լեռինն Կաւկասու հանդերձ Աղուանօք, և Վրօք. խաղայ՝ իջանէ 'ի Միջագետս, և հալածական առնէ զզօրս Հռովմայեցւոց:

Գլուխ 22:

Զեղծանել տանն Սելեւկեանց Ասոր-նեայ:

Ոչնչեալ առիւծաբար դաղանութեամբ Անտոնիոս, առաւել ևս՝ թանձեալ 'ի Եգիպտոսի: Քանզի՝ քէն պահեալ էր՝ մի ըմբռնեաց իւրոյ հօրեղբօր, որ 'ի Տիգրանայ. և ոչ միայն Հայոց, այլ՝ բազմաց այլոց թագաւորաց ընկեր մահուքեր, զի՝ նոցայյոցն տիրեսցէ իշխանութեանց. սակս որոյ՝ բարգաւ թագաւորս սպանեալ Անտոնիոս, կը զէտապատերազմ հաւատոյ՝ զնոցա իշխանութեան, բաց 'ի Տիգրանէ, և 'ի Արտաշէսէ, և որ մնացեալ՝ ընդ Ագսո գեղեցիկ էին: Եւ առեալ զբազմութիւն զօրացն՝ գնաց 'ի վերայ Արտաւազդայ, և անցեալ ընդ Միջագետս՝ կոտորէ անհնարին զզօրս Հայոց, և ձերբակալ

առ

առնէ զԱրքայն նոցա․ և դարձեալ յԵգիպտոս՝ պարգևէ կղէոպատրայ զԱրտաւազդ՝ որդի Տիգրանայ՝ հանդերձ բազում ընչիւք յանկածէ պատերազմին ։

Գլուխ 23․

Յաղագս թագաւորելոյն Արշամայ՝ և զառաջինն մասնաւոր հարկել Հայոց Հռովմայեցւոց ։ Եւ՛ արձակումն Հիւրկանու Քահանայապետի․ և վասն նորին՝ վտանգ ազգին Բագրատունեաց ։

Քսաներորդի ամի, 'ի կատարումն աւուրց Թագաւորութեան Արշակայ, ժողովեալ զօրք Հայոց՝ հրամանաւ նորին՝ Թագաւորեցուցին 'ի վ՛ր ինքեանց զԱրջամ, որ և Արշամ, որդի Արտաշիսի՝ Եղբայր Տիգրանայ՝ հայր Աբգարու ։ զսա ոմանք կոչեցին յասորւոց՝ Մանովազայ․ ըստ յոլովից սովորութեան կրկին ունելով անուանս․ ոչ հերովդէս ագրիպաս, և ոչ Տիտոս անտոնինոս, և կամ Տիտոս Յուստոս ։ Բայց՝ քանզի 'ի նմին ամի վախճանեցաւ Արշէզ՝ թողլով զթագաւորութիւն պարսից՝ որդւոյ իւրում Արշօրի՝ մանկան փոքրկան՝ յոյժ տղայոյ․ ոչ

ոք էր՝ որ օգնէր Արշամայ՝ ընդդէմ կալ
հռովմայեցւոց. խօսի ընդ նմ 'ի հաշ-
տութեն խաղաղութեն, տալով զհարկս
'ի Միջագետս Ասորւոց, և 'ի կողմանց
կեսարու՝ 'ի ձեռս հերովդի։ այս ե-
ղև սկիզբն՝ հայոց մտանաւորել ընդ
հարկաւ հռոմայեցւոց։ Զայսու ժա-
մանակաւ՝ եղև մեծ ցասումն 'ի վերայ
Ենանոսի Ասպետի իւրումն թագա-
կապի. քանզի՝ նա արձակեաց զհիւր-
կանոս հրէից Քահանայապետ, զոր
գերեալ էր Բաղափրան Ռշտունոյ՝
յուսուրս Տիգրանայ։ Իսկ՝ Ենանոս
պատճառաւ առ արքայի ստելով. եթէ
փրկանս խոստացաւ՝ 100. քանքար,
պկն ունելով առնուլ'ի նմանէ, յանձն
էառ տալ, վն որոյ՝ ժամադրութեն 'ի
վերայ նր սահմանէ Արշամ. և նորա
առաքեալ զմի յեղբարց իւրոց 'ի հր-
էաստան, որում անուն էր՝ Սենե-
քիայ, առ Հիւրկանոս՝ զի տացէ ինչս
յաղագս իւրոյ փրկութեն. և երթայ
առաքեալն յԵնանոսէ, պատահէ ըս-
պանեալ զհիւրկանոս Հերովդի, զի մի՝
ինչ դաւ նորա թագաւորութեն լինի-
ցի։ արդ՝ իբրև եհաս ժամադրութեն,
և չտայ դանձս փրկանացն հիւրկանու
Ենանոս, բարկացաւ 'ի վր նր Արշամ,
և ընկեցեալ'ի պատուոյն, հրամայէ գը-
նել'ի բանտի։ Յայնմ ժամանակի՝ քսու-
թե մատուցանէ զնմանէ արքայի Զու-

րայ՝ Նահապետ ազգին Գնունեաց՝ ա-
սելով: Գիտեա՛ Արքայ՝ զի ապստամ-
բել 'ի քէն կամեցաւ Ենանոս, խոր-
հուրդ ընդ իս բերելով, զի երդուեալ
խնդրեսցուք 'ի Հերովդէ Թագաւորէ
Հրէաստանի, երբ ընդունել զմեզ՝ և
տալ ժառանգութիւն 'ի բնիկ երկրի մե-
րում: քանզի՝ Նորակտուտ ծանակեցաք
յաշխարհիս յայսմիկ. և իմ ոչ յանձն
առնելով՝ ասեմ ցնա. ընդէ՞ր պատ-
րիմք զրուցօք վաղնջուց, և պատուել
առասպելեօք՝ Պաղեստինացիս զմեզ
վարկանելով: և նորա անյուսացեալ
լինէն, նմին իրի իսկ՝ առաքեաց զՔա-
հանայապետն Հիւրկանոս, և առաւել
ևս՝ 'ի Հերովդէէ անյուսացեալ. ա-
կայն ոչ մեկնի 'ի դրժողութենէն բա-
րուցն, եթէ ոչ՝ Արքայդ աճապա-
րեսցես նմա: Այսմ քսութեան հաւա-
նեալ Արշամայ, և հաւատացեալ, հր-
րամայեաց տանջանս պէսպէս 'ի վերայ
Ենանոսի կուտել: Եւ վախճան դոր-
ծոյն՝ կամ, թողլով խապառ զօրէնս հր-
րէութեան, և երկիր պագանել արեգա-
կան, և պաշտել զկուռս արքայի, և
որ վստահացեալ արքայի՝ տացէ նմա
զնոյն իշխանութիւն. կամ կախիլ զփայ-
տէ, և բնաջինջ լինիլ ազգի դորա:
և սպանեալ զմի յազգականաց առաջի
նորա՝ որում անուն էր Սարիա. և առ-
ընթեր զորդիսն մատուցեալ 'ի տեղի

սպա

տպանմանն, որոց անուանքն՝ Սամփսա_
տիա, և Ազատիա. յերկիւղէ մահուանն
ողբալոցն՝ և ՚ի Թախանձելոյ կանանցն.
կատարէ զկամս Արքային հանդերձ ամ_
պարտաւորութեան, և յաւագին պատուհա_
իւր հատուցանի. սակայն՝ ոչ ամենեքին
վաստահանոյ ՚ի նա արքայ, հաւատա_
րով նմա զայլխարհն. զի ՚ի Սիրիայե_
ւաց մինչև հեռաստանացն զնա ։

Գլուխ ԻԴ.

Դարձումն Հերովդի ընդ Արշամայ՝ և
սկսանելոյ հնազանդութեանն ։

Յետ այսորիկ եղև խռովութիւն ՚ի մէջ Հերովդի՝ արքային Հըրէաստանի՝ ընդ մերոյ արքային Արշամայ. քանզի Հերովդէս՝ յետ բազում գործոց արութեանց, ձեռնամուխ լինի ՚ի բարեգործութիւն. շինուածս բազումս առնելով բազում քաղաքաց, սկսեալ ՚ի Հըռոմայ՝ մինչև ցԴամասկոս. խնդրեաց յԱրշամայ բազմութիւն արանց՝ անուանիս բուեստից Գործաւորաց, որովք զԱսորւոց զԱնտիոքայ՝ զանանց, և զանկոխ հրապարակն ՚ի խոնհերց, և ՚ի տըղմոց լցցէ. զոր ոչ առեալ յանձն Արշամայ, զօրս ժողովէ՝ ընդդիմանալ Հերովդի. և ՚ի ձեռն հրեշտակաց՝ յղէ

առ Կայսր 'ի Հռոմ, զի մի՛ զնա ընդ իշխանութեամբ Հերովդի արասցէ. իսկ՝ Կայսրն, ո՛չ միայն զԱրշամ չազատէ յիշխանութենէ Հերովդի, այլ և՝ զամենայն Միջերկրեայսս նմա հաւատայ։ Յայնմ ժամանակի, Հերովդէս՝ զանէր Աղեքսանդրի որդւոյ իւրոյ՝ որ էր 'ի հօրէ Տիմոնէ՝ և 'ի մօրէ 'ի թագաւորութենէ Մարաց, 'ի զաւակաց Աշդահակայ վիշապապետանց, ընդ իւրով ձեռամբ թագաւոր Միջերկրեայցըն կացուցանէր. առեալ էր 'ի սպասաւորութիւն գունդ՝ զԳաղատացւոց, և զՊոնտացւոց։ Տեսեալ զայն Արշամայ՝ երկրպագէ Հերովդի՝ իբրև Տեառն, մինչ իսկ տալով նմա, զոր խնդրէր՝ Գործաւորս, որովք լցեալ զՀրապարակսն Անտիոքացւոց՝ քարն վտաւանաւ երկայնութեամբ յատակեաց՝ սպիտակ կձեայ սալայատակօք. զի ոտաւորք յատակացն դիւրագոյն կարգեսցեն առ ո՛չ ինչ վնաս առնել։ Բայց՝ Արշամայ վարեալ զթագաւորութիւն ամս քսան՝ վախճանեցաւ։



Գլուխ 25.

Թագաւորութիւն Աբգարու, և մտանել բոլորովինմբ Հայոց՝ ընդ հարկաւ Հռոմ մայեցւոց. և պատերազմ ընդ հերովդի զօրացն. և սպանանել զեղբօր որդի նորա՝ զՅովսէփ։

Թագաւորէ Աբգար՝ որդի Արշամայ՝ 'ի քսաներորդ ամի Արշաւրայ Թագաւորի Պարսից։ այս Աբգարոս կոչիւր Աւագայր, վն առաւել հեզութեն և իմաստութեն. որում յետոյ՝ և ակըն. զայս՝ ոչ կարելով ուղղակի խօսել Ասորւոց և Յունաց, կոչեցին Աբգարոս։ 'Ի սորա երկրորդ ամի Թագաւորութեն՝ հարկէին Հռոմայեցւոց բոլորովիմբ՝ ամ կողմանց Հայոց։ Քանզի հրամայեալ յՕգոստոս Կայսերէ, որ ասի 'ի Ղուկայ Աւետարանին, աշխարհագիր առնել՝ ընդ ամ տիեզերս. վն որոյ՝ 'ի Հայս առաքեալ Գործակալք Հռովմայեցւոց, բերելով զպատկերն Օգոստոսի Կայսեր՝ կանգնեցին յամ Մեհեանս։ Զայսու ժամանակաւ՝ լինի ծնեալ՝ ՓՐԿԻՉՆ մեր Յս Քս Որդի Այ 'ի Հրէաստանի։ Զամին աւուրբք՝ լինի խռովութի 'ի մէջ Աբգարու, և Հերովդի. զի հերովդի հրա

մայեալ, զիւր պատկերն՝ հուպ ՚ի Կայսերական պատկերքն կանգնել՝ ՚ի Մեհեանս Հայոց. զոր չառեալ յանձն Աբգարու, պատճառս ՚ի վերայ նորա յուզէ Հերովդէս, առաքէ զզօրս Թրակացւոց, և Գերմանացւոց՝ ասպատակաւ հինից՝ յերկիրն Պարսից, հրաման տուեալ ընդ աշխարհն Աբգարու անցանել: Իսկ՝ Աբգար ոչ հաւանեալ, ընդդիմանայ՝ ասելով. եթէ ընդ անապատ՝ է հրաման Կայսեր՝ անցանել զօրացդ ՚ի Պարսս. ընդ որ յոյժ դառնացեալ Հերովդէս, անձամբ ինչ ոչ կարէր վճարել՝ պէս պէս ցաւոց զնա ըմբռնեալ, վ̃ զի ՚ի ք̃ համարձակեցաւ, որդանց ՚ի նմա եռացեալ՝ որպէս պատմէ Յովսէփոս. առաքէ զեղբօր որդի իւր զՅովսէփ՝ որում տուեալ զդստրն իւր, որ յառաջ էր կին Փերուրի՝ եղբօր իւրոյ: Եւ նորա առեալ զբազմութիւն զօրացն՝ գայ հասանէ յաշխարհն Միջագետաց. պատահէ Աբգարու ՚ի զօրանիստ գաւառին Բուգնան, և մարտուցեալ մեռանի ՚ի զօրացն Աբգարու, և զօրքն փախստական լինին: Նոյն հետայն՝ վախճանի և Հերովդէս. և Հրէից ազգապետ զԱրքելաւոս՝ նորին որդի Օգոստոս, կացուցանէ:

Գլուխ 26.

Շինուած Եղեգեաց տաճարին, և յետոյ հալածանք աղջկանց՝ առնել Մեծոյ Լևոնի որդւոյն:

Մինչ ո՛չ բազում աւուրց՝ վախճանի Օգոստոս, և փոխանակ նը թագաւորէ Հռովմայեցւոց՝ Տիբեր. և Գերմանիկոս՝ կեսար եղեալ, ձաղեաց զաւագերեալն 'ի Հռոմ, զիշխանսն Արշորէ, և Աբգարու՝ յաղագս պատերազմին նոց, յորում սպանին զերեքօք որդեքն Հերովդի. ընդ որ խոստացեալ Աբգարու՝ խորհի ապստամբութեն, և պատրաստութեն պատերազմի. յայնժամ չինէ քաղաք՝ զտեղի պահպանութեան զնիգն Հայոց՝ ուր յառաջագոյն զգուշանայքն Եփրատու 'ի կրասսուէ, որ կոչի՝ Եդեսիա. և փոխէ 'ի նա զարքունիսն իւր՝ որ 'ի Մծբին. և զկուռս իւր՝ զՆաբոգ, և զԲէլ՝ և զԲաթնիքաղ՝ և զԹարաթայ, և զՄատեանս Մեհենից Դպրժարանին, և միանգամայն զԴիւանս թագաւորացն: Յետ այոր՝ մեռեալ Արշաւիր, թագաւորէ 'ի վե Պարսից Արտաշէս՝ որդի նորա: Արդ՝ թէպէտ և ո՛չ է կարգ պատմութեան 'ի ժամանակի. և ո՛չ ըստ կարգի

է զոր ասելս ձեռնարկեցաք. այլ՝ քանզի սերունդք Աբշօրի Թագաւորի՝ են որ Հայոց ազգին հաւատոց եղեն առիթ, և Արտաշիսի՝ որդւոյ նո՛ր հարազատութ̃ի։ Սկիզբն արասցուք՝ յաղագս պատոճականութեանն մարդկանն՝ նախակարգեալ 'ի գիրսս առ ըն թեր Արտաշէսի, զի իմացիս՝ որք ընթեռնուն, եթէ համազգիք՝ Քաջին են. իսկ՝ զկնի այսր նշանակեսցուք զժամանակս՝ գալստեան հարցնոցա 'ի Հայս, որք են Կարենեանք; յորմէ Սբ̃ն Գրիգոր, և յորմէ Կամսարականք. յորժամ՝ 'ի շարի կարգին հասանիցեմք թագաւորին, որ զնոսայն ընկալաւ։ Բայց՝ Աբգարու ոչ աջողեցաւ խորհուրդն ապստամբութեան. զի խռովութ̃ի անկեալ 'ի մէջ ազգականացն իւրոց թագաւորութ̃ն Պարսից, զօրս ժողովեալ՝ անդ չուեր՝ համոզել զնոսա, և դադարեցուցանել։



Պրակ

Գլուխ 27.

Յաղագս երթալոյն Աբգարու յարևելս, և թագաւորեցուցանելոյ Պարսից զԱրտաշէս: Եւ թէ՝ զիարդ կարգեաց զեղբարս իւր, յորոց մեր Լուսաւորիչն՝ և ազգականքն իւր:

Երթեալ Աբգարու յարևելս՝ գտանէ թագաւորեալ Պարսից զԱրտաշէս՝ որդի Արշաւրի, և ընդդիմացեալ նմա զեղբարս իւր: քանզի նա խորհէր՝ ազգաւ 'ի վերայ նոցա թագաւորել, և նոքա ո՛չ առնուին յանձն. վ̃ն որոյ՝ պաշարեալ զնս̃ Արտաշիսի, և երկիւղ մահու եդեալ 'ի վ̃ ն̃ց, բազում պատուամունք, և անմիաբանութիւնք զօրացն, և այլոց ազգականաց լինէին. քանզի՝ Արշաւրի թողեալ էին որդիք Գ, և դուստր մի: առաջին, նոյն ինքն արքայ Արտաշէս. երկրորդ՝ Կարէն. երրորդ՝ Սուրէն: և քոյր նոցին՝ որ անուանեալ կոչիւր՝ Կոշմ, կին զօրավարին ամ̃ արեաց 'ի հօրէն կարգեալ: Իսկ՝ Աբգարու համոզեալ զնոսա խաղաղանալ, 'ի մէջ ամենեցուն հաստատէր՝ զայն ինչ սահմանելով, թագաւորել Արտաշիսի հանդերձ իւրովք ծննդովք, որպ̃ խորհեցաւ: և զեղբարս անուանել՝ Պալ-

Հաւա՛ յանուն քաղաքին իւրեանց, և աշխարհին մեծի՝ և քաջաբերոյ. որ՝ զի լինել նոցա պատուականագոյն, և Ասողին՝ քան զամ Նախարարութիւնս Պարթևաց, որ՝ արդարև Զարմն Թագաւորաց: Եւ՛ դաշինս՝ և երդմունս ՚ի միջի հաստատեալ, զի Թէ՝ դէպ լիցի սպառիլ Զարմից Արտաշիսի պատանեաց, նոքա մատիցեն ՚ի Թագաւորութիւն: Եւ՛ առաքայ Ցեղին նորա՝ Թագաւորեցելոյ ցեղս արտաշէալ զնոսա, երես կոչմամբ այսպիսեաւ՝ Կարենեան պահլաւ. Սուրենեան պահլաւ. և զքոյրն՝ Ասպահապետի պահլաւ. յանուն Տանուտէրութեն՝ և զնոցա անուն որոշեալ: Եւ՛ ասեն՝ զՍուրբն Գրիգոր՝ ՚ի Սուրենեան պահլաւէ. և զԿամսարականսն, ՚ի Կարենեան պահլաւէն: Այլ զայսր զօրոյն զարգախութե, ՚ի կարգին պատմեսցուք. միայն պատմելով այժմ առընթեր Արտաշիսի. զի ծանիցես զանցս զայս մեծ, Թէ հաւաստի արիւն Վաղարշակայ են. որ՝ Զարմ Արշակայ մեծի՝ եղբօր Վաղարշակայ: Եւ՛ այսոցիկ՝ այսպէս կարգեցելոց, և զգիր ուխտին՝ ընդ իւր առեալ Աբգարու, դառնայ ո՛չ առողջ մարմնով, այլ չարաչար ցաւովք՝ տխրացեալ:

Գլուխ 28.

Դարձ Աբգարու յարևելից, և տալ օգնականութիւն Արետայ ՚ի նորա՝ ընդդէմ Հերովդի Զօրքորդապետին ։



Բրև դարձաւ Աբգար յարևելից, լուաւ նա զհռօմայեցւոց՝ թէ ՚ի կասկածանս անկեալ են՝ վասն նորա, իբրև՝ թէ զկնի զօրու գնաց յարևելս. վս՟ որոյ՝ գրեաց առ գործակալս հռօմայեցւոց զպատճառս երթալոյն նր՟ ՚ի Պարս. միանգամայն և զգիր ուխտին, որ ընդ Արտաշիսի, և ընդ եղբարս նր՟՝ տայ տանել, և նոքա ոչ հաւատային նմա. վս՟ զի՝ և թշնամիք չարախօսք էին զնմանէ, պիղատոս, և Հերովդէս Զօրքորդապետ. և Լիւսինա Փիլիպպոս ։ Իսկ Աբգարու եկեալ ՚ի քաղաքն իւր յԵդեսեայ, միաբանեաց ընդ Արետայ՝ արքային Պատրիացւոց, սատարս նմա տալով ՚ի ձեռն Խորենայ ումեմն Արծրունւոյ՝ մարտնչիլ ընդ Հերովդի ։ Քանզի՝ նախ զդուստր Արետայ արքային՝ կին առեալ Հերովդի, և ապա անարգեալ՝ ՚ի բաց եթող. զի զՀերովդիադայ մեկնեալ յառնէն իւրմէ կենդանւոյ ՚ի բաց եհան. յաղագս որոյ՝ սաստեալ յանդիմանեալ ՚ի Յովհաննէ Մկրտչէ, այնր աղագաւ՝ եսպան զՅով

հաննէս Մկրտիչ ։ Եւ՛ եղեւ պատերազմ ընդ նոսա, եւ ընդ Արետա արքայ՝ վասն անարգանաց դստերն ․ յորում սաստկապէս հարեալ՝ սատակեցան զօրքն Հերովդի՝ յօգնականութէ Քաջացն Հայոց ․ ոպ՝ յԱծային իմն դոդցեա տեսչութէ վրէժս հատուցանել ընդ մահուանն Յովհաննու Մկրտչի ։

Գլուխ 29․

Առաքումն Իշխանացն Աբգարու առ Մարինոս, յորում տեսին զՓրկիչն մեր Քսն ․ ուստի եղեւ սկիզբն հաւատոցն Աբգարու ։

Ընդ այն ժամանակս եկաց 'ի գործ հազարապետութեան Կայսեր, 'ի վերայ Փիւնիկեցւոց, եւ Պաղեստինացւոց, Ասորւոց, Միջագետաց, Մարինոս՝ որդի Ստորոգեայ ։ Առ որ առաքեաց Աբգարոս երկուս 'ի գլխաւորաց իւրոց ․ զՄարիհաբ՝ Բդեաշխն Աղձնեաց, եւ զՇամշագրամ Նահապետ Ապահունեաց Տոհմին, եւ զԱնան հաւատարիմ իւր, 'ի քաղաքն Բեթգուբրին, զգացուցանել նմա պատճառս երթալոյն իւրոյ յարեւելս, ցուցանելով նմա զգիր ուխտին՝ որ ընդ Արտա

շէա՝ և ընդ եղբարս իւր, և առնել ըզ նա Թիկունս օգնականութեան. որոց եկեալ գտին զնա յԵրկեԹերոյպօլիս ։ Եւ նորա ընկալեալ զնոսա խաղաղութբ՝ և մեծարանօք. առնէ պատասխանի Աբգարու. մի՛ կասկածել 'ի Կայսերէ սակս այնր, միայն զհարկեն՝ լիով փուԹասցի ։ Եւ նոցա դարձեալ անտի ելին յԵրուսաղէմ, տեսանել զՓրկիչն մեր՝ Քս, վն լրոյ համբաւոց սքանչելագործութեանցն. որում և ականատես եղեալ՝ պատմեցին Աբգարու ։ Է որ՝ զարմացեալ Աբգարու, հաւատաց ճշմարտապէս՝ իբր արդարև Որդի Այ. և ասէ. այն զօրութիւք Այ են, և ո՛չ մարդոյ. զի չի՛ք ոք 'ի մարդկանէ՝ որ կարէ յարուցանել զմեռեալս՝ բայց միայն Ած ։ և քանզի ապականեալ էր մարմին նր 'ի չար ցաւոց՝ որ պատահեցին նմա 'ի պարսից աշխարհին՝ յառաջ. և աքան զեօԹն ամ, որ 'ի մարդկանէ ո՛չ եղև նմա հնարս բժշկութեան ։ ետ առնել առ նմա Թուղթ աղաչանաց, գալ՝ և բժշկել զնա 'ի ցաւոցն, օրինակ զայս ։

Թուղթ Աբգարու առ Փրկիչն Քս ։

Աբգար Արշամայ, իշխան աշխարհի, առ ՅԻՍՈՒՍ ՓՐԿԻՉ ԲԱՐԵՐԱՐ, որ երևեցար յԵրուսաղիմացւոց աշխարհին, Ողջոյն ։ Լուեալ է իմ վն քո, և վն բժշկութեանցդ՝ որ լինին 'ի ձեռս

քո, առանց դեղոց՝ և արմատոց. զի
ոչ առէք, այլ դու կուրաց տեսանել՝
և կաղաց գնալ, և զբորոտս սրբես, և
զայլս ախտս՝ և զդևս հանես. և որ
միանգամ չարչարեալ են յերկար հի-
ւանդութեամբք՝ բժշկես, դու՝ և զմե-
ռեալս յարուցանես: Եւ երբև լուայ
զ͞ն քո զայս ամ͞ն, եդի 'ի մտի իմում, մի
յերկուց. կամ թէ՝ դու ես Ա͞Ծ ի-
ջեալ յերկնից՝ և գործես զայդ, կամ թէ՝
դու ես Որդի Ա͞Յ, և զայդ առ-
նես: Արդ՝ վ͞ն այսորիկ գրեցի ես առ
քեզ, աղաչել զքեզ՝ զի աշխատ լինի-
ցիս, և եկեսցես առ իս՝ և բժշկեսցես
զհիւանդութիւնս, զոր ունիմ ես: Նաև
լուայ՝ զի և Հրեայք տրտունջ են զքէն,
և կամին չարչարել զքեզ. բայց՝ քա-
ղաք մի փոքրիկ, և գեղեցիկ է իմ, և
բաւական է մեզ երկոցունցս: Որոց
տարեալ զթուղթն՝ պատահեցին նմա
յԵրուսաղէմ: զայս վկայէ՝ և Աւետա
րանական Բանն. եթէ՝ եկին ոմանք, և
'ի հեթանոսաց յելելոց առ նա; վասն
որոյ՝ ո՛չ համարձակեցին, որք լուանն՝ ա-
սել ցՅ͞ս. այլ ասեն ցՓիլիպպոս, և
ցԱնդրէաս. Անդրէաս՝ և Փիլիպպոս
ասեն ցՅ͞ս: Իսկ՝ Փրկիչն ոչ
յայնմ ժամանակի, յաղագս կոչեցողին ըն
նա՝ ո՛չ եկաց յանձն, բայց՝ թղթոյ ար-
ժանի արար զնա, որ ունի օրինակ
զայս:

Պատասխանի Թղթոյն Աբգարու, զոր գրեաց Թովմաս Առաքեալ՝ հրամանաւ Փրկչին։

Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս, եթէ ո՛չ իցէ նա տեսեալ զիս. զի գրեալ է վ̃ն իմ այսպէս. զի՝ որք տեսանեն զիս՝ ո՛չ հաւատայցեն յիս, եւ որք ո՛չն տեսանիցեն զիս՝ նոքա հաւատասցեն՝ եւ կեցցեն։ Իսկ վ̃ն այնր՝ զի գըրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ, արժան է ինձ՝ աստ կատարել զա̃մ ինչ, վասն որոյ առաքեցայ յԵրուսաղէմ։ Երբեւ կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս. եւ յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց՝ զի ըզ քո ցաւսդ բժշկեսցէ, եւ կեանս քեզ, եւ որոց ընդ քեզ են՝ շնորհեսցէ։ Զայս՝ թուղթ եբեր Անան՝ Սուրհանդակ Աբգարու, ընդ որում՝ եւ զկենդանագրութիւն Փրկչական պատկերին, որ կայ յԵդեսացւոց քաղաքին։



Գլուխ 30.

Քարոզութիւն Յեդեսիայ՝ Առաքելոյն Թադէոսի, և պատճէն թղթոյն հնգից։

Բայց՝ յետ համբառնալոյն Փրկչին մերոյ, Թովմաս առաքեալ՝ մի յերկոտասանիցն, առաքեաց զԹադէոս՝ որ էր մի յեօթանասնից անտի, 'ի քաղաքն յեդեսիայ՝ բժշկել զԱբգար, և աւետարանել՝ ըստ բանին Տն։ Որոյ եկեալ՝ եմուտ 'ի տուն իշխանին Հրէից, զոր ասեն՝ լինել յազգէն Բագրատունեաց. որոյ խուսեալ յԱրշամայ, ոչ ուրացաւ զՀրէութիւն՝ ընդ այլ ազգականս իւր, այլ՝ նովին օրինօք եկաց՝ մինչև հաւատալ 'ի Քս. և էլ համբաւն՝ ընդ ամ քաղաքն։ Լուեալ Աբգարու ասէ. նա է, վասն որոյ գրեացն Յս. և խնդրոյն կոչեաց զնա։ և եղև 'ի մտանելն Թադէի, տեսիլ սքանչելի երևեցաւ յերեսսն Թադէի։ Յարուցեալ անկաւ առ ոտս նորա 'ի գահոյիցն 'ի վր երեսաց իւրոց՝ և երկիր եպագանէր. և զարմացան ամ իշխանքն՝ որք շուրջ կային, զի ոչ գիտացին ըզ տեսիլն։ Եւ ասէ ցնա՝ Աբգար, եթէ՝ դու իցես արդարև՝ Աշակերտ Օրհնելոյն Յսի, և կարող իցես բժշկել ըզ

ցաւս

ցաւս իմ։ Պատասխանի ետ նմա Թադէ. եթէ հաւատացեր 'ի Յս̃ Քս̃ Որդի ԱՅ, տացին քեզ խնդրուածք սրտի քո։ Այսէ ցնա Աբգար, ես հաւատացի 'ի Նա՝ և 'ի Հայր նորա. վս̃ որոյ՝ կամեցայ առնուլ զզօրս, և գալ կոտորել զՀրէայսն՝ որք խաչեցին զնա, եթէ ո՛չ էր իմ արգելեալ՝ վս̃ թագաւորութեն Հռօմայեցւոց։ Եւ յայսմ բանից սկիզբն արարեալ Թադէի, աւետարանեաց նմա՝ 'ի քաղաքին նորա. և եդեալ ձեռն 'ի վերայ՝ բժշկեաց զնա, և զԱբդիու Պատագրոս՝ իշխան քաղաքին՝ պատուականն յա̃մ տանն արքայի. նաև՝ զամ̃, որք էին 'ի քաղաքին՝ հիւանդք, և ախտաժետք, բժշկեաց. և հաւատացին ամենեքեան. և մկրտեցաւ ինքն Աբգար՝ և ամ̃ քաղաքն. և զդուրս տաճարաց կռոցն փակեցին. և որք 'ի վր̃ բագնին՝ և սեանն կային պատկերքն, ծածկեալ պատեցին եղեգամբ։ բայց ո՛չ զոք ածէր բռնութ̃ 'ի հաւատս. այլ՝ օր ըստ օրէ յաւելել̃ 'ի հաւատսն բազմանային։ Իսկ առաքելոյն Թադէի զԽոհարար ոմն՝ Մետաքսագործ՝ մկրտեալ, և յանուն կոչեցեալ Ադդէ՝ ձեռնադրեալ 'ի վերայ Եդեսեայ, փոխանակ իւր Թողու՝ առ արքայի. և իւր առեալ Հրովարտակ յԱբգարէ՝ զի ամ̃ենքն լուիցեն աւետարանին Քրիստոսի. գայ առ Սանատրուկ՝

Քեռորդի նորին, որ կարգեալ էր 'ի վերայ աշխարհին՝ և զօրաց։ Բայց Աբգար յօժարեցաւ գրել թուղթ՝ առ Տիբեր, որ ունէր օրինակ զայս։

Թուղթ Աբգարու՝ առ Տիբեր։

Աբգար Արքայ Հայոց, Տեառն իմում Տիբերի՝ կայսեր Հռոմայեցւոց՝ խնդալ։ Գիտեմ իմ եթէ՝ ոչ ինչ ծածկի 'ի քումմ թագաւորութենէդ. այլ իբրև զմտերիմ քո՝ առաւել ևս խնդացուցանել 'ի ձեռն գրոյ. զի Հրէայքն, որք բնակեալք են 'ի Գաւառս պաղեստինացւոց, ժողովեալ՝ խաչեցին զՔս՝ առանց իրիք յանցանաց 'ի վերայ մեծամեծ երախտեացն, զոր արար առ նոսա, նշանս՝ և սքանչելիս. մինչև՝ զմեռեալս միանգամայն յարուցանել։ Եւ գիտեա, զի զօրութիւնս այս՝ ոչ են սոսկ մարդոյ, այլ՝ Այ. զի՝ և 'ի ժամանակին, յորում խաչեցին զնա, արեգակն խաւարեցաւ, և երկիր շարժեալ՝ տատանեցաւ. և ինքն յետ երից աւուրց յարեաւ 'ի մեռելոց, և երևեցաւ բազմաց. և այժմ, անուն նորա յամ տեղիս 'ի ձեռն աշակերտաց նորին՝ սքանչելիս մեծամեծս կատարէ. որ՝ և առ իս եցոյց յայտնապէս։ Եւ արդ՝ այսուհետև Տէրութիւնդ քո գիտէ հրամայել 'ի վերայ ժողովրդեանն

հրէից ,

Հրէից, որք զպիղծ գործեցին. և զերեւ ընդ նմ ունկղերը . զի երկիրպագեսցեն Քրիստոսի՝ երրորդ ճշմարտին Աստուծոյ. Ողջ լեր :

Պատասխանի Ողորմեայ Ահգարա 'ի Տէ-րերէ:

Տէրերը կայսր Հռոմայեցւոց, Ահ-գարու Թագաւորի խնդալ:

Զթուղթ մտերմութեան քոյ ընթերցան առաջի իմ, վասն որոյ՝ շնորհակալութիւն 'ի մէնջ քեզ հասցէ : Թէպէտ՝ և 'ի բազմաց յառաջագոյն լուեալ է մեր զայդ : եցոյց ստուգապէս և պիղատոս՝ վասն նշանաց նր, և եթէ՝ յետ յարութեան 'ի մեռելոց՝ հաւատարիմ եղև՝ թէ Աձ է : վասն որոյ՝ և ես կամեցայ առնել զայդ՝ զոր դուդ խորհեցար. այլ՝ քանզի սովորութիւն է Հռոմայեցւոց, Աձ միայն 'ի հրամանէ թագաւորին ոչ հաստուցանել՝ մինչև ոչ փորձեալ քննեսցի նա 'ի Սինկղիտոսէն. վասն որոյ՝ և իմ յայտնեալ զբանս զայս Սինկղիտոսին, արհամարհեաց Սինկղիտոսն՝ զի ոչ քննեցաւ նա յառաջագոյն 'ի նմանէ. այլ՝ մեք տամք հրաման իմ ումեք, որում և հաճոյ թուեսցի Յէսուս՝ ընկալցի զնա ընդ Աձս. և մահ այնոցիկ սպառնացեալ, որք չարախօս կայցեն զՔրիստոնէից: Եւ վն ժողովրդեանն Հրէից՝ որք յանդգնեցան խա

չել զնա, զորմէ լսեմ եթէ՝ ո՛չ արժանի խաչի էր նա, այլ պատուոյ՝ և երկրպագութեան։ յորժամ, առից պարապումն 'ի պատերազմէ Սպանիացւոց՝ ապստամբողաց յինէն, քննեալ հատուցից նոցա զարժանն։

Պատճէն գրոյ թղթոյն Աբգարու առ Տիբեր։

Աբգար արքայ Հայոց, Տեառն իմում Տիբերի՝ կայսեր Հռոմայեցւոց՝ խնդալ։ Զթուղթ գրեալ՝ ըստ արժանի քոյ տէրութեանդ՝ առաքի. և է հրաման մատածութեանդ քո՝ ուրախացայ. և եթէ՝ ո՛չ ինձ ցասնուցուս, գործ Սինկլիտոսիդ է յոյժ այպանելի. քանզի՝ առ դոսա, 'ի քննութենէ մարդկան՝ տուեալ լինի Ածութիւն։ Եւ արդ՝ այսուհետև եթէ ո՛չ լինիցի Ած հաճոյ մարդկան, Աստուած լինիլ նա ո՛չ կարէ, և իբրև՝ յայսմանէ մարդոյն՝ արժանէ քաւել զԱծն։ Բայց՝ քեզ Տեառն իմում հաճոյ թուեացի առաքել յինէն, փոխանակ Պիղատոսի, զի լուծցի նա յիշխանութենէն՝ զոր կարգեցեր զնա. վասն զի՝ արար զկամս հրէից, և խաչեաց զՔս առանց քոյոյ հրամանի. ողջ լինիլ քեզ ըղձանամ։ Զայս գրեաց Աբգարու՝ զհաւասար թղթոյն, եդ 'ի

Դի

'Ի Դիւանի իւրում, ոպ և զայլսն ։ Գրեաց և առ Ներսեհ, Մանուկ արքայ Ասորեստանի 'ի Բաբելոն ։

Թուղթ Աբգարու առ Ներսեհ ։

Աբգար արքայ Հայոց, որդւոյ իմոյ Ներսեհի՝ խնդալ ։ Զգիր ողջունի քոյ առի, և զՊետրոս լուծի 'ի կապանաց, և զխռով նորա թողի ․ և եթէ կամ իցէ քեզ՝ կարգեսցես զնա 'ի Վերակացութեն Նինուէի, ոպ և կամիս ։ Այլ վասն այնր զի՝ գրեցերն առ իս, եթէ տուր ածել զայրդ Բժիշկ, որ զնշանսդ առնէ, և քարոզէ այլ Աստուած՝ որ 'ի վեր է քան զհուր, և զջուր ․ զի տեսից՝ և լուայց զմա ։ Նա ո՛չ էր բժիշկ՝ ըստ արուեստից մարդկան, այլ՝ աշակերտ Որդւոյն ԱԾ, Արարչին հրոյ՝ և ջրոյ, և վիճակ հասեալ՝ 'ի կողմանս Հայոց առաքեցաւ ։ Բայց՝ յընկերաց նորա գլխաւորաց՝ Սիմոն անուն, անդր՝ 'ի կողմանս պարսից առաքեցեալ է, խնդիր արարեալ՝ լուիցես զնմա ․ յորժամ, և հայրն՝ քո Արտաշէս ․ և նա բժշկեսցէ զամ հիւանդութիւնս, և ճանապարհ կենաց ցուցցէ ։ Եւ յաւել եւս՝ գրել առ Արտաշէս արքայ պարսից՝ օրինակ զայս ։

Թուղթ Աբգարու առ Արտաշէս:

Աբգար արքայ Հայոց, Արտաշիսի եղբօր իմոյ՝ արքայից արքայի, խնդալ: Գիտեմ, զի արդ՝ լուեալ է վ̃ Յ̃ն Ք̃ն, Որդւոյն Աստուծոյ, զոր խաչեցին Հրեայք. որ յարեաւն 'ի մեռելոց, և առաքեաց զաշակերտսն իւր ընդ ա̃մ տիեզերս ուսուցանել ընդհանուր: և մի յաշակերտաց նորա գլխաւորացն՝ Սիմոն անուն՝ է 'ի կողմանս քոյ Տէրութեան: Արդ՝ խնդիր արարեալ՝ գտցես զնա, և նա բժշկեսցէ զամենայն ախտս հիւանդութեանց՝ որ 'ի ձեզ, և ճանապարհ կենաց ցուսցէ. և հաւատասցես բանի նորա դու՝ և Եղբարք քո, և ա̃մ՝ որք հնազանդեն քեզ կամաւ. զի ախորժելի է ինձ, ըզ ձեզ ըստ մարմնոյ ազգականս իմ, լինել ինձ մտերիմ հարազատս՝ և ըստ հոգւոյ: Իբր մինչ դեռ՝ պատասխանի այսց թղթոց ո՛չ էր ընկալեալ, վախճանի Աբգարոս, թագաւորեալ ամս 38:



Գլուխ 31.

Յաղագս Վկայութե Առաքելոցն Տեառն

Յետ մահուանն Աբգարու՝ թագաւորն թագաւորութեան հայոց յերկրում։ քանզի՝ Անան, որդի նորա՝ թագ՝ կապեալ թագաւորել յԵդեսիայ. եւ Սանատրուկ՝ քեռորդի նորին՝ ի հայս։ Գրեսցի՝ որ ինչ առ մոլոյն ժամանակաւ՝ յառաջաբանս գրեալ յԱմայոց։ Դաւլաւան Առաքելոյն Թադէի ՛ի հայս. եւ հաւատալ Սանատրկոյ. եւ Թողուլ զհաւատսն՝ յերկիւղէ նախարարացն հայոց. եւ կատարումն առաքելոյն, եւ դստեր նորա՝ ի Գաւառին Շաւարշան. Ապա սպան զորդի՝ Աբգարու։ եւ պատուանդանն քաղաքին, եւ յերեսաց զայլ՝ եւ զնդունելն զմարմինս առաքելոյն, եւ առնուլ անուն աշակերտացն՝ եւ Թաղել ՛ի դաշտին։ եւ մարտիրոսանալ Դստերն որ քաջն Սանդուխտոյ՝ հուպ ի մահուանն։ եւ ապա աւելի՝ յայտնել նշխարացն երկոցունց՝ եւ փոխելոյ յառաջարին։

Այս ամ, որպէս ասացաք, յԱյլոց պատմեալ՝ յառաջագոյն քան զմեզ՝ ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք, երկրորդել զնոյն։ Դոյնպէս՝ եւ որ ինչ զմ կատարմանն Ադդէի՝ աշակերտի Առա

քելոյն՝ յԷդեսեայ յորդւոյն Աբգա-
րու դստանի, յԱյլոց պատմեալ՝ յառա-
ջագոյն քան զմեզ ։ Որ իբրև թագա-
ւորեաց՝ յետ հօրն մահուան, ոչ եղև
ժառանգորդ՝ հայրենի առաքինու-
թեն. այլ եբաց զառաջար կուոցն, և
կալաւ զպաշտօն հեթանոսութե. և
յղեաց Ադդէ, զի արասցէ նմա խոյր
բեհեզեայ, անկուածոյ ոսկւոյ՝ որպէս
յառաջագոյն առնէիր հօր իմոյ ։ Եւ
պատասխանի ընկալաւ, եթէ՝ ոչ ա-
րասցեն ձեռք իմ խոյր զագաթան ա-
նարժանի, որ՝ ոչ երկրպագէ Քի,
կենդանւոյ Այ ։ և իսկոյն՝ հրամայ-
եաց զինակրացն՝ կորել զառան նը որ
րով, որոյ երթեալ՝ և տեսեալ զնա,
զի նստէր յաթոռ վարդապետութե՝
էած սուսերաւ, և 'ի բաց կորեաց ըզ-
սրունս նորա ։ և նոյնժամայն՝ աւանդ-
եաց զհոգին ։ Զայս ծայրաքաղ արա-
րեալ համառօտ յիշատակեցաք ։ զի ա-
ռա 'ի յԱյլոց պատմեալ նախնեաց ։
Բայց վիճակեցաւ հայոց՝ և Բարդու-
ղօմէոս Առաքեալ. որ և կատարեցաւ
առ մեզ Յարևբանոս քաղաքի ։ Իսկ
զՍիմոնէ՝ որ պարսիցն վիճակեցաւ.
ոչ զհաւաստանն կարեմ պատմել, թէ՝
զինչ գործեաց, և կամ, ո՛ւր կատարե-
ցաւ. քանզի պատմի յՈմանց՝ Սիմո-
նի ումեմն առաքելոյ՝ կատարիլ 'ի Վե-
րիոսփորա. եթէ՝ նա իցէ ճշմարիտ.

և եթէ՝ է՞ր աղագաւ գալուստ նորա անդր, ո՛չ գիտեմ. այլ՝ միայն նշանակեցի, զի գիտասցես՝ եթէ ո՛չինչ մնաց, ՚ի մէջ բանից պատմել քեզ զնմ, որ ինչ անկ է։

Պրակ 32.

Վասն Սանատրկոյ Թագաւորութեան, և ըսպանման ծննդոցն Աբգարու. և Վ՟ Հեղինեայ Տիկնոջ։

Սանատրուկ թագաւորեալ, զօրս ժողովէ ՚ի ձեռն քաջացն Բագրատունեաց՝ և Արծրունեաց՝ դայեկաց իւրոց, ջանել՝ տալ պատերազմ ընդ որդւոցն Աբգարու. զի՝ բոլորումն տիրեսցէ Հայոց թագաւորութեան։ Եւ մինչդեռ յայսմ էր, Ածային իմն ակնարկութբ՝ խնդրեցաւ վրէժ մահուանն Ադդէի որդւոյն Աբգարու։ Քանզի՝ սիւն կճեայ կանգնել տայր յԵդեսեայ ՚ի վերնատունս ապարանից իւրոց. և ինքն ՚ի ներքոյ կալով՝ հրամայէր զորպէսն առնել. որ զերծեալ յուսնողացն, անկաւ ՚ի վ՟ն՟՝ և խորտակեաց զոտսն, և սատակեաց։ Եւ՛ իսկոյն պատգամ բնակչաց քաղաքին եկն առ Սանատրուկ՝ խնդրել պայման ուխտի, զի մի՛ վրդովեսցէ զնոսա ՚ի հաւատոց Քրիս

ատենէից, և նոքա ասացեն նմա զբա_
զաքն ի ձեռս, և զգանձս թագաւո_
րին, զոր արարեալ՝ յետոյ ատեաց,
նաև՝ զնոյն զաւակ տանն Աբգարու մա_
շեաց որով՝ բաց յազգիանց, զորս է_
հան ՚ի քաղաքէն, բնակել ՚ի կողմանս
հաշտենից: Սայեա՝ և զգլուխ կա_
նանցն Աբգարու՝ որում անուն էր Հե_
ղինէ, առաքեաց բնակել ՚ի խառան՝
յիւրայլն քաղաքն, թողլով նմա զՏէկ_
նութիւն ամենայն միջագետաց, փոխա
նակ բարեացն, զորս գտեալ էր ընդ
ձեռն նորա՝ յԱբգարէ: Այս Հեղինէ
զարդարեալ հաւատովք, որպէս և զայր
իւր, ոչ հանդուրժեաց բնակել ՚ի մէջ
կռապաշտիցն, այլ չոգաւ յԵրուսա_
ղէմ, յաւուրս Կլաւդեայ, ՚ի սովին զոր
մարգարէացաւ Ագաբոս, և առեալ
զգանձս իւր զամենայն յԵգիպտոս՝ գն_
նեաց ցորեան բազում յոյժ, և բաշ_
խեաց յամենայն կարօտելոց: որում
վկայէ՝ և Յովսեփոս: Այս շիրիմ նշա_
նաւոր կայ առաջի դրանն Երեմիայ՝ մին_
չև ցայսօր:



Գլուխ 13.

Յաղագս նորոգման Մծբին քաղաքի. և անուանափոխութեն Անտիոքեայ, և մահուան նորին:

Այլ՝ որ ինչ գործք եղեն Սանատրկոյ, ո՛չ ինչ արժանի յիշատակի համարեցաք. բայց ի շինուածոյ Մծբին քաղաքի. զի՝ ի շարժմանէ խախտեալ քանդեալ էր, և վերստին շինեաց պայծառագոյնս. և պարսպեաց պարսպաւ՝ կրկին պատուարով. և զինքն Անդրի ի մէջ հաստատեաց, մին դրամ՝ ի ձեռաքինս ունելով, որ նշանակէ այսպիսի ինչ. թէ՝ ի շինել քաղաքիս. ամ գանձքս ծախեցան, և այս միայն մնաց: Բայց թէ ընդէ՞ր Սանատրուկ կոչեցաւ, ասելի է. քանզի յաւուրս ձմերայնւոյ՝ ճանապարհորդեալ քոյր Աբգարու՝ Օդէ ի Հայս, պատահէ բքոյ ի լերինս Կորդուաց, ցրուեաց զամենեսեան մրրիկ, մինչ՝ ո՛չ գիտելով ընդ որ վարեցաւ այր զընկեր: Իսկ Դայեկի նորա՝ Սանոտայ, քեռ Բիւրատեայ Բագրատունւոյ՝ կնոջ Խոսրովու Արծրունւոյ՝ առեալ զմանուկն, քանզի՝ տղայ էր, եդ ի մէջ ստեանց իւրոց՝ մնալով ի ներքոյ ձեան, զերիս աւուրս՝ և զերիս գիշերս: զորմէ առաս

պելաբանեն թէ՝ կենդանի իմն նորա-
հրաշ սպիտակ՝ յԱծոցն առաքեալ, պա-
հէր զմանուկն: Բայց որչափ մեք ե-
ղաք վերահասու՝ այսպիսի է. շուն ըս
պիտակ՝ ընդ խնդրական լեալ պատա-
հեաց մանկանն, և դայեկին: Արդ կո-
չեցաւ Սանատրուկ, 'ի Դայեկէն զա-
նուանակոչութիւն առեալ՝ որպէս թէ՝
Տուրք Սանոտոյ: Սա թագաւորեալ
յերկոտասաներորդ ամի Արտաշէսի
արքայի Պարսից. կեցեալ ամս՝ 30. մե
ռաւ յորս, նետի ուրուք դիպեալ փո
րոտեացն. իբրև թէ վրէժս հատու-
ցեալ՝ ընդ չարչարանս Սրբոյ Դստերն
իւրոյ Սանդխտոյ: Ղերուբնայ որդի
Ափշադարայ Դպրի՝ գրեաց զամենայն
գործս՝ որ ինչ յաւուրս Աբգարու՝ և
Սանատրկոյ, և եդ 'ի Դիւանին յԵ-
դեսեայ:

Գլուխ 34.

Թագաւորել Երուանդայ, և կոտորել զոր-
դիսն Սանատրկոյ, և զերծանել Ար-
տաշիսի փախստեամբ:




Յետ մահուանն Սանատրկոյ
Արքայի, շփոթի իմն թա-
գաւորութիւն: քանզի՝ Եր-
ուանդ ոմն՝ որդի կնոջ Ար
շակունւոյ՝ թագաւորէ յութերորդ ա-

մի՝

մի՝ Դարեհի Պարսից արքայի Վերջ-
նոյ ։ և ունի զրոյց յաղագս սորա՝ այս
պէս ․ Կին ոմն՝ յազգէ Արշակունեաց,
անձամբ հարստի և խոշորագեղ՝ վա-
րար, զոր ո՛չ ոք դիմագրաւեաց առ-
նութեն ։ Ծնանի երկուս մանկունս՝
յանկարծ խառնակութէ, ոմ՝ Փաւի-
փայ զՄոնոգորոս ։ Եւ՛ 'ի զարգանալ
մանկանցն՝ կոչեն անուանս, Երուանդ,
և Երուազ ։ և 'ի չափ հասեալ Երուան
դայ, լինի սրտեայ, և անդամօք յաղթ ։
սա՝ և 'ի քաջազուն իւր վերակացու ա-
ռաջնորդութե առաքեալ 'ի Սանատր
կոյ, գտանի երևելի ․ մինչև՝ Առաջին
Նախարարացն լինել ամենայն Հայոց
զօրացն ․ և խոնարհութե, և առա-
տաձեռնութե զամ ոք յանկուցեալ
յինքն յարեցայց ։ Եւ 'ի մեռանիլ Սա-
նատրկոյ, մեծարանեալ՝ Թագաւորեցու-
ցին զնա, առանց արանց ազգին Բագ-
րատունեաց լինել Թագադիր ։ Բայց 'ի
Թգւորելն իւրում Երուանդ, կասկած
ունելով յորդւոցն Սանատրկոյ, կոտո-
րէ զամենեսեան ․ Թուի՝ վրէժս հա-
տուցան սպանման որդւոցն Աբգա-
րու ։ Բայց մի ոմն տղայ՝ Արտաշէս
անուն, զոր առեալ Ստնտուի նորա՝
փախեաւ 'ի կողմանս Հերայ, 'ի վանս
հովուաց՝ վասն մեղխազանէ ․ լուր տա-
նելով Դայեկի նորա Սմբատայ՝ որդ-
ւոյ Բիւրատայ Բագրատունւոյ, 'ի

Սպեր Գաւառի, ՚ի շէնն Սմբատաւանի ։ Այրդ՝ եբրև լուաւ Սմբատ՝ որդի Բիւրատայ՝ զբօթն Սանատրկոյ, և զգոյժ կատարման որդւոց նր. առեալ զերկոսին դստերս իւր զՍմբատանոյշ՝ և զՍմբատանուհի՝ նստուցանէ ՚ի Բայբերդի. որ քաջ թողլով ՚ի վերայ ամրոցին. և ինքն հանդերձ կնաւ իւրով և սակաւ արամբք, փախ անցանէ՝ ՚ի խնդիր Սանատրկոյ Արտաշիսի ։ Որում երաշխաւոր եղեալ արքայն Երուանդայ՝ Հետայոյզն առաքէ. վասն որոյ՝ բովանդակ ժամանակս ընդ երեսս լերանց, և դաշտաց, այլակերպեալ շրջելով հետի՝ հանդերձ Սանատրկաւն, մնացանէ ՚ի հովուաց վանս, և յանդէպ որդւոյ, մինչև պարապ գտեալ ժամանակաց առ Դարեհ արքայ Պարսից ։ և քանզի՝ այր քաջ էր Սմբատ, և ծանօթ յառաջագոյն, պատուի մեծապէս ընդ Զօրագլխաւորս Պարսից ։ սնուցեալ՝ և Սանուկն ընդ որդիս Թագաւորին, անդի բնակութեան առեալ զԹաւս, և զՈղ՝ անն կոչեցեալ Գա-

ւառ ։




Գլուխ ՅԹ.

Ու ինչ չափ Երանութեան՝ վասն Դ բանին տանջելոյ զմարմինն Աւգոստինոս. եւ ՚ի նոյն հոգւոյ զՄելքիզեդեկ.

Այս Երանութեանս զմտաւածեալ՝ թէ, ո՞րպիսի չափ են թագաւորութեան՝ անունք ՚ի Մարդ. խելմ ՚ի տղայք լինելով՝ ո՛չ հեշտալի լինելոյ զուենն. հաւատալով յարութեան յայն հաշտելով. նաեւ ՚ի քուն՝ անուրջն ահաւոր նանին երի տեսանելը. վա՛ ոչ ՚ի ձեռն Հրեշտակաց, եւ պատուարագաց՝ խնդրեր հաշտեցուցանել զարքայն Պարսից, այլ ՚ի ձեռն զԱստուածն. ասելով, թէ՝ արիւն իմ, եւ հարազատութիւն, ընդ էր անուանեալ զՄարդ՝ զԱստուածն՝ հակառակ խոյս թագաւորութեան, լսելով բանից Սմբատայ եղբաւրն, որպանէ, թէ՝ որդի է Աստուծոյ Սամուէկոյ. եւ զորդի Հոփնեաց՝ եւ Անդէոսգայց՝ ջանայ առնել Աշխարհութիւն, եւ արիւն քո, եւ հարազատութիւն. համբաւելով զնմանէ, թէ չէ իւր որդի Սանատրկոյ, այլ՝ ընդ խառս գնեալ Սըմբատայ զՄարմին՝ տղայ բաշխաղի: Նոյնպէս՝ եւ առ Սմբատ յղէր բազում անգամ, թէ ընդէ՞ր այդքան անոսնի աշխա

տուլթն կրեա՝ խաբեալ 'ի Սանատրուկէդ, սնուցանեա զորդի Մարիդ՝ Հակառակ բնձ ։ Եւ՞ լուէ՝ ո՛չ սիրելի բանս պատասխանեաց ․ յայնժամ՝ առաքէ Երուանդ, և տապակէ զքաջան 'ի Բայ բերդի ․ գերելով զդստերսն Սմբատայ՝ պահէ յամրոցին յԱնի, ո՛չինչ վատթարագոյն ։ Բայց թիկունս առնելով Երուանդայ զՀռոմայեցիս, ո՛չինչ վտանգի 'ի թագաւորութեն Վեսպասիանոսի, և Տիտոսի, թողլով 'ի նոսա զՄիջագետս ․ և յայնմհետէ բարձաւ իշխանութիւն Հայոց 'ի Միջագետաց ․ և հարկս ևս աւելագոյնս տայր 'ի Հայոց Երուանդ ։ Իսկ՝ Հռոմայեցւոց Գործակալաց՝ մեծապէս հանդերձեալ զքաղաքն Եդեսեայ, 'ի նմա հաստատել զտունս գանձուց՝ հարկացն ժողովելոց 'ի Հայոց՝ Միջագետաց՝ և յԱսորեստանեայց ։ և ժողովեն 'ի նա զամենայն Դիւանս ․ և կարգեն դըպրոցս՝ Է երկու ․ մին՝ զբունն իւրեանց զԱսորին, և միւսն ես՝ զՅոյնն ։ և ըզ Դիւանն հարկաց՝ և զՄեհենականն, որ կայր 'ի Սինոպ Պոնտացւոց՝ անդր փոխեն ։



Գլուխ 36.

Յաղագս Շինուածոյ Երուանդաշատ քաղաքի։



Սորա աւուրս՝ փոխին Արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ. քանզի էր հեռացեալ գետն Երասխ, և 'ի յերկարել ձմերայնւոյն՝ 'ի դառնահոս փչմանէ Հիւսիսոյ՝ պաղեցեալ ձուլեալ վտակն, ոչ ուստեք արբուցումն թագաւորականին գտանիւր տեղւոյ։ Ընդ որ՝ նեղեալ Երուանդայ, նաև ամրագունի ևս տեղւոյ ելեալ խնդէր. փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս՝ 'ի քառակուսի մի բլուր, զորով պատատեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեան հոսի գետ. պարսպէ զբլուրն, և 'ի ներքսագոյն քան զբլուրն պարիսպն, ընդ բազում տեղիս՝ կարեալ զքարինսն մինչև՝ 'ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև 'ի դիմել ջուրց գետոյն՝ 'ի փորուածն յըմպելեաց պատրաստութիւն. զմիջնաբերդն ամրացուցանէր՝ բարձր պարսպօք. և դըռունս պղնձիս կանգնէր 'ի միջոցի պարսպին. և ելանելիս երկաթիս ներքուստ 'ի վեր, մինչև 'ի դուռնն. և 'ի նմա որոգայթս իմն ծածուկս՝ ընդ

մէջ սատրապանացն, որք՝ զի ընթանեն առ-
ջի, եթէ ոք զաւազան ելանելով՝ դառնել
կամիցի զարքայն։ Իսկ երասանն՝ երկրորդ
մի. այլ, զի՝ միշտ լիցի Սպարապետութեանց
Արքունի, և տեղ եւ և մատեց՝ ծանու-
ցանել հանդերձեալին։ Իսկ՝ միւսն զերծե
րայլին՝ և մարդադրաւաց։

Գլուխ. 37.

Եթէ՝ ո՛րպէս շինեաց զԹագաւորան քաղաք Կառոց.

Բ Այց երրորդ ամին շինեաց ըստ քաղաքն իւր, և փոխեաց անդր զամ իւր յԱրմաւիրոյ ուրոյն 'ի կարգն. զորս ոչ օգուտ իւր համարեալ մերձ փոխել 'ի քաղաքն. զի մի 'ի զատ և 'ի դրժել անդր աշխարհին՝ ոչ [illegible] արարանել քա-
ղաքն. այլ՝ հետագոյն 'ի նմանէ, եւր բառառնանց, զՀիւսիսեան նմանն իւրոյ քաղաքին՝ շինեաց քաղաք փոքր՝ 'ի մէջ գետոյն Ախուրեանայ, և անուանեաց Թագաւորան, այսինքն՝ թէ 'ի նմա զԹագաւորացն յօրինեալ և զնորա մնութիւն։ և փոխեաց անդր զամ իւր կուռոն՝ որ յԱրմաւիր. և Մեհեան շինեալ՝ զերեւելիս իւր զերկուց՝ Բազմա-
պետ կացուցանէր։

Գլուխ 38.

Վասն գեղեցիկ զանգուածոյ՝ որ կոչի Ծննդոց։

Տ[illegible] և Մովսէս մեծ՝ ց[illegible] ոսյ կողմանէ գետոյն, և որ մօտ է ամբարացուցանէ․ աւրհնել լով 'ի նսերքս այծեմանեայ ե-րագտանս, և զերզանց՝ և զեղջերուաց ազգ՝ և զխոզ՝ և վարազաց, որք 'ի բաղ-մութին անձեցեալ՝ լինին զանասունս․ ո-րակէ [illegible] թագաւորին յա-ւարքս [illegible]․ և [illegible] զանասունս Ծննդոց։

Գլուխ 39։

Վասն Զեռամիերորդին՝ որ կոչի Երրորդ-դպրոց։

Այդր է [illegible] և յաղագս գեղեցիկ Զեռամիերորդին ե-[illegible], զոր յօրի-նեաց [illegible] երամ[illegible]․ գեղեցիկ՝ և [illegible]։ [illegible] զգեղեցիկ հովտին [illegible] մարգ-կութիւն՝ և [illegible], [illegible], [illegible]․ [illegible]՝ [illegible] մարդկութիւն՝ Ծառայիցոց, և [illegible] կարգութիւն, [illegible]՝ որ [illegible]

բռաւն, զայլ բոլորակութիւն ական։ Իսկ զբազմութիւն այգեստանեացն, երբ զարտեւանանաց խիտ, և գեղեցիկ ծէր․ որոյ Հիւսիսայինն կողմանն՝ դիր նկարաձև, արդարև Գեղաւոր կուսից յօնից դարևանդաց Հանդես․ իսկ 'ի Հարաւոյ դաշտաց, ծնօտից գեղեցկութիւն պարզութիւն․ իսկ զերան բերանաբացեալ դարաւանդօք ափանցն, զերկթերթիան նշանակէ շրթունս։ Եւ այսպիսի գեղեցկութիւն դիր՝ անքթթելի իմն դոդցես՝ 'ի բարձրաւանդակ թագաւորանիստն զՀայեցուածս ունի․ և արդարև՝ բերրի, և թագաւորական Դաստակերտ։ Զայսմ գործեցեալ երուանդայ, պարգևէ Մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, որ զՄատրմաց՝ և Արեանց կցորդաց՝ Ազգին Արշակունեաց, զոր յիւրում տեւոջն՝ պատմեսցուք։ Բայց ասեն, զԵրուանդայ՝ ըստ Հմայից՝ դժնեայ գոլ ական Հայեցուածովն․ վասն որոյ՝ ընդ արգանալ աչալրջոցն՝ սովորութիւն ունել ասեն՝ Սպասաւորացն արքունի, մէմ որձաքարեայս ունել ընդդէմ երեսան դեմոյ, և 'ի Հայեցուածէ սաստն՝ դժնէութեն, պայթիլ որձաքար վիմացն․ բայց այս՝ կամ եղիցի սուտ՝ և առասպել, և կամ, ոյժ դիւականս առ իւր ունել զօրութիւնս․ զի՛ այսպէս, Հայեցուածոյ անուամբ, վնասեսցէ զորս կամի։

Պրակ

Գլուխ 40.

Թէ որպէս՝ Սմբատայ օգնականս իւր արարեալ զՆախարարս Պարսից. խնդրէ թագաւորեցուցանել զԱրտաշէս ։

Բայց 'ի զարգանալ մանկանն Արտաշիսի, եւ 'ի բազում քաջութիւս արութե ցուցանել Դայեկին Սմբատայ, հաճեալ ընդ նա Նախարարք Արեաց, մաղթեցին զԹագաւորն՝ տալ նմա պարգեւս՝ զինչ եւ խնդրեսցէ. եւ յանձն առեալ Թագաւորին, ասէ ցՆախարարսն. տեսէք թէ՝ զի՞նչ կամիցի Այրն քաջ. եւ նոքա ասեն, անմահ բարերարութիւնդ քո. այլ ո՛չինչ կամի Սըմբատ, քան թէ՝ զարիւն քո, եւ զհարազատութիւն զԱրտաշէս՝ որդի Սանատրկոյ՝ զմերժեալն 'ի թագաւորութենէ իւրմէ՝ հաստատել յիւրում թագաւորութեան ։ Եւ՛ յանձն առեալ Արքային Արքայից. տայ 'ի ձեռս Սմբատայ մասն ինչ՝ 'ի զօրացն Ասորեստանի, եւ զզօրս Ատրպատականի, զի տարեալ զԱրտաշէս՝ հաստատեսցեն 'ի Գահն Հայրենի,

Գլուխ 41.

Յաղագս լնելոյ Երուանդայ զգահն Արտաշիսի. և գումարել զզօրս 'ի պատրաստութիւն պատերազմի :

ՀԱսանէ լուր առ Երուանդ. յՄուտէկացւոց գաւառին, եթէ՝ գումարեաց Արքայն Պարսից զօրս բազումս 'ի ձեռս Սմբատայ. զի 'ի վր̃ քոյ խաղացեալ՝ ածցէ զՄանուկն Արտաշէս 'ի թագաւորութիւն իւր : Զայս լուեալ Երուանդայ՝ եթող անդէն զբազումս 'ի Նախարարացն Կողմնապահս, և ինքն գնաց 'ի քաղաքն իւր փութանակի, կուտել առ ինքն զզօրս Հայոց, զՎրաց, և զԿողմանցն Կեսարու : այլ և զՄիջագետաց, աղերսօք՝ և տրովք. և էին աւուրք դարնայնոյ. վն̃ որոյ՝ երագ ժողովեցան զօրքն ամենայն : Նաև՝ Արգամ Տանուտէր Մուրացեան, որ 'ի ծննդոցն Աժդահակայ՝ ամբոխ հետևակու. քանզի դարձուցեալ էր Երուանդայ 'ի նա զՓառսն երկրորդական, զոր հանեալ էր 'ի նոցանէ Տիգրանայ, և տուեալ իւրում քեռայն՝ Միհրդատայ. ոչ ումեք տուեալ լինէր, մինչև՝ Երուանդայ դարձուցանել զնա առ Արգամ. և ոչ միայն նմա, այլև՝ ամենայն Նախարա-

րացն

բացն տայր պատուիրան, և զօրացն ամենեցուն պարգևս:

Գլուխ 42.

Եթէ՝ որպէս ընդ ձեռն Արտաշէսի յետ աշխարհին՝ յաջողեցաւ գործն:

Իսկ Սմբատայ հանգուցելոյ Մանուկն Արտաշիսի՝ ամապարէր հասանել ՚ի տանձանս Որոտնեաց · ընդ առաջ նորա ելին զօրք կողմանցն այնոց · նաև՝ Սպարապետքն, զորս եթող երկանեալ : Զայս եդեալ լուեալ այլ Նախարարքն Հայոց, լուծանէին, լքանէին, և զատուցին յերախտաւորաց խորհէին · նաև՝ զայն և ոչ առաջնորդէին, եթէ զօրք Հաւանեցուցանողք ոչ հասանին նմա ՚ի թիկունս : Իսկ երախտաւորք տատանէին յոր զաւագացն տայր պարգևս, և բաշխէր մեծամեծս ՚ի նախարարաց զգանձսն · և որչափ շատ տայր՝ շատ ևս առնէր յանձնէր · բանակն՝ զխորհուրդս ամենեքեան, եթէ ոչ առ առաքինութեան, այլ՝ առ երկիւղի ձեռն նմա : Եւ ոչ այնքան ավելի զայնուհետև անձնէր՝ որոց շատն տայր, քան թէ՝ թշնամանք : Եւ քան զնոսա՝ զայնս՝ որոց ոչին տայր, եր առաւել լրանցողս :

Գլուխ 43.

Երուանդայ պատերազմ ընդ Արտաշիսի՝ և փախուստ, և առումն քաղաքի նորին՝ և մահ։

Բայց Սմբատ, հանդերձ մանկամբն Արտաշիսիւ, եկեալ հասանէ առ ափն ծովուն Գեղամայ, զԹիկամբքն Արագածն կոչեցեալ լերինն՝ աճապարէին հասանել 'ի բանակն Երուանդայ. առ ոչինչ համարեալ զբազմութիւն զօրացն. միայն ակն ածէին 'ի Մուրացենեաց Արգամայ. զի այր քաջ էր, և բազմաց Տէր Տիգաւորաց։ Եւ Ճամբարն Երուանդայ էր բացագոյն 'ի քաղաքէ նորին, աւելի քան զերեք հարիւր ասպարէզաւ՝ 'ի Հիւսիսոյ 'ի վերայ գետոյն Ախուրեան։ զայն իբրև լուեր Երուանդ, հանէր ընդ առաջ զբազմութիւն զօրացն. և ճակատէր ո՛չ հեռի յիւրմէ բանակէն։ Իսկ Արտաշիսի արձակեալ պատգամ առ Արգամ, Նահապետ Մուրացեան, հանդերձ բազում երդմամբք՝ թողուլ 'ի վերայ նորա, զոր ինչ գտեալ էր յԵրուանդայ, և կրկին այլ յաւելուլ. միայն, զի զԵրուանդ թողուլ 'ի բաց գնասցէ։ և իբրև յանդիման ճակատուն Երուանդայ ելին նշանակք

Արտաշխի, Արգամայ առեալ զբազմութեն հեռաւորացն' 'ի կողմն ելանէր։ և Սմբատ հրամայէր' զփողսն պղնձիս գոչեցուցանել. և յառաջ առեալ ըզ ճակատն իւր, իբրև զարծուի յերամ կաքաւուց խոյանայր։ Իսկ Նախարարքն Հայոց, որ յաջ և որ յահեակ թևանէին, 'ի նա խառնեալ միանային։ և զօրք Վրաց, հանդերձ Արքայիւն իւրեանց Փարսմանաւ' թէպէտ և յանդուգն յառաջեալ բախէին երագապէս, այլ դառնային 'ի միւս կողմն փախուցեալ։ և անդ էր տեսանել կոտորած անհնարին Երուանդայ, և զզօրաց Միջագետաց։ Եւ՛ 'ի խառնակել այսպիսի ճակատուց, պատահեն Արտաշխի որք ընդ քաջն Տօրացիք, որոց զգլխս իւրեանց եդեալ երուանդայ, պայմանեալ' սպանանել զԱրտաշէս։ որոց դիպեալ 'ի հետի, ընդ մէջ անցանէ Գիսակ' որդի Սմբատուհին Արտաշխի, և սատակեալ զնոսա. ուր' և զկէս դիմացն 'ի վայր բերեալ սուսերաւ, և յաղթութեն գործեցեալ' մեռանի 'ի վր̃ այսպիսեաց. և մնացեալ զօրքն 'ի փախուստ դառնային։ Իսկ Երուանդ' իւրով ձիու բովանդակ ասպարէզս անցեալ, ելանէ 'ի խորանս կանգնեալս' 'ի բանակէն իւրմէ 'ի քաղաքն իւր, հեծեալ 'ի նոր ձիս, հանգոյց 'ի հանգուցէ փախչել։ Եւ՛ Քաջին Սմբատայ'

զհետ մտեալ, աստուածայինն զնա վա-
րեալ 'ի գերեզմանի՝ միջնջէ ցղոտուն քաղա-
քին. և Մակարայ զօրացն անցեալ 'ի
կողմն Երուսաղէմական դիրքին, նախա-
ման 'ի վէր դիմականացն քանանեկէին. Իսկ
Արիստակէսի հասեալ 'ի յԵրուսաղէմայ չէ
քաղաքացեալ առ աղաւաւոն, 'ի կողմեաց՝ և
'ի կառուցեալ պարապայինն էր, և 'ի խորանին
նորա ընծայեցաւ զայն՝ դիրեր. և այ-
դուն եղելոյ՝ Տէրաքար արարեալ՝ ըստ
սպանեալ Թաղել Հրամայեաց. և
անուանեաց զՀովեան՝ որ 'ի վերայ դխոր-
կանդիք քանանկեցան, Մակարայ Մարգ,
և զանեղէ Ծամբարայն, Երուսաղէմայ
Վան. և կոչի միջնջէ ցայսօր ծանուցա-
նէ. զի է՝ Թէ յայժմ առեալ՝ վանեաց
զԵրուսաղէմ, և Ճիգն չուեաց 'ի քաղաքն
Երուսաղէմայ. յառաջ քան զՄեծրեայ
Հասեալ 'ի դատաստանիցն Երուսաղէմայ,
և միաբանս զուծմանք՝ Հրամայեաց առա-
ջանկել զօրացն, Մար Աճառ. որ
Թարգմանի՝ Մարս եկն. յիշելով ըստ
Թշնամանաւ՝ զոր յղեաց Երուսաղէմ առ
Թագաւորսն Պարսից՝ և առ Սմբատ,
Մար զնա կոչելով. Ցայս 'ի այսն ձայնն՝
անուանեցաւ դաստակերտն՝ Մարգաստա-
կեր՝ 'ի կողմանս Արտաշիսի, բնակեալ
զանուն Երուսաղէմայ 'ի անդամն. այս
պատճառ է անուանակոչութեան դաստա-
կերտին. Բայց Սմբատայ՝ զինե-
րայն զհետ Երուսաղէմայ եկեալ՝ առ-

կաւ

կաւ փաշականաւ, զդուռն քաղաքին պա
հէ ․ մինչև 'ի գալն Արտաշիսի՝ և զօ_
րացն ամենեցուն ․ և 'ի մարտնչիլ քա
ջացն ամենեցուն ․ անձնատուրք եղեն
մարդիկք ամրոցին, բանան զդուռն քա
ղաքին ։ Բայց մի ոմն 'ի զինուորացն՝
մտեալ, էհար փաղերբ զգլուխն Եր_
ուանդայ, և ցրեաց զուղեղն յատակս
տանն ․ և այսպիսի ջախմամբ՝ վախճա
նեցաւ, կալեալ զթագաւորութիւնն՝
ամս քսան ։ Բայց Արտաշիսի յիշեալ՝
թէ, խառնուած Արշակունեաց է Ե_
րուանդ, հրամայէ՝ զդի նորա թաղել
Մահարձանօք ։

Գլուխ 44․

Թագաւորել Արտաշիսի՝ և առնել բարի կարգս Երախտաւորացն ։

Յետ մահուանն Երուանդայ՝
մտեալ Սմբատայ զարքու_
նականն՝ յուղել զգանձսն,
և գտեալ զթագն Սանատր
կոյ Արքայի՝ դնէ 'ի գլուխն Արտաշի_
սի, և թագաւորեցուցանէ 'ի վերայ
ամ երկրիս Հայոց, 'ի քսան և իննե_
րորդի ամի՝ Դարեհի Պարսից Ար_
քայի ։ Իսկ Արտաշիսի առեալ զթա_
գաւորութիւն, տայ պարգևս Զօրացն
պարսից՝ և Մարաց, և արձակեաց

յաշխարհս իւրեանց. այլ՝ և առն Քա
ջի, և Պատուականի՝ Արքամայ՝ զխոս
տացեալ Գահն երկրորդական, և Պը
սակ Ցանկնթակայ. և Գինդ՝ յերկո
սին ականջաւն, և կարմիր զգեստ՝ միոյ
ոտքենն. Դրդալ ունիլ ոսկի, և պատա
ռաքաղ. և ոսկեղինօք ըմպել Նուա_
գօք: Եւ ո՛չ ինչ ընդհատ յայսց՝ պա_
տուոյ այս Դայեկին իւրոյ Սմբատայ.
բայց միայն՝ յերկուց զնդացն՝ և՛ի կար_
միր կօշկէ. և առաւել քան զՀայրականն
իւր՝ Թագադիր ասպետութեանն, և
զիշխանութիւն արևմտեայ զօրուն. Հա
ւատայ 'ի նա զամ զօրս Հայոց, և ըզ
բոլոր աշխարհիս Գործակալս, և զՀա
մօրէն Տունն Արքայի: Եւ զՆերսէս՝
որդի Որդւոյ Սոնատունի իւրոյ՝ Գիձա
կայ, այլ զնա սերելով՝ անուն կոչէ
զՆահապետութեանցն՝ զՀօրն Դիմաքսե_
անն. քանզի՝ ոչ աստացաք, զկէս դի
մացն 'ի վայր բերին Սուսերաւ՝ 'ի վէ
Արտաշիսի. պատմի սորա 'ի նոյն ա_
ւուրս սերեալ ազգ: Եւ զորդիս Տու
րայ պատանիս հինգ՝ հանդերձ տա_
սամբք, յանուն հօրն իւրեանց՝ Տրու_
նիս, ո՛չ վն արութն ինչ գործոց, այլ
միայն վն քաջութն հօր նց. զոր առնէր
'ի տանէն Արքայի առ Սմբատ. քանզի
Ընտանի էր երուանդայ, սակս նորին,
և սպանաւ 'ի նմանէ:

Գլուխ 45.

Սպանումն Երուանդայ, և շինել Տաճարոյ Բագարանի. և հարկել Արտաշիսի 'ի Հռովմայեցւոց:

Զկնի այսորիկ՝ հրամանն տայ Սմբատայ՝ երթալ յամուրն Բագարան, որ հուպ 'ի քաղաքն Երուանդայ՝ 'ի վերայ Ախուրեան գետոյ, զի սպանցէ զերուանդ՝ զեղբայր Երուանդայ. զոր կալեալ Սմբատայ՝ երկան զուլանէ՝ հրամայէ կապել, և ընկենուլ 'ի պտոյտ մի գետոյն. և 'ի տեղի նորա, 'ի վր̃ Բագրացւոց՝ կացուցանէ զընտանի Արտաշիսի՝ աշակերտ Մոգի ումեմն Երազահանի. որ յայս սակս՝ և Մոգպաշտէ անունն կարդայցի: Եւ ապա՝ առաքեալ զգանձս Երուանդայ, և ծառայս անձինս հինգ հարիւր. նաև՝ զընտիր ընտիր գանձուց Մեհենացն բերէ Արտաշիսի: և Արտաշէս պարգևէ Սմբատայ զծառայս Երուանդայ. բայց զգանձն հրամայէ տանել Դարեհի Արքայի Պարսից՝ հանդերձ յաւելմամբ յիւրոց գանձուցն, 'ի շնորհակալութեն պատուոյ իւրև Հօր, և Օգնականի: Յայնժամ Սմբատայ զծառայսն Երուանդայ, զոր գերեաց 'ի Բագարանէ տա-

րեալ՝ բնակեցուցանէ 'ի թիկանց Մասեաց, 'ի նոյն անուն անուանակոչելով՝ զձեռակերտն: Ինքն անցանէ 'ի Պարսս ընծայ տապար Դարեհին, ո՛չինչ փոյթ առնելով զՀռովմայեցւոց Տէրութեանն: Իսկ 'ի գնալն Արտաշիսի 'ի Պարսս, հասանէին Հարկահանք Կայսեր, և Սմբատ ծանոյց՝ 'ի սահմանս Հայոց. զորս մաղթեալ Արտաշիսի, և կրկին առեալ զհարկսն՝ հաշտեցուցանէ: Եւ զայս՝ մեզ պատմեալ պատմէ Ողիւպ Քուրմ Հանեայ, գրող Մեհենական պատմութեց. և զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաւել. որում և Պարսկոց Մատենագիրն վկայեն, և Հայոց երգն Վիպասանաց:

Գլուխ 46.

Յաղագս Շինածոյ Արտաշատ քաղաքի:

Արտաշիսի Վերջնոյ՝ գործք բազումք, յայտնի են քեզ 'ի Վիպասանացն, որք պատմին՝ 'ի Գողթան. շինել զքաղաքն, և խնամութիւն ընդ Ալանս, և ծնունդք Զաւակացն, և սէր՝ տռփանք Սաթինկան ընդ Վիշապազունսն, առասպելաբանաբար. այսինքն՝ ընդ Զարմն Աժդահակայ. որք առեալ զմեծ գաւառ ընդ ստորոտովն Մասեաց: Մարտն ընդ նոսա,

և քայքայուածն յիշխանութենէն, և սպանուածն նց, և հրկիզութեն շինուածոյն, և նախանձ որդւոցն Արտաշիսի . և գրգռութեն ընդ միմեանս՝ 'ի ձեռն կանանցն : այս ամ, ոչ տարապարք՝ յայտնի են քեզ՝ յերգս Գողթանացն . բայց յիշատակեսցուք և մեք կարճառօտիւք, և զպայծառութիւն ճշմարտեսցուք : Երթեալ Արտաշիսի 'ի տեղին՝ ուր խառնին Երասխ և Մեծամօր . և հաճեցեալ Արտաշիսի ընդ բլուրն, շինէ քաղաք՝ յիւր անուն, անուանեալ՝ Արտաշատ : Ձեռնտու լինի՝ և Երասխ՝ նմա փայտիւք Մայրեաց . վա՛ որոյ՝ անաշխատ՝ երագ շինեալ, կանգնէ 'ի նմա Մեհեան . և փոխէ 'ի նա 'ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ, և զամ կուռս Հայրենիս . բայց զԱպողոնի պատկերն՝ արտաքոյ քաղաքին կանգնէ՝ հուպ 'ի ճանապարհն . և յարուցանէ 'ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որք փոխեալ էին անդր յԱրմաւիրայ . և նստուցանէ զնոսա յԱրտաշատ . նաև՝ զամ վայելչութիւն քաղաքին Երուանդայ՝ զոր տարեալ էր յԱրմաւիրայ, և զոր անդէն արարեալ նոր, փոխէ յԱրտաշատ . և առաւել ևս՝ յինքենէ, իբրև զՔաղաք Արքայանիստ :

Գլուխ 47.

Յարձակումն Ալանաց 'ի մեզ՝ և պարտութիւն, և խնամութիւն Արտաշիսի ընդ նոսա ։

Այսու ժամանակաւ՝ միաբանեալ Ալանք լեռնականօք ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Վրաց աշխարհին, մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր ։ Ժողովէ և Արտաշէս զիւրոց զօրացն բազմութիւն, և լինի պատերազմ 'ի մէջ երկոցունց Ազգացն քաջաց Աղեղնաւորաց ․ սակաւ ինչ տեղի տայ Ազգ Ալանաց, և գնացեալ անցանէ ընդ գետն Մեծ Կուր, և բանակի առ եզերբ գետոյն՝ ընդ հիւսիսոյ ։ Եւ հասեալ Արտաշէս բանակի ցհարաւոյ ; և գետն ընդ մէջ նոցա ։ Բայց քանզի՝ զՈրդի Ալանաց Արքայի՝ ձերբակալ արարեալ Զօրացն Հայոց, ածին առ Արտաշէս, զխաղաղութիւն խնդրէր Արքայն Ալանաց, տալ Արտաշիսի՝ զինչ և խնդրիցէ ․ և երդմունս՝ և դաշինս ասէր՝ հաստատել մշտնջենաւորս ․ որպէս՝ զի մի՛ ևս Մանկունք Ալանաց՝ ասպատակաւ հէնից՝ ելցեն յաշխարհս Հայոց ։ Եւ՛ 'ի չառնուլ յանձն Արտաշիսի՝ առ 'ի տալ զՊատանին, գայ Քոյր Պատանւոյն

յափն գետոյն, 'ի դարաւանդ մի մեծ,
'ի ձեռն Թարգմանաց՝ Հայնէ 'ի բա_
նակն Արտաշիսի: Քե՛զ ասեմ, Արիդ-
քաջ Արտաշէս, որ յաղթեցեր քաջ
Ազգաց Ալանաց, ե՛կ հաւանեաց բա
նից Աչագեղոյ Դստերս Ալանաց՝
տալ զՊատանիդ, զի վ̃ն միոյ քինու՝
ո՛չ է օրէն Դիւցազանց՝ զայլոց Դիւցա
զանց Զարմից բառնալ զկենդանու_
թիւն, կամ ծառայեցուցանելով 'ի Ստր
կաց պահել 'ի կարգի, և թշնամութիւն
յաւիտենականս 'ի մէջ երկոցունց ազ
գաց Քաջաց հաստատել: Ե՛ւ լուեալ
Արտաշիսի զայսպիսի իմաստութեան
բանս, գնաց յեզր գետոյն, և տե_
սեալ զկոյսն Գեղեցիկ, և լուեալ 'ի
նմանէ բանս իմաստունս, ցանկացաւ
օրիորդին: և կոչեցեալ զԴայեակն իւր՝
Սմբատ, յայտնէ նմա զկամս սրտի
իւրոյ, առնուլ զՕրիորդն Ալանաց
'ի կնութիւն, և դաշինս՝ և ուխտս հաս
տատել ընդ ազգի Քաջացն, և արձա
կել խաղաղութեամբ. և հաճոյ թուեցաւ
Սմբատայ: յղէ առ արքայն Ալանաց՝
տալ զՏիկին Օրիորդն Ալանաց՝ զՍա
թինիկ՝ Արտաշիսի կնութիւն: Ե՛ւ ասէ
արքայն Ալանաց. և ուստի՞ տացէ քաջ
արքն Արտաշէս՝ բիւրս 'ի բիւրուցն հա
զարս 'ի հազարաց ընդ քաջազգւոյ կուս
Օրիորդիս Ալանաց: Զայս տեղի ա_
ռասպելաբանելով Վիպասանքն՝ յեր_

գեղն խաբեանց՝ ասեն։ Հեծեալ արի ար-
քայն Արտաշէս՝ 'ի Սեաւն Գեղեցիկ.
և հանեալ զոսկի օղ՝ շիկափոկ պարանն,
և անցեալ ըստ զարծուի արագաթև՝ ընդ
գետն, և ձգեալ զոսկի օղ շիկափոկ
ներքնոյն, ընկէց 'ի մէջ Օրիորդին Ալա-
նաց, և շատ ցաւեցոյց զմէջ փափուկ
Օրիորդին, արագ հասուցանելով 'ի
բանակն Արտաշիսի։ Որ ճշմարտու-[illegible]
ւնն՝ այսպէս. քանզի՝ պատուական է
Ալանս՝ մորթ կարմիր, լայքայ [illegible]
և ոսկի բազում 'ի վարձանս առեալ
առնու զՏիկին Օրիորդն Սաթինիկ։
այս է՝ ոսկի օղ շիկափոկ պարանն։
Դոյնպէս՝ և զհարսանեացն առասպե-
լեալ, երգեն այսպէս՝ ասելով։ Տեղ
ոսկի՝ տեղայր 'ի փեսայութեանն Արտա-
շիսի։ Քանզի սովորութիւն էր թագա-
ւորացն մերոց՝ փեսայութեանն 'ի
դուռն տաճարին հասանել՝ դահեկանս
ձապաղել, նմին զհարսնութեանն [illegible]
մայեցուց. սոյնպէս՝ և թագուհեացն
յառագաստին մարգարիտս։ Այս է [illegible]
մարտութիւն բանից։ Սա, առաւելագոյն [illegible]
ղեալ կանանցն Արտաշիսի, ծնանի [illegible]
նմա զարմանալի, և զայլս բազումս,
զորս ոչ կարեմք համարեցալ՝ անու-
նանեալք թուել. բայց՝ զկնիսն, յորժամ
'ի գործ լինել հասանիցիմք։

Պլեակ

Գլուխ 48.

Սպանումն Արգամայ, և որդւոց նորա:

Ի Ժամի հասանել Արտաւազդայ՝ որդւոյ Արտաշիսի, եղև այր քաջ՝ Անձնահաճ, և Հպարտ: և նախանձ բերելով ընդ ծաւալման Արգամայ, հրապուրեաց զհայր իւր՝ ցանկալ Արգամայ, այլ թէ՝ թագաւորել ի վերայ ամենայնի խորհեցի. այսպէս՝ ընկեցեալ զնա ի պատուոյն, խնդրն առնու երկրորդութիւն: Յետ այսորիկ՝ երթալով Արտաշէս ի տուն Արգամայ, կոչեցեալ յիմն անկեալ, որպէս թէ՝ դաւել զարքայն խորհեցին. յարուցանեն որդիք արքային աղշոտ, և անդէն իսկ ի հացին՝ քարշեն զալիսն Արգամայ. և պատուութեան մեծաւ՝ եկեալ յարտաշատ արքային: Դարձեալ՝ արձակեաց զորդի իւր՝ զՄաժան մեծաւ զնդաւ, և զբաղմամբ յազգէն Մուրացեան սպանանել Հրամայեաց, և զպատարանն Արգամայ այրել, և զՀարճս նորա, որ կարի չքնաղ էր գեղով՝ և մնացեալ զնացցեք տուից, զոր կոչէին՝ Մանդու՝ առնել ի Հարճութիւն Արտաշիսի: զորս՝ դարձեալ նուաճեալ՝ յետ երկուց ամաց՝ տալ ի բաց զինչսն՝ հը

րամայէ, բայց 'ի հարձէն: Իսկ Արտա
ւազդայ՝ ո՛չ շատացաւ առնուլ 'ի նո
ցանէ զերկրորդականն պատիւ, յաւե
լու եւ հանել և զՆախճաւանն, և զ
Հիւսիսոյ երասխայ զամենայն դեօղս,
յորում և ապարանս իւր՝ [illegible]երդս
'ի նոցանէ շինէ ժառանգութեան:
Այսմ ո՛չ կարացեալ համբերել Որդ_
ւոցն Որդամայ, ընդդիմանային [illegible] պա
տերազմաւ. բայց յաղթէ Արքայոր_
դին, և սատակէ զամենայն ծնունդս
Որդամայ՝ հանդերձ Հարբն, և որք
միանգամ, երևելիք էին յազգէ Մու_
րացեան. և գրաւէ յինքն զշէնս նց,
և զամ իշխանութիւն նոցա. և ո՛չ ոք
ապրեաց 'ի նոցանէն, բայց աննշանք
ոմանք, և կրտսերք փախուցեալք առ
Արտաշէս՝ ապրեցան 'ի դրան արքու_
նի: Այս Արգամ է, որ յառաջապե_
լին Արգաւանն անուանեցին. և այս
պատճառ պատերազմին ընդ Արտաւ
ազդայ:



Գլուխ 49.

Եթէ՛ ո՛րպիսի էր Սմբատ. և զի՛նչ յԱլանս գործեաց, և ընկէց յԱրտաշատ:

Սիրելի է ինձ աստ՝ և վասն Քաջին Սմբատայ. քանզի արդարև՝ ըստ առասպելին, ո՛չինչ կարի հեռի ՚ի ճշմարտութենէն. որ ունէր հաստատ անդամոց՝ համեմատ քաջութեան. և առաքինութեան ոգւոյն՝ որսորդ, և զեղեցկութեան ալեօք՝ վայելչացեալ, սակաւ ինչ արեան նիշ ունելով յաչսն, որպ՞ Գրականոտիկոն ՚ի վերայ ոսկւոյ, և ՚ի մէջ մարգարտոյ՝ ծագէր ՚ի վր̅ շոյտ անձին՝ և մարմնոյ. զգո՛յշ յամէ. և աւճչութեն յաջողուածոց ունէր ՚ի մարտառաւել՝ քան զնմ ոք. զի յետ այն չափ արութեանց, օգնական Եղբօրն Սաթինկան՝ յաշխարհն Ալանաց, հանդերձ զօրու երթայր՝ հրամանաւ Արտաշիսի: Քանզի՝ մեռաւ հայր Սաթինկանն, և այլ ոմն բռնացեալ՝ թագաւորեաց աշխարհին Ալանաց, և հալածէր զեղբայրն Սաթինկան. զորս վանեալ՝ հերքէ Սմբատ, և տիրացուցանէ ՚ի վերայ ազգին՝ զեղբայրն Սաթինկան. և զերկիր հակառակորդացն աւերեալ՝ զնմ միահամուռ ածէ գերի

սատակէին յարքունաւանս : և Հրամայեաց Արտաշիսի բնակեցուցանել զնոսա 'ի Հարաւային յարևելից կուսէ Մասեաց , որ կոչի՝ Շաւարշականն Գաւառ . 'ի միջի բայց պահելով զմինն անուանեալ՝ Արտաւազդ . և քանզի՝ և աշխարհն , սոսա զնորին ցանձն՝ արարեալ կոչէ՝ մինչև ցայսօր Մա մանանկին :

Գլուխ ԿԳ.

Առաքումն կուսից . և վերադարձութիւն ընդ Սմբատայ Զարեհին Արտաշիսի :

Յետ մեռանելոյ Վաղարշու Ար շակայ՝ Թագաւորին Պար սից . Թագաւորեցուցանէ մեծն Արտաշէս՝ զՀամանունն իւր զԱրտաշէս՝ որդի նորին 'ի վերայ Պար սից աշխարհին : և ոչ կամեցան հեռա նալ նորա բնակիչքն երկրին , որ անուանեալ կոչին՝ Պատրիարչաց Գաւ առ , որ է՝ դիմաց լեառն , և ծագել զերբ , և այպէս քանի ընդ . նախ՝ կա պեց երկիրն յայն սահս ապստամբութեան 'ի նմանէ , 'ի մերոյն Արքայէ . զի որդի առաջէ 'ի վերայ նոցա Արտաշէս ընդ Սմբատ հաւ զօրօք Հայոց . նոյն Ար քայ՝ յաղթութիւն երթալով զաւուրս եօթն . իսկ Սմբատայ երթեալ՝ հե նաղանդէ զամենեսեան . Բայց զերկիրն

Պար

Պարսկաց առաքեալ տուաւ քան զԱր-
տաշիրն՝ գերբին ածել ՚ի Հայս. Է որք
և զՁորագման ամն ամրոցն՝ Թոգարմար
ներքին. զի որոյ՝ արժանի վաստակոցն՝
պարգևէ նմա Արտաշէս զմայն ար-
քունի՝ որ ՚ի շէնն Գողթան, և զդաշ-
տին ակունսն. և առ այսոքիկ՝ և ըղ-
զօրն եամ ՚ի վե՛ր նորա Թողու: Ընդ որ
նախանձեալ Արտաւազդ՝ կամեցաւ որ
պատմանել զՍմբատ. և յայտնեալ խոր-
հրդոյն՝ բազում խռովութիւն լինէր՝ յա-
ղագս այնր Հօրն: Իսկ՝ Սմբատայ տե-
ղի տուեալ՝ գնաց զկողմամբք Ատրպա-
տանի. ուրանէ կամօք Թողլով զիշխա-
նութիւն զօրացն Հայոց, ընդ որ խան-
դաղին Արտաւազդ, հրամանաւ Ար-
տաշէսի՝ բնակէր ՚ի Տմորիս, որ այժմ կո-
չի Կորդրիք. ՚ի յԱւելի նստուցեալ ըղ-
բաղձութիւն դերբուոյն. քանզի՝ էր ՚ի ծե-
րութեան կեանս. արքայութեան յԱտրպատա-
կանաց՝ հաւաք ՚ի յայն կողմանս, զոր յայժ
սիրեաց. և վա՛ն այնորիկ՝ և զնորին կող-
մանքն բնակեցաւ: Իսկ Արտաւազդ
չէր զանազան Սմբատայ, տանու ՚ի հօ-
րէն՝ տրամ ցանկայրն՝ զիշխանութիւն
զօրացն ամենեցուն: Եւ նախանձ բե-
րեալ ընդ նմա եղբարցն, ՚ի դրդու-
թենէ կանանց իւրեանց. վասն որոյ՝
հալածէ Արտաշէս զՎրոյր Հազարա-
պետ, զայր իմաստուն, և բանաստեղծ.
հրամայելով ՚ի նմա զիմս գործ Տանն-

Արքունի ։ և զՄաժաքն կարգէ քաղաքա պետ 'ի յԱնի՝ Դիցն Արամազդայ. բաժանէ Արտաշէս և զիշխանութիւն զօրուն՝ ընդ չորս ։ զԱրևելեայ զօրն թողու 'ի վերայ Արտաւազդայ. և զԱրևմտեայն՝ տայ Տիրանայ. զՀարաւայինն 'ի Սմբատ հաւատայ. և զՀիւսիսայինն 'ի Զարեհ։ Եւ Զարեհ էր՝ այր սէգ, և յորս երեոց՝ հաստատուն, իսկ առ 'ի պատերազմունս վատ՝ և տաղտուկ. զորոյ՝ ըղձ փորձառութեան Քարձամայ ուրումն Վրքայի՝ ապստամբեցուցանէ զերկիրն. և կալեալ զԶարեհ՝ իբրև 'ի բանտի դնէ 'ի Կովկաս, ընդ որում պատերազմեալ Արտաւազդայ, և Տիրանայ՝ հանդերձ Սմբատաւ, դարձուցանեն զեղբայրն 'ի Մեծէ Կարաքիլէ ։

Գլուխ ԾԱ

Պատերազմ ընդ զօրս Դոմետիանոսի 'ի Բասեան ։

Աղմուկ շփոթիւքն լեալ յԱրքունիս ։ ընդ որ վստահացեալ Արտաշէս, նշկահեալ՝ ընդդիմանայր Հռոմայեցւոց Տէրութեն՝ ո՛չ տալով հարկս. իսկ՝ Դոմետիանոսի կայսեր ցասուցեալ, զօրս 'ի վերայ Արտաշիսի առաքէ ։ որոյ հասեալ 'ի կողմանս Կեսարու,

զՏերան, և զզօրսն Արևմտեայ՝ առա
ջի արկեալ՝ ածեն առաջնապաս մինչև
'ի քաղաք ընդարձակ հովիտն Բասենոյ ։
Որում ընդդէմ դիպեալ Արտաւազդ
Արևելեայ՝ և Հիւսիսային զօրօքն, և
հանդերձ նմ որդւովքն Արքայի պա
տերազմեալ՝ սաստկապէս վտանգին ։
Յորոց 'ի վերջս պատերազմին հասեալ
Սմբատ, Հարաւային զօրօքն՝ ընդ մէջ
անցեալ ապրեցուցանէր զորդիսն Ար-
քայի. յաղթութեամբ, և զբուն պատերազ
մին առարեալ ։ Զի թէ և՛ ծերացեալ
էր՝ Երիտասարդ արեաց, և մեծաց
քաջակաւն, և հետամուտ եղեալ՝ հա
լածեաց զզօրս Հոռոմայեցւոց մինչև 'ի
սահմանս կեսարու ։ Զայս կամելով
երգել՝ յառասպելս. Գողթան գաւա-
ռէն, եկեալ՝ որ է ինքն կայսրն Դոմի
տիանոս ։ ոչ ինքն եկեալ այսր, այլ ըզ
հրաման նոր, և զզօրս՝ այլաբանելով՝
յանուանէ նոր կոչեն ։ Բայց՝ ըստ բախ-
տի՝ եղեալ Արտաշիսի, մեռանի 'ի նմին
ժամանակի՝ Դոմետիանոս 'ի Հռոմ, և
փխանի նորա Ներվան՝ ոչ առնէր թագաւո
րեալ, քան զմի ամ ։ ընդ որ առաւել
հաստատեցաւ զօրացն Հայոց՝ և Պար
սից, առապատակաւ 'ի Յունս արարին ։
Ընդ սոսա հասելով Եգիպտացւոց՝ և
կողմանց Պաղեստինացւոց, արգելուին
և նորա ըշխարհին Հռոմայեցւոց ։

Գլուխ 52.

Յաղագս Տրայիանոսի՝ և նորին գործոց. և մահուանն Մաժանայ՝ յեղբարցն:

Զայսու ժամանակաւ՝ Թագաւորեալ ընդ Հռոմայեցւոց Տրայիանոս. և խաղաղեցուցեալ զամենայն աշխարհս, դիմեալ 'ի վերայ Եգիպտացւոց՝ և Պաղեստինացւոց, և նուաճեալ զնոսա ընդ իւրով ձեռամբ. խաղաղայ յարձակել 'ի վ՟ր Պարսից: Այսս ամբարձեալ Արտաշէս մեծամեծօք՝ ընծայիւք ընդ առաջ նորա իջանէ, զմեղանս յանձնառուեալ հանդերձ հարկօք անցելոց ամացն՝ ընդ իւր տարայցի նը. և թողութիւն 'ի նմանէ գտեալ՝ դառնայ յաշխարհն Հայոց: Եւ Տրայիանոսի անցեալ 'ի Պարսս, և զամ զկեանս իւր կատարեալ դառնայ ընդ Ասորիս. ընդ առաջ նր՟ իջեալ Մաժան, մատնութիւն զեղբարցն առնէր: Գիտեսջիր ասէ՝ Արքայ, եթէ զԱրտաւազդ, և զՏիրան փոխարինաց ո՛չ արժանացեն, և զզօրս Հայոց՝ Զարեհի ո՛չ հաւատացեալ, հարկեն անտաշ խստ առ քեզ ո՛չ եկեսցեն: Զայս արար Մաժան, քէն պահեալ վ՟ն Սմբատայ, զի՝ և զնա նորա սնուցեալ էր: ընդ նմին՝ և զՏիրան խորհեցաւ

Հա

հանել, զի ինքն լիցի Քրմապետ միանգամայն՝ և Սպարապետ արևմտից։ Զորմէ՝ ո՛չինչ փոյթ արարեալ Տրայիանոս, արձակէ ունայն։ Բայց՝ Արտաւազդայ, և Տիրանայ՝ իմացեալ ըզխորհուրդն նո̃ր, դարան գործեալ՝ յորս սպանին զՄաժան. զոր տարեալ թաղեցին 'ի Բագնաց Աւանի, եբրև ըզ Քրմապետ։ Իսկ Արտաշէս յայնմհետէ՝ անսայթաք հարկեաց Տրայիանոս. և յետ նորա՝ Հադրիանոսի կայսեր՝ զա̃մ աւուրս իւր։

Գլուխ 53.

Թէ՝ որպէս բազմամարդացոյց Արտաշէս զաշխարհս՝ և սահմանս հաստատեաց։

Յետ ա̃մ ուղղութեց Արտաշիսի՝ հրամայէ զսահմանս գեօղից, և ագարակաց՝ որոշել։ Քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց. եկամուտս բազում ածելով ազգս, և բնակեցուցանելով 'ի լերինս, և 'ի հովիտս, և 'ի դաշտս. և նշան սահմանացն հաստատեաց՝ այսպէս։ Հրաման տալով՝ քարինս կոփել՝ չորեքկուսիս, և պնակս ձև փոսելըզմէջն՝ ծածկելով յերկրի. և չորեքկուսի 'ի վերայ յարուցանել ամբարտակս՝ սակաւ ինչ բարձրագոյն

յերկրէ ։ Ընդ որ նախանձեալ Ար-
տաշրի՝ որդւոյ Սասանայ . զնոյն նը-
ման՝ հրամայէ առնել և 'ի Պարսից աշ-
խարհին, և յիւր անուն անուանել, զի
մի եւս՝ յիշեսցի անունն Արտաշիսի ։
Բայց սա 'ի ժամանակս Արտաշի-
սի՝ ոչ գտանել երկիր անգործ յաշ-
խարհիս Հայոց, ոչ լեռնային՝ և ոչ
դաշտային ։

Գլուխ 54.

Յաղագս Նախարարութեն Ամատունեաց ։

Յառաջ սորա, ասեն՝ եկեալ
զազգ Ամատունեաց 'ի կող-
մանց արևելից Արեաց աշ-
խարհին ։ Բայց են սոքա ըն-
[illegible]ութեամբ Հրէայ, 'ի Մանուեայ ու-
ռեմնէ, որոյ որդի էր Մեծահասակ
և ուժեղ՝ Սամսոն անուն կոչեցեալ.
որպէս սովորութիւն է Հրէից՝ ըստ յու-
սոյ զՆախնեացն կոչել զանուանս ։
Բայցէ ճշմարիտ, ոմն՝ և այժմ լինի է
յանսանել 'ի զարմս Ամատունեաց . քան
զի՝ Անձնեայք, և Բարեձևք են պատ-
շաճի՝ վայելեն ամ իրօք, և ուժեղք ։
Տարեալք են նոքա յԱրշակայ Աւագին՝
'ի Պարթևաց Թագաւորեցելոյն . և
յառաջադիմութե անդէն 'ի մԱրեաց
աշխարհին՝ 'ի պատիւ հասեալք 'ի կող

մանս

մանս Ահմատանի: Բայց եթէ՝ յի՞նչ պատճառանաց այսր գալուստ նոցա, ես ո՛չ գիտեմ: այլ՝ պատուէին յԱրտաշիսէ դեղիւք, և դաստակերտօք. և անուանին Ամատունիք, որպէս թէ՝ եկք: և կէսք 'ի Պարսից՝ Մանուէեան՝ զնոյն կոչելով, յանուն Նախնւոյն:

Գլուխ 55.

Յաղագս Առաւեղենաց Տոհմին, թէ՝ ուստի է սերեալ ազգ:

'Ի սորա աւուրս՝ և Առաւեղեանք յազգէ Ալանաց՝ մերձաւորք Սաթինկան՝ ընդ հետ նորա եկեալք, կարգեցան յԱզգ, և'ի Նախարարութիւն աշխարհիս Հայոց, որք Հարազատք թագուհւոյն Մեծի. և'ի ժամանակս Խոսրովու՝ Հօր Տրդատայ՝ խնամացեալ ընդ ումեմն քաջի Բասլացն եկեալ հատուածի,



Գլուխ 56.

Որ ինչ արտաքնոց գրութեամբ յաղագս Արտաշէսի։

Անդէ՛ բաղձամ ինչ յաւուրս Արտաշիսի գործեցաւ: Վն այնորիկ՝ բազում ձեռս կոտորեցաք • զի մի՛ երկայնութիւն բանից՝ տաղտկութիւն ընթերցողացն լիցի • այլ մերձին ձառս՝ այսպիսի ինչ յիշատակել, և զայլսն՝ որ ինչ ի ժամանակս Արտաշիսի: Զի թէպէտ և այլն ևս; զոր յիշատակեցաք յառաջագոյն ճառսն • կարգք, և սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան ՚ի Վաղարշայ, և յայլոց Արշակունեաց թագաւորացն • այլ՝ ՚ի մեծամեծ արուեստից, և գիտութեանց ոմանք յայտնեցեալք էին • որպէս՝ հնից, և պատմագրաց պարապեալ • և այսպիսի գիտութեանց՝ կամ անփոյթ արարեալ՝ և կամ ո՛չ հասանէր • դժուարութեանց ամսեմ, և զամեայց, և ըղտարեաց բոլորմանց • քանզի՝ ո՛չ այսպիսի ձեռնաչիւր առ նոսա • այլոց ազգաց վարժելով: և ո՛չ ՚ի ծովական աշխարհիս նաւագնացութիւնք, և ո՛չ ՚ի վէր գետոց ճանապարհորդութիւնք • մը, կամուրջք, և ո՛չ գործիք ձկանց որսոց • այլ՝ և ո՛չ յամ տեղիս երկրա-

գործութիւնք, բայց՝ դոյզն ուրեք · այլ ըստ օրինակի Հիւսիսականացն կողմանց՝ շաղղակերութիւն, և այլ այսպիսեօք կեցեալ։ Եւ այս ամ յօրինի յաւուրս Արտաշիսի ։

Գլուխ 57․

Յաղագս ծննդեանն Արտաշիսի ։

Գեղեցիկ իմն պատմէ Եւարիստոն փեղլացի , յաղագս մահուանն Արտաշիսի։ Քանզի 'ի ժամանակին , յորժամ ապստամբեցին Հրէայք յԱդրիանոսէ՝ Հռոմայեցւոց Թագաւորէ · և ետուն պատերազմ ընդ Ռուփոսի Հեպարքոսի , առաջնորդութիւն առն ուրումն աւազակի , որում անուն էր՝ Բարքոբայ · այսինքն՝ Աստեղորդի · որ էր գործովք չարագործ՝ և սպանօղ · բայց՝ անուամբ իւրով մեծաբանեալ պարծէր , որպէս թէ՝ յերկնից ծագեաց նոցա փրկիչ , իբր՝ նեղելոց, և գերելոց։ Եւ այնքան սաստ կացոյց զմարտն , մինչև 'ի նմա հայելով՝ 'ի բաց կացին հարկելոյ Հռոմայեցւոց՝ Ասորիք , և Միջագետք , և Պարսք ամ․ քանզի՝ էր և լուեալ ելթէ , եմուտ յԱդրիանոս յախտ ուրկութէ։ Բայց մերն Արտաշէս՝ ո՛չ երկմտեաց 'ի նմանէ ։ Եւ եղև ընդ նոյն

ժամանակս՝ հասանել Ադրիանոսի 'ի Պաղեստինէ՝ և սատակել զապստամբեալ սըն՝ պաշտամամբ 'ի քաղաքի մի փոքու՝ հասալ յԵԷմ. վասն որոյ՝ և ամ̃ ազգին Հրէից հրամայեաց՝ մերժել 'ի Հայրենի աշխարհէն. որք՝ և ո՛չ 'ի բազում հեռաստանէ հայեցցին յԵԷմ. և ինքն շինէր զԵԷմ, զաւերեալն 'ի Վեսպազիանոսէ, և 'ի Տիտոսէ՝ և յիւրին; և անուանեաց՝ Հեղիոս՝ յիւր անունն, որ՝ և կոչիւրն իւր՝ Ադրիանոս, այսր զանին ։ բնակեցոյց 'ի նմ̃ հեթանոսս՝ և Քրիստոնեայս, որոց եպիսկոպոս էր Մարկոս անուն ։ Ընդ այն ժամանակս՝ տարաբերեալ զօր ծանր զկողմամբք Ասորեստանի, և մեծին Արտաշիսի հրամայեաց՝ երթալ 'ի Պարսս ; հանդերձ իւրոյ Զիւղաստանօք . զորոյ զհետ քաջութեանց լեալ այսուիկ՝ որ զայս պատմութիւն մեզ եդ, հանդիպի Արտաշիսի 'ի Մարս, և Սահավունիք անուանեալ տեղւոջ. եղև Ներճանդաւանեալ նմա 'ի Մարանդ, 'ի Բուկուրակերա Ասանի. և զԱրեղայ զանձն, Նախահայրեն Արեղենից տոհմին, զԱրշամ, և զՇղամարար և սուսաշտակերարանս, 'ի նորին խնդրոյ արձակէ յԵկեղեց՝ յԵրիզայ, 'ի Մեհեանն Արտեմիդեայ՝ խնդրել 'ի կռոցն բժշկութիւն, և զբազում կեանս ։ որոյ ո՛չ ժամանեալ՝ դառնալ, հասանէ վախճան Արտաշիսի .

Եւ

և գրէ՝ որչափ ամբոխութիւք մտանեն 'ի մահմետականն Արաբաշխարհ: մինչև ցկանայս, և հարճս, և մանկտիս ծառայս. և որդեան չուք բազմադիմութիւն արարին, առ 'ի պատիւ Պարսից՝ քաղաքականակարգօք, և ո՛չ՝ ոչ զԲարբարոսս. դադարագքն էին անկեղծէնք. զահոյքն՝ և անկողինքն բեհեզեայ, և պատմուճանն՝ որ զմարմընովքն՝ ամփոփեալ. Թագ կապեալ 'ի գըլուխն. և զէն ունիւր առաջի գնէր. և զաճայքեւքն շուրջ որդւոց, և բազմութիւն աղջկանացն. և առ այսորինք պաշտօնէիցն զինուորութիւք, և Ճաշահայկանքն, և Ճախարարութեցն Պատճոյք. և միանգամայն զօրականացն վաշխք. ամենեքեան կազմեալ զինու հանդերձ. երբեմն 'ի պատերազմ ձակատեցին. և առաջի՝ պղնձէ հարկանեալ փող, և զկնի՝ կուռանք Զայն արքունք՝ ծնայղդեալք, և աշխարօղ կանայք զհետ բազմութեան Սրամենին, և այսպէս՝ առարեալ Թաղեցին. և շուրջ զգեբերեզմանացն՝ լինէին կամաւոր մահուանք, ոմն՝ վերադարձն ատացաք: Եւ տարա այսպէս՝ մինչև եղեալ աշխարհէն մեռաւ, Թագաւորեալ ամս՝ քառասուն, և մի:

Գլուխ 58.

Արտաւազդայ թագաւորութիւնն, և հալածել զեղբարս իւր՝ և զքորս, և մահ՝ այլաբանելով հանդերձ:



Յետ Արտաշիսի՝ թագաւորէ Արտաւազդ որդի նորա: և հալածէ յԱյրարատոյ զամ եղբարս իւր 'ի գաւառս Աղիովտի, և Առբերանոյ, զի մի՛ բնակեսցեն յԱյրարատ, և 'ի կալուածս արքայի. բայց միայն զՏիրան առ իւր պահէ՝ փոխանորդ իւր, զի որդի ո՛չ գոյր նորա: Որ յետ սակաւ ինչ աւուրց՝ թագաւորելոյն իւրոյ, անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի՝ որսալ կինճս, և իշավայրիս՝ զակամբք Գինայ. և աղմկեալ 'ի ցնորից ինչ խելագարանաց՝ ընդ վայր յածելով երիվարաւն՝ անկանի 'ի խոր ինչ մեծ, և խորասոյզ լեալ անհետի: Զսմանէ Երգիչք Գողթան՝ առասպելաբանեն այսպէս. եթէ՝ 'ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին՝ ըստ օրինի հեթանոսաց. դժուարի Արտաւազդ՝ ասելով ցհայրն, մինչ դու գնացեր, և զերկիրս ամ ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ. վասն որոյ՝ անիծեալ զնա Արտաշիսի, ասաց

այս

այսպէս . եթէ՝ յորս հեծցիս յազատն
'ի վեր՝ 'ի Մասիս . զքեզ կալցեն քաջք,
տարցեն յԱզատն 'ի վեր 'ի Մասիս .
անդ կացցես, և զլոյս մի՛ տեսցես։ Զը-
րուցեն զսմանէ՝ և պառաւունք, եթէ
արգելեալ կայ յայրի միում, կապեալ
երկաթի շղթայիւք, հանապազ կրծե-
լով զշղթայսն, ջանայ ելանել՝ և առ-
նել վախճան աշխարհի . այլ՝ 'ի ձայնէ
կռանահարութե̃ Դարբնաց՝ զօրանան
ասեն՝ կապանքն։ վ̃ն որոյ՝ և առ մերով
իսկ ժամանակաւ՝ բազումք 'ի Դարբ-
նաց զհետ եթալով առասպելին, յաւ-
ուր միաշաբաթւոջ՝ երիս, կամ չորս բա-
խեն զսալն, զի զօրասցի ասեն շղթայքն
Արտաւազդայ։ բայց է ճշմարտութի̃
այսպէս, որ̃՝ ասացաք վերագոյն։ Այլ
ումանք ասեն, և 'ի ծնանելն զսա, դի-
պեալ Պատահարաց ինչ, զոր համարե-
ցան կախարդել զնա կանանց Զարմիցն
Աժդահակայ . վ̃ն որոյ՝ բազում զն̃ն
չարչարեաց Արտաւազդ։ Ե՛ւ զայս նոյն
Երգիչքն յառասպելսն ասեն՝ այսպ̃ս .
թէ Վիշապազունք գողացան զՄա-
նուկն Արտաւազդ, և դև փոխանակ
եդին։ բայց ինձ արդարացեալ թուի
լուրն այն, թէ 'ի ծննդենէն և եթ՝ մո-
լութի̃ լեալ, մինչև վախճանեցաւ։ և
առնու զթագաւորութի̃ն Տիրան՝ եղ-
բայր նորա։

Գլուխ ԿԹ

Որ ինչ վասն Տիրանայ ։

Թագաւորէ Հայոց՝ Տիրան որ-
դի Արտաշիսի, յերրորդ ա-
մի՝ Պերոզի արքային Պար-
սից արքայի ։ Սորա ոչինչ
պատմելին գործք մեծամեծք, այլ միայն
թէ՝ մտերմութբ ծառայեաց Հռոմայե-
ցւոց . եկաց խաղաղութե՝ որպէս, և
զբօսմանց պարապեալ ամի ամեն . և
ձիոց երկուց լեալ թեթեւ առաւել
քան զՊեգասոս՝ երագութբ անգաւ,
զորս ոչ երկրակոխս, այլ օդագնացս
համարէին . զոր խնդրեալ հեծանել
Դուռաքէի ուրումն՝ իշխանի Բզնու-
նեաց, պարծէր ընչեղագագոյն դոլ
քան զարքայ ։ Եկեալ առ նա կանխա
խոյն լուրոյ ազգին Արշակունեաց՝ մաք
էին 'ի կողմանս Հաշտենից . ասէին՝ ըն-
դարձակեալ մեզ զժառանգութիւն, զի
նեղէ . քանզի բազմացաք յոյժ ։ Եւ նա
հրամայէ՝ ոմանց 'ի նոցանէ երթալ 'ի
գաւառն Աղւովտի, և Առբերանոյ ։
Իսկ՝ ոսցա առաւել են բազմաց կալեալ
ան՝ արքայի, թէ առաւելագոյն մեզ
նեղէ . ոչինչ ունկնդիր լինի Տիրան ։
վճիռ հաստատեալ, այլ ժառանգու-
թիւն ոչ տալ նոցա, այլ զոր ունէին,

հաւատար տրոհել յինքեանս · զոր քա
ժանեալ՝ ըստ մարդաթուի՛, դատաւ պա
կաս ժառանգութեն Բնակողացն Հայ
աստենից · վա՛ որոյ՝ բազումք 'ի նոցանէ
եկին 'ի գաւառս աղուանի, և առքե
րանւոյ ։ Յաւուրս սորա ասեն՝ լեալ
զպատասանի սմա, յազգէն անձաւացեաց՝
սեպ. յամենայնի, Երախնաւու՝ անուն
կոչեցեալ, որ առնէ կին՝ զմերձին կա
նանցն արտաւազդայ, զոր 'ի Յունացն
էր ածեալ ։ Եւ՛ քանզի զաւակ ո՛չ գոյր
արտաւազդայ, արքայ թողու յԵրախ-
նաւու զամենայն զտունն արտաւազ-
դայ · զի առնէին զնա այր ընտիր լի-
նել, և հաւատ յամենայնի · այլ և 'ի
ցանկութիս մարմնոյ, իբրև զօրինա-
ւորք ոք · զոր սիրեալ արքայի, տայ
նմա զԳահն Երկրորդական, զոր ու-
նէրն արտաւազդ · և զհօգս արևե-
լեայ զօրուն 'ի նա հաւատացեալ ։ Առ-
նմա թողեալ զԴրոշմասպ ոմն Պար-
սիկ, զմտերիմ իւր՝ որ խնամացեալ էր
ընդ Նախարարս Վասպուրականի ·
որում տուեալ զաւանն Տատեայ 'ի
նա՝ հանդերձ Ազարակօքն, և զայ-
գին սոծ՝ յոր մտանէր Առուն գետ՝
հանեալ 'ի ծովակէն Գայլատոյ · և
քնքն գնոյ զկողմամբք Եկեղեցայ յԱ-
ւանն՝ 'ի Զրմէս հաստատելով զարքու-
նիսն, 'ի հանդարտութեան վարեաց
զթագաւորութիւնն՝ ամս քսան և մի ·

և

և մեռաւ 'ի ճանապարհի՝ ձեռն Հիւսի-
սոյ կալեալ:

Գլուխ 60.

Յաղագս Տրդատայ Բագրատունւոյ՝ և ա-նուանց ողկի նորա Յաւազինոյ:

Տղայ ոմն՝ յազգէն Բագ-րատունեաց, որդի Սմբա-տուհեայ՝ Դատեր Փ... Սմբատայ: այր եղեւ առա-ւել սրտեայ, և ուժեղ՝ կարճ հասա-կաւ՝ և գձուձ տեսլեամբ. զոր պե-տսյացոյց իւր Արքայ Տիրան 'ի Դուստր իւր յԵրանեակ. որոյ ատեցեալ զայր իւր զՏրդատ, աշխրանօք, և պնատե-լով կեայր ; զօրհանապազ ապաքէն զինքն, իբր թէ՝ Զքնաղագեղ ընդ Վատասկերպոյ, և Քաջատոհմիկ ընդ Վատթարազգւոյ բնակէ: Ընդ որ զայ-րացեալ Տրդատայ՝ յաւուր միում զա-նէ զնա սաստկապէս, և կորէ զգեղ-ձան հերան, և զվարսիցն փետտեալ զխոպոպսն, հրամայէ քարշել ար-տաքս ընկենուլ 'ի Սենեկէն. և ինքն զնաց ապաստամբեալ 'ի կողմանս ամրու-թեանն Մարաց. և հասեալ 'ի Սե-նեաց աշխարհն. ժամանէ նմա համ-բաւ մահուանն Տիրանայ, զոր լուեալ դարձարէ անդէն: Եւ եղև՝ յետ աւուր

միում.

միում, կոչել զնա յընթրիս Բակրոյ
Նահապետին Սիւնեաց, և յուրախա
նալն գինւով՝ տեսեալ Տրդատայ զկին
մի, զի յոյժ գեղեցիկ էր, գէր ձե-
ռամբ, որում անուն էր՝ Նազինիկ.
տրփացաւ՝ և ասէ ցԲակուր. տո՛ւր
ինձ զմարձակս զայս. և նա ասէ, ո՛չ
տամ, զի Հարճ իմ է։ իսկ Տրդատայ
բռնութն հարեալ՝ի կինն՝ յինքն քարշեալ
'ի Բազմականն, շամփեալ՝ վաւաշէր ընդ
օրինակի Երիտասարդի՝ անարգել մար
փաւորի։ ընդ որ խանդացեալ Բակ
րոյ, յարեաւ՝ հանել զնա 'ի նմանէ.
բայց յառն կացեալ Տրդատայ՝ ծաղկա
կալ սկտեղըն, իբրև զինու մարեցաւ.
նաև զԲարձակեցան 'ի Բազմականացն
'ի բաց պողեաց։ Եւ՛ անդ էր տեսա-
նել՝ զոճն Ոդիսեա զԸնպենէոլպայ ըզ
մեղեխոռն սատակելով. և կամ՝ զԼա
պիթեայցն, և զՑուշկապրկացն կռիւ
'ի մէջ Պերիթեայ հարսանեացն։ և այս
պէս իւր մանան եկեալ, իսկոյն 'ի ձի
ելեալ՝ հանդերձ հարճիւն 'ի Սպեր գը
նայց գաւառ։ Զայս աւելորդ եղև պատ
մել մեզ զնահատակութի ատնն ցան-
կանաւորի։ Բայց գիտեա՛, զի 'ի թողուլ
ազգին Բագրատունեաց զՕրէնս Հար
ցըն. նախ՝ Խժական ժառանգեցին յոր
ջորջումն. Բիւրատ, և Սմբատ, և այլ
այլազգիսի կոչմունս, զրկեալ 'ի Նախ-
նականն անուանսն. որպէս կոչէին՝ յա

ռաջ

ռաջ քան զուրանալն. Բագադիա, Տուբիա, Եղէանան, Սարիա, Սենեքիա, Ասուդ, Սափատիա, Վաղարիա, Ենհանոս. և ինձ թուի, թէ՝ որ այժմ կոչին՝ Բագրատունիք, Բագարատ, Բագադիա, Էդա, որպէս՝ Ասուդ՝ Աշոտ. դոյնպէս՝ և Վաղարիա՝ Աշարիա. որպէս՝ Համբա, Սմբատ:

Գլուխ 61.

Եթէ, ո՞վ էր՝ Տիգրան Վերջին, և զի՞նչ 'ի նմանէ գործք:



Փոխանորդէ զՏիրան՝ եղբայր իւր՝ Տիգրան Վերջին, թագաւորեալ Հայոց. 'ի քսան երորդի, և չորրորդի ամի Պերոզի՝ Պարսից Արքայի. և երկայնակեաց եղեալ՝ ամս քառասուն և երկուս, մեռանի: ո՛չինչ գործ արժանի յիշատակի ցուցեալ, այլ 'ի յաղջկանէ միոջէ Յունոյ՝ 'ի կայանս ըմբռնեալ 'ի ժամանակին՝ յորժամ վախճանեցաւ Տիտոս Երկրորդ՝ Թագաւոր Հռովմայեցւոց՝ որ անուանեցաւ Անտոնինոս Օգոստոս: և Պերոզ՝ Արքայ Պարսից 'ի Հռովմայեցւոց իշխանութեն արշաւեաց. ուստի՝ և Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող. քանզի՝ յառաջ

անուանեալ՝ Վաղէդեասոս, որ՝ 'ի Յու-
նաց պատմիչ. բայց թէ՝ Պարսք զի՞նչ
կոչեն զնա՝ ո՛չ գիտեմ։ Արդ՝ յառաջա-
տակելն Պոմպէի ընդ Մ[illegible]ւրիս՝ 'ի կող-
մանս Պաղեստանեայցն ո[illegible]նէ՝ Հրաման
նաւ նորին, և մերձ Տիգրանայ 'ի Միջերկ-
րեայս առապատանկէն՝ և 'ի կալուածս ընդդ-
նեալ յաղջկանէ՝ իշխեցելոյ կողմանցն
այնոցիկ, մինչդեռ Լուկիանոս Կեսար՝
յԱթէնս զՄեհեանն շինէր. որ և ան-
ցեալ՝ զօրօք բազմօք 'ի Միջերկրէականն՝
յետ մեռանելոյն Պոմպէի՝ նուաճեաց
զայս, և արձակեաց զՏիգրան։ Եւ զԱրտա-
ւազդ որդին՝ զմերձաւոր իւր՝ նմա կնու-
թեն, զոր եկեալ 'ի Հայս՝ 'ի բաց թողու,
և ունեալ 'ի նմանէ պատանեակս չորս՝ աղջ-
կերքն յանուան մօր իւրեանց Ռոդիկեայ
Ռոփսեան. և զԱնազէի մանկանցն՝
[illegible] Նաւահանգես փոխադրեցանէր, և
եղբարք ընդ այլ Նախարարութեամբ, զի
մի՛ անուանեսցին Արշակունիք. և այլ
որոց կենդանեացն ասէք, եթէ աստ,
և եթէ զկողմանսն Կորճէից, հաս-
տատեաց այս Տիգրան, որք փոխանակ ա-
ռաջնոցն երգն 'ի վաղուց, և անձնաւոր ե-
րեսերք. և զ[illegible] [illegible] փրկութեան պատե-
րազմեալ ընդ Յաղնա, որք 'ի Կորճէից,
և որք 'ի մերձ կողմանսն. զյառաջա-
գունեսց մատուարաց ասեմ., զԾննդց՝
'ի Ձորոց Հայկազանց, ասեմ՝ և
յԵկեաց. զոր՝ ո՛չ անուանեալ պատմեն-

ցուք. է ինչ՝ որ ոչ մի՛ն յայտնեի ընկե-
րոյ մերզ, և է ինչ, որ մտանե աշխատու-
թեն 'ի վաստակենս՝ խոյս տալով. Երկր-
րորդ, զի՝ և անհաստատութեն բարոյ-
մաց կարծիս 'ի ներքս մտեալ՝ ընդ բնական
անցանեն. և այլազգի տարածեալ. ոչ
ինչ՝ մի այլոց առաքելոց, որք 'ի մի երբեմնոյն
Տեղբանեայ կարգեցան՝ ձեռնեցուք,
թէ և՝ բազում անգամ աղերսանօք,
այլ միայն զոյս հաւատոյն զ...
գիտեն. զի որչափ հեռի էր՝ ...
յաւերժորդ, և 'ի պատմութեան բանից. և
որ ինչ յանհաւատութեն հայցեր բանին,
և մասանց թեն. մինչ՝ զՀնո եղեա-
լով մի կարդացութեն, որ ինչ յայտնապատ
և կմ 'ի մէջ զաւրութեանց, և զշնորհացն.
Զինչ և առաքելոց՝ ...
արգելեալ զընթացս բանիցս ոչ ...
շարժեն, և որ զանհաւատութեն 'ի
ներքս անձն ... կարծիս. և ըն-
դեղ՝ ամ բազում անգամ, և այլ ...
աղաչեմ, մի յաւերժորդ ...
զնեղ, և ասացէ՝ և յոյժ ...
մեծ, և զհաւատոյ բանակցութեն աշխա-
տութեա մեր, ընդ վայրս և ...
ցուցանելով զօրծ. զի ...
ամ՝ ինքն, և ըեզ՝ զօրծն ...



Գլուխ 62.

Յաղագս թագաւորութեան Վաղարշակայ, և շինելոյ զԱւանն Բասենոյ. և պատել պարսպաւ զնոր քաղաք, և պատերազմ ընդ Խազրաց, և մահ նորին ։

Յետ մահուանն Տիգրանայ՝ թագաւորէ Վաղարշ որդի նորին, յերեսներորդ ամի Համանուանն իւրոյ՝ Վաղարշակայ Պարթևից Արքայի ։ Սա շինէ զԱւան մեծ՝ զտեղի ծննդեանն իւրոյ, 'ի վե՛ր ճանապարհին. ուր 'ի գնալ Մօր իւրոյ 'ի ձմերոցս յԱյրարատ՝ յանկարծակի պատահեալ երկանց 'ի գնացսն, ծնաւ 'ի վե՛ր ճանապարհին՝ 'ի գաւառին Բասենոյ, 'ի տեղւոջն՝ ուր խառնին Մուրց գետ՝ և Երասխ. զոր շինեաց յիւր անուն, և կոչեաց՝ Վաղարշաւան ։ Սա պատեաց պարսպաւ և զհզօր Աւանն Վարդգիսի՝ որ 'ի վե՛ր Քասաղ գետոյ, զորմէ յառասպելսն ասեն. Հաստուած զնացեալ Վարդգէսն մանուկ 'ի Մուրհաց գաւառէն, եկեալ նստաւ զՇրէշ բերդաւ՝ զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասախ գետով կռել, կոփել զդուռնն Երուանդայ արքայի ։

Բայց Երուանդ է Սակաւակեացն՝

որ 'ի Հայկազանց , զորոյ զքոյրն կին
առեալ Վարդգիսի, շինեաց զԱւանս
զայս. յորում և Տիգրան Միջին յԱր
շակունեաց՝ նստոյց զհասարակ առաջ
նոյ գերութեն Հրէից, որ եղև՝ Քա
ղաքագեղ վաճառօք։ այժմ՝ այս Վա
ղարշ պատեաց պարսպաւ՝ հզօր պա_
տուարաւ , և անուանեաց՝ Վաղարշա
պատ, որ և Նոր Քաղաք։ Նա թա_
գաւորեալ ամս քսան՝ մեռաւ ։ Բայց
ասեմ, զսա և կեալ՝ յետ մահուանն ,
յաղագս բարի անուանն , քան՝ զԹու
լագոյնս 'ի թագաւորացն ։ վ͞ն զի , 'ի
սորա աւուրս՝ միաբանեալ ամբոխու_
թիւն Հիւսիսականաց՝ զԽազրաց ա_
սեմ, և զԲասլաց՝ արտաքս քան ըզ
դուռնն Ճորայ՝ ելանել. Առաջնորդ՝
և թագաւոր ունելով իւրեանց՝ զՎը_
նասեպ ումն Սուրհակ. որք անցեալ՝
վտարէին այսր զԿուր գետով։ որոց պա
տահեալ Վաղարշ ամբոխաւ մեծաւ ,
և արամբք մարտկօք, ձեռ. զհետ ա_
ռեալ՝ անցանէ ընդ կապանն Ճորայ.
ուր միւսանգամ միաբանեալ թշնա_
մեացն՝ յօրինեցին ճակատս։ զորս թէ_
պէտ՝ և վանեալ քաջացն Հայոց , փա
խստականս առնէին. սակայն՝ Վաղարշ
մեռանի 'ի ձեռաց կորովեաց աղեղնա
ւորաց. և առնու զթագաւորութիւն
Խոսրով՝ որդի նորին , յերկրորդ ամի
Արտաւանայ՝ Պարսից Արքայի։ Ե՟ նոյն

հետ

Կեսարիոյ՝ միաբանեցաւ դպրոցն Հայոց՝ ան
ջանիւք ընդ ընտանին մեծ, վերծանս պա-
տմիցեցաւ զժամանակս Հօրն. և վա-
ճառաց որով՝ և զեղծանելեաւն ընդդէմ
կաթուղիկէին դաւանանց: մի 'ի հարկերաց յա
մենեցունց պատուականաց ասենու. և զեւ
րոյ ուխտութեան նշանակէ՝ արձան հաւ-
տարոց՝ Հեղինակք գրոյ. որոց՝ յայս
լեզու ընդ հնազանդութիւն լինել Հռով
մայեցւոց.

Գլուխ 63.

Եթէ ուստի՞ պայրոտին գործն.

Զրուցէ մեզ զայս Բարսեղ ձան՝
որ յերդեաւս բանիցն՝ նա յա
ւուրս Վերժինայն Անտիոքեան
որ եղեւ եցաւ. Պատմագրաց՝
որ յառաջ աշակերտն էր Սեղբեստրի Վա
ղենտինիանոսի, զոր յետոյ անապատեալ
կաթողիկոսնեաց, ոչ զոլով 'ի Քաղկեդոնա
թեն՝ այլ մեծամեծն 'ի նմանէն զատուցեալ
այսպէս ընծայեաց զպարգեւս յինքենէ.
ամենայնիւ զպատմաւթիւն ոչ ասեւաց, զի
մեր այլ կարծեալք բանիւք, որ՝ և առ Սե
ւերիանոսին համարձակեցաւ գրել թուղթ,
Միջնորդով ասացուածս արարոյ ընդ դէմ
Սեղբեստրին Մարկիանոսացւոց, և բաշխեց,
Վալերիանոսյն զապահովն՝ զոր 'ի մերում աշ
խարհին մեծին վերջին եկին նա այսր. որպէս՝

զի աշակերտել զոք կարասցէ 'ի խուժ
հեթանոսաց. և ինքն՝ ոչ ընկալեալ
եղև, եմուտ նա յԱմուրն յԱնի՝ և ըն
թերցաւ զՄեհենականն պատմութի.
յորում, և զգործս թագաւորացն, յա
ւելլով իւր՝ և որ ինչ առ իւրովք էին.
և փոխեաց զամ 'ի Լեզու Ասորի. որ
և անուն՝ յեղաւ 'ի Յոյն բան. յորում
պատմէ 'ի Մեհենիցն պաշտամանց Վեր
ջին Տիգրանայ՝ Արքայի Հայոց, պա
տուհել զգերեզման Եղբօրն իւրոյ՝ Մա
ժանայ Քրմապետի 'ի Բագնացն Ա
ւանի՝ որ 'ի Բագրևանդ Գաւառի.
Բագին 'ի վերայ գերեզմանին շինեալ՝
զի 'ի զոհիցն ամ անցաւորք վայելես
ցեն, և ընդունիցին հիւրք երեկօթիւք:
յորում, և զինի՝ Վաղարշ Տօն Աշ
խարհախումբ կարգեաց յսկզբան ա
մին. նորոյ՝ 'ի մուտս Նաւասարդի:
Յայսմ պատմութեան առեալ մեր, երկ
րորդեցաք քեզ 'ի Թագաւորութենէն
Արտաւազդայ մինչև ցանձն խոսրո
վու:



Գլուխ 64.

Եթէ, որպէս՝ Ագաթանգեղոս պատմեաց համառօտ :

Որպէս ասացաք՝ 'ի Վաղարշայ առնուլ զթագաւորութիւն Խոսրով՝ Որդի նորին, Հայր Սրբոյն Մեծին Տըրդատայ : յաղագս որոյ՝ և Համառօտ միջն՝ կարճ 'ի կարճոյ իմն անցանելով՝ Ագրող Քարտուղարն Տրդատայ՝ Ագաթանգեղոս՝ պատմէ փոքր 'ի շատէ ըզմասն Արտաւանայ՝ Պարսից Թագաւորին . և զբառնալ Թագաւորութեան Պարթևաց յԱրտաշրէ՝ որդւոյ Սասանայ . և զնուաճելն Պարսից՝ ընդ ձեռամբ նորա, և զքինախնդիր լինել Խոսրովայ՝ հօր Տրդատայ . և ապատակաւ հինից աւերել զաշխարհն Պարսից՝ և Ասորեստանեայց : Յետ որոյ ասէ թէ՝ յղեաց Խոսրով յիւր ընի, աշխարհն՝ 'ի կողմանս Քուշանաց , զի իւր Տոհմայինքն 'ի Թիկունս հասցեն : այլ նոքա , ասէ՝ չլինէին ունկնդիր , զի հաւանեալք՝ և միաբանեալք էին ընդ Տէրութիւն Արտաշրի , քան ընդ Տէրութիւն իւրեանց Ազգատոհմին , և Եղբայրութեան : և եթէ՝ Խոսրով առանց նց՝ վրէժ պահանջէ . և զնովիմբ ա-

ծեալ՝ ասէ, թէ սմա տամ՝ ո՛տէպ ո՛ը տէպ զայս օրինակ՝ աւար առեալ, զե՛րկիրն իմ յապականութե դարձուցանէր: Այս ասաց, և զգան Անաձկայ՝ նենգութե հրապուրեալ՝ ՚ի խոստմունս Արտաշրի՝ որ ասացն, թէ՝ զքուն պատուական՝ զձեր սեպհական Պալհաւն զայն՝ անդրէն դարձուցից ՚ի ձեզ. վասն որոյ՝ յանձն առեալ Անակայ՝ սպանանել զԽոսրով: Արդ՝ թէպէտ և Ագաթանգեղոս՝ այսպէս համառօտ էանց ընդ այս. բայց՝ ես հաւանեալ եմ ձիգ, և յերկար առնել զպատմութի ժամանակիս այսորիկ՝ ճառելով յիսկըզբանէն, և ճշմարիտ ասացուածովք՝ հո՛ծ և խի՛տ:

Գլուխ 65.


Զթագաւորականն Աշկաց, Յուրն Ցեղ Պարթևականն որոշեցան:

Յադամայ քսաներորդ առաջին երորդն նահապետ մեզ զԱբրահամ, Ածայինքն ցուցանեն պատմութիւնք՝ և ՚ի նմանէն եղեւ զազգդ Պարթևաց: Քանզի՝ ասէ, յետ մեռանելոյն Սառայի՝ առեալ Աբրահամու կին զՔետուրայ, յորմէ ծնան Եմրան, և եղբարք նորա ՚ի կենդանութեն իւրում, Աբրա

համ

համ մեկնեաց յիւսահակայ՝ արձակե-
լով յերկիրն Արեւելից, յորոց սերե-
ալ ազգ Պարթեւաց. եւ 'ի նոցանէ Արշակ
Քաջ՝ որ ապստամբեալ 'ի Մակեդով-
նացւոց, թագաւորեաց յերկիրն Քու-
շանաց, ամս՝ երեսուն, եւ մի. եւ յետ
նորա՝ որդին նր Արտաշէս, ամս՝ 26.
ապա Արշակ՝ նորին որդի, որ կոչեցաւն
Մեծ, որ զԱնտիոքոս եսպան, եւ ըզ
Վաղարշակ զեղբայր իւր՝ Թագաւոր
Հայոց կացոյց; երկրորդ իւր առնե-
լով. եւ ինքն չուեաց 'ի Բահլ. հաս-
տատեաց զթագաւորութիւն իւր: Վն̃
որոյ, Զարմք նր՝ Պահլաւիկք անուա-
նեցան, ոպ՝ եւ եղբօր նորա Վաղարշա
կայ՝ 'ի Նախնեայն անուն, Արշակու-
նիք: եւ են Թագաւորք Պահլաւիկք
այսոքիկ: Յետ Արշակայ Մեծի, առ-
նու զթագաւորութիւն Արշականն՝ յե-
րեք տասաներորդ ամի՝ Վաղարշակայ
Թագաւորի Հայոց, ամս՝ 30. ապա
Արշակ՝ ամս, 31. յետ որոյ՝ Արշէզ,
ամս՝ 20. ապա՝ Արշաւիր՝ ամս, 46:
Սորա լինին որդիք երեք՝ եւ դուստր
մի, որպէս յառաջագոյնն ասացի. ո-
րոց անուանքն, Անդրականին՝ Արտա
շէս կոչիւր, եւ Երկրորդին՝ Կարէն, եւ
Երրորդին՝ Սուրէն. եւ դստերն՝ ան-
ուանեալ կոշմ: Արդ՝ յետ հօրն վախ-
ճանելոյ, կամ եղեւ Արտաշիսի՝ ազգաւ
'ի վեր եղբարցն թագաւորել. զոր յան-

ձրնատեալ եղբարցն՝ ոչ առաւել ողո-
քականօք բանիւք, և այլապարտօք՝ քան
թէ՝ սատարի՞ նուաճեալ նէ։ Եւ Ար-
գարու պայմանն ուխտի, և դաշինս ՚ի
միջի հաստատեն. Թագաւորել Ար-
տաշիրի՝ հանդերձ իւրովք ծննդովք։
իսկ եթէ հասցէն զարդն նորա, Եղ-
բարցն մատուցեալ ՚ի Թագաւորութիւն՝ բար-
կարգէ Աւագութեն. և Արտաշէ-
սի զայս ՚ի նոցանէ զատեալ՝ Պատուա-
պարգեւէ, որոց զնա ակրեալ յանուն
իւրաքանչիւր. և ՚ի միջոյ՝ քանն զամե-
նայն նախարարութեա կարգեալ՝ ըզ
Նախխարհականն ՚ի մէջ պահելով զանուան
ազգին, զի հոչեսցին այսպէս։ Կոչի
նի Պալհաւ. Սուրենի Պալհաւ. և
քոյր նոցա՝ Ասպահապետի Պալհաւ.
քանզի՝ ՚ի վերայ զօրացն էր այր նորա։
և այսու կարգաւորութեամբ՝ Հզօրացան ըզ
զում ամս՝ մինչև վերացան ՚ի նոցանէ
Տէրութիւն։ Բայց՝ մի՛ աստանօր զամե-
բացեսցես զմեզ՝ երբեւ զանեալ զործակ,
ոչ թէ՝ զմի անդամ զարամեալսն, զայս
ձեռաւ պատմեցաք։ այլ՝ զխառն, զի՝ ա-
խորժելով մի Արշակունեաց նուաստա-
ցեալ Սերոյ, քաղաքամուտ կամեցեալ
նել՝ կրկնագրեցաք երկրորդելով։



Գլուխ 66.

Եթէ, ընդ որոց' Յետ Արտաշրիի' Պարսից Արշակ, հնչեաւ պակասեան։

Արդ' անցցուք այսուհետեւ է թէ Թագաւորաց Յեղին Արտաշրիսի, մինչեւ ցբառնիլ 'ի նոցանէ Տէրութեան։ Յետ Արշրի, որպէս ասացաք, թագաւորէ Արտաշէս' ամս, 33. Դարեհ, ամս' 30. Արշակ, ամս' սակաւ և ժամ. Արտաշէս, ամս' 20. Պերոզ, ամս' երկուս և երեք. Վաղարշ, ամս' 50. Արտաւան, ամս' 31. Զսա սպանեալ Սասանորդւոյն Արտաշրի' որդւոյ Սասանայ, բառնալով զԹագաւորութիւն Պարթևաց, հանելով 'ի նոցանէ զաշխարհն յայնմ անուանութեան։ Բազում են ժամանակք այսորիկ' Պատմողք 'ի Պարսից և յԱսորեստանեայց, այլ Ոմանք և Յունաց։ Քանզի 'ի սկզբան Թագաւորութեան Պարթևաց, մինչեւ ցդադարումն է Հռովմայեցւոց' կալանցեալ. Եգիպտոսի' հնազանդութիւն, և երբեմն պատերազմեալ, զոր պատմէ Փակէքատոս, և Պորփիւր, և [illegible] լիմոն, և այլք բազումք. բայց մեք սատացուք 'ի Մատենէն, զոր Եբեր Խոռոհբուս ըղ Բարբուսայի։

Գլուխ 67.

Թէ՝ ընդէ՞ր տապալեցաւ Պահլաւունեաց.

Այս Խոռոհբուտ՝ Դպիր եղեալ Շապհոյ՝ Թագաւորին Պարսից. և 'ի ձեռս Յունաց անկեալ, յորժամ Յուլիանոս (որ և՝ Պառաւատոն) զօրու հանդերձ՝ 'ի Տիզբոն չոգաւ. և 'ի մեռանելն նը, և Յովբիանու, 'ի Յոյնան՝ ընդ Արքունական Սպասաւորսն եկն, և Մերոյ Հաւատոյս դաւանեալ՝ անուանեցաւ՝ Եղիազար, և Յոյն Լեզու ուսեալ՝ պատմագրեաց զգործս Շապհոյ, և Յուլիանոսի. Է նորին՝ և Թարգմանեաց զԱռաքինոյն պատմութիւն՝ Մատենան մի, որ զերբեկեաց իւր լեալ՝ Բարսումայի ասացեալ անուանեալ, զոր Պարսք ստա Սահուն կոչեն. յորմէ մեր ուսեալ երկրորդեմք այժմ 'ի գիրս յայս, Թողլով զպատմագրելոց նը բաց բաղմութիւն. Զգի՝ անուանեն և՝ մեզ այժմ երկրորդել զպատմեալսն. յաղագս եւ բազմոյն փառաւորաց, և պատմագրագութեանց հերոսն մանկանց՝ որ ի Մամունայ, և պատուոյն զՀօտիւն, և ընդունակն՝ և անտարբերութիւն յանուն տացուն. որ են Քօղէք. և որքնչ զմեզ այսուցիկ՝ պղտնիկականս խորհուրդն Ար-

տաշելի հանդերձ պայծառութեամբն. և ան միտ հանճարաբանութեան Մովսէսին գըրոցն, զմն նախադէն՝ և որ ինչ այլն ամ. նա և այծի գըեցումն՝ մանկանն է հա մանեաս արծուայն, և քաջապատում ար տասուս, և դեռատաղանդին պատճառու թեն ստախծուն՝ հանդերձ արքանեկու թեք գայլուն. և միամտապատութեն աաա քննութեն, և որ ինչ այլաբանութեն բնէ կարգ։ Այլ՝ մեք միայն զառայքն, որ ինչ ճշմարտութեանն վայելէ՝ պատ մեսցուք։

Գլուխ 68.

Առաջին արքունեաց խորհրդոյ ըԱստուա_ ծոյ՝ յորում կամաւոր օգնել Ար_ տաշեսի։

Անզէ՛յեւս պայծառանայ տանելոյն զԱր տաւան՝ և Թագաւորելոյն Արտաշըրի՝ որդւոյ Սասա_ նայ, երկու ցեղք Պարթևա_ ցն, որք Ասպահապետին՝ և Սուրէ_ նեանցն Պարթևաց անուանեն, նախանձ պահելով ընդ ցեղին իւրեանց հարա_ զատութեն որ է Արշակունեացն, կամա_ կցեալ առին Թագաւորել Արտաշըրի որդւոյ Սասանայ։ Այլ՝ մանկրմութեն պահելով առ եղբայրութեն տանն կա րենի Պարթևաց, ընդդիմացան պատե

բաղմաւ Արտաշրի որդւոյ Սասանայ։ Բայց՝ յառաջագոյն երբեւ լուաւ զաղմուկ շփոթին՝ Թագաւորն Հայոց Խոսրով, գիտեաց յօգնականութիւն Արտաւանայ՝ եթէ, հնար լիցի՝ անձապարել ապրեցուցանել միայն զԱրտաւան. եւ միջամուխ եղեալ յԱսորեստան՝ լուէ զբօթ մահուանն Արտաւանայ, եւ ըզմիաբանութիւն ամ̃ պարսից զօրաց՝ եւ Նախարարաց. նաեւ՝ զիւրոյ ազգացն Պարթեւաց, եւ Պալհաւկաց՝ բաց 'ի Ցեղէն Կարենեան. Առ որ Հրեշտակս առաքեալ Խոսրովայ՝ դառնայ յաշխարհ իւր մեծաւ տրտմութե̃, եւ ըզկծանօք։ Եւ նոյն հետայն՝ փո՛յթ ընդ փոյթ աղդ առնէ Փիլիպպոսի՝ Կայսեր Հռօմայեցւոց՝ օգնականութե̃ 'ի նմանէ խնդրելով։

Գլուխ 69.

Խոսրովայ օգնականութիւն գտեալ 'ի Փիլիպպոսէ՝ գնդէ 'ի վերայ Արտաշրի որդւոյ Սասանայ պատերազմաւ։



ԱՂմուկ շփոթի խռովութեան լեալ 'ի Թագաւորութեն̃ Փիլիպպոսի, ո՛չ կարաց 'ի Հռօմայեցւոց գնդացն պարապեցուցանել՝ առ 'ի զօրավիգն լինել Խոսրովայ. այլ՝ օգնէ նմա 'ի ձեռն գրոյ,

Հրամայեցըն ստատարել յամն կողմանց: որոց ընկալեալ զայսպիսի հրաման՝ հասանէին նմա յօժարականութեամբ յԵգիպտոսէ, և յասպարապատէն մինչև ՚ի ծովեզերսն Պոնտոսի: Որոյ փութալ զանչափ բազմութեամբ խաղայ ՚ի վր Արտաշըրի, և ձախողեալ ատուեալ՝ ՚ի փախուստ դարձուցանէ, թափեալ ՚ի նմանէ զԱսորեստանեայս, և զայլ Արևելեանսն աշխարհս: Դարձեալ՝ յետ ՚ի ձեռն Հրեշտակաց առ. խ. Տոհմայինսն Պարթև՝ և Պալհաւիկ ազգս՝ և առ Համօրէն զօրըն աշխարհին Քուշանաց, զի առանձնեսցեն՝ վրէժ առցեն յԱրտաշրէ պարտեացն, զի մի՛ յինքեանց Տէրութիւն հեռասցի: Իսկ նոցա ոչ առեալ յանձն յանձանձիլ ստացեալ Ցեղին, որ Ասպահապետ անուանին, և Սուրենեան: դառնայ Խոսրով յաշխարհս մեր, ոչ այնչափ ուրախացեալ ընդ յաղթութեն, որքան՝ ընդ վերջակացութեն Ազգականացն իւրեանց: Յայնժամ, հասանէին առ նոյն ոմանք ՚ի Հայրենականաց իւրոց, որք ՚ի պատերազմի ազգքն երթեալ էին, ՚ի խորագոյն աշխարհն՝ ՚ի Հնդկաց, բերելով նմա համբաւ, թէ՝ Ազգականք քո Վեհասպան՝ հանդերձ ցեղիւն իւրեանց՝ Կարենեան Պահլաւունին՝ ոչ հնազանդեցան Արտաշրի, այլ ՚ի կոչ քո դիմեալ՝ գայ առ քեզ:

Գլուխ 70.

Դարձեալ՝ յարձակումն Խոսրովայ ՚ի վերայ Արտաշրի, առանց Հռոմայեցւոց օգնականութեան։

Թէպէտ՝ և յոյժ զուարճացաւ Խոսրով ընդ լուր գալստեան Ազգականացն, սակայն՝ ոչ յամեաց ուրախութիւն, ընդ հուպ հասանելով բօթն թէ՝ ինքնին Արտաշիր հետամուտ եղեալ՝ միաբանութբ զօրացն, կոտորեաց զամ Ցեղս Կարենեան Պալհաւին; քնջելով զամ արու յերիտասարդաց՝ մինչև ցստնդիայս. բայց ՚ի միոյ Տղայոյ, զոր առեալ Մտերիմ Տանն իւր Բուրդ՝ փախեաւ յաշխարհն Քուշանաց, առ հզօրս ոմանս նորա հասուցանելով ազգայինս. զոր բազում ջանիւք խնդրեալ զմանուկն ՚ի ձեռն առնուլ, ոչ կարաց յազգականացն կոտակցելոց, մինչև՝ յոչ կամաց երդնուլ անկասկած լինել մանկանն. վն որոյ՝ բիւրաւոր ատպելք յոդեցին Պարսք զնմանէ, անքանից սպասաւորել մանկանն։ Սա է Պերոզամատ՝ Նախնի Մեծի Ազգին Կամսարականաց, զոր յետոյ տեղւոյն պատմեսցուք։ Այլ այժմ, մեք որ ինչ զկնի կոտորածն ազ-

դի

դի կարենեան պալհաւին . զորոց վը րէժս ո՛չ թուլադոյնս խնդրեաց թա գաւորն Հայոց Խոսրով . թէպէտ՝ և վախճանեալ Փիլիպպոսի, և շփոթեալ թագաւորութիւնն Հռովմայեցւոց , մարդ 'ի մարդոյ առնլով զՏէրութին սակաւաժամանակեայ . Դեկիոս՝ և Գալլոս՝ և Վաղերիանոս կայսերք , որք ո՛չ օգնեցին նմա : Սակայն՝ Ար-քայ Խոսրով՝ իւրովք զօրօք սիրելովք յարեցելովք յինքն , և Հիւսիսային ազգօք , Արտաշրի յաղթեաց՝ հալա-ծական առնելով մինչև՝ յՃն Հնդկաց:

Պրակ 71.

Յաղագս Գալստեան Անակայ՝ և ծնելու-թեան Սրբոյն Գրիգորի :

Արդ՝ փախուցեալ 'ի Խոսրո-վայ Արտաշիր՝ մերձ 'ի յաշ խարհն Հնդկաց՝ և նեղեալ յոյժ . բազում խոստմունս նախարարացն առնէր, եթէ՝ ոք բու ժեսցէ զնա յայնմանէ . եթէ՝ հնարիւք դեղոց, եթէ՝ գաղտնի խողխողմամբ սրոյ, պէս պէս պարգևս խոստանայր՝ տալ . մանաւանդ Պարթևազանցդ , ասէ՝ դիւրահնար գոգցես՝ 'ի ձեռն կեղ ծաւոր սիրոյ զդաւելն՝ ազգականու-թեան անուամբ պատրել , 'ի դոսա

վստա

վամահաճանայ։ խոստանայր զերանս առան֊
դարձուցանել ՚ի նոցա՝ որ պարթևական
կոչիւր՝ զարքայանիստ քաղաքն զԲահլ
և զամենայն աշխարհն Քուշանաց ձեռա
և՝ Թագաւորութեն ձև և շուք փառա֊
ւորեալ [illegible]. Եւ զհաւատարիմ [illegible]
իւրով ձեռամբ, [illegible]
Յոր հրապուրեալ Անակայ՝ որ է Յե֊
ղէն Սուրէնեան պահլաւն, [illegible]
առնու սպանանել զԽոսրով. [illegible]
տուեալ պատճառս [illegible]
նի յԱրտաշատ, և [illegible]
զօրացն պարսից առ ՚ի պատահմանէ [illegible]
պէս Թէ՝ փախստական [illegible]
ընդ Արտաշատն, հանեալ [illegible]
զերբ՝ սահմանացն Արարատական [illegible]
մէջ կարդուցան։ Զոր [illegible]
խորհրդոյ յՈւտեանց [illegible]
ւեր՝ զկարենեանցն կարծեցեալ և֊
կամակորութիւն, [illegible]
նախանձու Թէ Անակայ, [illegible]
բամանեալ Թագաւորին ՚ի Գա[illegible]
որ անուանեալ կոչի Արտազ՝ ՚ի տե֊
ղի դաշտավայրս՝ ուր յայտնեցան Նշ֊
խարք Սրբոյ, և Մեծի Մերոյ Ա֊
ռաքելոյն Թադէի. Եւ [illegible] ասեմ
սքանչելի զլոյս զարմանալի ծերուն֊
ւոյ, որ ասէր. եթէ՝ ՚ի նախնեաց ու֊
նիմ սովորութիւն, որդի ՚ի հօրէ առն֊
լով զյիշատակ զրուցացս այսոցիկ. որ֊
պէս՝ Ոլիմպիոդորայն, յաղագս Տարօ

նոյ

նոյ՝ և Սիմոն կոչեցեալ Լերինն : Արդ՝ 'ի բնակելն Անակայ 'ի դաշտին Արտազու, պատահէ նմա տեղի Օթարանին՝ մօտ առ Դիրս Սրբոյ Առաքելոյն, որպէս թէ՝ 'ի ներքսագոյն Սրսկապանի խորանին . և անդ առեն՝ զյղութն Մօր Սրբոյ, և Մեծի Մերոյ Լուսաւորչին : Վասն որոյ՝ զնորին Առաքելոյ Շնորհս ընկալեալ, որ առ Հանգս տարանաւ նորին՝ զլինելութիւն . զնորին ելից զՀոգևոր Մշակութեանն պակասութիւն : Եւ յետ անցանելոյ երկուց տարեաց գալստեանն Անակայ 'ի Հայս, յերրորդումն սպանանէ զԽոսրով . և մեռանի ինքն, և իւրքն ամ, պահեալ 'ի խնամոցն Այ̃ զսա միայն . որ ակնարկութբն Այ̃, և շնորհօք Առաքելոյն, առեղծանել առեմք՝ կամ, լուսաւորել յարգանդի մօրն զԱռաքելութն Շընորհս նմա 'ի ձեռն տալով : Իսկ զմնացեալսն 'ի Զրուցացս, ուսուցանէ

քեզ Ագաթանգեղոս :



Գլուխ 72.

Յաղագս՝ Պերճելեանեայ Եպիսկոպոսին Կեսարու Կապպադովկեցւոց, և Պատմութեանց նորին:

Պերմելիանոս Եպսկպս Կապպադովկացւոց, էր այր ըսքանչելի յՈւսումնասիրութի. որ և 'ի տղայութեանն իւրում առ Որոգինէս երթեալ՝ վարժեցաւ. ամ բազում խօսս արար. յորոց մի է՝ պատմութիւն հալածանաց Եկեղեցւոյ, որ յառաջին յաւուրս Մաքսիմիանոսի՝ և Դեկիոսի յարեաւ, և որ հուսկ յետոյ ցամս Դիոկղետիանոսի, շարայարեալ 'ի նա և զգործս թագաւորաց, յորում ասէ՝ վեշտասաներորդ Եպիսկոպոս կացեալ Աղեքսանդրացւոց Պետրոս, վկայեալ յիններորդ ամի հալածանացն. դրէ զքաղումս վկայեալ՝ և խոստովանս 'ի մերում աշխարհիս. համայն և յետ նորա Օտարք յՕտարաց: Բայց՝ զի ոչ ճշմարտութեամբ ոճով պատմէ. և ոչ զանուանս նշանակէ, կամ զտեղիս կատարմանցն՝ ոչինչ կարեւորագոյնս համարեցաք երկրորդել: Նոյնպէս՝ և զԱնտոնինէ, որդւոյ Սեւերեայ ասէ՝ պատերազմեալ ընդ Վաղարշակայ, Ար-

քայլ Պարսից 'ի Միջագետս, և մե_
ռանիլ 'ի մէջ Եդեսեայ՝ և Խառա_
նու. և մերոյն Խոսրովու ո՛չ յոք հա
կամիտեալ: Իսկ՝ որ ինչ զկնի մահուն
Խոսրովու մինչև 'ի թագաւորութիւն
Տրդատայ, 'ի ժամանակս անիշխանու
թեան պատմի, սոյզ համարելով՝ երկ
րորդեմք քեզ համառօտ բանիւք:
Բայց՝ և որ ինչ 'ի թագաւորութեան՝
և յետ նորա, ո՛չ հեղգութե՜՝ և ան_
զգուշաբար վրիպեալ. և ո՛չ կամաւոր
սխալանօք 'ի սմա յարմարեալ բան, այլ
որ ինչ 'ի յիշատակաց 'ի Գիր Մատե
նիցն Յունաց: Իսկ՝ ըստ նմանեացն ա_
պա, և որ ինչ 'ի համբաւուց Արանց
իմաստնոց ստուգապէս տեղեկացեալ՝
արդարաբար քեզ գրուցեցաք:

Պրակ 73.

Դիմումն 'ի վեր Արտաշրի, և յաղթել Կայսեր Տակիտոսի:



Սէ նոյն այր՝ թէ յետ սուսե
րահարն լինելոյ Խոսրովու՝
միաբանել Նախարարք Հայ
ոց, ածեն իւրեանց յօգնակա
նութիւն զզօրս Յունաց, որ 'ի փախու_
դեալ՝ Պարսից ընդդիմանալ՝ և պահել
զաշխարհս, և իսկոյն ազդեցին Վալե_
րիանոսի Կայսեր: Բայց, ք՜զի՝ գունդք

ան

անցին ընդ Դանուբ գետ, զբազում գաւառս գերի վարեցին, և զԿիւկլադեայ կղզիս աւար առին։ Վասն որոյ՝ ոչ մերոյ աշխարհիս ժամանէ թշնամանել Վաղերիանոս, նաև՝ ոչ երկարէր ընդ կեանսն, առնլով զթագաւորութիւն Կղաւդիոս, և յետ նր՝ Աւրելիոս՝ հուպ ընդ հուպ փոխանորդելով զմիմեանս. այլ և՝ ամսականօք, Տակիտոս և Տ[illegible] թագաւորեալ՝ և Փլորիանոս եղբայրն։ Վասն որոյ՝ համարձակաբար արշաւեալ ՚ի մեզ Արտաշրի, և զզօրս Յունաց փախստական արարեալ գերելով՝ յոլով մասն աշխարհիս յաւէր դարձուցանէր։ Յորում գաղթեալ Նախարարքն Հայոց՝ հանդերձ ազգաւն Արշակունեաց, ՚ի Յոյնս ապաւինին. յորոց մի էր և Արտաւազդ Մանդակունի, [illegible]ռեալ զՏրդատ որդի Խոսրովու՝ ՚ի դուռն կայսեր հասուցանէր։ Մակա որոյ՝ հարկաւորեալ Տակիտոս՝ ընդդէմ Արտաշրի գայ զկողմամբք Պոնտոսի. և զեղբայր իւր զՓլորիանոս յուղարկէ ընդդաւ ՚ի Կիլիկիա արձակէ։ Իսկ Արտաշիր հալածէ ՚ի Տակիտոս ՚ի փախստական դարձուցանէ, որ սպանանի ՚ի Ճ[illegible] Պոնտացւոց, որք են Խաղտիք։ Նոյնպէս և եղբայրն նր Փլորիանոս՝ յետ ու[illegible] և ութ աւուր ՚ի Տարսոն։

Գլուխ 74.

Յաղագս խաղաղութեան Պարսից. և Յունաց, և շինելոյ Արտաշրի զՀայս, յամս անիշխանութեան:

Բայց՝ Յունաց Թագաւորեաց Պրոբոս՝ և խաղաղութիւն արարեալ ընդ Արտաշրի, բաժանէ զաշխարհս սահմանադր ութ. փոս գործելով, և Արտաշիր նուաճեալ զազգ Նախարարացն, ըն[illegible] գաղթականն անդրէն դարձուցանէ զազգ 'ի Հ[illegible] ումեմնէ, որոյ անուն Օ[illegible] կոչիւր՝ 'ի տոհմէն Ամատունեաց, որ փեսայ էր ազգին Սլկունեաց, և Անուցօղ Խոսրովիդըխտոյ՝ Դստեր Խոսրովու, որջացեալ [illegible] յԱնի՝ երբ 'ի կաղաղն Հան[illegible] ղողեաց: Իսկ՝ Արտաշիր [illegible] յարդարել զերկիրս Հայոց, 'ի կարգն առաջին հաստատէր: Նաև 'ի [illegible] զԱրքունականս՝ զմեկուսացեալն 'ի [illegible], և յԱյրարատ բնակելոյ, 'ի հնոյն տեղիս մտին՝ և [illegible] կողոպտեալս՝ և էին. և զՄեհենիցն [illegible] առաւել ևս յորդորէ. [illegible] և զՀուրն Որմզդական, որ 'ի վեր Բագնեացն՝ որ 'ի Բագաւանի, անշէջ հրամայէ՝ լուցանել: Բայց՝ զԱնդրիան,

զորս

զոր արար Վաղարշակ իւրոց Նախ-
նեացն՝ Հանդերձ արեգակնակամբ, եւ լուս-
նի՛ն յԱրմաւիր՝ եւ փոխեցաւ 'ի Բագա-
րան, եւ դարձեալ՝ յԱրտաշատ, զոյ-
նսմիկ փշրէ Արտաշիր: եւ զերկիրս զը-
րով՝ ընդ Հարկաւ ի բրով արկանէ, եւ
ամենեւին զիւր անուն Հաստատէ: Նա
եւ՝ զսահմանս Հաստատեալս յԱրտա-
շիսէ՝ զգաւառս յերկրի կացուցանելով՝
նորոգեաց, եւ յիւր անուն փոխեալ՝
Արտաշիրական անուանեաց: Եւ՛ կա-
լաւ զաշխարհս մեր, ոչ՝ մի յաշխար-
Հայոյն իւրոց պարսիկ Գործակալօք,
ամս քսան եւ վեց: եւ յետ նորա, նորին
որդին՝ որ անուանեցաւ Շապուհ, որ
լսի՝ Արքայի Մանուկ, ցԹագաւո-
րելն Տրդատայ ամ մի:

Գլուխ 75.

Կատարումն ազգին Մանդակունեաց յԱր-
տաշէ:

Բայց՝ Արտաշիր լուեալ, թէ ա-
նոն 'ի Նախարարացն Հայ-
ոց՝ ունել զմի յորդւոցն Խոս-
րովու, փախուցեալ՝ ապրե-
ցոյց 'ի դուռն Կայսեր Հասուցանելով:
քննեալ՝ թէ, ո՛վ ոք նա իցէ: եգիտ Հա-
սու, թէ՝ նա է Արտաւազդ յազգէն
Մանդակունեաց. Հրամայեաց՝ զամ

ազգն ջնջել սատակմամբ . քանզի՝ 'ի
գաղթելն Հայոց յԱրարատէ, գաղթին
և նոքա ընդ Ցեղս այլոց Նախարա-
րացն . և 'ի նուաճելն Արարատի գաւառն,
զատանան և նոքա, և սատակին որով
ամենեքեան ։ Բայց գեղջս մի գեղեց-
կագինակն 'ի քերդն Արտաւազդայ՝ գո-
զանցեալ Տաճկաց ուրաձն, որ յազ-
գէն Աշոցան, 'ի դաւակէ Գուշարայ
Հայկազնւոյ՝ փախուցեալ 'ի Կեսարաց-
ւոց քաղաքն ապրեցուցանէ . անուա-
նաւորեալ ընդ նոքեան՝ վասն չքնաղ
կերպարանին ։

Գլուխ 76.

Յաղագս Նախապատուութեան Տրդատայ՝ յամա-
նէ իշխանութեան Հայոց ։

Գ Ամէ Նախապատուութեցն
Տրդատայ, նախ 'ի մանկու-
թեանն՝ յերիվար կամակար
աշտանակեալ . և կորովի
ձիւ վարել . և զէնս շարժել յաջողա-
կագոյն ։ և այլ պատերազմական ու-
ղղենել ախոյեանս . այպա՝ ըստ Գելլէ
սկզբնաւորացն Մեհենական հրամա-
նին Հեփեստեայ, 'ի մրցանակս ազո-
նին առաւելեալ քան զփիլիպոսս Տրո-
յան Հռոմայեցի . որ զմղէ և եթ՝ կա-
լեալ յաղթեր ։ դարձեալ՝ և քան ըզ

կրօնաւոր Արգիշտի, զի նա զնշխարս ե-
գիտն Թադէոսաց. իսկ՝ սա զերկուց ցը-
լուց վայրենեաց՝ միով ձեռամբ կա-
լեալ զեղջերէն թափեաց՝ հանդերձ
ճմլեալ ջախջախմամբ : Եւ 'ի ձի-
ընթացս մեծի կրկէսին կառավարեալ
կործանեցաւ, 'ի հմտութենէ հակառա-
կորդին տապալեցեալ՝ յերկիր անկեալ. եւ
բուռն հարեալ՝ արգել զկառսն, ընդ
որ ամենեքին զարմացան : Եւ 'ի պա-
տերազմի ընդ զօրս Գոթաց՝ եզե-
ալ սատակի, եւ ոչ գտանելով շահնմարտա-
սաց. յարեան 'ի վերայ զօրքն՝ եւ սպա-
նին զնա. նոյնպէս՝ եւ 'ի վերայ ամ Խոշրա-
նայն դիմեցին : Իսկ՝ Տրդատ միայն
ընդդէմ կացեալ՝ չեթող զոք մտանել
յապարանսն Լիկինոսի, առ որում
ինքն Տրդատն էր : Բայց՝ Կարոս հան-
դերձ որդւովքն Կարինեաւ՝ եւ Նումե-
րիանոսիւ Թագաւորեաց. եւ զօրաժո-
ղով եկեալ՝ եւ ճակատ ընդ Պարսից
Արտաշրի, եւ յաղթեալ՝ դարձաւ 'ի
Հռոմ : Ի՜ն որոյ՝ քաղաքում ազգս 'ի սա-
տակումն կալեալ Արտաշրի Թիկնա-
ւորութեան զանապատն Տաճկաստանի
պատերազմ եւ ճակատ ընդ զօրս
ռոյլեանցն կրկին՝ պարտի եւ անկեալ
Եփրատաւ ... սպանաւ Կարոս 'ի
'ի Սիրմիոն : Նոյնպէս՝ Կարինոս՝ որ 'ի
Կարմանիայ չուեալ յանապատն, ընդ ա-
րամ եւ Տրդատ. եւ սպանանեցաւ նա՝

եւ

և զօրն , և մնացեալքն 'ի փախստա-
դարձան . յորում և Տրդատայ վիրա-
ւորեալ՝ երիվարն ո՛չ անձապարեալ՝
փախչել ընդ փախստեայսն . այլ՝ ա-
ռեալ զզէնն իւր՝ և զկապուած ձիոյն ,
'ի լեղ ընդ լայնատարած խորայատակն
անցանէ՝ ընդ Եփրատ , 'ի բուն զօրսն
իւրեանց՝ ուր Լիչինիանոսն էր ։ Ընդ
նոյն աւուրս , լինի սպանանել զՆումե-
րիանոս 'ի Թրակէս՝ փոխանորդէ ըզ
Թագաւորութիւնն Դիոկղետիանոս ։
իսկ՝ որ ինչ 'ի նմա ժամանակի՝ Տրդա-
տայ գործք , ուսուցանէ քեզ Ագա-
թանգեղոս ։

Գլուխ 77.

Յայտարարութի՟ նահատակաց՝ Անդրէան՝ և
Վարուաց Գրիգորի , և ընկերաց նր . 'ի
Թղթոյն Արտեմեայ Եպիսկոպոսի ,
որ՝ վս հարցմանն Մարկոսի Միայ
նաչեցի՝ 'ի Յակոբեանն ։



Յր ոմն 'ի Պարսից՝ ո՛չ 'ի փո-
քունց՝ և յաննշանից , ո-
րում անուն էր՝ Բուրդար ,
գնացեալ անտի՝ և եկեալ
'ի կողմանց Գամրաց , պանդխտեցաւ
'ի կեսարեայ . և առեալ կին 'ի հաւա-
տացելոց՝ որում անուն՝ Սոֆի կոչէւր ,
զքոյր ուրումն մեծատան՝ որ Եւթա-

լեռս յարջարջիւր, դարձաւ անդէն դը-
նալ յերկիրն Պարսից՝ հանդերձ կնաւ
խւրով. զորոյ զհետ մտեալ Եւթա-
ղեայ, համոզեալ՝ արգելլոյր: Որոց հան
դիպեալ ծննդեան Մերոյ Լուսաւոր-
չին, ըստ պատահման՝ մտանէ Սուրբ-
առ մանկանն. և՛ի հաստանիլ աղխարհն.
առեալ Եւթաղեայ զքոյրիւր, և զայր
նէ՝ հանդերձ Մանկամբն, ՚ի Կապա-
դովկացւոց աշխարհն դառնայր:
Սոյլ՝ զայս տամ գործէ Յառաջատե-
սութիւն ԱՅ, ալ՝ կամք են առել ե-
մայ բանի, յաղագս՝ որ ՚ի մեզ Փրկու-
թեն ճանապարհ: այպա թէ ոչ՝ որոյ
յուսոյ ակնունելով զՄանուկն Պար
հաւրկ ՚ի Հռովմայեցւոց իշխանութեն
մնուցանէին՝ Քրիստոսի ընծայէին հա
ւատոց: Բայց՝ յարքունս հասեալ
Մանկանն հասակի, փեսայացուցանէ
Հաւատացեալ ումն այր, որում անուն
էր Դաւիթ՝ ՚ի Դուստրիւր Մարիամ.
որ յետ երից ամաց՝ երկուց որդւոց լի-
նելոյ, ՚ի կամաց երկոցունց՝ մեկնեալ
՚ի միմեանց՝ զատուէին: Մարիամ հան
դերձ կրտսերով մանկամբն՝ ՚ի Վանա-
կանաց երթեալ՝ կրօնաւորիւր. որ
՚ի յարքունս հասեալ մանկանն, զհետ
մեռարի ուրումն, որում անուն էր՝ Նի
կամաքոս. իսկ՝ Անդրանիկն առ Դայե
կաց մնացեալ, որ՝ տապա աշխարհական
րեալ՝ ամուսնացաւ: Բայց՝ Հայր Նը

Գործով , անցեալ՝ գնաց առ Տրդատ ,
զՀայրենեացն հաւատացանել զպարտս .
ոչ՞ պարտ է տալ ճշմարտութե՛ , զԱ
ւաքելութեն վկայել մերոյ աշխարհիս ,
և զՔահանայութեն՝ հանդերձ Սար
ախրոսութեն վարժելով ։ Բայց՝ է որ
դ՛արև Հօր Աքանչելույ՝ որդւոց զարմա
նալիք առաւել քան զառաւել . զի ո՛չ
նա խնդրեաց զորդիսն՝ յորժամ դար_
ձաւ ընդ Տրդատայ , և ո՛չ նոքա չո_
գան առ . և այն գրեթէ՝ յաղագս եր
կիւղի հալածանացն . բայց՝ և ո՛չ 'ի
քահանայանալն երևեալ՝ փառօք Հօրն
պերճացան . վն որոյ՝ և ո՛չ նա յա_
ձեաց 'ի կեսարիա , այլ՝ փութապէս
դարձեալ՝ 'ի Սեբաստացւոց քաղաքին
անտայր՝ հաւաքել զնիւթ Վարդապե
տութեն ։ այլ թէ՝ և բազում աւուրս
տարաբեալ 'ի Կեսարիա , ո՛չ ինչ՝ յորոց
զմտաւ ածէր՝ առնելոց էին . Անապա
ռքին՝ և Մնացականին միայն մպարտե
լով . որք ո՛չ զպատիւն յինքեանս ձգ
եցին , այլ՝ պատիւն զնէա նոցա ըն_
թացաւ . ոչ՞ ուսուցանէ քեզ Ագա_
թանգեղոս ։



Գլուխ 78.

Եթէ՛ ուստի՞, և զի՞արդ՝ ազգ Մա- միկոնէից :

Վախճանեալ Արտաշրի՝ որ-
դւոյ Սասանայ, Թողու ըզ
Թագաւորութիւն Պարսից՝
որդւոյ իւրում Շապհոյ : Ի
սորա աւուրս՝ ասեն եկեալ Նախնի
ազգին Մամիկոնէից՝ 'ի յարևելից Հիւ-
սիսականէն, 'ի Քաջագունահզօր՝ և 'ի
Գլխաւոր աշխարհէն, և ամ աշխարհի
Հիւսիսականաց ազգաց, Առաջին ա-
սեմ զՃենաստանեայցս՝ որ ունին զբարս
աշխարհիկս : Ցանկս խաղաղութեան կենաց
Արտաշրի, Արբոկ ոմն Ճենբակուր,
որպ՝ ասի 'ի նոցա լեզուն, պատուական Թա-
գաւորութիւն. սորա երկու եղբօրոր-
դիք, Բզդոխ, և Մամգոն՝ անուանեալ կո-
չեցեալ՝ Մեծ Նախարարք : և չարա-
խօսեալ Բզդոխայն զՄամգոնեայն, Տէր
բանակցեալ Արբոկ Թագաւորն Ճե-
նաց՝ սպանանել զՄամգոնն. զոր ի-
մացեալ Մամգոնայն՝ ո՛չ գայ 'ի կոչ
Արքային. այլ՝ փախուցեալ աղխիւք իւ-
րովք՝ անկանի առ Արտաշիր՝ Թագա-
ւոր Պարսից : և Արբոկ Հրեշտակս
առաքէ՝ խնդրել զնա. և 'ի չլսել Ար-
տաշրի՝ պատրաստէր պատերազմ 'ի վր նր յօրինէ Թա-

գաւառին Չենաց, և իսկոյն՝ մեռեալ
Արտաշրի , թագաւորէ Շապուհ :
Սոյն՝ թէպէտ և ոչ տայ Շապուհ
զՄամգոնն 'ի ձեռն Տեառն իւրոյ ;
այլ՝ և ոչ յԱրեաց յերկիրն թողու .
բայց՝ ամ աղխիւն իւրով առաքէ զնա
իբրև զվտարանդի՝ առ Գործակալսն
իւր՝ յաշխարհին Հայոց : և յղէ առ
թագաւորն Չենաց՝ ասելով, թէ՝ մի
թուեսցի քեզ դժուարին, զի 'ի ձեռս
քո ոչ կարացի տալ զՄամգոն . և զի
զի՝ երդուեալ Հօրն իմոյ 'ի Լոյսն Ա-
րեգական, հալածեցի զնա յաշխարհէս
մերմէ՝ յեզր երկրի, և 'ի մուտս Արեւու՝
որ հաւասար է նմա մահու . և արդ՝
մի՛ լիցի պատերազմ ընդ իս , և ընդ
քեզ : Եւ՝ զի՛ քան զամ Բնակեալս 'ի
վերայ երկրի, ասեն՝ խաղաղասէր գոլ
զազգդ Չենաստանեայց, յանձն առնու՝
առնել զհաշտութիւնն . սակայն՝ յայտ
նի է, եթէ՝ են խաղաղասէր, ար-
դարև կենդանիք ազգ Չենաց : Սքան-
չելի և աշխարհն առատութ̄ ամե-
նայն պտղոց, և գեղեցիկ բուսովք զար-
դարեալ՝ քրքմաւէտ, և սիրամարգա-
շատ, և բազմամետաքս . անբաւութե̄
յամօրաց՝ և հրաշից . և որ եշայծե-
մունդ անուանեն, զոր հասարակաց
կերակուր ասեն՝ զառ մեզ պատուա-
կան, և սակաւուց ճաշակելի, զփա-
սիան, և զկարապ, և որ այլք այսպիսիք :

այլ՝ զականց՝ և զմարգարէից՝ ո՛չ ամեն դիտել զհամար մեծամեծացն. քան՝ պատուհականք առաւել զգեստուց, և տակաւուց ագանելիք՝ հասարակաց նշ է զգեստ. և այս՝ յաղագս աշխարհին Ծննդոց: Բայց Մամիկոնեայ՝ յո՛չ կամաց եկեալ յաշխարհս մեր, հանդեպեցաւ զալուստեան Տրդատայ, և ո՛չ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ՝ նմ իւրով աղխիւ ընդառաջ գնաց Տրդատայ: մեծաւ պատարագաւ ընկալաւ զնա Տրդատ: Բայց՝ ընդ իւր 'ի պատերազմ ո՛չ էառ յերկիրն Պարսից. այլ՝ ետ տեղի աղխին նորա, և ռոճիկ 'ի կերակուր՝ փոխելով 'ի տեղւոջէ զբովանդակ ամս:

Գլուխ 79.

Նահապետութիւնք Տրդատայ 'ի Թագաւորութեանն՝ Յաղագ ջան չհատապաւն:

Քանզի՝ ո՛չ է Պատմութիւն Ճշմարիտ՝ առանց ժամանակագրութե. վս որոյ՝ և և մանրախուզիւ քննեալ, գտաք զԹագաւորելն Տրդատայ՝ յերրորդ ամի Դիոկղետիանոսի, և գալ այսր՝ հանդերձ մեծաւ զօրու. որոյ հասեալ 'ի Կեսարիա՝ յոլովք 'ի Նա-

խաբարացն ընդ առաջ լինէին։ Եւ եկեալ յաշխարհս՝ գտանէ՛ զՕտայ մնացեալ զքոյր իւր զԽոսրովիդուխտ. և պահեալ զգանձս ամրոցաւն հանդերձ, յոյժ երկայնմտութբ։ քանզի՝ էր արդարև համբերօղ՝ ժուժկալ՝ և առաւել իմաստուն. զի թէպէտ՝ և ո՛չ ծանեաւ զճշմարտութիւն յաղագս Այ, սակայն՝ զսուտութն կռոցն գիտաց։ Նոյնպէս՝ էր և Սան նորին Խոսրովիդուխտ, կուսան, համեստ, որպէս՝ զոք օրինաւոր, և ո՛չ ամենեւին անդուռն բերան ունէր՝ նման այլոց կանանց։ Իսկ՝ Տրդատ ՚ի Հազարապետութն Հայոց զնա կացուցանէ, շնորհակալութբ պատուէ զնա. և առաւել ևս՝ զիւր Դայեկորդին զՄանդակունի Արտաւազդ, վասն լինելոյ նմա պատճառք փրկութն, և Հայրենականացն հանելոց փառաց. յաղս որոյ՝ ՚ի ձեռս տայ նմա զՍպարապետութիւն՝ լինել ՚ի վր ամ. զօրաց Հայոց։ Նորին աղագաւ՝ և զՏաճատ նորին քեռայր՝ Իշխան ՚ի վր գաւառին Աշոցան կարգէ։ Ասէ, որ յառաջայն զգացոյց Աներոյն իւրոյ Արտաւազդայ՝ և նա Արքայի, նախ՝ զԳրիգոր Անակայ որդի լինել. և ապա՝ զկնի վն որդւոցն Գրիգորի, որ հմուտ եղեալ ՚ի Կեսարացւոց քաղաքին բնակելով։ Իսկ՝ Քաղին Տրդատայ երագապէս, և բազում

ծանկատս տանելով. նախ՝ 'ի Հայս , և ապա՝ 'ի Պարսս , երբեմն անձամբք տանէր զյաղթութիւն. որ 'ի միում նաւագի , տուաւել քան զՆեխանանն զայն 'ի Հնդումն՝ կանգնեաց զնիզակն 'ի վե՛ր յաղթական համաթիւ վերաւորաց : Դարձեալ՝ յերկրորդումն կորովեացն Պարսից զփորձ առեալ՝ զատուածութն Սեպայն, և կո՛ւա վառուանածոցն, բաղում վերօք զձին տառատեցին նետաձգութեամբք , որոց զարկուցեալ յերկիր՝ ընկեցին զԱրքայն : Իսկ նա յարուցեալ , և հետի յարձակեալ՝ փոխանակ իւր բազումս ընկենայր 'ի թշնամեացն . և զինչս ուրուսն զձին կալեալ՝ արխաքար աշտանակէր : Դարձեալ՝ յերկրորդին մխատնդամ կաձևւոր լեալ հետի՝ սուսերաւ զփղաց զերամանն պռուղէր : և այսպիսի նահատակութեամբք յաձեալ 'ի Պարսս՝ և յասպրեաստանի , անդր և քան զՏիզբոն յարձակէր :



Գլուխ 80.

Յաղագս առնելոյն Տրդատայ կին զԱշխէն. և կառուցանելոյ զՄասեաց-նոյ. և թէ՝ որպէս հանդիպեն բան հաստոց:

Թէ՛ որպէս արհամարհեաց Արշակ զԹագաւորն Յունաց ։

Ընդ այնոսիկ ապա ժամանակս՝ յարեաւ խռովութիւն Շապհոյ Արքայի Պարսից՝ 'ի Հիւսիսականաց ազգաց. և Յունաց Թագաւորեալ Վաղենտինեանոս. և գումարտակ 'ի Միջերկրեայսն առաքեալ՝ հալածական առնէ զզօրս Պարսից. ապա՝ առաքէ առ Արշակ մեր Թագաւոր թուղթ ։

Թուղթ Վաղենտինեանոսի՝ առ Արշակ ։

Ինքնակալ Վաղենտինեանոս Օգոստոս, հանդերձ աթոռակցաւ մերով, և Թագակցաւ Վաղէսիւ կայսերաւ. Արշակայ Հայոց Արքայի՝ խնդալ ։ Պարտ է յիշել քեզ զչարիսն՝ որք անցին ընդ ձեզ 'ի Պարսից անածից. և զերախտիսն՝ որ 'ի մէնջ 'ի վաղնջուց մինչև ցքեզ. և հեռանալ 'ի նոցանէ, 'ի մօտիլ 'ի մեզ. ոչ՝ զի խառնեալ ընդ զօրս մեր՝ մարտիցես ընդ նոսա. և հանդերձ գոհացողական բանիւք մերոց զօրավարացդ՝ առաքեսցես զհարկս աշխարհիդ. և առեալ զեղբայր քո, և որ ընդ սմա վտարանդիքն՝ 'ի բաց ածցին ։

ո՛չ էր՝ ամ հնազանդութիւն Հռով-մայեցւոց Տէրութեան ։ իսկ Արշակ՝ և ո՛չ պատասխանի առնէ Թղթոյն, այլ նշկահեալ՝ արհամարհեաց զնո-սա ։ նաև՝ ո՛չ զհետ Շապհոյ միտեցաւ ամենայն սրտիւ, այլ անձնահաճ ե-ղեալ՝ պարծելով հանապազ 'ի գիներ-բուս՝ և յերգս վարձկանաց, քաջ, և արի երևիլ քան զԱքիլլես, իսկ՝ ար-դեամբք Թերսիտեայ նմանեալ՝ կա-ղի, և սրագլխոյ ։ վտարանդեալ յիւ-րոց Նախագլխացն, մինչև զամբար-տաւանութեան ընկալաւ վարձ ։

Գլուխ 20․

Յաղագս Սրբոյն Ներսէսի և բարեկար-գութեանն՝ որ 'ի նմանէ ։

Յերրորդ ամի Թագաւորու-թեան Արշակայ, եկաց Եպիս-կոպոսապետ Հայոց՝ Մեծն Ներսէս, Որդի Աթանագի-նի, Որդւոյ Յուսկանն, Որդւոյ Վր-թանայ, Որդւոյ Սրբոյն Գրիգորի ։ և դարձեալ 'ի Բիւզանդիոյ՝ 'ի Կեսարիայ, և եկեալ 'ի Հայս, զամս կարգս ուղ-ղութեան իւրոց Հայրենեացն՝ նորո-գեաց ․ այլ և՝ առաւել ևս ․ քանզի ըզ-բարեպաշտութիւն Յունաց աշխարհին՝ զոր եսես, մանաւանդ 'ի Թագաւո-

րեալ քաղաքն, 'ի սմա նորոգէ ։ Ժողով արարեալ Եպիսկոպոսաց՝ և համօրէն աշխարհականօք, կանոնական սահմանադրութիւն հաստատեաց՝ զողորմածութեան ։ խլելով և զանգթութեան արմատ, որ բնաբար սովորութիւն էր յերկիրս մերում ։ քանզի՝ բորոտք հալածեալ լինէին, եթէ պիղծ յօրինացն համարեալ ։ զսուրուկս փախստեայս առնէին, զի մի՝ յայլս փոխեսցի ախտն ։ որոց դադար՝ անապատք, և ամայիք ։ և ծածկոյթ՝ վէմք, և մացառք ։ ո՛չ յուսաքէ գտանելով մխիթարութիւն թշուառութեանց ։ առ այսոքիւք՝ և Հաշմք անդամովք՝ ո՛չ հաշուեալ լինէին ։ և Հիւրք անծանօթք՝ ո՛չ ընդունէին ։ և Օտարք՝ ո՛չ ժողովէին ։ իսկ Նորա հրամայեալ՝ ըստ գաւառաց գաւառաց շինել Աղքատանոցս՝ 'ի խորշս և 'ի զերծս տեղիս ։ զի փոխանակ Հիւանդանոցացն Յունաց՝ լինիցին 'ի մխիթարութիւն մարմնոց վշտացելոց ։ և բաժանեաց 'ի նոսա զաւանս՝ և զագարակս, պտղաբերեալ յարդեանց անդաստանաց, և 'ի կթոց արօտականաց, և 'ի գեղմնից ։ զի պաշտիցեն զնս հարկաւ բացէ 'ի բաց ։ և նոքա մի՛ ելցեն ըստ բնակութեան իւրեանց ։ և յանձն արար Խադայ ումեմն, որ էր 'ի Մարդաց կարնայ՝ Սարգաւագ իւր ։
Սահմանէ և յամ գեօղս՝ Վանս շի-

նել, զի լիցի Օտարանոցք, և Տեղի Մնոգեան Որբոց՝ և Այրեաց, և անունողաց տածումն ։ Շինէ և յանապատս և յանմարդ տեղիս՝ Եղբայրանոցս, և Մենաստանս, և առանձնակեաց խրճիթս . և Հայր՝ և Տեսուչ նոցա կարգէ զՇաղիտա, և զԵպեփան, և զԵփրեմ, և զԳինդ՝ որ յազգէն Ալկունեաց, և զայլս ոմանս բազումս ։ Եւ զերկուսս զայսոսիկ՝ ի Նախարարութեանց բառնայ յազգաց . մի՝ զմերձաւորաց խնամութիւն, զոր վ̃ն ագահելոյ սեփհական ազատութեանն առնէին . և միւս՝ որ ՚ի վերայ մեռելոց գործէին օծիրս՝ ըստ սովորական հեթանոսութեան . և էր այնուհետև տեսանել զաշխարհս մեր, ո՛չ որպէս զբարբարոսս այլանդակեալ, այլ իբրև զքաղաքացիս համեստացեալ ։



Պրակ 21.

Սպանումն Տրդատայ եղբօր Արշակայ, և երթալ Մեծին Ներսիսի 'ի Բիւզանդիոն՝ և դարձուցանել զպատանդսն ։

Սաստիկ, և յոյժ ահաւոր էր 'ի վերայ անիրաւաց Վաղէնտինեանոս ։ ուստի՝ և զբազում Իշխանս վն յափշտակութեան սատակեաց. և զՌոդանոս Ներքինապետ՝ այրեաց կենդանւոյն. քանզի՝ երիցս հրամայեալ, ո՛չ դարձոյց զյափշտակութիւն կնոջ միոյ այրւոյ ։ Եւ՛ 'ի նմին աւուր՝ հասեալ այնց հրեշտակաց, զորս 'ի Հայոց առաքեաց, ցասուցեալ առաւել՝ զրուցով խրոխտալոյն Արշակայ. և վն զի 'ի ժամուն յայնմիկ առ ձեռն ունէր զքարկութին, հրամայէ՝ զՏրդատ եղբայր նորա զՀայր Գնելոյ՝ սպանանել ։ և Թէոդոսի՝ զօրու ծանու 'ի վր Հայոց դիմել. որոյ հասեալ 'ի սահմանս Հայոց՝ զարհուրի Արշակ. և առաքէ ընդ առաջ նորա՝ զՄեծն Ներսէս. որոյ երթեալ՝ և 'ի հանդարտութիւն զԹագաւորն շրջեալ, մեծարի 'ի նմանէ յոյժ. նա և՝ զպատանդսն խնդրեալ, առնու և դառնայ ։ և կոյս մի՝ անուն Օլոմ_

պիտողայ յաղթէ կայսեր՝ կին ածէ Արշակայ : Բայց՝ կայսերն բարերարութեն արարեալ Մանկանն Գնելայ՝ յաղագս զօր 'ի նոցանէ մահու հօրն նորա Տրդատայ. տայ նմա զպատիւ չիպատոսութեն, և գանձս յոլովս : Ընդ որ խանդացեալ Տիրիթ, խորհէր նմա չարիս համապաղ, սպասելով 'ի դիպօղ աւուր :

Պրակ 22.

Եթէ՝ ո՛րչափ էր խոնարհութիւն Արշակայ ընդ Գնելայ, և մահ Տիրանայ :

Իսկ՝ Գնել եկեալ յաւանն Կուաշ, որ յոտին Արագածն կոչեցեալ լերինն՝ ուկուրացեալ հօրն իւր Տիրանն, որ ցայնժամ կենդանի էր : և Տիրանն ազդացեալ՝ ողբալով դառնապէս ըզ Տրդատ որդի իւր՝ զհայր Գնելայ, իւր զինքն ունելով պատճառս սպանման նորա. վ՜ա որդւոյ՝ տայ Գնելայ զամ ինչ իւր, և զկայուածս զիւղից՝ և Դաստակերտաց. և 'ի նմին աւուր 'ի Կուաշ հրամայէ բնակիլ : Արդ առնու Գնել իւր կին՝ զՓառանձեմ անուն՝ յազգէն Սիւնեաց, և թագաւորական արարեալ հարսանիս, տայ առատապէս պարգևս ամենայն Նախարարացն. որոց

հանձեալ է̄ նա, և սիրեալ՝ ետուն զզա
ւակս իւրեանց, զորս առեալ՝ մեծա-
պէս հանդերձեաց զինու, և զարդու.
և յաւելլին ևս սիրել զնա։ Աստանօր՝
եղիտ Տիրիթ պատճառս քսութե̄. և
մատուցեալ առ Արքայն՝ հանդերձբա
րեկամաւ իւրով Վարդանաւ՝ Ջինակը
րաւ Արքայի, որ 'ի Մամիկոնեան Տոհ
մէն էր, ասէն. ո՞չ գիտես՝ զի խորհել
է Գնելոյ՝ սպանանել զքեզ, զի ինքն
փոխանակ թագաւորեսցէ. ահա՛ տես
Արքայ՝ զնշան իրին, զի բնակեցաւ
յԱյրարատ՝ 'ի կալուածս ձեր թագա
ւորաց. և սիրտ ամ̄ Նախարարացն
եղև ընդ նմա. քանզի՝ կայսերքն նիւ
թելով զայդ, ետուն նմա զպատիւ
Հիւպատոսութե̄ն. և գանձս սաս-
տիկս, որով պատրեաց զՆախարարսն։
Երդնոյր Վարդան յարեն Արքայի՝ և
ասէր, իմովք ականջօք լուայ 'ի Գնե
լոյ՝ զի ասէր. թէ՝ ո՞չ թողում Հօր
Եղբօր իմում՝ զվրէժ մահուան Հօր
իմոյ՝ որ վն̄ դորա եղև։ Այսմ հաւա
տացեալ Արշակ, յղէ զնոյն իսկ Վար
դան առ Գնէլ, թէ՝ ընդէ՞ր բնակե-
կեցար յԱյրարատ, և լուծեր զկարգ
Հայրենեաց։ Քանզի՝ սովորութիւն
էր յԱյրարատ բնակիլ միայն Արքայի,
և որդւոյ նր̄ միոյ՝ զոր փոխանորդ թա
գաւորին պահէին, և այլոց Արշակ
ունեաց բնակիլ՝ 'ի Գաւառս Հաշտե

նից , և Աղիովտից , և Առբերանեայ , հանդերձ ռօճկօք , և մասամբ յարքունուստ : և արդ՝ ընտրեալն է քեզ , կամ ընդունիլ զմահ , կամ գնալ յԱյրարատայ , և արձակել զուստերս Նախարարացդ ՚ի քէն : զայս լուեալ Գնելայ՝ արար զհրամանս Արքային , և գնաց յԱղիովիտ՝ և յԱռբերանի : Բայց՝ Տիրան հայր նորա՝ պատրաստեր խիստ յղեաց առ որդին իւր Արշակ : վա՞ որոյ՝ հեղձամահ եղև յիւրոց Սենեքարիմեանցն՝ ՚ի գաղտնի հրամանէ Արքային , և ՚ի նըմին աւանի Կուաշ Թաղեցաւ , ո՛չ արժանի եղեալ հարցն գերեզմանաց : Թէ արդեօք՝ զփոխարէն Դանիէլի առնէ Ած՝ հատոյց : որովք չափով չափեաց , չափեցաւ եղև ըստ գրոյն :

Գլուխ 23.

Գործելոյ՝ խանդաւ Արշակայ ընդ Գնելայ , և սպանանել զնա :

Ապա՝ ելանէ Արշակ զԹիկամբք Մասեաց՝ առնել որս յիւրում սիրեցեալ գաւառի՝ ՚ի Կողբայատակի , և եղեալ որս առատ , ուրախացեալ Արշակ՝ ՚ի գինիս պարծէր , ո՛չ այլոյ ուրուք ՚ի Թագաւորաց՝ մեռանիլ այնչափ բազմութիւն Երէոց՝ ՚ի միում ժամու :

Աստանօր՝ նորոգեն զնենգութիւնն՝
Տիրիթ, և Վարդան՝ ասելով, Գնէ-
լոյ բազում երէս՝ քան զայս ունիլ
ընդ նորին սուսերս՝ յիւրում լերինն, որ
Շահապիվան անուանի. որ 'ի մայրենի
հաւոյն իւրոյ՝ Գնէլոյ Գնունւոյ հա-
սեալ էր ցնա. վն̄ որոյ՝ առաքէ առ
նա՝ հրովարտակ այսպէս։ Արշակ Ար-
քայ՝ Հայոց մեծաց Գնէլայ որդւոյ ե-
մոյ խնդալ։ Տեսցես տեղիս քաջերէս
'ի լերինս ծաղկոց զպուրակացիր ջրով,
և պատրաստեսցես. զի եկեալ ը̄ ար-
ժանեաց Թագաւորաց՝ հանդիպեսցուք
որսոց։ Եւ՛ երագ զհետ հրովարտա-
կին երթեալ Արշակայ. խորհէր՝ եթէ
ո՛չ ըստ հրամանին գտցէ արարեալ
Գնէլոյ, պատճառս 'ի վերայ եդեալ՝
իբր թէ՝ չարակնեաց զուրախութիւն ար-
քային՝ կապեսցէ զնա։ Այլ իբրև ետես
զոր չէր երբէք տեսեալ այնպիսի պատ-
րաստութիւն որսոց, և բազմութիւն է-
րէոց, խոցեալ խորհրդովք նախանձու՝
և կասկածանաց, հրամայեաց 'ի նոյն
որսին սպանանել զԳնէլ. իբր թէ, ը̄
խաբս ինչ՝ վրիպակաւ երեոյ կամելով
ձգել, նմա պատահեաց նետն. որոյ
առեալ զայսպիսի հրամանն՝ վաղվաղա-
կի կատարէ. ո՛չ այնչափ յաղագս հրա-
մանի Թագաւորին, քանզի վն̄ կա-
մացն Տիրիթայ՝ իւրոյ սիրելւոյ։ Իսկ
Արշակայ հանդերձ Նախարարօքն

իջուցեալ 'ի դաշտ մի Աղիովտի, զդին Գնելոյ՝ թաղեաց յԱրքունական քաղաքին Զարիշատի, 'ի չքմեղիկս եղեալ՝ կոծ մեծ առնէ։

Պրակ 24.

Եթէ՝ որպէս ծաղրեցաւ Արշակ առնուլ զկին Գնելոյ, յորմէ եղև Պապ։

Ապա և Արշակ կարծեաց գործել զանխուլ զչարիսն, այն՝ որ ո՛չն ծածկի յամենատես ականէն Այ, յայտնի և աշխարհի՝ առ 'ի մեղուցելոյն պակուցումն, որպ զմահն Տիրանայ՝ և Գնելոյ։ Քանզի՝ գիտացեալ ամ ուրուք, իմացաւ զայս և Մեծն Ներսէս, և անէծ զԱրշակ՝ և զառիթ սպանմանն։ և գնացեալ՝ նստաւ 'ի սուրբ զաւուրս բազումս՝ որպ Սամուէլ վն Սաւուղայ։ Իսկ Արշակ՝ ո՛չ զղջացեալ ապաշխարեաց, այլ անամօթեալ՝ ագահելով 'ի գանձս սպանելոյն, և 'ի ժառանգութիւն. յաւել՝ առնուլ զկին նորին զՓառանձեմ, յորմէ եղև պատանի մի՝ որ անուանեցաւ Պապ։ Այս Փառանձեմ գործեաց՝ և զանլուր և զանկասկածելի չարիս, և զարատաւորման լսելեաց արժանաւորս։ անարժանիւ ոմամբ սուտանուն Քահանայիւ, 'ի Կե

նաց Պուեղն՝ զմահացումն խառնեալ, եւ Օլոմպիադայ՝ առաջին կնոջ Արշակայ, և ելայծ 'ի կենցաղոյս՝ սակս ոխնութենն մախանաց։ Նոյնպէս՝ զՎաղինակ տայ Արշակայ սպանանել, և փոխխանակ կարգել զիւր հայրն՝ զՍնտրոքոս։

Գլուխ 25։

Սպանումն Տերէնթեայ։

Իբրև եղև խաղաղութիւն շապհոյ 'ի հիւսիսականաց ազգաց, և պարապ առեալ 'ի պատերազմացն, յայտնեցաւ զցասումն՝ զոր ունէր առ Արշակ՝ վասն ո՛չ նմա, այլ՝ Կայսեր հարկելոյ զայն քան ամս. սակս որոյ՝ առաքէ առ նա Արշակ զՏերէնթ և զնորին սիրեցեալն Վարդան, արժանի պատարագօք՝ խնդրել զհաշտութիւն։ Բայց քանզի՝ քինախնդիր անցելոց մարտից կամեցեալ լինել Շապուհ, ինքն ելանէ պատերազմել ընդ Յոյնս. որոյ աղագաւ՝ խնդրէ զԱրշակ մեր թագաւոր՝ հանդերձ ամ զօրօքն ընդ իւր լինել։ Իսկ Արշակ՝ ո՛չ կամեցաւ իւրովի երթալ, այլ բարուբս եղեալ՝ առաքէ դոյզն գունդ զկնի Շապհոյ. և իւր բարկացեալ Տէրէնթայ՝ ընկենու զնա 'ի պատուհոյն.

որպէս զի՝ թէ՛ 'ի նորա հրապուրանաց
եղև այն՝ յաղագս ատելութեան՝ զոր
ունէր առ Ցոյնս. և առաւել ևս՝ զեր
գրուէ զԱրքայ՝ Վասակ զինակիրն նորա,
նախանձ պահելով ընդ եղբօրն՝ վասն
աղջկան միոյ հարճի : Վասն որոյ՝ նախա
տեաց զնոսա Արքայ՝ ամօթալեօք բա
նիւք՝ և կսկծեցուցանողօք : Որոց ո՛չ
կարացեալ տանել՝ այնպիսում վատ-
թարութեան՝ և պարսաւանաց, դէմ ե-
դեալ՝ գնացին առ Շապուհ հատուած :
Ընդ որ՝ առաւել ևս զայրագնեալ
Արշակ, հրամայէ նոյն Վասակայ՝ ըղ-
հետ կրթել բազմաձեռն գնդաւ, զի
ուր և հասցէ՝ սպանցէ զնս. զոր ո՛չ
հեղգացաւ կատարել Վասակ, թէ-
պէտ՝ և եղբայր նր էր Վարդան : Ե-
խնդրեցաւ արիւն անպարտ 'ի Տերե-
թայ ամպարշտէ՝ ըստ անիծից Ներ-
սէսի. և Վարդանայ 'ի հարազատէն
իւրմէ՝ մեռանել յեղբօրէ:



Գլուխ 26.

Պարտումն Շապհոյ 'ի Տիգրանակերտին:

ԱՅՆ Շապուհ գայ համանէ 'ի Տիգրանակերտ՝ մեր քաղաք: կան ընդդէմ նր փաղաքացիքն՝ հանդերձ գումարտակ գնդաւն. քանզի՝ Անտիոքոս Նահապետ Սիւնեաց, որ աներ էր Արշակայ՝ եւ Վերակացու քաղաքին, հրամայեաց աղխել ընդդէմ Շապհոյ: եւ ո՛չ միայն արգել, այլ՝ եւ ո՛չ հրեշտակս առաքելոց նորա, եւ ո՛չ զնորա բանս ընկալաւ: Եւ՛ հզօր կռուոյ եղելոյ՝ զքաղաքն 'ի պարսպացն ապաստանեն. եւ 'ի պարտութեան մատնեալ գնդին Շապհոյ, դառնայ անդրէն 'ի Մծբին. եւ հանդիստ առեալ զօրացն՝ եւ արձարձեալ յաշխատութենէ, խնդրէր առնուլ ըզ Տիգրանակերտ. եւ ո՛չ թողացուցին նմա յառաջխաղաց գունդք, եւ Լուրասք՝ պատմել զայնս, իբր թէ Յունաց հանդարտեցի գործ. եւ Շապհոյ յառաջ անցեալ, գրէ առանց օրինակ զայս:

Մազդեզանց քաջ Շապուհ Արքայից Արքայ, Տիգրանակերտացւոց, որք ո՛չ կամ էք անսասանելոց 'ի մէջ արեաց՝ եւ անմարեաց: Եւ կամիմ 'ի ձէնջ

ոկանեալ յԱմ տուաջի կայ քաղաքս խա-
ղաղութիւն՝ եւ քաղօրէն ազատութիւն ըզ-
մուտն տանել. եւ եթէ դուք Տէրա-
նակերտեայք՝ որք առաջին էք, ո՛չ շա-
հաստատութիւն առնեմ, այլ 'ի մօտէ ու-
ղեկորդութիւնս՝ ընդդէմ կայցէք ինձ. 'ի
ձէնջ տուոցին եւ այլք՝ զզգայն առնել.
այլ 'ի դարձին իմում, այնպէս քաղաքա-
թիւ մատուցից ձեզ, զի կրկին եղիջիք
օրինակ խնամեալ առաջնահակերաց:

Գլուխ 27.

Եթէ ո՛րպէս Արշակաւան շինեցաւ՝ եւ հա-
փորեցաւ, եւ առաւ Անի:

Բայց՝ Արշակ եւս ժպրհեցաւ առնել գործ անմտութեան: 'Ի Թեկղանց կուսէ լերինն Մասեաց՝ շինէ Զերուակերտ, ժողով մարդկան մեղաւորաց: եւ հրաման, որ ոք անկեալ՝ անդր բնակեսցէ, մի՛ լիցին 'ի վերայ նորա իրաւունք դատաստանի. եւ նոյն ժամայն՝ ծովացեալ լցաւ մարդկութիւն հովիտն ամ. քանզի՝ Աւանդառուք, եւ Պարտապանք, եւ ծառայք, եւ Վնասակարք, եւ Գողք, եւ Սպանօղք, եւ Կնահանք, եւ այլք այլպիսիք՝ փախուցեալք անդր անկանէին, եւ ո՛չ կայր նոցա այց՝ եւ խնդիր:

և բազում անգամ բողոքեալ Նախա-
րարացն, ո՛չինչ լուաւ նոցա Արշակ.
մինչև առ Շապուհ ունիլ նոցա բողոք:
Եւ եղև 'ի գաւառականն շարժման 'ի Յու-
նաց, առաքեաց զմի 'ի Սպարապետաց
իւրոց, և Հայ զունդ ընդ նմա, թէ
դէպ լինիցի' ունել զԱրշակ. և նա խոյս
ետ 'ի նոցանէ զկողմամբք Կովկասայ'
Վրաց միաբանելովն իւրեանց. Սպարապետն
Պարսից եկեալ 'ի Հայս, 'ի ձեռն առ-
լինելոյ Նախարարացն, առնու զա-
մուրն Անի. և գերէ զամ գանձս որ
քանի՛ որ 'ի նմա. այլև' զոսկերս Թագա-
ւորացն. ո՛չ գիտեմ թէ' զմն նախարարին
առնելոյ Արշակայ, եթէ' զմն Հմայից
Հեթանոսականաց. զոր ապա մաղ-
թեալ Նախարարացն' թափեցին, և
թաղեցին յաւանին' յԱղձս, որ յառաջն
Արքայածն կոչեցեալ լերին. քանզի'
ո՛չ գիտացին ընտրել զոսկերս Հեթա-
նոսացն' և Հաւատացելոցն. զի ընդ
միմեանս էր խառնակեալ Գերեզմանացն.
յաղագս այնր' ո՛չ արժանի Համարե-
ցան 'ի գիրս Սրբոցն թաղել 'ի Վաղար-
շապատ քաղաքի: Եւ Նախարարացն
Հայոց ժողովեալ' գնացին 'ի վերայ
Արքունական Զեռակերտին' Արշա-
շակաւանի, և Հարին զնա սրով սուսե-
րի' յառնէ մինչև ցկին, բաց 'ի տղայո-
ցըն անմեղութեանց. քանզի' դառնա-
ցեալ էին 'ի վերայ ծառայից իւրեանց.

և յանցաւորաց։ Զոր թէպէտ՝ վաղ գիտացեալ Մեծին Ներսիսի, ո՛չ յառաջ քան զկոտորելն՝ ժամանեաց հասանել․ այլ 'ի կատար գործոյն հասեալ՝ եգիտ բաժանեալ զողջայս կոտորելոցն, զի վարեսցեն 'ի գերութիւն, որպէս ըզ հեռաւոր թշնամեաց․ զորս թափեալ Մեծին Ներսիսի, հրամայէ կրել որթովք 'ի գամ մի․ և դարմանս, և անուցողս նոցին կարգեալ․ որք յետոյ անուանեցեալ անուանեցան Որթք՝ այնորիկ աղագաւ։

Գլուխ 28.

Առումն Տիգրանակերտի՝ և բնաջինջ ջնջումն։

ԻՍԿ Շապուհ եկեալ 'ի Տիգրանակերտ, դարձեալ աղխեցին՝ ընդդիմամարտ նմա․ և եղեալ 'ի պարիսպն աղաղակէին․ գնա՛ 'ի մէնջ՝ Շապուհ, զի մի՛ չարիս յերկրորդումս ընդ քեզ՝ առաւել ևս քան զառաջինն՝ անցուցանիցեմք պատերազմաւ։ Եւ նա պատասխանեաց․ ո՛վ Քաջքդ 'ի Հայոց, որք զանձինս արգելեալ պահէք ի̃ջ պարըսպօք Տիգրանակերտի, և արտաքս ձայն արկանէք ապառնալեաց․ զի քաջ ա-

րանց է՝ յընդդարձակ, և 'ի դաշտի կը
ռուել. և կանանց գործ է՝ արգելուլ
փակել զինքեանս յերկիւղէ՝ առ համ
դերձեալ կռուին։ և զայս ասացեալ
դարձաւ առ Յոյնան գերեալս՝ զինու
որս. ասէ՝ թէ ձերով մարտիւ առից
զքաղաքս, զամենեսեան զձեզ արարից
ազատս՝ համդերձ ընտանեօք ձերովք։
և Պարսկական զօրուն՝ շուրջ զքաղա
քաւն հրամայեաց ընթանալ՝ և նե
տիւք խոցոտել զ'ի վե՛ր պարսպին։ և
Յունացն մատուցեալ՝ բռնութե՛ յե
ցուցին 'ի պարիսպն՝ զկոչեցեալ Նշան.
և այս գործի մեքենայից անու՛աւոր՝
յերից երից արանց մղելով տարեալ։
'ի ներքուստ անիւովք, և երկբերա
նովք, և կոցաւոր մրձովք փորելով
զհիմունս. և նդահարս արարել զայն՝
որ 'ի Հայկազնւոյն Տիգրանայ՝ հօծել,
և յարմարեալ որմունք, քակեալ ըն
կեցին, և հուրս 'ի դրունսն վառեալ.
և յամ կողմանց հուր, և քարինք, և
նետք, և տէգք՝ ձգեալ լինէին. և խոցո
տեալ մերքն՝ յապուշ դառնային։ Եւ 'ի
ներքս մտեալ բոլոր զօրն, և ձեռն
Պարսկական ո՛չ զօրէր բազմախողխող
երկաթն արեամբ արբուցանել՝ մին
չև ապաժոյժ արիւն ապանելոցն լը
ցեալ 'ի հիմունս՝ ծաւալէր։ այլ Յու
նականն ձեռն 'ի քթթել ական՝ հըր
ձիգ ցամենայն երկիրն առնէր զփայ

ատանկերքան. և շարադրեաց զմնացեալսն 'ի 'ի կատարածէն գերեալ, զամենայն՝ չունէր 'ի Պարսս. և հրեշտակս՝ առ որ 'ի Հայս զունդսն եւն առաքեալ. այսպէս՝ ազատն զԱմփռնեանցն հրամայէ առնել զՏոհմս :

Գլուխ 29.

Յաղագս պատերազմին Արշակայ ընդ Նախարարս իւր, և վարդապետի երթալոյն ի Բիւզանդիոն :

Դ Արծեալ յարեաւ խռովութիւն Շապհոյ 'ի նոյն աշխարհ, և խաղաղուն 'ի Յոյնս շրջէ ցաւ : ոչ խաղաղութեան իցէ խռովութեան, և ոչ խռովութիւն 'ի ոչ խաղաղութիւն. ո՞ր զան, վասնհան միոյն՝ միւսոյն լինելոյն սկզբունք. քանզի հիմնադրեցեալ Վաղենտինէանոսս 'ի քերթէն՝ որ կոչի Թեոդոսեան՝ վճարեցաւ 'ի կենդանութեան. երկոքն փոխանորդեալ զանէրանութիւն : յետ բարեբախտաւորոյն Կայսեր, այս ստերազմն Գովթացն, յաղթութեամբ զօրծին : և այն հետոյն՝ առաքեալ զօր 'ի Միջագետս, և 'ի Հայս՝ յաղագս առնելոյ զորուն յօգնութիւն շապհոյ քաջն՝ Արշակայ եկեալ Վարազ զընդաւ՝ ժողովեալ զամենայն՝ և յեւր մէստերմաց, և այս պատերազմ ընդ Նա

խառարարան ընդ. այնուսիկ՝ խնդրելով ըզ
վրէժ ձեռնակերտին իւրոյ. Արշակա
ւանն. : Մխրդատեանլ և նոցա՝ առաջ
նորդութե՛ն Ներսէսի սրբոյ կաթողա
րայ, ընդդիմանան Արշակայ պատե-
րազմաւ : Եւ՛ հզօր մարտի եղելոյ, բա
զումք յերկաքանչիւրոցն անկան 'ի կող
մանցն : Քանզի՝ որք դիպեցան արանց,
ո՛չ ոք զպատերազմութե յանձն առնոյր :
և մինչ դեռ յայսմ էին՝ հասանէին զօրք
կայսերականք. այսպա տեսեալ Արշա
կայ՝ եթէ թշնամիք են նր Հայոց, և
Վաղէշ, և իւր Նախարարքն. տարակու
սել յամենեցունց յղէ առ Մեծն Ներ
սէս՝ բժշկումանգամ աղաչելով, խոստա
նայր դառնալ յամ ճանապարհաց չա
րեաց, և լինել ըստ կամաց նր, և ա-
պաշխարել 'ի քուրձ, և 'ի մոխիր. մի-
այն՝ զի նա եկեսցէ, և արասցէ խա-
ղաղութի, և թափեսցէ զնա 'ի ձե-
ռաց հզօրացն Յունաց. սակէս և 'ի
Նախարարացն առէ՛ալ առեալ՝ զմիմեանց
զկնի դայլին մաղթանքն՝ նորին աղա-
չանս. նաև՝ Եպիսկոպոսաց ժողով ա-
րարեալ՝ պաղատանօք մատուցանէին,
զի մի՛ անփոյթ արասցէ զկորստեանն իւ
րոյն վիճակի. Այսա՝ հաւանեալ Մե
ծին Ներսիսի՝ եկն 'ի մէջ նոցա, և ա-
րար խաղաղութի. ընկալեալ նմա Թա-
գաւորին, և Նախարարացն. բաց 'ի
Նկաhապետէն Արծրունեաց Մեհրու

ժանայ, և 'ի նորին քեռուառնէն Վահանայ Մամիկոնէի, որք անլսօղ եղեալ՝ գնացին առ Շապուհ։ Իսկ՝ այլ Նախարարք ամ̃ հաստատեցին ուխտ, զի յայնմհետէ Թագաւորն վարեսցի ուղղութ̃բ, և նոքա ծառայեսցեն միաբանութ̃բ. և այս 'ի մէջ նոցա։ Եւ առ զօրսն Յունաց երթեալ Արքայն Ներսիսի, աղաչէր՝ մի՛ ինչ աշխարհիս մեղանչել. այլ առնուլ զհարկս, և զորդի Արշակայ զՊապ՝ հանդերձ ամ̃ Նախարարացն որդւովք՝ պատանդս, և դառնալ։ Որում լսօղ եղեալ՝ Քաղցր, և Մեծն Թէոդոս Զօրավար, դառնայ առ կայսրն, պատանդօքն հանդերձ, ը̃ իւր տանելով զՄեծն Ներսէս՝ թղթով Արշակայ, որ ունէր օրինակ զայս։

Թուղթ Արշակայ առ Վաղէս։

Արշակ Արքայ Հայոց Մեծաց՝ և ամ̃ Նախարարք Արամեան ազինս։ Տեառն իմոյ՝ ինքնակալ Վաղեսի Օգոստոսի, և որդւոյ քում՝ Գրատիանոսի կայսեր՝ խնդալ։ Մի՛ դիցէ ինքնակալդ 'ի մտի՝ եթէ առ ատել զձեզ նշկահեցաք, կամ՝ թէ զհզօրս ինչ վարկանելով, արձակեցաք զունդ՝ հէն յերկիր Յունաց. այլ մեծի խռովութեան՝ որ 'ի ձեռում միջի շարժեցեալ

եղև,

եղև, գխտակ եղեալ՝ երկուցեալ՝ ի Շապ
հոյ՝ եթէ ո՛չ ոք թափէ զմեզ ՚ի ձե-
ռաց նորա, օգնեցաք նմա դոյզն
գնդաւ։ այլ ո՛չ ես ինքն Արշակ՝ եկի
ընդ նմա, զմիաբանութիւն ձեզ պահե
լով. վ՞ն որոյ, աւերեալ՝ գերեալ զաշ
խարհս մեր, մինչև զոսկերսն անգամ
զհարցն՝ բրեաց ՚ի գերեզմանացն։ Եւ՛
Արդ՝ հաւատացեալ ձեր եղելոցս, զա
ռաջին սէրն առ մեզ հաստատուն պա
հեցէք. և մեք՝ առ ձեզ մտերիմն հա-
տուսցուք ծառայութի՛։ Իսկ Վաղէս՝
ո՛չ զթուղթն ընթերձաւ, և ո՛չ ետես
զՄեծն Ներսէս. այլ բացէ ՚ի բաց ար
տասահմանել զնա հրամայէ, և որոյ զա
մենայն պատանդսն մատնել։

Գլուխ 30.

Յաղագս արտաքսման լինելոյ Մեծին Ներ
սիսի, և անկանիլ պատահելոյ ՚ի Կղզի
անբնակ։ Եւ՛ թէ՝ ո՛րպէս կերա-
կրեալ լինէին ՚ի վերին խը
նամոյն։



՚Ի ժամանակին յայնմիկ՝ էր յա
թոռ Եպիսկոպոսութեանն
Բիւզանդացւոց՝ Հոգէմար
տըն Մակեդոնի։ Եւ՛ իբրև
ել հրաման արքունուստ, ոչ զմի ան-

գամ

գամ խաբօղ՝ և դրժօղ Արքայի. մա-
տուցեալ առ նա՝ ոմանց 'ի Հերձուա-
ծողաց՝ Աղանդոյն Արիոսի՝ ասեն. ե-
թէ դաւանես ընդ մեզ, թափէ զքեզ
Հայրն մեր Մակեդոնիոս. որում ո՛չ հա-
ւանեալ՝ աքսորեցաւ ։ 'ի նաւուղիղն
լինելոյ՝ ըստ խստաշունչ օդոց ձմերայ-
նոցն, ընկեցեալ 'ի կղզի ինչ անապատ՝
ջարդեաց զնաւն ։ և Նաւորդացն՝ ո՛չ
իշխեցեալ մակուկաւն նաւել, մնացին
տագնապեալ՝ ուտելով զարմատ ան-
տառին. այլ 'ի տեսչութենէն Այ՟՝ կե-
րակրեալ լինէին ամիս ութ 'ի ձկանց,
զորս ծով ընկենոյր կենդանիս ։ Բայց
Պապայ յանձն առեալ՝ հանդերձ պա-
տանդօքն, թափէ Մակեդոնիոս ։

Գլուխ 31.

Թէ՝ որպէս հպարտեաց Արշակ զամենայն Նախարարսն. Եւ վասն վարուց Խադայ Եպիսկոպոսի ։



'Ի Հեռանալ Մեծին Ներսէ-
սի, ստեաց Արշակ ամ Նա-
խարարաց ուխտին, զոր եդ
ընդ նոսա, և խնդրեաց ըղ-
քէն Ձեռակերտին իւրոյ՝ Արշակաւա-
նու ։ Եւ կոտորեաց զբազում Նախա-
րարս ։ Մանաւանդ՝ զազգն Կամսարա-

կանաց բառնայ 'ի միջոյ՝ չարակնելով
ազահեալ յամուրն Արտագերս, և'ի
քաղաք Ոստանի նմ̃ Երուանդաշատ.
և կոչեալ առ ինքն 'ի լքեալ արքունիսն
Արմաւիր՝ երբ զազգականս իւր՝ 'ի պատ
ճառս պատուոյ, և մեծարանաց. միա
հաղոյն՝ զարս և զկանայս հանդերձ
մանկամբքն, հրամայեաց կոտորել, և
ո՛չ ոք 'ի նոցանէ ապրեցաւ: Բայց Սպան
դարատ՝ որդի Արշօրի, քանզի ունէր
երկրորդ կին Արշակունի. որ և բնա
կեցաւ 'ի նորին ժառանգութե̃, 'ի կող
մանս Տարօնոյ, և Հաշտենից. երբ
տրտունջ զհօր եղբօրէն եղեալ զՆեր
սէհէ. որոյ աղագաւ՝ և ո՛չ 'ի կոտոր
ման նոցա դիպեցաւ. այլ լաէ զքօթն՝
հանդերձ որդւովքն Շաւարշաւ, և
Գազաւոնիւ, և բոլոր ընտանեօք՝ գը
նաց փախստական 'ի Յոյնս:

Բայց 'ի գնալն Մեծի Ներսիսի 'ի
Յոյնս, էր ձեռնադրեալ զՍարկա
ւագն զԽադ՝ յԵպիսկոպոսութիւն
Բագրևանդայ, և Արշարունեաց, և
հաւատաց 'ի նա զգործս Վերակացու
թե̃ ամ̃ աշխարհին՝ ցժամանակ իւրոյ
դարձին: Այս Խադ՝ յամ̃ նմանօղ ե
ղեալ Մեծին Ներսիսի, առաւել ևս՝
'ի տեսչութե̃ աղքատաց. որոյ և շտե
մարանքն իսկ՝ աղբերացան ջանէըլա
պէս, իբր առ Եղիայիւ, և Եղիսէիւ. և
'ի յանդիմանել զԱրքայ՝ ահաւորսաս

տիկ

տիկ էր, և աներկիւղ։ Եւ ո՛չ եղև կամագիւտ 'ի նմա Սատանայ, բայց՝ առ միոյ Նուագի, զի էր պճնօղ՝ առ հանդերձս, և ձիասէր․ զոր պարսաւեալ այպանէին փոխանակաբանեալ, որք 'ի նմանէ յանդիմանեալք լինէին․ վասն որոյ՝ թողեալ այնուհետև զպերճագոյն հանդերձն՝ խարազնազգեստ եղեալ՝ իշաւ շրջէր, մինչև ցօր մահուան իւրոյ։

Գլուխ 32․

Եթէ որպէս՝ Արշակ հրամայեաց քարշել զԵրուանդեան զԽոստ՝ և քարկոծել զնա չարեաց՝ սակս յանդիմանութեան իւրոց յանցանաց։

ԵՒ եղև 'ի սատակել Արշակայ զազգն Կամսարականց, հրամայեաց զդիակունս նց̃ քարշել և ընկենուլ անթաղ՝ կերակուր լինել շանց․ և ինքն ոչ մեծաւ յաղթութբ̃ պսակեալ՝ բարեկենդանութեան կատարէր աւուրս․ կուտել՝ մթերել զնոցայն հրամայելով՝ համբարս․ զորոց պեղեալ երկուց խորոյ քաջախորս, և սաստկամս լայնս՝ որ 'ի շինին Նախճաւանին բերին այլովք նոցին աւանի։ Իսկ Սայլորդացն

տեսանել զոսկերս մարդկան զազանակեր եղելոց՝ ցրուեալս առ եզերբ փոսին․ հարցեալ ուսան՝ խուրեանցն լինիլ Տերանց․ հաւաքեալ ՚ի տայլոն՝ ներքոյ եղեգանն, բերեալ Թաղեցին ՚ի նոյն խորս․ զոր զգացեալ Արշակայ, հրամայէ՝ զՄայլորդան ՚ի վր̄ խորոցն կախել դիմայուէ։ Բայց Խադայ՝ ոչ պատահել յառաջնում նուագին, այսու ժամու հասանէ․ և սկսեալ կշտամբէ զԱրքայ՝ բանիւք յանդիմանութե։ Հրամայեաց Արշակ՝ քարշել զնա, և քարկոծ առնել։ Եւ քանզի՝ էին դստերաց նորա տագերք ՚ի մեծ նախարարութեցն, ՚ի կորովի՝ և ՚ի քաջ ազգէն Ապահունեաց, սուսեր հանեալ կիտախադլխող զքարշողան առնէին․ և յափշտակեալ զԽադ ՚ի ձեռաց նոցա, յիւրեանցն գնացին Գաւառ․ և Արշակայ ոչ ՚ի հակառակս մտեալ՝ զզէր, զի մի խռովութե ամ̄ նախարարացն յուզեսցի։



Գլուխ 33.

Յաղագս թագաւորելոյն Թէոդոսի Մեծի, և ժողովոյն՝ որ եղև վասն Հոգեմարտին:

Յայս Վաղէսի կայսեր, ըստ արժանի անօրէն խորհրդոց խորհրդոց՝ զյաւիտենական գեհենին առաջին բերելով զօրինակ, հրկէզ եղեալ յԱնդրիանուպօլիս՝ սատակեցաւ. և առնու զթագն Թէոդոս: Սա քակեաց զՄեհեանս կռոցն՝ մինչև յատակս, զփակեալսն միայն ՚ի Սրբոյն Կոստանդիանոսէ, զանուանեալսն՝ Արեգական, և Արտեմեայ, և Ափրոդիտեայ ՚ի Բիւզանդիոն: Աւերեաց նոյնպէս՝ և զտաճարն Դամասկոսի, և արար Եկեղեցի. Նոյնպէս՝ և զտաճարն ՚ի Լիու քաղաքի, զԼիբանանոսի՝ զՄեծ, և զՀոչակաւոր զԵրրեք քարեանն: Սա դարձոյց զա̃մ Հայրս Ս̃խս, որք յաղագս ուղղափառութեան՝ արտաքսահմանեալք էին, և ՚ի Մետաղս. Է̃ որս և զՄեծն Ներսէս՝ ածեալ առ իւր ՚ի Բիւզանդիոն՝ պահէր մեծաւ պատուով, մինչև ճշմարտութեն ստուգեցաւ հաւատ, որք յաղագս ամբարշտին Մակեդոնի հայհոյութեանցն: զի ո՛չ Տր̃ խոստովանէր ըզ

Հո

Հոգւոյն Սբ̃, և ո՛չ երկրպագելի՝ և փառաւորեալ ընդ Հօր, և ընդ Որդւոյ. Այլ՝ Օտար յԱծ̃ բնութենէն, և Ստացական, և Պաշտօնեայ, և Ազդումն ինչ, և ո՛չ Էութիւն Անձնաւոր։ Եւ՛ ժողովեալ Սբ̃ Հարքն՝ 'ի Թագաւորեալն Բիւզանդիոն. Դամասոս՝ Հռոմայ. Նեքտառիոս՝ Կոստանդնուպօլսի. Տիմոթէոս՝ Աղեքսանդրի. Մելիտոս՝ Անտիոքու. Կիւրղոս՝ Եէմի. Գրիգոր՝ Նիւսիա. Բասիլիոս՝ Կեսարու. Գրիգորիոս՝ Նազիանզու, Ամփիլաքիոս՝ յիկոնիու. և այլք Եպիսկոպոսք՝ միանգամայն հարիւր և յիսուն Հարք, որք նզովեալ մերժեցին զՄակեդոն, և զամենայն Հոգեմարտս։

Գլուխ 34.

Անձամբ երթալ Արշակայ առ Շապուհ, և անդ արգել լինել։



Դարձեալ՝ պարապ առեալ Շապհոյ 'ի պատերազմացն, առաքէ 'ի վերայ Արշակայ՝ զԱլանայ Ոզան ոմն, Պալհաւիկ՝ հզօր գնդաւ, որ էր ազգակից Արշակայ։ Իսկ՝ Արշակ Թափուր 'ի բազմացն մնայր նախարարաց. որոց ձեռն տուեալ Ալանայ Ոզանն, կա-

մաւ

մաւ երկթայիւն առ Հարաւ ։ առաջնոր-
ցեալք յիւրեանց Տեառնէն Արշակայ.
և մեծարեալք ի Հայոց՝ զաւառնայիւն
յաղթահարհա մեր ։ Ուստի առաքելութեն
Արշակայ՝ յղէ պատգամս առ Երուանդ զօ-
րաւն Պարթևաց, եթէ դու արքայն իմ,
և Հարազատութիւն, ընդէ՞ր այդպիսեաւ
վարես զիս ընդդիմութիւն . թէպէտ և ա-
կամաց զդաւանութ քո զկնեամ, ո՛չ կա-
րացեալ սայթաքել զհրաման Հայոց-
Հոյ՝ տալ ի վէր քո աղդաւականիս ։ Այլ
արդ՝ թուլացո՛ զխեժ, որոշեալ ուրեք՝ վայր
կեանն մի ժամանակի, մինչև ողջ մե-
ռեալ՝ կարասցիք անցանել յերկիր Յու-
նաց . և դու կացցես զաշխարհս , և
բազմաց յինէն համդէպելոց բարու-
թեց, որպէս արդարև ի մեռեալ Հա-
րազատէ ։ Դարձուցանէ Ալանայ Ո-
զան Արշակայ՝ այսպէս պատմութեանս
առէ , թէ դու ոչ խնայեսցես յաղթա-
կեան մեր Կասմարականան, որք տա-
ւել զան զիս էին քեզ հարազատու-
թիւնք, Գրենե Ձերոյ՝ մասամբ, և այ-
խարհս համարձակա . զիա՞րդ մխու-
ունիցիս ական ի քեզ խնայել՝ հեռացել
յինէն Դենիս, և քնակութք . և ո-
րո՞վ օրինակաւ՝ ես ի քեզս յուսալով
զարկես, որ անյայտ է՝ թէ ուստի , զի
զառեալն յիմիք թագաւորէն՝ կարա-
ցանիցեմ ։ Այսպէս՝ ախուհեաւ Արշա-
կայժ նեղեալ, յո՛չ կամաց երկթայ առ-

Շապուհ, և 'ի պահեստի լինի 'ի նմանէ. և ընդունելութբ հարկատուորեալ գրէ՝ զի փառանձեմ կին նորա՝ 'ի դուռն եկեսցէ։ և Շապուհ հրամայէ ամենայն մեծամեծացն, զի ընդ փառանձեմայ եկեսցեն։

Գլուխ 35.

Յաղագս չարեացն Շապհոյ՝ որք անցին 'ի Հայս, և մահն Արշակայ։

Իբրև գիտացին Նախարարքն Հայոց, այնք՝ որոց յառաջագոյն քան զԱրշակ՝ ձեռնտուեալ էր 'ի Շապուհ Արքայի Պարսից. եթէ՝ և զնոցա կանայս խնդրեալ է, իբրև զայնց՝ որք ընդ Արշակայն՝ էին միաբանք։ Եւ զայն ևս ուսուցին՝ եթէ զնոյն Ալանայ Ոզանն, և զուրդ փոքր է՝ որ յաղագս այնորիկ եկեալ է, միաբանեալ հալածեցին զնա. և իւրեանց առեալ զկանայս՝ և զորդիս, փախեան յաշխարհն Յունաց։ Նաև՝ ո՛չ Դշխոյն փառանձեմ գնաց 'ի կոչ առանն իւրոյ, այլ հանդերձ գանձիւք՝ անկաւ յամուրն Արտագերից, լուր առնելով առ որդին իւր Պապ, յուսայր ապրել 'ի ձեռաց արքային Պարսից։ Ընդ որ զչարեալ Շապուհ, կապէ զոտս Արշակայ եր_

կաթեղէն շղթայիւք, և ապա յանձնել յերկիրն Խուժաստանի՝ յԱնյուշն կոչեցեալ բերդ. և զօր բազում զումարեալ ՚ի ձեռն Մեհրուժանայ Արծրունւոյ, և Վահանայ Մամիկոնէից Ուրացողաց ՚ի Քծ, արձակէ յաշխարհն Հայոց. որք եկեալ նստան շուրջ զը-բերդաւն Արտագերից: Եւ թէպէտ ո՛չինչ կարէին առնել՝ վն անմատչելի ամրութեանն. բայց՝ զի բարկութիւն Այ էր ՚ի վերայ Արշակայ, մարդիկք ամրոցին ո՛չ անսացին մնալ համբաւուն Պապայ. այլ անձնատուրք եղեն ՚ի կամաց՝ և ո՛չ ՚ի բռնութէ. զորս գերեալ հանդերձ գանձիւք՝ Տիկնաւն Փառանձեմաւ, խաղացուցին յԱտրպատական. և անդ ընդ սայլիւ ցից հարեալ՝ սատակեցին: ՚Ի նմին ժամու՝ եհաս հրաման ՚ի Վաղէսայ յԱւգոստէ, զի քանդեսցեն աւերեսցեն զամ ամրութիւն քաղաքաց, և զՀրէայսն՝ խաղացուցանել ՚ի գերութիւն, և զայն Հրէայսն, որք նախին օրինօք կային ՚ի Վան, Տոսպայ. զորս ածեալ էր Բարզափրանայ Ռշտունւոյ՝ յաւուրս Տիգրանայ. զորս բնակեցոյց Շապուհ յԱսպահան: Գերեցին և զայն Հրէայս՝ որք յԱրտաշատ, և ՚ի Վաղարշապատ, զորս ածեալ էր նոյն Տիգրանայ Արքայի. որք յաւուրս Սրբոյն Գրիգորի, և Տիգրանայ՝ հաւատացեալ էին ՚ի Քծ. Է

որս

որս՝ և զՋուիթայ Երէց Արտաշատու։ Եւ մատուցեալ առ Շապուհ Մեհրուժանայ՝ չարախօսեաց զՋուիթայ Իրիցու Արտաշատու, եթէ յայն սակս եկն ընդ գերեալսն, զի խրատեսցէ զնս՝ պինդ ունել զհաւատսն Քրիստոնէութե։ վս որոյ՝ չարչարել զՋուիթայ՝ հրամայեաց Շապուհ, զի թողցէ զօրէնս Քրիստոնէութե․ որում ո՛չ հաւանեալ՝ կատարեցաւ։ Զայս ամ աղէտս թշուառութեան տեսեալ Արշակայ, Սաւուղաբար անձինն արար, որ թագաւորեաց ամս՝ 30։

Գլուխ 36․

Անցք ընդ մեզ չարեացն՝ որ ՚ի Մեհրուժանայ․ և թագաւորել Պապայ։

Յետ մահուանն Արշակայ, գումարեաց Շապուհ զօր բազում ՚ի ձեռն Մեհրուժանայ՝ և արձակէ ՚ի Հայս, և ՚ի նմա հաւատայ զաշխարհս, և տուեալ նմա կին՝ զքոյր իւր զՈրմիզդուխտ, և Հրովարտակս բազումս՝ շինից, և Դաստակերտաց ՚ի Պարսից աշխարհէն։ և խոստացաւ նմա տալ զթագաւորութիւն Հայոց, միայն թէ զՆախարարսն նուաճեսցէ, և ՚ի դէն Մազդեզանց՝ զաշխարհն դարձուսցէ։ որոյ յանձն ա-

ուեալ, և եկեալ՝ զբազում Նախարարաց կանայս կալեալ՝ ՚ի բերդս այր պահել, զդարձ արանցն յուսալով, և զամ կարգ Քրիստոնէութեան ջանայր խափանել։ Զեպիսկոպոսունս՝ և զՔահանայս՝ հարկաց պատճառաւ՝ կապել, յերկիրն Պարսից տայր տանել։ Եւ զոր միանգամ Գիրս գտանէր՝ այրէր. և հրաման տայր՝ մի՛ ուսանիլ դպրութիւն Յունարէն, այլ Պարսիկ. և մի՛ իշխեսցեն խօսիլ Յոյն՝ կամ թարգմանել. այսպիսի ինչ պատճառաւ՝ զի ամենևին մի՛ լիցի Հայոց ընդ Յոյնս ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ։ բայց ճշմարիտ խափանել զՔրիստոնէութեանն ուսումն, զի յայնժամ Գիր Դպրութեան Հայոց՝ չևևս էր լեալ. և Յունական՝ կարգք Եկեղեցւոյ վարէին։ Արդ՝ իբրև լուաւ Մեծն Ներսէս ըզ չարիսն, որք հասին ՚ի վր Հայոց, և զմահն Արշակայ, աղաչեաց զԻնքնակալն Թէոդոս՝ խնդրելով ՚ի նմանէ օգնականութիւն, և թագաւորեցուցանել զՊապ որդի Արշակայ։ Եւ ընդ նմա գումարեաց զօր բազում ՚ի ձեռն Ստրատելատին Մեծի՝ Տէրենտիանոսի։ և Մեծին Ներսիսի՝ առեալ զամ Նախարարսն՝ որք կամակից էին ընդ Տէրութեանն Պարսից՝ և որք ո՛չ. և զապրեալն Կամսարական Սպանդարատ՝ միաբանութեամբ ածէ զՊապ յաշխարհս

Հայոց։

Հայոց։ Ե՛ւ եկեալ գտանեն զամբարիշտըն Մեհրուժան, պետացեալ՝ կալեալ զաշխարհս Հայոց. և հալածական արարեալ՝ յինքեանս թափեն։ Բայց Մեհրուժան հրամայէ Պայկացն՝ զբերդիցն պարսպաց կախել զկանայս Նախարարացն՝ մինչև մեռցին. և թողուլ նոյնպէս 'ի կախաղանին զդիականունս, զի լուծեալ անկցին դէշ՝ կերակուր լինի թռչնոց։

Գլուխ 37.

Յաղագս մեծի պատերազմին՝ որ եղև 'ի Ձիրաւ, և սատակման ամբարշտին Մեհրուժանայ։

Ազդ արարեալ Մեհրուժանայ՝ յերկիրն Խորասանայ առ Շապուհ՝ զամ օգնականութեն Թէոդոսի, զոր արար առ Պապ։ ելանէ հրաման 'ի Շապհոյ ամ զօրացն Պարսից՝ երթալ 'ի պատերազմ ընդ Մեհրուժանայ 'ի Հայս։ Դոյնպէս՝ ազդեն Ինքնակալին Թէոդոսի՝ Պապ, և Տերենտիանոս զՇապհոյ՝ եթէ ամ զօրացն հրամայեաց ելանել 'ի վերայ մեր, բայց միայն 'ի Դրանկացն։ Այպա՝ և Օգոստոսն Թէոդոս հրամայեաց Ադդէի կոմսի Մեծի՝ եր

թաւ յօգնականութիւն Պապայ, առ_
նուլ զամ զօրս Յունաց. ո՛չ զոր թո
ղուլ՝ զոր ո՛չ առացէ զկնի. այլ և՝ զՀե
ռեակս պատհառապահս քաղաքացն, որք
զմեծատոհմութեանն ունէին զիշխանս: Եւ
խմբեցաւ պատերազմն 'ի դաշտին՝ որ
կոչի Ձիրաւ. և մեռանին ճակատն՝ առ
ճակատ: և Մանուէլ քաջ նախարար
րաց Հայոց՝ խիզախեալ նահատակէր՝
մտանէ 'ի մէջ ճակատուցն առաջնորդու
թե՛ Սպարապետին իւրեանց Սմբա_
տայ Աշոտեան՝ որդւոյ Բագարատայ,
որ յաղթէն Բագարատունեաց: Եղեն՝ և
'ի զօրացն Պարսից համարիք նոցա, և
խառնեցան 'ի մէջ ճակատուցն, և զիրեար
ընդ զիրար լինէին: Եւ՛ 'ի փախուստ Մա_
կանցն Պարսից, ընդ հուր դարձեալ
մերոցն զհետ նոցա. որինակ խմն՝ ոմ
փոխեղբի յանտառէ աներևութացեալ
երաց՝ յերկփեղկոցն առեալ նկրտեալ
զի ցուցեալ յերկիր ընկենուլ, ո՛չ կա_
րելով նշ յուրետոց ճակատն մտանել:
Իսկ՝ յաղթեալ Պարսիկն զմեղն շրջէին,
նոքա 'ի վահանաւորակն Յունաց՝ հրր
յամուր քաղաք մտանէին, առ ո՛չինչ
համարեալ առնելոյ: քանզի՝ այնպէս արար
Գնդգիտանս Իշխան հեծելական զօրուն.
Իբր պարապոյց պատեաց վահանօքն ըզ
ճակատն Պապայ. քանզի զօրքն Յու_
նաց վառեալ կէին 'ի զէնս ոսկւոյ՝ և ար
ծաթոյ. և երիվարք նոցա՝ նոյնպէս

զարդու ։ Ե՛ւ էր անապատն նոր զգա-
րեալ էին, յորոց յոլովք 'ի ջերմոյ եւ 'ի
կաշեայ պահպանակաց զգեստուն ըզ-
կարծրութեն՝ վիհից բերեր եղեալ թա.
եւ 'ի վերայ նոցա՝ պնդապատ գետնէ
շանս արձակեալք, երբ զմտացութեամբ էին
հովանաւոր ծառոց. բայց զգեշապայտն
մեհենական՝ ահագին բերանակապացու-
թիւ ուսուցեալ 'ի փչմանէ օդոյն, ամենայն
ուրեք կարեմ նմանեցուցանել, այլ
միայն՝ երբեւ զերատն էին անդադամպն-
դեայ՝ խառնարհէն 'ի ծով զմոռմանդակ
ծանկատան Ցանաց, 'ի Պարսկականն դառ-
ացն ։ քանզի՝ եւ զմէ էր անապատն տապան
զհզօր էին դեռ, առ 'ի կարգն 'ի լոյն
ծառայեալ. արդարեւ՝ ջրագոյն զգա-
հազգեստոցն բերեր զծիծաղութեան ։
Այդ՝ երբեւ եսեա Մեծն Նեղուկամբդոյն
ամ, եւ 'նա 'ի կատար լերինն Նաքարայ,
եւ ամբարձ զձեռն իւր յերկինս, զի-
խոնարհեցին պահելով 'ի խնդրուածս
հանգոյն Նախամարգարէին Մովսէ-
սի, մինչեւ պարտեցաւ երկրպագուն Ամա-
ղէկ ։ Իսկ 'ի ծագել արեգականն ընդ-
դէմ մերոց զօրացն, 'ի պղնձապատ վա-
հանացն՝ նշոյլք զերրամբքն փայլատա-
կէին՝ երբեւ յամպոյ մեծէ ։ Եւ 'ի նոցա
նէ՝ 'ի դաշտս առաջնին. 'ի մերոց Նախա-
րարացն Քաղք ազահաւորք՝ ամ փայ
լատակացն ծառուդայ թագ. յորոց 'ի սե-
սութիւն միայն՝ զանդրխաացեալ Պարս

կափկած դաւնդ, սակաւ ինչ՝ և մերն, վ꙱ն ո՛չ կարել հայիլ ընդդդէմ արեգա_կանն ծագման ։ Իսկ 'ի բաղխել զմե_ռանս, եղև 'ի վերայ հովանեաց սմայոյ, և հողմ սաստիկ 'ի մերոցն կուսէ՝ ը̅դ_դէմ Պարսկականին փչեալ ։ և 'ի խառ_նակել մարտին, պատահէ Կամսարա_կանն Սպանդարատ խմբի մեծի, յո_րում էր Քաջն Շերգիր՝ Դեկաց Ար_քայ ․ զգլուխն միջին գնդին՝ պնդու_թե̅ զանեղի ձանկատուն կալեալ ․ և յար_ձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումբն, ո̅պ զշանթահար՝ յերկնէր կոր_ծանէր զքաջն ․ և պատառեալ զխումբն, 'ի փախուստ դարձուցանէր ։ Եւ՞ այսպէս 'ի վերին օգնականութեան զօրացեալ, առ հասարակ՝ զօրքն Յունաց, և Հայ_ոց՝ դիմակայեալք թշնամեացն լցին ըզ_դաշտան ամ̅ ․ և զմնացորդսն ամենայն 'ի փախուստ շրջեալ՝ հալածեցին ։ ընդ_որս՝ և զՈւռնայր Աղուանից Արքայ՝ խոցոտեալ 'ի Մուշեղայ որդւոյ Վա_սակայ Մամիկոնէի՝ հանին 'ի պատե_րազմէն ։ Բայց՝ ամբարշտին Մեհրու_ժանայ վիրաւորեալ ձին, ո՛չ կարաց ե_րագել ընդ փախստեայսն ․ որում ա_ճապարեալ՝ հասանէ Սպարապետն Հայոց՝ Սմբատ, և զօրս ընդ նմայն էին՝ կատարեալ, ձերբակալ առնէ ըզ_վատաշունչն՝ յեզեր շամբին Կոգովտա_ափ ։ Եւ զմտաւածեալ, թէ գուցէ թա

փոխեցէ զնա Մեծն Ներսէս , այնորինակ աղաղակաւ ո՛չ ածէ 'ի բանակն. այլ ընդ անեղեօքն գտանէ պատարագատականն առ 'ի կրօնաւորս անմարդաշրջիկն՝ զոմանս խո- րանաւորս՝ հուր լուցեալ, և շամփուր երկաթի՝ միս խորովելոյ. զոր ընդու- նեալ՝ կրկնեաց բոլորեալ ընդ պատկ. , և յո՛յժ արտասուէր արտաբերեալ, ասէ. այլ տակեմ զքեզ Մե՛հրուժան. քանզի 'ի խնդիր էիր Թագաւորել Հայոց. և ահա Աստուածս՝ պարտ է զքեզ պատկել ըստ սովորական իշխանութեանն իմոյ Հայրենեաց ։ Եւ մինչդեռ տաքն էր երկաթն շամփուրն, եդ 'ի գլուխն Մեհրու- ժանայ. և այնպէս սատակեաց զչարն ։ և յայնմհետէ խաղաղացաւ երկիրն՝ Է ձեռամբ Պապայ նուաճեալ ։

Գլուխ 38.

Եթէ որպէս Պապայ՝ դեղ մահու արբու- ցեալ Սրբոյն Ներսիսի , և եղծ 'ի կենաց ։

Յետ սպառելոյ պատերազ- մացն, և խաղաղանալոյ երկ- րին. Մեծն Ներսէս դնէր վկայութեն 'ի մէջ Արքային Պապայ, և 'ի մէջ Նախարարացն, դը- նալ յետ ձեռնապահս արդարութեն .

զի միաբանեսցին՝ ըստ հաւատոյ Քրիստո-
նէութեան՝ և Գործովն. և զի Սա-
հակն՝ մի՝ Հայոց իւրում նմանեսցի՝ ա-
նիրաւել, և զրկել. այլ մարդասէր ազ-
գութեամբ, հայրաբար խնամովք առ նա
խոստովանօղն. և նորա մի՝ և ոչ յանձնեսցեն
վերակացութեան նշկահելով զնա. այլ նո-
րոգել մխիթարութ.: Ցանկացեալ Ար-
քային Հայոց Պապայ, զորմէ ասացաք ՚ի Կամ-
սարականն Սպարապետութեան՝ զամ իւր ըզօր
յաղթահարեալ էր հայրենոյ Արշակայ.
զՊատառակն Շերամայ՝ և Սարապաւոնոյ,
որ լեալ էին որդիք Կամսարականաց.
ո՛չ երբէք զանհերքելի աղաւաղութիւն հայրե-
նոյ Արշակայ, այլ երբէք ապարասն՝ է
մասնաւորաց. Քաղէն Մաղաքիայ...
որ եղաւ գլխոց Արքային: Բայց
և զայլոց Նախարարացն զարմանից ըզ-
զրկանս, և յո՛յժ անխնայաբար ցուցա-
նէր զիւր անիրաւութիւնս, և առատաբար
կեայր: Բայց՝ զի անօթական ախտաւ՝ զաղ-
բաւառն էր, և յանօթէմանեայ եղանակ-
բեալ ՚ի Մեծին Ներսէսէ, ընդ ամենայն
հայէր նմա՝ խորհելով ՚ի չարիս, և ո՛չ իշ-
խէր յանդիմանութեան Թէոդոսի՝ յայտնի
ինչ առնել նմա չարութիւն. զերծ մահու՝
դաղանի արբուցեալ Սրբոյն Ներսէ-
սի, եղեւ ՚ի կենդանութեան. որ կոչեւ
զԱթոռ Եպիսկոպոսութեան՝ սրբո եւ-
րեւանն և չորս: Եւ փոխեալ յաշխարհ
հետ՝ Երանելին Ներսէս, ՚ի Փառաւ-

ռին Եկեղեց, 'ի Գեօղն' որ կոչի խախ: Բարձեալ զմարմին նորա Արքային Պապայ' թաղեաց 'ի Թիլն յԱւանին, զանխլաբար ունելով զեղեալսն:

Գլուխ 39.

Յաղագս աթոռակալութեն իշխանաց, և սպանման Պապայ 'ի Թէոդոսէ:

Ապա' տեսեալ թագաւորին Պապայ' ազգացեալ զամենայն Հայս 'ի վ֊ Երանելւոյն Ներսէսի, հարկաւորեալ յուզեաց, և եգիտ զոմն' յազգէ, և 'ի ժառանգութէ Աղբիանոսի, որում անուն Սահակ կոչիւր' ոչ հեռի 'ի գովութէ. զոր կացոյց փոխանակ Ներսէսի, առանց Մեծի Արքեպիսկոպոսին Կեսարու. որ կալաւ զաթոռն' ամս դ̃: Բայց Պապայ լուեալ, եթէ Մեծն Թէոդոս ել 'ի Բիւզանդիոյ' 'ի Հռովմ կոյս, և մտեալ 'ի Թեսաղոնիկէ' հանդերձ Սպայիւն. և յաղագս իշխանաց եղև խռովութիւն, ընդ նա' և ընդ քաղաքացիսն, և մարտ խռովութեն. և յաղթեալ Ինքնակալն, սատակեաց 'ի քաղաքացեացն արս' տասն և հինգ հազար: Զայս լուեալ Պապայ վարկուցեալ յերկարեալ այսպիսւոյ խռովութեան, արհամարհեալ նշկա-

կալթեղէն շղթայիւք, և տալ տանել յերկիրն Խուժաստանի՝ յԱնկուշն կոչեցեալ բերդ. և զօր բազում զումարեալ 'ի ձեռն Մեհրուժանայ Արծրունւոյ, և Վահանայ Մամիկոնէի՝ Ուրացողաց զՔ՟ս, արձակէ յաշխարհս Հայոց. որք եկեալ նստան շուրջ ըզ բերդաւն Արտագերից: Եւ թէպէտ ո՛չ ինչ կարէին առնել՝ վ՟ս անմատչելի ամրութեան. բայց՝ զի բարկութիւն Ա՟յ էր 'ի վերայ Արշակայ, մարդիկք ամրոցին ո՛չ անսացին մնալ համբաւուն Պապայ. այլ անձնատուրք եղեն 'ի կամաց՝ և ո՛չ 'ի բռնութ՟է. զորս գերեալ համդերձ գանձիւք՝ Տիկնաւն փառանձեմաւ, խաղացուցին յԱսորեստան. և անդ ընդ սայլի ցից հարեալ՝ սատակեցին: 'Ի նմին ժամու՝ եհաս հրաման 'ի Շապհոյ յԱրքայէ, զի քանդեալ աւերեսցեն զա՟մ ամրութիւն քաղաքաց, և զՀրէայսն՝ խաղացուցանել 'ի գերութիւն, և զայն Հրէայս, որք նովին օրինօք կային 'ի Վան, Տոսպայ. զորս ածեալ էր Բազափրանայ Ոլըտունւոյ՝ յաւուրս Տիգրանայ. զորս բընակեցոյց Շապուհ յԱսպահան: Գերեցին և զայն Հրէայս՝ որք յԱրտաշատ, և 'ի Վաղարշապատ, զորս ածեալ էր նոյն Տիգրանայ Արքայի. որք յաւուրս Սրբոյն Գրիգորի, և Տըրդատայ՝ հաւատացեալ էին 'ի Ք՟ս. Է-

որս՝ և զՋուխիթայ Իրէց Արտաշատու։ Եւ մատուցեալ առ Շապուհ Մեհրուժանայ՝ չարախօսեաց զՋուխիթայ Իրիցու Արտաշատու, եթէ յայն սակս եկն ընդ գերեալսն, զի խրատեսցէ զն̃ս՝ պինդ ունել զհաւատսն Քրիստոնէութ̃ն։ Վ̃ս որոյ՝ չարչարել զՋուխիթայ՝ հրամայեաց Շապուհ, զի թողցէ զօրէնս Քրիստոնէութ̃ն. որում ոչ հաւանեալ՝ կատարեցաւ։ Զայս ամ̃ աղէտս թշուառութեան տեսեալ Արշակայ, Սաւուղաբար անձինն արար, որ թագաւորեաց ամս՝ 30։

Գլուխ 36.

Անցք ընդ մէջ չարեացն՝ որ 'ի Մեհրուժանայ. և Թագաւորել Պապայ։

Յետ մահուանն Արշակայ, գումարեաց Շապուհ զօր բազում 'ի ձեռն Մեհրուժանայ՝ և արձակէ 'ի Հայս, և 'ի նմա հաւատայ զաշխարհս, և տուեալ նմա կին՝ զքոյր իւր զՈրմզդուխտ, և Հրովարտակս բազում՝ շինից, և Դաստակերտաց 'ի Պարսից աշխարհին։ և խոստացաւ նմա տալ զթագաւորութիւն Հայոց, միայն թէ զնախարարսն հնազանդեսցէ, և 'ի դէն Մազդեզանց՝ զաշխարհն դարձուսցէ։ որոյ յանձն ա-

ռեալ, և եկեալ՝ զբազում Նախարա-
րաց կանոնս կալեալ՝ 'ի բերդս տայր
պահել, զդարձ արանցն յուսալով, և
զնմ կարգ Քրիստոնէութե ջանայր
խափանել։ զԵպիսկոպոսունս՝ և զՔա
հանայս՝ հարկաց պատճառաւ՝ կապել,
յերկիրն Պարսից տայր տանել։ Եւ զոր
միանգամ Գիրս գտանէր՝ այրէր. և
հրաման տայր՝ մի՛ ուսանիլ դպրութե
Յունարէն, այլ Պարսիկ. և մի՛ իշխես
ցեն խօսիլ Յոյն՝ կամ թարգմանել.
այսպիսի ինչ պատճառաւ՝ զի ամենևին
մի՛ լիցի Հայոց ընդ Յունի ծանօթու
թե և հաղորդութե սիրոյ ։ բայց ճշ
մարիտ խափանել զՔրիստոնէութեն
ուսումն, զի յայնժամ Գիր Դպրու-
թե Հայոց՝ չևևս էր լեալ. և Յունա
կանաւն՝ կարգք Եկեղեցւոյ վարէին ։
Արդ՝ իբրև լուաւ Մեծն Ներսէս ըզ
չարիսն, որք հասին 'ի վր Հայոց, և
զմահն Արշակայ, աղաչեաց զԻնքնա
կալն Թէոդոս՝ խնդրելով 'ի նմանէ օգ
նականութե, և թագաւորեցուցանել
զՊապ որդի Արշակայ ։ Եւ ընդ նմա
գումարեաց զօր բազում 'ի ձեռն Ադ
րատելատին Մեծի՝ Տերենտիանոսի ։
և Մեծին Ներսիսի՝ առեալ զնմ Նա
խարարսն՝ որք կամակից էին ընդ Տէ
րութեն Պարսից՝ և որք ո՛չն. և զապ
րեալն Կամսարական Սպանդարատ՝
միաբանութե անձէ զՊապ յաշխարհս

Հայոց: Ե՛ւ եկեալ գտանեն զամբարիշ
տըն Մեհրուժան, պետացեալ՝ կալեալ
զաշխարհս Հայոց. և հալածական ա-
րարեալ՝ յինքեանս Թափեն: Բայց
Մեհրուժան հրամայէ Պայկացն՝ զբեր-
դիցն պարսպաց կախել զկանայս Նա-
խարարացն՝ մինչև մեռցին. և Թողուլ
նոյնպէս 'ի կախաղանին զդիակունսն,
զի լուծեալ անկցին դէշ՝ կերակուր
լինի Թռչնոց:

Պրակ 37.

Յաղագս Մեծի պատերազմին՝ որ եղև 'ի Ձի-
րաւ, և սատակմանն ամբարշտին Մեհ-
րուժանայ:

ԱԶԴ արարեալ Մեհրուժա-
նայ՝ յերկիրն Խորասանայ
առ Շապուհ՝ զամ օգնակա
նութեն Թէոդոսի, զոր ա-
րար առ Պապ: Ելանէ հրաման 'ի Շապ
հոյ ամ զօրացն Պարսից՝ երթալ 'ի պա
տերազմ ընդ Մեհրուժանայ 'ի Հայս:
Նոյնպէս՝ ազդեն ինքնակալին Թէո
դոսի՝ Պապ, և Տերենտիանոս զՇապ
հոյ՝ եթէ ամ զօրացն հրամայեաց ելա
նել 'ի վերայ մեր, բայց միայն 'ի Դուրան-
կացն: Ապա՝ և Օգոստոսն Թէոդոս
հրամայեաց Ադդէի Կոմսի Մեծի՝ եր

թալ յօգնականութիւն Պապայ, ա-
նուլ զամ զօրս Յունաց . ո՛չ զոր թո-
ղուլ զոր ո՛չ առացէ զինքն . այլ և՛ զհե-
տևակս պարհապանս քաղաքացն, որք
զնետաղունայս ունէին զմիջնորդս : Եւ՛
խնդրեցաւ պատուերագրին 'ի դրաշմանն' որ
կոչի Զիրայ . և մասնաւոն ձեռակաւ' առ-
ձակաւ : և Մանկունք քաղ Նախարա-
րաց Հայոց' ընկենական նահատակեցա՛
մոխին 'ի մէջ ձեռակառուցն առաջնորդու-
թէ Սպարապետին կուրեանց Մմրա-
տայ Աշխետին' որդւոյ Բագարատունեաց
որ յաղղէն Բագրատունեաց : Եւ ինն
'ի զօրացն Պարսից համանիք նոցա, և
խաղացեալքն 'ի մէջ ձեռակառացն, և [illegible]
ընդ ցիր լինէին : Եւ 'ի զառնալ [illegible]
կանցն Պարսից, ընդ հուպ զ[illegible]
մերոցն զհետ նոցա . օրինակ իմն' [illegible]
փոթորկի յանտառէ անբնակաթափեալ-
եւ' յերբեմնաձայն առնել ներքակայ
դի ցուրտ յերկիր ընկենուին, ո՛չ կա-
րէլով նոյ յուրեանց ձեռակառն մաքա-
ռիլ' յարձակմ Պարսիկքն զմերն ձլէին
նոցա 'ի վահանափակն Յունաց' խռը-
յամբք քաղաքն մտանէին, առ ո՛չ [illegible]
մեծան առնելոյ : քանզի' այնպէս ա[illegible]
Գարգիանոս իշխան հեռաւոր զօրուն .
իբր պատրաստ պատերազ վահանողն [illegible]
ձեռակառն Պապայ . քանզի զօրքն Յու-
նաց վառեալ կէին 'ի զէնս ունելոյ' և ա-
ծանօթոյ . և երկմարք նոցա' նոյնպէս

զարդու : Եւ՛ էր տեսանել երբ զպա_
րիսպ լինէր, յորոց յոլովք ՚ի ջերմոյ և ՚ի
կաշեայ պահպանականաց զգեստուն ըն_
կարծրութեան՝ մինչեւ բերեն երկաթս.
և ՚ի վերայ նոցա՝ անխափանելի գեղեցկը
շանս արձակեալք, երբ զառաջնորդութիւնս
հովանաւորս ծառոց . բայց զերկնաւորացն
մեծամեծաց՝ ահագին բերանովքն կայցա_
թէ ուրախացեալ ՚ի փչմանէ ողորմին, ոչ մինչ_
ուրեք կարեմ նմանեցուցանել, այլ
միայն՝ երբ և զերանն լինէր անճառապատմե_
լեայ՝ խոնարհել ՚ի ծով զզօրավարական
ճակատն Յունաց, ՚ի Պարսկականն պա_
տին : բանիցն՝ և զոր էր տեսանել զարդարե
զհզօր լինէր զեա, առ ՚ի կարգն ՚ի լուսն
ծառայեալ . արդարև՝ քրտնագին զու_
հարզեսաւացն բերեր զերանաւորութիւն :
Այդ՝ երբ եւս Մեծն Ն[illegible]
[illegible], եւ նա ՚ի կատար լերինն Նուաստոյ,
և ամբարձ զձեռն իւր յերկինս, ան_
խոնարհելի պահելով ՚ի խնդրուածս
հանգոյն Նահապետութեանն Մովսէ_
սի, մինչև պարտեցաւ երկրայինն Ամա_
ղէկ : Իսկ ՚ի ծագել արեգականն ընդ_
դէմ նոցա զօրացն, ՚ի պղնձապատ վա_
հանացն՝ նշոյլք զերծանելն փայլատա_
կէին՝ երբ յամենայն մեծ է : և ՚ի նոցա
նէ՝ ՚ի դուռս սաստկին ՚ի մեզ Նախա_
րարացն Քաջք Պարսկազունք՝ ոչ փայ
լատակացն ճառագայթք . յորոց ՚ի սե
րութեն միայն՝ զանդրադարձեալ Պարս

կափկանն դաւնդ, սակաւ ինչ՝ և մերն, վա՜յ ո՛չ կարեմ հայել ընդդէմ արեգականն ծագման : Իսկ 'ի բաղխել զմեմեանս, եղև 'ի մերում հովանաւ ամպոյ, և հողմ տաւառիկ 'ի մերոցն կուսէ՝ ընդդէմ Պարսկականին փչեալ : և 'ի խառնակել մարտին, պատահէ Կամսարականն Սպանդարատ խմբի մեծի, յարուեալ էր Քաջն Շերգիր՝ Ղեկաց Արքայ • զգլուխն միջին գնդին՝ պնդաթի՜ զաւեղի ճակատուն կալեալ • և յաղթահեալ Սպանդարատ, և հերձեալ զխուռնն, ոմն զշանթահար՝ յերկիր կործանէր զքաջն • և պատուեալ զխուռնն, 'ի փախուստ դարձուցանէր : Ե՜ւ այսպէս 'ի վերջին օգնականութիւն զօրացեալ, առ հասարակ՝ զօրքն Յունաց, և Հայոց՝ դիմակալքն թշնամեացն լքին ընդաշանն առն • և զմնացորդսն ամենայն 'ի փախուստ շրջեալ՝ հալածեցին : ընդ որս՝ և զՈւռնայր Աղուանից Արքայ՝ խոցոտեալ 'ի Մուշեղայ որդւոյ Վասակայ Մամիկոնենի՝ հանին 'ի պատերազմէն : Բայց՝ ամբարտաւանին Մեհրուժանայ վիրաւորեալ ձիոյն, ո՛չ կարաց երագել ընդ փախստեայսն • որում աճապարեալ՝ հասանէ Սպարապետն Հայոց՝ Սմբատ, և զօրս ընդ նմայն էին՝ կոտորեալ, ձերբակալ առնէ ընդ փառոշուէրն՝ յեզեր շամբին Կոգովիտի : և զմտաւածեալ, թէ դուցէ թա

փեցէ զնա Մեծն Ներսէս , այնորիկ աղաղակաւ ոչ ածէ 'ի բանակն . այլ ըզ ամենեօքն գտանէ պատարագաւորական առ 'ի կուրութեան ամբարշտին զոմանս խո-րանեալսն՝ հուր լուցեալ , և շամփուր երկաթի՝ մխեալ խորշակելոյ . զոր ընդու-ցեալ՝ կրկնեաց բոլորեալ ոտն պատէ , և յոյժ արտասուէր կատարեալ , ասէ . այլ ամենեմ զքեզ Մե՛հրուժան . քանզի 'ի խնդրէր էիր Թագաւորել Հայոց . և իմն Աստուածոյ՝ արարն է զքեզ պսակել ըստ տոհմական խնդրանութեանն իմոյ Հայրենեաց : Եւ մինչդեռ՝ տաքն էր խարոյկն զհուր , եդ 'ի գլուխն Մեհրու-ժանայ . և այնպէս սատակեաց զչարն : և յայնմհետէ խաղաղացաւ երկիրն՝ Է ձեռամբ Գայլոյ նուաճեալ :

Գլուխ 38.

Եմն որդեոյ Պապայ՝ որեւ մահուա արքա-ցեալ Արշակայ Ներսեսի , և ելոյծ 'ի նենգ :

Յետ սպառուելոյ պատերազ-մացն , և խաղաղանալոյ երկ-րին . Մեծն Ներսէս դնէր վկայութիւն 'ի մէջ Արքային Պապայ , և 'ի մէջ Նախարարացն , զի նա լինիմ ճանապարհս արդարութե .

զի վկայեսցեն՝ ըստ հաւատոյ Քրիս-
տոնէութեան՝ և Գործքն. և զի Ար-
քային՝ մի՛ Հօրն իւրում նմանեսցի՝ ա-
նիծեալ, և զրկել. այլ վարեսցի ուղ-
ղութեամբ, Հայրապետաց խնամովք առ Նա-
խարարսն. և նոցա մի՛ եւս յաւելցեն
վերաբերել [illegible] զնա. այլ ծա-
ռայել միաբանութեամբ: Յաղագս Ար-
քային Հայոց Պապայ, զոր ծնաւ ի Կամ-
սարականն [illegible]՝ զնա մինչ զոր
յանդիմանել էր Հօր իւրոյ Արշակայ.
զՊատանուն [illegible] և [illegible],
որ լեալ էին որդիքն [illegible].
ո՛չ կարէր զանձինս առ ահ ութեան Հօր իւ-
րոյ Արշակայ, այլ կարէր գարշելս՝ է
[illegible] [illegible] [illegible].
որ էապան զ[illegible] Արշակայ. բայց
և զայլոց Նախարարաց զաւակաց ըզ-
զուշանա, և յոյժ անհնչամանք ցուցա-
նէր զիւր անօրէնեալս, և [illegible]
կեցոյց: Բայց՝ զի անօթացեալ [illegible] զաւ-
բարեգործ էր, և յանդիմանեալ եղաւ-
բեալ ի Մեծէն Ներսիսէ, ընդ ատեան
հայեր նմա՝ խորհելով ի չարիս, և ո՛չ էր
խնէր յիւրենականն Թէոդոսէ՝ յայտնեն
[illegible] նմա չարութեան. զեր մահու՝
դաղանիք որբացելոյ Սրբոյն Ներսի-
սի, ելեալ ի կենցաղոյս. որ կալաւ
զԱթոռ Եպիսկոպոսութեան՝ ամս ե-
րեսուն և չորս: Եւ փոխեալ յաշխար-
հէս՝ Եպիսկոպոսին Ներսէս, ի Գաւա-

ռին

ուխն Եկեղեց, 'ի Գիւղն՝ որ կոչի Խաախ: թարգմեալ զմարմին նորա Արքային Պապայ՝ Թաղեաց 'ի Թիլս յԱւանին, զան խլաբար ունելով զեղեալսն:

Պրակ 39.

Յաղագս աքսորականութեան Իսահակայ, և սպանման Պապայ 'ի Թէոդոսէ:

Ապա՝ տեսեալ Թագաւորին Պապայ՝ զգացեալ զամենայն Հայս 'ի վր Երանելոյն Ներսիսի, հարկաւորեալ՝ յուզեաց, և եգիտ զոմն՝ յազգէ, և 'ի ժառանգութէ Աղբիանոսի, որում անուն Սահակ կոչիւր՝ ո՛չ հեռի 'ի զօրութէ. զոր կացոյց փոխանակ Ներսիսի, առանց Մեծի Արքեպիսկոպոսին Կեսարու. որ կալաւ զաթոռն՝ ամս դ̃: Բայց Պապայ լուեալ, եթէ Մեծն Թէոդոս ել 'ի Բիւզանդիոյ՝ 'ի Հռոմ կոյս, և մտեալ 'ի Թեսաղոնիկէ՝ հանդերձ Սպայիւն. և յաղագս իշխանաց եղև խռովութի, ընդ նմա՝ և ընդ Քաղաքացիսն, և մարտ խռովութե. և յաղթեալ Ինքնակալն, սատակեաց 'ի Քաղաքացեացն արս՝ տասն և հինգ հազարս: Զայս լուեալ Պապայ վարկուցեալ յերկարեալ այսպիսւոյ խռովութեան, արհամարհեալ նշկա-

հեաց. և գրգռեալ զնա՝ կորստեանն իւր, հալածեաց զՏէրէնտիանոս հանդերձ զօրօքն, և սկսաւ պատերազմել 'ի պատերազմի: Եւ հասեալ հրաման 'ի մեծէն Թէոդոսէ, ընդ կրունկ դարձաւ քաջն Տէրէնտիանոս. և ընդ իւրում պատահման բանին՝ յանկարծակի անկեալ 'ի բանակն. և զոմանս կոտորեալ, և զոմանս փախստեայս արարեալ: Ուր սատակեալ էր նահատակեալ քաջութեամբ՝ ընդդիմամարտ լինէր Գնէլ Նահապետն Անձաւացեաց, և Սպարապետն Պապայ՝ որ եկեալ էր զօրու. զոր յաղթողին Տէրէնտիանոսի իւրովի տարարեալ կխտակառուր զգլուխ նորա. ընծայեալ զթագաւորն զՊապ: և Պապայ յաղերս աղաչելոց անկեալ զի մի՛ մեռցի, այլ՝ յանդիման լինիւ Արքայի. և քաջին Տէրէնտիանոսի գթացեալ՝ շնորհեաց նմա զմաղթանսն. և երկաթեղէն կապանօք՝ երթեալ առաջի Մեծին Թէոդոսի. ընդ իւրում անզգամութեան՝ սակրաւ վճարի: Թագաւորեալ, ամս՝ եօթն:



Գլուխ 40.

Յաղագս Թագաւորելոյն Վարազդատայ, և հալածանաց նորին:

Բայց Օգոստոս բարեպաշտօն Թէոդոսս՝ որ և մեծն. 'ի քսաներորդի ամին իւրոյ՝ թագաւորեցոյց փոխանակ Պապայ՝ զՎարազդատն՝ 'ի նմին Տոհմէ Արշակունեաց: Այս Վարազդատ՝ էր տիօք Մանուկ, Սրտեայ, Անձնեայ, Ուժեղ, Եւ մեծ գործովք քաջութե, և յոյժ կորովի Նետաձգութբ. որ 'ի ժամանակի՝ 'ի փախստենէն Շապհոյ՝ գնացեալ 'ի դուռն կայսեր՝ նահատակեցաւ: Նախ 'ի Պիսայս ընդ Բռնամարտիկսն յաղթեալ. զարձեալ՝ 'ի Յարկէզ քաղաքի Հելլադացւոց, որ հանդիսակի՝ կատարեաց առիւծամարտն փառս Օլիմպիա խաղուն հանդիսին Ըմբշամարտկացն երևի, և յաղթէ: այլ՝ որ առ ազգին Լանկամարտաց՝ նորա արուեստիւնք քաջութե, համարձակիմ ասել՝ հաւասար Մեծին Տրդատայ. քանզի՝ զհինգ Նահատակս 'ի թշնամեացն ընդդէմ իւր յարձակեալ՝ 'ի վերայ իրերաց էսպան սուսերաւ. և 'ի բերդ ինչ դիմեալ՝ 'ի վր պատուարին առս՝ եօթն և տասն Նետիւք հարեալ, վերուստ 'ի

վայր հասեալ՝ մեծամեծաց զկնի , եբր 'ի
սաստիկ մրրկէ՝ վտանգահասուկ 'ի թզե-
նեաց : Որ եկեալ յաշխարհս մեր 'ի յե-
սուն և 'ի հինգ ամի Շապհոյ . տառապելն
մարտի պատահէ Սահակայ՝ 'ի դըժ-
վարս Դաւրանաւորոյ , և փախստեայ
արտաքսեալ՝ հեռացեալ լինէր : Իսկ նց̃
անցեալ ընդ նեղուց կամրջին Եփրա-
տայ՝ ընկեցին զփայտոն զկնի խուրեանց .
այլ նորա հասեալ՝ վազեաց զԵփրա-
տաւ՝ առաւել քան զԼակոնացին Քսենոփ-
նեայ , վազուն՝ 22. կանգնոց չափ : և
անդ էր տեսանել զոմն Աքիլլէսի՝ ը̃
Սկամանդրոս գետ վազելով . յորմէ
զարհուրեալ Աւագակացն 'ի ձեռս ան-
կան , զէնընկեց լինելով : Յաղագս ո-
րոյ՝ արբեալ 'ի մանկութենէ յաջողութե ,
առ այսոքիւք՝ և 'ի թագաւորութեան ,
ոչ հնազանդէր խրատու Վերակացու-
թեն Զօրավարացն Յունաց : վն̃ որոյ
առաքէ հրեշտակս առ Շապուհ , զի
տայցէ 'ի գաւառաց իւրոց՝ նմա կենու-
թե , և սա դարձուսցէ առ նա զաշ-
խարհս Հայոց : զոր զգացեալ Զօրա-
վարացն Յունաց՝ ազդ առնեն կայ-
սեր : Իսկ կայսրն Թէոդոս՝ հրամայ-
եաց զնա ունել՝ եթէ ոչ իւրովք կա-
մօք եկեսցէ 'ի կոչն ինքնակալին : Սակա-
որոյ՝ հարկեալ եկեալ իւրովք կամօք ,
յուսացեալ 'ի սուտս հանել զՕգոս-
տոսն : Այլ կայսրն՝ և ոչ տեսութե

արժանի արար, այլ երկաթեղէն կապանօք՝ եւ տանել զնա՛ի Թուլիս կղզին Ովկիանոսու. որ Թագաւորեաց ամս Է̅։ Բայց յերկրորդ ամի Վարազդատայ, եկաց Եպիսկոպոսապետ Հայոց՝ Զաւէն, ՚ի նոյն ազգականութենէ Աւլբիանոսի, ամս՝ չորս։

Պրակ 41.

Թագաւորութիւն Արշակայ, եւ Վաղարշակայ.

Ապա փոխանակ Վարազդատայ Թագաւորեցոյց Հայոց Թէոդոս Մեծ՝ զերկուս որդիսն Պապայ, զԱրշակ՝ եւ զՎաղարշակ, այսպիսի ինչ խորհեալ. եթէ ո՛չ միաբանեսցին երկոքին յապըստամբութիւն. եւ անդէն պահելով ընդ Մայր Մանկանցն, արձակէ զնոսա հանդերձ Վերակացու՛օք յինքենէ, արամբք հաւատարմօք, եւ զօրու։ Որք եկեալ կալան զաշխարհն մեր, եւ տիրեցին ընդ մեա արխաքար՝ մարտիւք ընդ Պարսս. եւ տուին իւրեանց կանայս, Արշակ՝ զդուստր Բաբկան Սիւնեաց Նահապետին. եւ Վաղարշակ՝ զդուստր Սահակայ Ապահունի, որ ՚ի նմին ամի վախճանեցաւ։ Բայց յերկրորդ ամի Արշակայ՝ եկաց յԵպիսկոպոսութիւն Հայ-

ոց՝

ոյ՝ Աստուածաբերայ, աշխարհական Շահա-
կայ, և Զաւենայ՝ առն հինգ։ Իսկ Մեծն
Թէոդոս՝ եկեալ ՚ի պատերազմ ՚ի Մե-
դիօղանան՝ հիւանդացեալ մեռաւ, թող-
լով զԹագաւորութիւն իւր որդւոց իւ-
րոց, Արկադեայ՝ զԲիւզանդիոն, և
Հոնորեայ՝ զՀռովմայն. որք ո՛չ զա-
մեծէք, և արժանիք Հայրենականացն
գոլով առաքինութեանց։

Գլուխ 42.

Յաղագս բաժանելոյ Հայոց ընդ երկուս՝
՚ի մէջ երկուց թագաւորացն Ար-
շակունեաց, ՚ի ժամանակս եր-
կուց Ազգաց՝ Պարսից, և
Յունաց։

Ի Մայեան Շապհոյ, եթէ
Թերաւորել է Արկադ, իս-
սէր ընդ նմա վկայագրու-
թիւն. քանզի՝ էր պար-
տեալ հարկեալ՝ ՚ի Հօրէն նորա՝ Մեծէն
Թէոդոսէ։ յանձն առնու և Արկադ-
առնել զհաշտութիւն՝ առաւել յիրաց
Զօրավարացն. զի Թէպէտ և էր յԱշ-
պարհնեալ զպաղթութիւն՝ յամս կե-
նաց երանելւոյն Թէոդոսի, սակայն
զօրագլխին վտարանդեալ՝ ձանձրա-
ցեալ լինէին յաշխատութենէ Հանապա-

զօրդ պատերազմացն ։ Վա՜ որոյ՝ հա-
ւանեալ՝ կամաւ յանձնառութին բաժա-
նել զՄ՛ծկադեսս, և զՀայոց աշխարհս՝
կրկին սահմանադրութե՛ ։ Վա՜ որոյ՝
թողեալ Արշակայ զԲուն թագաւո-
րականն Հարց իւրոց Այրարատ, և
զնոյն մասն բաժնին Պարսից, գնաց
տիրել արևմտեայ կողմանց աշխարհիս
մերոյ, որ 'ի մասնի բաժնի Յունաց,
ո՛չ միայն Մօրն աղօթաւ՝ որէր 'ի Կայ
սերական քաղաքին, այլ՝ լաւ համա-
րեալ նուաստ կողմանն թագաւորել ։ և
ծառայել Քրիստոնէեայ Թագաւորի,
քան յաւելից իշխել, և մնալ ընդ
լծով Հեթանոսաց ։ Գնացին զկնի նո՛
համդերձ կանամբք, և որդւովք՝ և Նա
խարարութիւնք, որ 'ի բաժնի մասինն
Շապհոյ, թողլով զիւրաքանչիւր ա-
րարս՝ և զգեօղս՝ և զդաստակերտս ։ Է
սրս զչարացեալ Շապհոյ՝ յղէ առ Ար
շակ, թէ՝ Է՛ Է՛՞ր գրգռեցեր զպատերազմ
'ի մէջ իմ, և Կայսեր՝ տանելով զՆախա
րարութիւն իմոյ բաժնին ։ և պատասխանի
լաւ Արշակայ, եթէ՝ վա՜ զի ո՛չ համբե
րէին ը̃ Պարսիկ Աստուածորդաւ փախել՝
եկին զկնի իմ ։ և արդ՝ եթէ հաւատաստաս
յիս զմտածին քո զիշխանութե, ածջ և
Նախարարս՝ զիւրոյս, պատուիրեսցեմ 'ի պաշ
տել զքեզ՝ ածջ զԿայսեր ։ ապա՝ եթէ
ո՛չ է հաճոյ քեզ այդ, և իւրեանց կա
մաւ՝ դարձցին առ քեզ Նախարարքս՝

ո՛չ արգելում: Զայս լուեալ Շապհոյ՝ Թագաւորեցոյց Հայոց՝ ՚ի վերայ իւրոյ բաժնին՝ զԽոսրով ոմն, ՚ի նմին ազգէ Արշակունեաց. եւ առ Նախարարս իւրոյ մասինն, որ եղեալ էին զհետ Արշակայ՝ գրեաց Հրովարտակ, որ ունէր զայս:

Թուղթ Շապհոյ առ Նախարարս:

Դիցազանց՝ քաջ Շապուհ, Արքայից արքայ: Նախարարաց Հայոց, որոց կալուած՝ իշխանութեն յիմ բաժինս հաստատ, ողջոյն շատ շնորհեմ ձեզ: Թէպէտ՝ եւ ձեր ո՛չ ազատաբար արարեալ՝ թողէք զիւրաքանչիւր իշխանութիւն, եւ մեզ ո՛չինչ նուազ էր, սակայն՝ ըստ ոխրաքար խնամոց գթացաք ՚ի ձեզ, եւ յաշխարհս ձեր, զմտաածեալ, եթէ ո՛չ կարեն հօտք՝ առանց հովուաց լինել, եւ հովիւք՝ առանց բաբուոք Վերակացուի. վ͞ս որոյ՝ Թագաւորեցուցաք ձեզ զԽոսրով ոմն՝ ՚ի Դենէ ձերմէ, եւ յազգէ բնիկ ձերոյ Տէրութեանդ: Արդ՝ դարձեալ ձեր՝ յիւրաքանչիւր արարս իշխեցէք, ով եւ այժմ: երդուեալ ՚ի հուր՝ եւ ՚ի ջուր՝ եւ ՚ի փառս անմահից իմոց Նախնեացն, զի առանց նենգութեն, եւ պատրանաց առարաք զայդ՝ եւ անշրջելի պահեմք: Իսկ այնք՝ որք ո՛չ լուիցեն մերոց հրամանաց, ըղ

տուն նոցա՝ հանդերձ գեօղիւք, և դաստակերտօք՝ յարքունիս ունել հրամայեցաք. ո՛ղջ լերուք։

Պրակ 43.

Յաղագս փոփոխման Նախարարացն Հայոց յետ բաժանելոյ ժառանգութեանց՝ 'ի պաշտօն երկոցունց Թագաւորացն։

Իբրև լուա՛ն Նախարարք Հայոց՝ այնք, որք ունէին զիշխանութիւն 'ի Գաւառս բաժնին Պարսից, եթէ կացոյց Շապուհ, թագաւոր հաւատացեալ Արշակունի. և զմուրհակ ուխտին տեսին. թողեալ զԱրշակ՝ դարձան 'ի բնակութիւնս իւրեանց, բա՛յց յերից պատանեացն սննդակցաց Արքայի, և 'ի մօտաւոր մերձաւորաց. Դարա՛ որդի Բաբկայ՝ Տ̃ն Սիւնեաց, որ էր Աներ Արշակայ. և Գազաւոնն՝ որդի Սպանդարայ՝ Տ̃ն Շիրակայ՝ և Արշարունեաց. և Պերոզ՝ յազգէն Գարդմանացւոց, և 'ի նորին յարեցեալք. Ատոմ՝ յազգէն Գնունեաց. Կենան՝ յազգէն Ամատունեաց. Սուրա՛ յազգէն Մոկաց. Առաւաստամ՝ Առաւենեան. և Այլք անյայտք ոմանք։ Վ̃ որոյ՝ զժառանգութիւն նց̃ կալաւ Խոսրով՝ յարքունիս հրամանաւ Շապհոյ. և ո՛չ եթող ըղ

կաղուածս որդւոյ առ հայր, և ո՛չ զեղբօր յեղբայր։ Բայց էին Ոմանք և 'ի Նախարարացն, որք ունէին զիշխանութիւն իւրեանց 'ի բաժնին Յունաց առ Արշակայ. և խնդրեցին գալ առ Խոսրով. ոպ՜՝ Սահակ Ասպետ, որ էր Աներ Վաղարշակայ՝ Եղբօր Արշակայ, ընդ որում խեթիւ հայէր Արշակ հանապազ, հրապուրեալ 'ի կնոջէն իւրմէ. ոպ՜ թէ՝ զարդ արքունական ունիլ նմա՝ 'ի փեսայէն իւրմէ ըստացեալ։ Այլ՝ յայնժամ եղև քսութիւն զնմանէ սուտ՝ յազգականաց իւրոց 'ի Սպեր Գաւառէ. վ՜ որոյ՝ չար չարեաց զնա Արշակ Արքայ, և անկեալ առ Խոսրով. և խորհրդակիցն նմին էին՝ գործակցեալ լինէին. Սուրէն Խորխոռունի, և Վահան Առաւեղեան, և Աշխադարայ ոմն յազգէն Դիմաքսեանից։ Բայց 'ի գնալն նր՜՝ ո՛չ ժամանեցին նոքա՝ խափանեալ 'ի զօրացն Արշակայ, թաքուցեալ՝ ղօղեցին ընդ կեղծաւորութեամբ աւազակութեան՝ սպասելով դիպող աւուր։



Գլուխ 44.

Եթէ՛ որպէս կծարեաց Խոսրով զՍահակ Ապետ. և Նահապետութիւն նորին 'ի Յեղրուշան ազգէն Վանանդացւոց:

Իսկ՝ Խոսրով մեծապէս ուրախ
եղև ը՟ գալն Սահակայ Ա-
պետի, և Սպարապետ զնա
'ի վր՟ զօրացն իւրոց կարգեաց.
դարձոյց զնա 'ի կալուածս հայրենիս,
և այլ աւանս՝ հանդերձ ագարակօք՝
պարգևեաց նմա յայնոցիկ ժառանգու
թէ՝ որք 'ի բաժնոյն Պարսից, որ առ
Արշակայ մնացին: Զայսու աւուրբք՝
Ոմանք յազգէն Վանանդացեաց՝ ապս
տամբեցին 'ի Խոսրովայ, և ո՛չ յոք ա-
պաւինեցան, այլ ամրացան 'ի մայրիս
իւրեանց լերանցն՝ և յանձուկս տայոց
քարանց, յելուզակաբար արշաւանօք.
յիշխանութիւն երկոցունց Թագաւո-
րացն Հայոց՝ խռովէին զաշխարհս՝ և
անհանգիստ պահէին: Յորոց 'ի վերայ
չոգաւ Սպարապետն Խոսրովայ՝ Սա-
հակ Ապետ, և զբազումս 'ի նոցանէ
սատակեաց, և զբազումս փախստեայ
արար 'ի կողմանս Չորրորդ Հայոց. զի
ո՛չ յերկիրն Խաղտեաց անկան 'ի Յոյնս
ապաւինելով. և ո՛չ առ Թագաւորն
Արշակ անցին, այլ՝ իբր զաւազակս

ոմանս,

ամանս, որ 'ի կողմանս Չորրորդ Հայոց էին, 'ի սահմանս Ասորւոց դիմեցին՝ ապաստան առնել: Քանզի Վանանդացիքն՝ զաւազակութեան գործ, մեծաւ ցանկութեամբ գործէին, ոչ ուղիղ իբր՝ ախորժելի թուէին նմա. զորոյ ձիգ զհետ մըտեալ Սահակայ՝ վարէ յերկար, մինչև 'ի սահմանս Մանանաղւոյ:

Պրակ 45.

Յաղագս գալոյն առ Խոսրով, Սուրէնայ՝ Վահանայ՝ և Աշխադարայ՝ հանդերձ գանձիւք Արշակայ:



Սուրենայ Խորխոռունւոյ, և Վահանայ Առաւեղենի, և Աշխադարայ Դիմաքսենի՝ գտեալ ժամ պատեհ, զի էր հանեալ զգանձն Արշակայ յամրոցէն յԱնւոյ՝ տանել յաշխարհն Ծոփաց. զոր յափշտակեալ՝ և կամեցեալ տանել առ Խոսրով, ոչ ժամանեցին: Քանզի՝ անձապարեալ Սամուէլի Մամիկոնէի՝ մտերմի Արշակայ՝ յոլովաձեռն զնդաւ, զհետ հասեալ՝ փախստեայս արկանէր յայրս ինչ ամուր, որ 'ի Գաւառին Մանանաղւոյ. յոր մուտ ոչ գտանէր, բայց 'ի կողմանէ՝ դոյզն ելք էին առ 'ի թուալ. և առաջի դրրաց այրին՝ անկանէր ուղորդ միապաղաղ. և 'ի

վերուստ պայղ, անձաւ քուաւոր՝ որ հայր յանդուգնգա խորտաձորոցն. և որ ինչ զերծանիցի՝ յահադին ուխտ սատակութեն անկանի՝ անդադար հալածական դիւաւլ, ո՛չ ուրեք գտանել տանն կայան: Ա՛յ որոյ՝ տարակուսեալ Սամուէլ վարանէր առ անհնարութեն տեղւոյն. և այդ տարաբե՛լ Արշակայ՝ հրամայեաց արկել գործել երկանթապատ, և քաղաքարանցն ՚ի նեթքա մտանել, ՚և այնուհե շղթայապատ կարկեք ի ծածուցանել վերուստ ՚ի վայր՝ ՚ի դուռն այրին. տակայն՝ և ո՛չ այն ինչ կարասեաց. քանզի՝ յայժ ՚ի բացեալ պահէր զերդն: Եւ մինչ դեռ՝ նոքա յայսմ էին, լինէր իմն ՚ի դիպուածոյ բախտի՝ հասանել անդր Սահակայ Աւագերոյ՝ բովանդակ զինուորն կտարովայ. որով հետաձուոյ լուծակայցն էր, թողեալ զնա փոխ ՚ի վե՛ր ամենեցին՝ որք ընդ այրին մարտնչէին. և հաղածական տարաբեալ՝ հանէ զՍուրէն, զԱաչան, և զԱշխարադաշն՝ հանդերձ զանձիւք՝ փո՛յթ ընդ փոյթ հասանէ առ Արշակ: Իսկ խուսաբովայ առեա՛լ ՚ի զանձուցն մասն հանէ Շապհոյ. և հրամայեաց՝ տալ զերեզ, և զատակեցոյ ընտիրս՝ և յամուրս, յայնուհետև ՚ի ժառանգութենէ, որք ՚ի բաժնոյն Պարսից մնացին առ Արշակայ: Եւ այս եղև ոկիզբն պատերազմի Արշակայ, և խոսրովայ:

Գլուխ 46.

Պատերազմն Արշակ պարտեալ ՚ի Խոսրո-
վայ՝ հիմնարկեցեալ ծառանն.

Թողեալ՝ և ոչ եղեն ձեռն-
տուք Հայոց, և Արքայ
Խոսրովայ, և Արշակայ՝ ը-
նիւ զօրավիգն օգնականու-
թեն՝ առ ՚ի տալ ընդ միաբանս պատե-
րազմ, սակայն՝ և ոչ արգելին զնոսա
և այլոտեալ պատրաստութեամբ
և ժողովեալ Արշակայ զզօրս իւր, ի խ-
ղայ ՚ի վ[ե]ր Խոսրովայ: Գնայ և Խոսրով
՚ի քանակէն իւրմէ առ եզր ծովուն Գե-
ղամայ, զոր Մօրսն կոչեն՝ ընդ առաջ
Արշակայ, զի մի՛ ՚ի սահմանս իւր իջ-
ցէ: և ո՛չ լինի՝ այնչափ ամրապարիս
սատակել, մինչև եդիս զԱրշակ ՚ի
ղեալ յիւր սահմանս՝ ՚ի Գաւառն
նանդայ. և պատահին միմեանց ՚ի դա-
տին, զոր կոչեն Երևել: Եւ՜ առնե
միմեանս պատերազմ սաստիկ յոյժ
հարկանի զօրն Արշակայ. մեռանի
Սպարապետն նո՛ Դատա Սիւնի ՚ի պա-
տերազմին, և փախստական լինի Ար-
շակ սակաւուք. և զհետ մտեալ նորա
Քաջին Սահակայ Ասպետին Խոսրո-
վայ՝ վարէր սատակայէր: Ուրանօր
ահագին Նահատակութիւս ցուցեալ՝

Գաղաւոնի՝ որդւոյ Սպանդարատայ բազում անգամ, դարձեալ յարձակմամբ ցրուէր զհետամուտս, և տայր պարապ ժամ գնալոյ Արշակայ: Եւ դարձաւ խաւարով 'ի տեղի իւր, և գնաց Արշակ յԵկեղեաց, և հիւանդանայ Մաշարայական ախտիւք, ջերանի հիւծմամբ, թագաւորեալ ամ Հայոց՝ ամս հինգ. և կիսոյն Հայոց, ամս՝ երկուս և կէս: Եւ այնուհետև՝ ո՛չ կացուցին Յոյնք 'ի բաժնի իւրեանց թագաւոր, այլ՝ Առաջնորդ Նախարարաց կողմանցն այնոցիկ՝ Քաջն Գաղաւոն. և աշխարհին իւրեանց մասինն՝ կացուցին Յոյնք կոմէսս՝ իշխանս:

Պրակ 47.

Յաղագս Երանելւոյն Մեսրովբայ:

Տեսեալ թէ՝ 'ի վերջ է հասեալ թագաւորութիւն Հայոց, և զխռովութիւն՝ նիւթ իւրոյ համբերութեան գտեալ Մեսրովբայ, որ էր 'ի Հացեկաց Տարօնոյ, անեալ՝ և ուսեալ առ Մեծին Ներսիսի. և յետ ելից նորա յաշխարհէս 'ի դրան Արքունի կարգեալ՝ Քարտուղար: Սա սիրեաց զմիայնակեցութիւն վարս. որպէս ասաց ոմն՝ թէ 'ի նաւահանգիստ փութայ նաւ խռովեալ,

և անձն ժուժկալ՝ խնդրէ զանապատ. նոյնպէս՝ և նա փախուցեալ յաշխարհական զբաղմանց, և ընկեցեալ յետս զմարմնական պատիւն, զհետ ընթանայր երկնաւորին: և երթեալ 'ի Գաւառն Գողթան՝ զմիայնակեցուն վարս ստացեալ՝ բնակէր: Եւ որ 'ի նմա զօղեալ Աւանդն Հեթանոսական՝ թաքուցեալ յաւուրցն Տրդատայ՝ մինչև յայն ժամանակս, և ապա յայտնեցաւ, 'ի վատթարեալ թագաւորութեան Արշակունեաց, զայն եբարձ օգնականութեամբ իշխանի Գաւառին՝ որում անուն էր Շաբիթ: ուր նշանք Աստուածայինք լինէին՝ որպէս առ Սրբոյն Գրիգորի, հալածական լեալ մարմնաւոր տեսլեամբ դևքն՝ անկանէին 'ի կողմանս Մարաց: և ոչ ինչ պակաս յայնցանէ արարեալ՝ գտանի և 'ի Սիւնեաց աշխարհին՝ ձեռնտուութեամբ իշխանին, որում անուն էր Վաղինակ: Եւ 'ի վարդապետել Երանելւոյն Մեսրովբայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի՝ ինքն էր ընթերցօղ, և թարգմանիչ. և եթէ այլ ոք հանդիպէր՝ որ ընթեռնոյր, ուր նա ոչ լինէր, զանխուլ 'ի ժողովրդոցն լինէր, յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ: Վասն որոյ եդ 'ի մտի հնարս՝ գտանել նշանագիրս Հայոց Լեզուիս. և արկեալ զանձն 'ի ջան, պէսպէս հնարիւք տաժանիւր:

Գրակ

Գլուխ 48.

Գուրջ առ Խոսրով Նախարարացն՝ որք էին առ Արշակայ.

Տեսեալ Նախարարացն Հայոց՝ եթէ ո՛չ կացուցին Յոյնք 'ի վե՛ր նց Թագաւոր. և դըժուա՛ր վարկուցեալ՝ զանառաջնորդն լինել, խորհեցան կամաւոր հնազանդ լինել Թագաւորին Խոսրովու։ Սմին իրի՝ գրեն առ նա Թուղթ օրինակ զայս։

Ստրատելատ Գազաւոն, և ամ Նախարարք Հայոց մասին Յունաց, Տն մերոյ Խոսրովայ Արքայի՝ կողման Այրարատոյ խնդալ։ Ինքնին՝ Տէր գիտես զմիամտութի մեր առ յիշեցեալ Թագաւորին մերոյ Արշակայ, զոր մինչև ցօր վախճանի նո՛ր անշրջելի պահեցաք. և արդ՝ խորհեալ եմք, նոյնպէս ծառայել քեզ միամտութբ, եթէ հաստատեսցես առ մեզ դաշամբք՝ զերիս զայսոսիկ։ Առաջին՝ չյիշել զյանցանս մեր, զոր պատերազմեցաք ընդ քեզ 'ի հարկէ, և ո՛չ 'ի կամաց. Երկրորդ՝ զի դարձուսցես առ մեզ զմեր ժառանգութիս մեր, որք 'ի մասին Պարսից՝ զոր հատեք յարքունիս. Երրորդ՝ հանել, թափել զմեզ 'ի Կայսերէ, զի մի՛ վրդո

վարեցեն զընակութիւն մեր, որք ունիմք զերկնաւորութիւն յայսմ բաժնի։ Եւ զայս պայմանն ուխտի գրեալ՝ և խաչ հարկանեալ՝ կնքեցաք, զոր անսնեալ՝ փութացուք ՚ի ծառայութիւն ձեր։ Ողջ լեր Տէր մեր։ Գրեց և խորհրդով պատասխանի։

՚Իշաւղ Արաւնց՝ խնդրով Հայոց Արքայ, Սորատնէրեանց Գաղղանանի, և ամ Նախարարացդ՝ ողջոյն շատ։ Ուրախ լերուք՝ զի մեք ողջ եմք. զի և մեք ուրախացաք ընդ լուր ողջութեան ձերոյ. և առաքեցաք բանախնդրոյդ ձեր՝ զայս պայմանս ուխտի։ Առաջին՝ չյիշել զյանցանս ձեր, զոր չունիցաք առյանցանս իւիք. այլ՝ առ երախտաւորս զերամանելին առ Թագաւորին Արշակունեաց՝ զոր պաշտեցիք, զոր և առ մեզ զնոյն յուսամք լինել։ Երկրորդ՝ դարձուցանել ՚ի ձեզ զժառանգութիւն ձեր զոր ունիմք յարքունիս, բայց յայնմանէ՝ զոր ումեք ումեք պարգևեցաք. զի ո՛չ չրջին պարգևք Թագաւորաց առանց պատճառու. մանաւանդ ՚ի Դիւանի Հօրն Մերոյ Տն Շապհոյ Արքայից Արքայի՝ եմուտ. այլ՝ փոխանակ ընդ այնր յարքունուստ լինումք, և զձերոյն պակասութիւն։ Երրորդ՝ թափեմք զձեզ ՚ի գործակալաց Յունաց՝ թէպէտ պատերազմաւ ընդ Կայսեր, թէպէտ խաղաղութեամբ։ Եւ զսեր Գաղղանանի՝ Ա-

րիւն

րբեան իւր, և Հարազատութեան․ ո՛չ ըստ վաղնջուց ազգականութեան, այլ ըստ արդեանս, որ 'ի Մօրէ քումմէ Արշանուշայ Արշակունւոյ, հանեալ դքեզ 'ի Հայրենեաց քոց Կամսարականաց, և 'ի Մայրենիս քոյ՝ իմս առնել ազգ, Արշակունի անուանմբ պատուեցից։ Զայս տեսեալ Գաւազանոյն՝ ԺԵ հո՛ւալ զարձուցանէ զքնաւ Նախարարսն առ Արքայն Խոսրով․ և բարեբախտիկ՝ եղեալ՝ քաջախօսութեան հանդիպի նմա խնդրոյն, և խոստմանցն։ Բայց Սամուէլի Մամիկոնէի յինքն ըմբռնեալ զԹուղթն Խոսրովու, և զՊատճէն Թղթոյն Նախարարացն, ղատուցեալ 'ի Նախարարացն՝ զնոյն առ Կայսրն, Արկադ․ քանզի՝ էր սպանեալ նր զ Հայրն իւր Վարդան՝ յաղագս ուրացութեան, և զՄայր իւր՝ Տաճատուհի․ և երկնչելով 'ի Պարսից՝ և 'ի Քեռեաց իւրոց Արծրունեաց, ո՛չ 'ի Յունաց եղէւէր զատշիլ։ Իսկ՝ Արկադնոսս բարիս արարեալ, հրամայէ զհաւատարմութեան՝ Հելլէն գրով 'ի Դիւան իւր դնել, զի պահեսցեն յիշատակք ազգաց ապստամբողաց, որ կայ մինչև ցայսօր։



Գլուխ 49․

Միապետելն Հայոց Խոսրովայ, եւ առնուլ զԱթոռ Եպիսկոպոսութեան Մեծին Սահակայ։

Իբրեւ տիրեաց Խոսրով ամ Նախարարացն Հայոց՝ որոց ցանկայրն․ յղէ առ Արկադ, եւ խնդրէ 'ի նմանէ հաւատալ յինքն զմասն Յունաց՝ որ 'ի Հայս։ զորս չէին կալեալ՝ հարկեցեն տալ նմա անսխալ, առ նորին Գործակալաց։ Եւ կասկածեալ Արկադեայ 'ի միաբանութէ Նախարարացն Հայոց, թէ միաբանութեամբ հատանիցեն 'ի նմանէ 'ի Պարսս՝ զբաժինն զայն, կատարէ զխնդիրն Խոսրովայ։ Յետ այսորիկ՝ վախճանեալ Եպիսկոպոսապետն Ասպուրակէս, 'ի տեղի նր յաջորդէ Խոսրով զՍահակ՝ որդի Մեծին Ներսիսի, որդւոյ Աթանագինէի, որդւոյ Յուսկանն, որդւոյ Վրթանիսի, որդւոյ Սրբոյն Գրիգորի։ Սա՝ ամ առաքինութբ Հարցն նմանեալ, աղօթից մասամբ առաւելեաց։ Քաղի՝ ստացաւ աշակերտըս վաթսուն, ըստ նմանութե Մայրաքաղաքացն Սպուդէից․ Արք Կրօնաւորք, Խարազնազգեստ, Երկաթապատք, Բոկագնացք, որք յար ընդ նր

մա

մա շրջէին. որովք մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն, որպէս զայնս, որք յանապատն էին. և հոգայր զաշխարհս, ոչ զայնս, որք յաշխարհի էին։ Առ նա եկեալ Մեսրոբայ՝ յանգս խնդրոյ Նշանագրաց Հայոց, եգիտ զնա առաւել փափագօղ այնմ. և յետ բազում ջանից, և ոչինչ օգտելոյ, դարձեալ յաղօթս ապաւինեալ՝ յԱյ խնդրելով։ Եւ մեկնեալ 'ի միմեանց՝ գնաց Մեսրովբ 'ի դադարս իւր, և յանձն առեալ զխստամբերութիւն վարուց, ճգնէին առաւել քան զկար,

Պրակ ԾԹ.

Կապումն Խոսրովայ, և փոխանորդել ընթացն՝ Վռամ Շապուհ եղբօրն նր։

Բայց Շապուհ էր ցասմամբ ընդ Խոսրովայ՝ բարեկամանալն Արկադեայ անձամբ, և յանհրաման կարգել յԵպիսկոպոսութիւն զՄեծն Իսահակ. վն որոյ՝ յղեալ մեղադրութիւն՝ հանդերձ սպառնալեօք։ Ըմբոստացաւ Խոսրով, և խրոխտամամբ վէսական պատասխանեաց, և արձակեաց զՊատգամաւորսն անարգանօք. և իսկոյն խօսեցաւ ընդ

Արկադեայ, զի լուծեալ զհնազանդու-
թիւն ընդ Շապհոյ՝ օգնեսցէ նմա զօ-
րու, և նա դարձուսցէ առ նա զբոլոր
աշխարհն: Այլ Շապուհ՝ ի հրապարակե-
լոյ զուշակութիւն Նահապետաց մերոց՝
նոյնհետայն առաքէ զԱրտաշիր զոր-
դի իւր՝ զօրու մեծաւ ի Հայս. և ի
հրաժարել Արկադեայ ի կուսակցե-
լոյն Խոսրովայ, և ոչ զոք յօտարք ազ-
գաց գտեալ ի սատարութիւն, անկարա-
ցեալ ընդդիմանալ, կամ խուսել ի նը-
մանէ՝ չոգաւ առ նա: և Արտաշիր
ընկեցեալ զնա ի Տէրութենէն, փոխա-
նակ կացուցանելով զՎռամ Շապուհ
զեղբայր նորին. ոչ զՄեծն Իսահակ,
և ոչ զոք ի Նախարարացն կարգեցե-
լոցն ի Խոսրովայ՝ մերժեալ ի պատ-
ուոյ իւրաքանչիւրոյ: Նաև հրամայեաց
և՝ ընդ Յոյնս զնոյն կարգ ունել. և
թողեալ զունդ ատաւմար, ելեալ ի Տա-
րոն փութայր հասանել, ի ծերութենէ
հօրն այն անձեալ. ընդ իւր ունելով
զԽոսրով, դնել յԱնուշն կոչեցեալ
բերդին. որոյ թշուառեալ ամս՝ հինգ:
Ընդ նմա տարեալ՝ և զԳազաւոն կապա-
նօք, կասկածեալ յառնն քաջութենէ.
և զտուն նոր ունել յարքունիս. նոյն-
պէս՝ և զեղբօր Շաւարշայ, և զՊար-
գևայ Ամատունւոյ. քանզի զինուո-
րօք նկատեալ՝ որոտացան զյաջողութե
ժամու՝ ի ճանապարհի կարաւանին զեր

ծու

ծուցանել զԱրքայն իւրեանց Խոսրով. եւ ո՛չ աջողեցաւ 'ի պարտաւանդելոյ ոտից նոցա շղթայս. եւ հզօր մարտի եղելոյ՝ սպանանեն Շաւարշ, եւ Մանուէլ որդի Պարգեւայ, եւ բազումք ընդ նմա ։ Իսկ Պարգեւ՝ 'ի կապարանս ըմբռնեալ՝ ածաւ առաջի Արտաշրի. եւ որք տեսոտակապարծեալ ուսուցմամբ, Հրամայեաց դնել առաջի Խոսրովայ հանապազ ։

Գլուխ ԿԱ.

Երթ Մեծին Խոսրովայ 'ի Տիզբոն, եւ դարձ մեծարանօք եւ պատուով։

ՍՈւրբք ոմանք՝ եւ Երեւելիք Առաջինք 'ի Նախարարացն՝ եւ 'ի Վարդապետաց աշխարհիս՝ լուսաւորութեան պատճառք՝ որդեծնութեան եղեն ցՄեծն Խոսրով. դադարութիւն եղեւ ուսանելոց նր. ունելով զուստր մի Խոսրով՝ Անոյշ անուն, որ առաւել յամուսնութիւն Համազասպայ Մամիկոնէի. եւ 'ի մեռանել քաջին Խոսրովայ Սպարապետի, 'ի տեղի նր աղաչէր Մեծն Խոսրով՝ կարգել զնա Խոսրովայ Արքայի, եւ զինի կապանաց նր, եղբօր նր Վռամ Շապհոյ։ այլ սա հրաժարէր՝ առանց Հրա-

մանաց Արքայից Արքայի՝ առնել զպայմա-
յիշելով՝ եթէ սակս այսպիսեաց իրաց
կրէ զվիշտս եղբայր նր խոստովի։ Վն
որոյ՝ առեալ ՚ի նմանէ թուղթս, ՚ի թա-
խանձելոյ Դստերն նորին, չոգաւ առ
Արտաշիր Պարսից Արքայ. (որ յետ
եօթնամնամեայ թագաւորութեան
Հօրն՝ կալաւ զթագաւորութիւն ամս
չորս) և մեծարի ՚ի նմանէ յոյժ. Նախ՝
վասն Քաջատոհմիկ ազգին Պալհա-
կաց. դարձեալ՝ զի և առաջին անհաւա-
տից՝ Ցարդոյ և Պատուական ցուցա-
նէ Ած զծառայս իւր։ որոյ զբնաւն կա-
տարեալ զխնդիրսն. Նախ՝ վն փեսայի
նր Համազասպայ. և դարձեալ՝ վն մե-
ղուցելոյ նմա ազգացն Կամսարականն
և Ամատունի, որք սուզեալք՝ զօղեալ
էին յանձնայոյս տեղիս։ Վասն որոյ՝ մաղ-
թեաց զթալ, եթէ յԱծային հրամանէ՝
ո՛չ համարել որդւոց զյանցանս հարց.
մանաւանդ՝ զի և հարքն, որք մեղանն,
նոքին սակս այնր՝ և մեռանին. որոց
մնացելոցն պարգևեաց զկեալ։ Հրա-
մայեաց՝ դառնալ իւրաքանչիւրոցն ըզ
կալուածն յԱրքունիս՝ դարձուցանել
՚ի նս. բայց միայն՚ ՚ի դաւ Հայրենիք ոչ
հաստատել, այլ խոնարհ քան զըզ̄ մե
մատուցեալ Նախարարաց ՚ի Գահս կըզ
ներքադունեաց պատրաստել։ Իսկ զազգն
Համազասպայ՝ որ է Տոհմ Մամիկո-
նեան՝ ՚ի վեր մատուցանել, զի կարգէ

ցին ունել զհինգերորդ գահ Նախարարացն Հայոց. և 'ի Դիւանին իւրում գրել: Զի զայս զերկուս՝ այսինքն պահէին ամփոփաբար, զի յորժամ նստէր Արքայն, որ նոյն ժամայն փոխէին զդրօշմ դնեալ 'ի գանձս Արքունի՝ զնորայն տպաւորելով Պատկեր. և զգիր Դիւանին՝ յայլ փոխեալ նորա անուամբ՝ սուղ ինչ զանազանեալ՝ ոչ քառնալով զհինն։ Իսկ՝ եթէ յամեսցէ 'ի Տէրութեան ամս բազումս, և որպէս աշխարհագիր նոր, թողուին զայն՝ որ 'ի Հընոյն փոխեցաւ, զի միայն նորայն վերադրեսցի անուն։ Արդ՝ Արտաշիր ոչ ժամանեալ 'ի կարճութէ աւուրցն յայլ աշխարհագիր, 'ի յայնմ՝ որ յառաջնոցն փոփոխեաց՝ իւր անուամբն հրամայեաց գրել զայն ամ, և տալ գահու, և պատուոյ՝ հանդերձ իշխանութեան գիւղից, և դաստակերտաց Համազասպայ, և որում ցանկայրն զԱսպարապետութիւն Հայոց. Հրովարտակ առ Վռամ Շապուհ մեր Թագաւոր՝ գրել զայս։

Մազդեզանց Քաջ Արտաշիր՝ Արքայից Արքայ. առ եղբայր Վռամ Շապուհ՝ Թագաւոր Հայոց, ողջոյն շատ։ Ընկալեալ զգրեալս՝ որ ինչ վա Եպիսկոպոսին իւրահանկայ. և յիշեցի զերախտիս Նախնեաց Հարցն դորա՝ որք էին Նախարարք Սուրենեան Պահլաւայ.

և կամաւ յանձն առեալ զՏէրութիւն իւրոց
Նախնեացն, և Համանուանն Արտա-
շրի. և այնչափ սիրեալ զնա քան զիւ-
րեանց ազգայինսն, մինչ զի՛ ոչ շառա-
ցան մեծայն ՚ի Պարսից աշխարհէս մարզպան
չէր ընդ նմա, այլ և ՚ի ձեռըն եկեալ՛ նո-
րին ապագա՛, սպանեաց զխորագոյն՛ քո
Նախնեացն. և զայսոյծ սպանութեան իւ-
րեանց հատուցին մահուամբ: Իսկ՛
որդի սպանողին Գրիգոր՛ զկեանս, և
զԹագաւորութիւն կորուսեալ Հերման
գութէ Տրդատայ՝ մերժեալն եւս իւ-
րով բժշկութէ. և առեալ՝ առ ձեզ
Երախտաւոր. մեծ որոյ՝ զորդեկացեալ
զմա զՀամազասպ՝ կացուցեալ ՚ի մեծ զօ-
րացդ Սպարապետ, մեր հրամանաւ.
և տուեալ զորս տացեն զԳրահին հինգ-
երորդ պատուոյ Նախարարացդ. և
զգեօղս՝ և զդաստակերտս, զոր առեալ
է Նախնեաց քոց՝ Հարց զօզս, կալ-
ցին դոքա. սապէս՝ և զոունս մեծա-
մակարացդ ազգաց, զոր կալեալ յար-
քունիս՝ Թողցես ՚ի քեզ, աներկիւղա-
բար ժառանգել նոցին մեացորդաց.
բայց՝ Գուհան Հայրենականաց պատ-
ուոյն՝ մի՛ սրբացես արժանի. զի և
մեք ՚ի մերում Դիւանի՝ հրամայեցաք
գրել. ողջ լե՛ր: Բայց յորժամ եկն
Մեծն Իսահակ, և զնամ պարգեւեալն
՚ի յԱրտաշրէ հաստատեաց, մեռաւ
Արքայն Արտաշիր. և փոխանակ նո-

Թա

Թագաւորեաց Վռամ, որ և Կրմանին կոչեցաւ՝ ամս տասն. և զնորա բարե_ կամութիւն կալեալ ընդ աշխարհիս Հայ_ ոց, և ընդ թագաւորին մերոյ՝ Վռամ Շապհոյ, և ընդ Մեծին Իսահակայ. և էր խաղաղութիւն ՚ի մէջ Վռամայ, և Արկադեայ։ Եւ Վռամ Շապուհ՝ ունէր զաշխարհս մեր, և ծառայէր թագա_ ւորացն երկոցունց՝ տալով զհարկս. զիշխանութին Պարսից՝ Վռամայ. և զիշխա_ նութին Յունաց՝ Արկադեայ։

Գլուխ 52.

Յաղագս Քաղկեդոնի Ժողովոյն

Յայնմ ժամանակի հրամանդա_ ցեալ Արկադ. և զաւթմանց ահաղանեց, և հրէիծատեանց եղեալ ՚ի Բիւզանդիոն՝ որ յաղագս Մեծին Յոհաննու, չհաւթեալ լինէր թագաւորութեան Յունաց, և զօրքն ընդ միմեանս պատերազմէին՝ և ընդ Պարսիցն։ Այս որոյ Վռամ հրա_ մայեաց՝ Վռամ Շապհոյ մերում թա_ գաւորին, իջանել ՚ի Միջագետս, զի խաղաղացուցեալ կարգեսցէ զնոսա. և համօր. երկոքանչիւրոցն՝ հաստեցէ Գործակալաց. Եւ իջեալ նա՝ և կար_ գեալ զայս ամ, ո՛չ փոքր ինչ կրէ աշ_

խա_

խստութիւն՝ յաղագս քաջարտուղարի, վե-
մինչև զնոսա. Մեսրոպ յաջորդութեան-
դրանէն, ո՛չ ի Ճարտարաց զա-
նիւր առեալ ի Դպրաց, բանիցն Պարս-
կական վարժէին գրով։ Վա՛ սոյն՝ մա-
տուցեալ նմա առ Արքայն Հայոց՝ ա-
նուան կոչեցեալ, խոստանայր Հայկա-
զանցն առնել Նշանագիր Լեզուացս,
յարմարեալ Դանիէլէ Եպիսկոպոսէ՝
յիւրմէ մերձաւորէ, զորով անձինն
արարեալ Արքայի. և եկեալ ի Հայս՝
զատանէ ժողովեալ առ Մեծն Իսահակ,
և Մեսրոպ՝ զԵպիսկոպոսունս ամ, հա-
ճառ ունելով Դպրութեն Հայոց. զոր
Արքայիւն պատուհասեցին, և նա պատմեաց
դասացեալ զանն Վաղանկամեին. զոր եւրև
լուանն, Թառեանձեւին զնա՝ փոյթ զայն-
պիսեացն առնել պիտոյից։ Վա՛ որոյ ա-
ռաքեալ Հրեշտակութեն զայր մի. Պա-
տուճարան յաշխարհին, և հասուստարեալ
իւր՝ խորհրդութիւն աղգան, Վարճիչ ա-
նուն, յօ՛յժ փութափագօղ նորին գործոց՝
առ Հայկէն այն. զոր առեալ, և եր-
թեալ նոյնա հանդերձ՝ բայց հեռա-
ցեալ ի Պանինեյէ, կարգել ըստ ձեայ
օրինակի Յունականութեան, զմալղնջուցն
գրեալ շարագիր տառից. եկեալ ե-
տուն ցՄեծն Իսահակ, և ցՄեծն
Մեսրոպ։ Որոյ ուսեալ՝ և թեևանկա-
խեալ՝ անփեղոն ընդ նա աղբայոց զոմա-
ռակաւս. տեղեկացեալ՝ զխառսցին ո՛չ

լինիլ բաւական՝ այնու նշանագրօք ըս-
տոյգ հոլովել զհեգենայ բառից Հայ
կականաց հագներգաբար՝ մուրացա-
ծիւն այնուիկ գծագրութեամբ:

Գլուխ 53.

Յաղագս Մեսրոպեայ Նշանագրացն՝ 'ի վերնոյն փոխելոյ Շնորհաց:

Զկնի այսորիկ՝ ինքնին Մեսրոպ իջանէ 'ի Միջագետս՝ հանդերձ աշակերտօք անոյն Դանիէլի, և ո՛չ աւել ինչ գտեալ քան զառաջինն . անցանէ յԵդեսեայ առ Պղատոս ոմն՝ Ճարտասան Հեթանոս՝ իշխան Դպրանին: և նորա խնդութեամբ ընկալեալ, և զոր ինչ միանգամ 'ի միտ առնոյր բան Հայերէն՝ յինքն առեալ, և շատ ջանացեալ՝ և ո՛չ օգտեալ, զտգիտութիւն խոստովանեաց Հռետորն, և զայլ ոմն ասելով յո՛յժ հասու՝ Վարդապետ իւր լեալ յառաջագոյն, և ապա առեալ զՃարտարացն գրեան 'ի նոյն Դպրանէն Եդեսեայ՝ և գնացեալ Քրիստոնէութեն հաւատոց, որոյ անուն՝ Եպիփանոս, զոր խնդրեալ՝ գտցես լցուցանել զխափանդ քո: Յայնժամ Մեսրոպեայ՝ օգնականութի 'ի Բուսաբերոսէ

Եպիսկոպոսն զատեալ , և անցեալ է
փիւնիկէ՝ 'ի Սամոս քաղաքն . քանզի՝ Եպի-
փանու վճարելով զկենցաղս , թողեալ
լինի աշակերտ մի՝ անուանեալ Հռո-
փանոս՝ հրաշալի արուեստիւ՝ Հելլէն
դպրութեան , որ 'ի Սամոս էր միայնացեալ :
Առ սա երթեալ Մեսրովբայ՝ և յայսմ
ես անշահ մնացեալ , յաղօթս ապաւի-
նի : Եւ տեսանէ ո՛չ 'ի քուն՝ երազ ,
և ո՛չ յարթնութեան տեսիլ . այլ 'ի սըր-
տին գործարանի երևեցեալ հոգ-
ւոյն աչաց , թաթ ձեռին աջոյ գրե-
լով 'ի վէմ վիմի , զի որպէս 'ի ձեան վերը-
գծին ունէր քարին : Եւ ո՛չ միայն երև-
ութացաւ , այլ՝ և հանգամանք ամե-
նայնիցն , որպէս յաման ինչ՝ 'ի միտս նո-
հաւաքեցաւ : Եւ յարուցեալ յաղօթիցն՝
ստեղծ զՆշանագիրս մեր՝ հանդերձ
Հռոփանոսիւ , կերպաձևեալ զգիրս
առ ձեռն պատրաստա : Մեսրովբայ փո-
խադրելով զՀայերէն Աթութայն՝
գրոց անապայթաքութեն Սիլլեբայեցին 'ի
Հելլենացւոյն : Եւ խնդրէր 'ի Թարգ-
մանութիւն ձեռն արկէ խորհրդաբար ,
սկսեալ յԱռակացն՝ բովանդակելով
զքսան և զերկու յայտնիսն , և զՆոր
կտակն հեղու 'ի Հայ բան : Նա և՝ Ա-
շակերտք նր Յովհան Եկեղեցացին , և
Յովսէփ Պաղնացին . միանգամայն՝ և
զարուեստ դպրութեան ուսուցանէր առ-
լով Մանկագոյն խարոց Աշակերտացս :

Գլուխ. 54.

Յաղագս Դրացութեան Հայոց, Վրաց, և Աղուանից:

Վախճանեալ Արկադեայ, փոխանակ նորա Թագաւորէ նորին որդի, որ կոչեցաւ Թէոդոս փոքր. և զնորին բարեկամութեն կալաւ ընդ մերում աշխարհիս, և ընդ Արքային մերոյ՝ Վռամ Շապհոյ: բայց՝ զմանն էր ո՛չ հաւատոց նմա, այլ ընքեան կալաւ Գործակալօք, և խաղաղութեն արար ընդ Յազկերտաւ՝ արքային Պարսից: Ընդ նոյն ժամանակս՝ եկեալ Մեսրովբայ, և գըտեալ զՆշանագիր Մերոյ Լեզուին. և հրամանաւ Վռամ Շապհոյ, և Մեծին Իսահակայ՝ ժողովեալ Մանկունս Ուշեղս՝ և Քաջուսումս՝ փափկաձայնս, և յերկարաոգիս, և Դպրոցս կարգեց յամ գաւառս. և ուսոյց զբնաւ կողմն Պարսից բաժնին, բաց Յունաց մանէն, որք ընդ ձեռաւորութեամբ տուգանեցան, վիճակեալ յԱթոռն կեսարու, վարեալ Յունական Դպրութեամբ, և ո՛չ Ասորւոց: Իսկ Մեսրովբայ երթեալ յաշխարհն Վրաց, առնել նոցա Նշանագիր՝ Տուիցելովն ՚ի վերուստ Շնորհաւն, հանդերձ Ջա-

ղայիւ

ղայլի՛ ամամբ՝ Թարգմանաւ Հելլեն,
և Հայ Լեզուաւ՝ ձեռամբ լինելով
նշ Արքայիս Բռակրայ, և Եպիսկոպո
սին Մովսիսի: Եւ ընտրեն մանկունս,
և յերկուս բաժանեալ դասս, և Վար
դապետս Թողուն յաշակերտաց իւրոց,
զՏէր Խորձենացի, և զՄուշէ Տարօ
նացի. և ինքն յԱղուանս իջեալ առ
Արտվաղէն Թագաւորն նոցին, և առ
Եպիսկոպոսապետն՝ Երեմիա. որոց
կամաւ յանձն առեալ զՎարդապետու
թի նը, եւսուն մանկունս ընտիրս. Եւ
կոչեալ զԲենիամին ոմն՝ հնարհաւոր
Թարգման, զոր անդ առձակեալ մա
նուկն Վասակ Սիւնեաց Տր, 'ի ձեռն
Անանիայ իւրոյ Եպիսկոպոսի, որովք
հաստեղծ զԱշանագիրս, Կոկորդաղիօս,
Ախաղաղար, խժական՝ խեցբեկագու
նին այնարիկ Գարգարացւոց Լեզուին.
և վերակացու Թողեալ զաշակերտ իւր
Յովնաթան. միանգամայն և Քա
հանայս կացուցեալ Դրանն Արքունի,
ինքն դառնայ 'ի Հայս: և գտանէ զՄեծն
Իսահակ Թարգմանութիւն պարապեալ
յԱսորւոյն՝ յոչ լինելոյն Յունին. քզի
նախ 'ի Մեհրուժանայ այրեցեալ էին
դպրեանք համուր Տիս Յոյն Գիրք. զար
ձեալ 'ի բաժանել զաշխարհս Հայոց
չառնուին Պարսիկ Վերակացուքն Յոյն
ուսմբ՝ ուսանիլ Դպրութիւն յիւրեանց
մասինն, այլ միայն Ասորի:

Պռակ

Գլուխ ԾԵ.

Կրկին թագաւորելն Հայոց Խոսրովայ, և յետ նորա Շապհոյ Պարսկի ։

Վռամ Շապուհ՝ թագաւորեաց ամս՝ քսան և մի. մեռանի, թողլով որդի տասնամեայ՝ անուն Արտաշէս ։ Յայնմ ժամանակի՝ երթեալ մեծին Սահակայ ՚ի դուռն Արքային Պարսից Յազկերտի՝ խնդրել զկալանաւորեալն Խոսրով, որ զկնի մահուանն Արտաշրի՝ լուծեալ պահեցաւ արքունի՝ յԱնյուշն կոչեցեալ բերդի՝ յաւուրս Վռամայ ։ Եւ Յազկերտի հաւանեալ, կատարէ զխնդրուածսն, տալով նմա զՏէրութիւն արձակէ ՚ի Հայս ։ Սա խնդրեաց զՀրահատ՝ որդի Գազաւոնի, զոր յետ հօրն մահուանն՝ հանեալ յանկիւնէն [illegible], անդր ևս քան զՍաղաստան էր գումարեալ. զոր ո՛չ ժամանեաց տեսանել Խոսրովայ, մի և եթ՝ ՚ի կրկնումն թագաւորեալ ամ. յետ որոյ՝ Յազկերտ առ ո՛չ ևս ՚ի նոցունց, այլ՝ զՇապուհ զորդի իւր թագաւորեցուցեալ Հայոց, հնարս դատողութեան խորհելով. իբր թէ՝ այնպէս հանապազ առ նմա լինելով Նախարարքն յանկչեցին, խօսիւք, տուր և առիւք, խրախճանութեամբ, և

զբօսանօք որոց. այլ եւ՝ եկամուտ հա-
րազատութեամբ մերձաւորեացին խնամա-
ւորութեամբ. զի մարթ լիցի՝ զնմ̃ ՚ի Դուէն
մազդեզանց սաղապեցուցանել, որով
ամենեւիմբ զատիցին ՚ի Յունաց. ոչ
գիտելով անմիտն, թէ Տր̃ ցրուէ ըզ
խորհուրդս հեթանոսաց։ Թէպէտ
առժամայն յաջողեցաւ. քանզի՝ մե-
ռեալ Համազասպայ, եւ ՚ի տեղի մեծի
եղեալ Իսահակայ, ոչ ոք ՚ի միաբա-
նութիւն հաւաքեաց զզօրս հայոց։ Վն̃
որոյ՝ դիւրամուտ յաշխարհս եղեւ Շա-
պուհ, ընդ իւր ածելով զՀրահատ,
եւ զնմ̃ փոխարանորդիսն. սակայն՝ ոչ կա-
րաց զմիտսն հաճել Նախարարացն,
ամենեցուն ատեցեալ զնա. եւ ոչ Ար-
քայ_օրէն մեծարէին զնա յորս, կամ
՚ի խաղս։ Իբր երբեմն՝ զհետ երամա-
կաց ցռուց յանդգնագոյնս արշաւել
ընդ խորտաքարուտս, եւ ընդ վիմուտ տե-
ղիս, յորմէ կասել սկսաւ Շապուհ։
Իսկ՝ Արտամայ Մոկացւոյ եպերեալ
զնա՝ ասէ, զնա՛ զնա՛ Անծորդերդ Պար-
սից, եթէ այր իցես։ Եւ նա ասէ, դու եր
թիջիր. զի ՚ի քարինս՝ Դիւ՛աց է շահա-
տակել։ Դարձեալ՝ յայլում ժամու դի-
պեցաւ ՚ի շամբս՝ կինճ որսալ հրով, եւ
Շապհոյ ոչ համարձակեալ ՚ի թաւուն
քաջարշաւ լինել, մինչեւ շրջապատէր
հուրն. եւ նորա զհայեցուածսն յեր-
կուս բաժանեալ՝ այսր անդր բերեալ

լի-

լինէր երկիւղարութն. միւսանգամ ասէ,
Ա՛ռամ Ածորդեդ Պարսից, ահա՛ Հայր
քո, և Ած. ընդէ՞ր զանգիտես ։ Իսկ
Ղասպուհ ասէ. թողեալ ՚ի բաց զկա-
սակելդ, յանցանել ընդ հուրդ դար
ձո՛ զքեզ, որ և ես զկնի քո, քանզի՝
յառաջեալն՝ ձիւ իմ խրոչի ։ յայնժամ
այսպանեաց զնա Առամ, ասելով. մի՞
թէ՝ այդ քարի՞նդ իցեն. զի ես յա-
ռաջեցից ։ Եւ՞ արդ՝ եթէ դու զմակա
ցիս կոչես՝ Դխ՞ազգի, ես զՍասա-
նեանդ կոչեմ՝ Կնամարդիս. և մօրէ
կեալ զերկիւղարն, իբրև Ե հովիւս ծագ
կանց անցանէր ընդ հուրն՝ զերծուցա
նելով զՂապուհ ։ և յետ այնր՝ զխօսա
ցեալ, թէ՝ նմա լուռ ո՛չ լինի, ան-
ցեալ ՚ի մոկացն գնաց յաշխարհ ։ Այլ
երբեմն՝ ՚ի մականականն խաղուն՝ եր-
կիցս պատահեաց շաւասպայ Արծրու
նւոյ՝ զգնտակն հանել ՚ի Ղապհոյ. և
նորա ածեալ նմա մականաւն, ասէ.
ծանի՞ր զքեզ ։ Իսկ նր պատասխանեալ.
թէ՝ այո՞, ասէ ճանաչեմ ես զիս՝ Ար
քայորդի ՚ի ներքանէ Սասանեայ, և ու-
նիմ իշխանութիւն ընդ եղբարս քո՝ ըղ
բարձն Արքայի համբուրել, ոչ անու՞ա
նակոչեալս եմ ։ Եւ՞ զայս ասացեալ յո՛յժ
քամահարար՝ ՚ի ձիարձակարանէն՝ ար
փայազնաց լինէր ։

Ղ՟արձեալ՝ ուրեմն ՚ի խնճոյս ուրախու
թեան, Խոսրով Գարդմանացի ՚ի գին-

ւոյ զեղխեալ՝ առաջի Շապհոյ զօրէն
սեղեխիք առաքեցելոյ՝ զհետ ջխաՀազար
կենաց կրթէր. Էր որ ցասուցեալ Շապ-
հոյ՝ հրամայէ ունել զնա՝ և ի զնդանն
ջրին արգելուլ. այլ նա ի վաղվաղակի ուրե-
ճառառառեալ զայն, նորինոյն զամենայն
Տրդատայ Թագաւորութեան յիւր առաւն-
անցեալ՝ զԱմայր. ոչ ուրուք ի Սպա-
սառապելոյ Արքունի համարձակեալ
արկանել ի նա ձեռս, յառաջագոյն
գիտելով զփորձ առնն. Եւ զայս պատմ-
եւ մեզ՝ քոյդ հարկաւորեաց ընդ-
վայր խնդրէք.

Գլուխ 56.

Որ ինչ զկնի գնալոյն ի Հայոց Շապհոյ, և անիշխանութեն յետ նորա.

Յետ չորս՝ ամպարշտաբար թա-
գաւորեալ Հայոց Շապհոյ,
հասանէ նմա համբաւ հի-
ւանդութեան հօրն, և զնոյն
փութանակի փութով Ներսեղակալին,
հրամայելով Զօրագլխին՝ ունել զմեծա-
մեծս Հայոց, և ասանէ ի Պարսս. բայց
եղև ընդ հասանելն Շապհոյ ի Տիզ-
բոն, մեռաւ հայրն նոր Յազկերտ, թա-
գաւորեալ ամս՝ մետասան. Ի նմին ա-
ւուր, և նա անդէն ի Դրանն մարդկա

նէն նենգեալ՝ սատակեցաւ ։ Իսկ՝ ՚ի ձեռն Քաջին, և Բարեբախտին Ներսէսի Ճերճրակացւոյ՝ Զօրագլուխ եղելոյ, ժողովեալ Նախարարացն Հայոց՝ հանդերձ զօրօք իւրեանց, տան Ը գնդին Պարսից պատերազմ. հարկանէն զզօրսն, և սպանանէ Ապրամ Սպանդունի զզօրագլուխն, և ինքեանք ցրուէն Անտիրագլուխ՝ Անձնապահապետօքյամ Լերինս շրջէին, և յԱմուրս. յորում Համօրէն Վանանդացիք երևեցան նահատակեալք քաջութբ ։ Ուստի՝ աղմկաւ, և բազում խռովութբ մնացեալ աշխարհ մեր յանիշխանութե՝ ամս երիս, աւերեալ ամայանայր ։ վն որոյ պակասեալ լինէին Հարկք Արքունի. և հատեալ Ճանապարհք Ռամկաց, և ամ բարերկարգութե վրդովեալ՝ ապականէր ։ Ընդ նոյն աւուրս Թագաւորեաց Պարսից՝ Վռամ Երկրորդ. և զքէն վրիժուց խնդրեաց ՚ի մերմէ աշխարհէս. խաղաղութե առնելով ընդ Յոյնս, ո՛չ ՚ի բաժինն նոցա հպէր ։



Գլուխ ԾԷ.

Առաքումն Մեսրոբայ 'ի Բիւզանդիոն. և Պարծէն Բըշնոցն հնգից:

Իսկ երբեւ ետես Մեծն Սահակ զայս ամ չարիս 'ի մասինն Պարսից, գնաց նա ընդ կողմամբք Արեւմտից մերոյ աշխարհիս 'ի բաժին մասինն Յունաց. և ոչ ըստ արժանեաց իւրոց եղեւ ընկալեալ. վն որոյ՝ յղէ զՄեսրոպէ, և զՎարդան՝ Թոռն իւր 'ի Բիւզանդիոն՝ առ Կայսրն Թէոդոս՝ հանդերձ Թղթով, որ ունէր օրինակ զայս:

Թուղթ Սահակայ առ Թէոդոս:

Խաղաղասէրի կայսեր՝ Տն իմում, Օգոստոս Թէոդոսի. Սահակ Հայոց Եպիսկոպոս՝ 'ի Տր խնդալ: Գիտեմ, զի համբաւ նեղութեան մերոյ հասեալ է 'ի Ներող Լսողութիւն Ինքնակալիդ. սակս որոյ յուսալով 'ի Բարեգթածութիւն Բարերարութեանդ քոյ դիմեալ ապաւինեցայ յոտս Ձեր, և ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում Վիճակիս՝ 'ի հրամանէ Վերակացուաց նց. այնչափ ատեցեալ զմեզ, մինչև զՆշանագիրս անգամ ոչ ընկա

լեան, զոր եբեր նոյն այր՝ զոր առա-
քեցի առ Ձեր Բարեբարութիւնդ․ բա
զում անգամ ճգնեալ դորա յԱսորւոց
ծին: Արդ՝ Թուիցի Ձերում Տէրու-
թեանդ՝ ո՛չ անիշխան առնել զմեզ 'ի Մե
րում Վիճակիս, հրամայեա՛ ընդունել
զմեզ, և Վարդապետութիս մեր․ Ո՛ղջ
լեր:

Թուղթ Սահակայ առ Ափփիկիոս:

Սահակ Եպիսկոպոս Հայոց: Վար-
դապետ մեր Ատտիկոս՝ Եպիսկո-
պոս Աշխարհամուտ Դրանդ՝ Օրհ-
նութի՜ Ողջոյն: Յուսացեալ 'ի Ձեր
սրբութիւնդ, առաքեցաք զՈւսուցող
մերոյ աշխարհիս՝ զՄեսրոբ, և ըղ-
թոռն իմ Վարդան․ որպ՝ զի լուեալ
քո 'ի դրոցանէ զաղէտս նեղութե՜ մե
րոյ, բարեխօսեալ առ Մեծի Թագա
ւորիդ՝ օգնեսցես մեզ․ որպ արդարև
Եղբայր Սիրելի․ Ո՛ղջ լեր:

Գրէ և առ Անատոլիոս զօրավարն զայս ինչ:

Սահակ Եպիսկոպոս Հայոց: Քաջի
Զօրավարի Անատոլեայ՝ խնդալ:
Շնորհ ունիմ Այ յաղագս զքեզ պատ
րաստել մեզ յապաւինութի: Վա որոյ՝
զգացուցանեմ, զի 'ի հայթայթանս մե
րոյ նեղութե՝ առաքեցի զՈւսուցա-

նօղդ մեր զՄեսրոբ, և զԹոռն իմ զՎարդան 'ի Դուռն Արքունի։ Եւ աղաչեմ զքո Քաջութիւնդ՝ ձեռնտու լինել ճանապարհիդ. Ողջ լեր։

Զայս տեսեալ Անատոլեայ, միանգամայն և զլուր առաքինութեան Մեսրոպայ յիշեալ՝ որ յառաջագոյն հնչեցեալ էր զնմանէ, ո՛չ փոքր ինչ արար նոցա ընդունելութի. մինչև 'ի ձեռն փոփոխընթացից գրով զգացուցեալ կայսերն. առնու հրաման՝ արժանապէս առաքել փութով. վ̃ն որոյ՝ արդելեալ 'ի քաղաքին 'ի Մելիտինէ ըզբազմութիւն Աշակերտացն, զորս ընդ ինքեան ածեալ՝ հանդերձ գլխաւորաւ նոցին Ղևոնդիւ՛ առ Եպիսկոպոսին Ակակայ թողու։ և ինք առեալ զՄեսրոբ, և զՎարդան, տայ ցԵպիսկոպոսն Դերջանոյ Գինդ. և բարեփառութբ̃ զն̃ յուղարկէ, որով մտին 'ի Բիւզանդիոն, և յանդիման եղեալ Մեծի Թագաւորին. առին՝ և զոր յուսային, և զոր ո՛չն յուսային, և դարձան հանդերձ թղթով այսպիսեաւ։

Թուղթ Թէոդոսէ առ Սահակ։

Ինքնակալ Թէոդոս՝ Օգոստոս և կայսր Հռոմայեցւոց։ Մեծի Սահակայ Եպիսկոպոսի Հայոց, խնդալ։ Հրամայեալ մեր տեսանել զԹուղթս,

վերահասու եղաք գրելեացս առ 'ի քէն. և մեղադիր եմք յոյժ, զի ամ որպէս մերժեցեր զՀեռս Հեթանոս Թագաւորաց. և մեզ՝ և ոչ թղթով քաղաքավարեցար ծանօթանալ. և առաւել յոյժ մեղադիր եմք, զի արհամարհեալ զՃառագայթս, որք 'ի մերում քաղաքիս, յասորեաց ամանց խնդրեէր զի մեամբից զկեառ: վասն որոյ հաճեալ էաք, ընդ մերոյ ծառայիցդ արհամարհել զայրգափին ուսուցն. բայց՝ զի յետոյ պատմեցաւ մեզ Մեսրովբ, եթէ՝ կատարուն սրբուծեամբք 'ի Ճորհաց Վերնոց եղև, գրեցաք՝ զի ամ փութով ուսուցին, և զգեզ պատուեալ ընկալցէք, ընդ զարդարև Վարդապետ եւրեանց՝ հանդոյն Արքեպիսկոպոսին Կեսարու. և դարմանք՝ և ծախք յարքունուստ եղիցին: Եւ հրամայեցաք՝ քաղաք շինել յաշխարհէդ Հայոց, յապաւինութեան ձեզ՝ 'ի մերոց զօրացդ. և վասն քո՝ արարաք զՎարդան Սպարապետ զօրոյն որդեգրեցելոյ քոյ. և յԱռաջին վարդապետսն գրեցաք զՄեսրովբ. Ողջ լեր: Գրեցաւ և Մեծ Եպիսկոպոսն Ատտիկոս զայս ինչ:

Թուղթ Ատտիկոսի առ Սահակ:

Ատտիկոս՝ Ինքնագլուխ Եպիսկոպոս Կոստանդնուպօլսի: Եղբօր Սիրելւոյ՝ և Աթոռակցի, Սահակայ Ե-

պիտակապաւն Հայոց 'ի Տն խնդալ։ Բազում Գոհութիւն Այ մատուցանեմք յաղագս քոյ Բարեհամբաւութեանդ 'ի մէջ այդպիսի Բարբարոս Ազգի. այլ ո՛չ ազատ 'ի մեղադրանաց թողումք, որ ո՛չ կանխաւ յիշատակեցեր զՄիաբանութիւն Գրիգորի, և Ներսիսի՝ Երանելեաց քոց Հարցն։ Ե՞ւ առաւել՝ է այս զարմանամք. եթէ՝ զիա՞րդ թողեր զաղբեւրն Եկեղեցւոյ՝ զՀայր Մեր, Մեծ Յոհաննէս. որ ո՛չ միայն Տիեզերական Մայրաքաղաքիս, այլ և՝ սովաւ Ամ Քրիստոնեայք, և Ընդհանուր աշխարհս 'ի նմանէ լուսաւորեցին վարդապետութէ. ուստի՝ և Ոսկեբերան զնա կոչեցին. և ձեր զանց զնովաւ արարեալ, կամեցայք 'ի սահմանական Ջրոց՝ փափագ ծարաւոյ յագեցուցանել. մինչև Ամնակալին տեսեալ զանոտի աշխատութիւն, բղխեաց 'ի ձեզ զՇնորհս Հոգւոյն. ընդ որ այժմ ուրախ եմք։ Իսկ այդ հրամանաւ Ինքնակալին Օգոստոսի առնելով լեցի քեզ երախտաւորութիւն Վարդապետել զկողմն մեր. և Աղանդոյ Բորբորիտոսաց, կամ հաւանեցուցանել, կամ հալածել 'ի քումմէ Վիճակէդ։ Ե՞ւ զառաքեալս 'ի քէն՝ զՄեսրոբ՝ ձեռնադրեցաք՝ լինել Եկկլեսիաստիկոս։

Գլուխ 58.

Վասն զԱրեւմտեայս ձեռ Վարդապետելոյ, և խաղաղանալոյ բոլորումն, և նուաճատուելոյն Արտաշրի:

Եկեալ Մեսրովբայ, և Վարդանայ Ստրատելատի՝ գտին զԶօրիշրն Անատոլի՝ հո՛ւպ 'ի մերս եկեալ Սահման. որոյ եկեալ՝ զՀրամանն Արքունի առաւել յոխորտաբար, և քաջափոյթ ձեռն արկութեբ՝ զգործն 'ի կատարումն աւարտեաց: Քանզի՝ Իշխանք, և Գլխաւորք, և որք միանգամ Յայտնիք էին 'ի կողմանն, 'ի մի՝ վայր եղեալ՝ հասանէին հանդերձ ամ Քահանայական ազգաւն՝ ինքնակամ, երբև յԱճառաք ձայնէ հրաւիրեալք. զորս՝ անյապաղաբար սկսեալ ուսուցանել. երագապէս Վարդապետեցին զկողմն Արևմտեայ, որպ՝ զԱրևելեայն: Յայնժամ՝ գային՝ հասանէին 'ի բազում Նախարարացն կողմնականք զՄեծէն Սահակայ, զի 'ի մէջ նոցա անցեալ 'ի միաբանութիւն զամս հաւաքիցէ: քանզի՝ գիտացեալ Արքային Պարսից՝ վռամայ, եթէ ո՛չ առանց Նախարարացն Հայոց մարթի ունիլ զաշխարհս, հաշտութիւն խօսեցեալ ընդ ձեռն Սմբատայ

Ասպետի ։ Վասն որոյ թողեալ 'ի վերայ
Վարդապետութեան կողմանն Արեւմտից,
եւ առ նմա զիւր Թոռունսն՝ զՀմայեակ,
եւ զՀամազասպեան՝ զեղբարս Վարդա
նայ Ստրատելատի, հրամայէ՝ քննել
զճանդագործ Բորբորիտոնսն. եւ ե-
թէ՝ ո՛չ հեզութեամբ, եւ ո՛չ սաստիւ՛ գայ
ցեն յուղղութիւն, չարչարանօք հալածել. զի
որպէս թշնամիք 'ի թշնամեաց վրէժ առնու-
ցուն, եւ խայտառակեսցի իրաւացի մա
հուամբ անիրաւ մահ Հոդւոց ։ Ե՛ւ
ինքն եկեալ՝ անցանէ յԱյրարատեան
Գաւառն՝ կուտեալ զամենայն Նախա
րարագունսն, առաքէ զՍմբատ Աս-
պետն, եւ զՎարդան Ստրատելատ՝ ըզ
Թոռն իւր՝ 'ի Դուռն Արքային Պար
սից ։ եւ նորա հաստատեալ զհաշտութիւն,
եւ Մուրհակ մոռացման յանցանաց
կնքէ, ըստ խնդրոյ նորա Թագաւոր կա
ցուցանելով զԱրտաշէս՝ Որդի Վռամ
Շապհոյ. եւ փոխեալ զանունն՝ Ար-
տաշիր կոչելով, զաշխարհս Հայոց 'ի
նա հաւատաց առանց Պարսիկ վերա
կացուի՛, որ տիրեաց ամս՝ վեց ։



Գլուխ 59.

Շինուած կարնոյ քաղաքին՝ որ կոչի Թէոդոսուպօլիս:

Անատոլեայ Զօրավարի ընկալեալ զհրամանն արքունի, և եկեալ յաշխարհս մեր՝ և շրջեալ ընդ բազում կողմանս մեր, հաճի 'ի Գաւառին կարնոյ շինել զքաղաքն. արդ աւանդահող, շատաջուր, և բերրի, երբ մերձ վարկուցեալ զվայրն ոչ կարի 'ի բացեայ 'ի տեղեացն, ուր Եփրատայ մասինն լինչ բղխեն աղբերք, և հանդարտ գնացիւք յառաջանան ծովացեալ Մօրաբար երևութիւք, յորում անբաւութի ձկանց, և զազան հաւուց ճարակաւորաց. յորոց 'ի ձուոցն միայն կերակրեալ լինէին բնակիչքն. և զեզերբք Մօրին՝ շամբք, և բազմութի եղեգանց. և դաշտքն ունէին ղթանձրութի խոտոց, և զքաջաբերութի սերմանաւոր պտղոց. և լերինքն լի են երէոք կճղակաբաշխիւք, և որոճայնովք, նաև՝ զանազանոց պաճարս բազմացուցանեն, մեծահասակս, քաջամարմինս, և յայրս ցուցանեն համակեալս 'ի գիրութի. և առ սաստաւ մի՝ գեղեցկանիստ, և մանուանս բղխեալ. անդ

տեղեաց զքաղաքն . զորով շրջա-
փակեալ խորափոսաւն, անդնդային հաս-
տատեաց զհիմունս պատուարին . և ՚ի
մէջ բարձրաբերձ աշտարակս ահագինս
շինեաց . յորոց զառաջին՝ Թէոդոսա-
նուանեաց , ՚ի պատիւ Թէոդոսի . և ՚ի
նմանէ՝ և անդր շինեաց աշտարակս ժայ-
ռաւորս , խորս զնուացուակս , և ա-
ռանցս դոդանաւ խորշեալք , որք ընդ-
դէմ լեռինն հայէին . առ այս , և ընդդէմ
դաշտին Հիւսիսոյ՝ ընդդէմ Արևելից ,
և ընդդէմ Արևմտից կանգնեաց աշ-
տարակս բոլորաձևս . և ՚ի մէջ քաղա-
քին , ՚ի բարձրաւանդակ վայրի մի՝ մե-
թերանոցս բազմապատիկս շինեաց , և
Օգոստոսին անուանեաց , ՚ի պատիւ
Օգոստոսի . և այլ ջուրս՝ ընդ յոլով
տեղիս անձեալ՝ մտոյց անյայտ քնա-
ցեալ . և ելից զնոսա , և պահապան դը-
րան զքաղաքն , և անուանեաց՝ Թէո-
դոսուպօլիս . զի յիշատակաւ քաղաքին՝
անմահ լիցի անուանն . և ՚ի վերայ ջերմ
բղխեալ աղբեւրացն՝ յարկս մեծամեծս
քարանց շինեաց :



Պրակ 60.

Կրկին Աւետարանին ընդ Մեսրոպայ , և երթ Թարգմանչացն 'ի Բիւզանդիոն .

Մեսրովբայ կացեալ 'ի յանապատ , և 'ի Հովանաւոր տեղիսն՝ որ Շողգուաճքն անուանանին , բովանդակելով զմարդասպետութիւն առաջին աւելոց խըմբացն ։ Քանզի՝ ո՛չ ով Արուեստ ուսուցանէր , այլ՝ երբև զհովիւ Առաքելական Աշակերտացն տայր ։ Յետ որոյ՝ Թողեալ վերակացու յերբոց Աշակերտաց 'ի նմին տեղւոջ՝ զՂևոնդ , և զԵնոք 'ի Սպեր . իսկ 'ի Դերջան՝ զնոցին Եպիսկոպոսն՝ զԳիւտ . և յԵկեղեց՝ զՂազար ։ Ինքն եկեալ յԱյրարատ , անցանէ յառաջնոյ բնակութեն Գաւառն Գողթն ։ Քանզի՝ մնացել Աղանդ դառնութեն Հեթանոսական Աղանդոյ , 'ի ժամանակի անիշխանութեան , 'ի վերերկեալ 'ի բազում տարամեցսու . զորս բնաբարձ արարեալ Երանելւոյն՝ հանդերձ օգնականութե՛ն Հօրաբարոյին Գիւտայ՝ որդւոյ Շաբիթայ Իշխանի Գաւառին . անդէ կանխայր և առ , եթէ չարեաց Վարժապետացն Նախարդոյնք 'ի Բաղասականին են կողման ,

ուր երթեալ՝ զբազումս յուղղութիւն ա_
ծէ, և զառակաւսն անդարձ՝ յիշխանու
թիւն Հնոց՝ հալածական առնէ. հա_
ւատալով զՎարդապետութիւն կող_
մանցն նոցին՝ Եպիսկոպոսին, որում
Մուշէ կոչէին: ինքն դառնայ ի Գարդ_
մանայ ձորոյն. զի և ՚ի նմա լուեալ էր
նմին Ընկերաց նորին Աղանդայն. զորս
գտեալ՝ ածէ կին ՚ի գիտութիւն ճշմար_
տութեան հանդերձ վերստին ուղղութե
Իշխանին Գարդմանաց, որում անուն
էր՝ Խորս Հրաւիր: Հրաւիրի՝ անտի ՚ի
Բդեշխէն Գուգարացւոց Աշուշայէ՝
յաղագս նորին գործոյ՝ գալ ձևր իշ
խանութե ՚ի Գաւառն Տաշրաց. ուր
երթեալ՝ լուսադոյնս Վարդապետեաց
և հաստատագոյնս, քան զամ Աշա_
կերտեալսն: առ որով ժամանակաւ
Արշիլ ոմն՝ էր կացեալ Թագաւոր Վր
րաց ՚ի մասանկին յայնմիկ:

Նոյա եկեալ՝ և առեալ Մեսրովբայ,
և Մեծին Իսահակայ՝ զնոյն Աշա_
կերտ զՅովսէփ, և միւս Ընկեր նմին
՚ի Կողբ Գեղջէ, որում անուն՝ Եզնիկ
կոչիւր. առաքեն ՚ի Միջագետս՝ ՚ի քա
ղաքն Եդեսիա, զի որ միանգամ գըտ
ցի անդ գիրք՝ առացեալ Սրբ՝ Հարցն
Առաջնոց, Թարգմանեալ ՚ի Մեր Լե
զու՝ բերցեն փութով, զի յետ այնր
՚ի Բիւզանդիոն առաքեսցին՝ ՚ի նոյն
գործ: որոց ընկալեալ զհրապուրակա

թուղթս՝ սուտակասպասաց ոմանց, երբ թէ՝ պատրաստին Մեծն Իսահակ, և Մեսրոբ՝ զայլ ոք առաքել՝ի Բիւզանդիոն. վն որոյ՝ առանց հրամանի Վարդապետացն իւրեանց, նոյն ընդ նոյն չուեալ՝ գնացին 'ի Բիւզանդիոն. Նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց, և քաջ վարժեալ Հելլէն Դպրութեամբ՝ ձեռն արկեցին 'ի Թարգմանել, և 'ի գրել։ Եւ ընդ նոսա նախանձեալ իւրեանց Աշակերտակցաց, որոց անուանքն՝ Ղևոնդ, և Կորիւն կարդային, յիւրեանց կամաց եկին 'ի Բիւզանդիոն։ Ապա՝ եկանեն անդր Յոհան, և Արձան, զորս կանխագոյն առաքեալ էր Մեծին Սահակայ, և Մեսրովբայ. որոց յուլաբար յուղևորեալ՝ և ծուլապէս դեգերեալք, պատաղեցան 'ի Կեսարիա։ որոց ընդունելութի մեծապէս ամենեցուն արար Մաքսիմիանոս Եպիսկոպոս Բիւզանդացւոց։



Գլուխ ԿԱ.

Յաղագս ժողովոյն Եփեսոսի, որ վասն Ամբարշտին Նեստորի եղև:

Ընդ այն ժամանակս՝ եկաց յԱթոռ Եպիսկոպոսութեան Բիւզանդացւոց անարժանաբար՝ Ամբարիշտն Նեստոր. և Հրէական խմացմանց հետևեալ, հայհոյէր զԱստուածածին Կոյսն՝ Մարդածին լինել, և ո՛չ Աստուածածին: Քանզի՝ զծնեալն 'ի Նմանէ առաւել սկիզբն, Այլ Որդի ասէր՝ Շնորհօք 'ի Մարիամայ, և Այլ Որդի 'ի Հօրէ՝ յառաջ. ասէր զի՝ լինիլ Երկուս Որդիս. որով Երրորդութեան՝ Չորրորդութիւն լինել: Վասն որոյ՝ ժողովեալ Սրբոց Հարցն յԱսիա, 'ի Ծովահայեացն Եփեսոս՝ Գլխաւորական Վերծանութեամբ: Չելեստինոսի Հռոմայ. Կիւրղի՝ Աղեքսանդրու. Յոբնաղիոսի՝ Եմի. Յովհաննու՝ Անտիոքայ. Մեմնոնի՝ Եփեսոսի. Պողոսի՝ Հեմեսու. Թէոդոտոսի՝ Անկիւրեայ. և այլ բազում. համանգամայն երկերիւր Հարքն. նզովելով զՆեստոր, խոստովանեցին Մի Որդի՝ զՏէր մեր Յս̃ Քս̃. և Աստուածածին՝ զԱմենասուրբ Կոյսն Մարիամ: Եւ՛ զի ո՛չ հանդիպեցան յայնմ ժողովոյն՝ Մեծն

Իսա

Իսահակ, և Մեսրոպ․ գրեն առ Նասա Կիւրեղ Աղեքսանդրացի, և Պրոկղաս Կոստանդնուպօլսի, և Ակակ Մելտինեայ Եպիսկոպոսք, զգուշացուցանելով զնոսա : Քանզի լուան՝ եթէ ոմանք 'ի Զարափուացն Աշակերտաց՝ առեալ զԳիրսն Թէոդորոսի Սամոստացւոյ՝ զՎարդապետին Նեստորի, և զաշակերտին դէոդորի՝ գնացին յաշխարհն հայոց։

Ապա եկեալ Թարգմանիչքն մեր, զորոց զանուանսն յիշատակեցաք յառաջագոյն, գտին զՄեծն Իսահակ, և զՄեսրոպն յԱշտիշատ Տարօնոյ․ և մատուցեալ զթուղթսն, և զկանոնս ժողովոյն Եփեսոսի, վեց սահմանել̃ Կանոնաւ, և զՕրինակս Սրբոյ Գըրոց : զոր առեալ մեծին Իսահակայ, և Մեսրոպայ, դարձեալ թարգմանեցին զմիւսանգամ Թարգմանեալսն․ փութանակի հանդերձ նոքօք՝ վերըստին յօրինել Նորոգմամբ : Բայց՝ քանզի Անգետք էին մերում Արուեստի, 'ի բազում մասանց թերացեալ գործն գտանիւր․ վա՛ որոյ՝ առեալ մեծին Իսահակայ, և Մեսրոպայ՝ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիա 'ի Լեզու պանծալի․ 'ի ստոյգ 'ի յօդանալ Ճեմարանին վերծանութեն :

Գլուխ 62.

'Ի վարդապետացն՝ յիշեն, և ի ճանապար-հորթէ ուսմանն. օրինակաւ Եղիշեայն Զարդու:

Գերահռչակողք իմաստասի-րացն՝ 'ի Վերհայեցողք շա-փաբերապէս Մակագրու-թեանց, զաստեղս 'ի լուսոյ ա-ռեն ընծայիլ, և զլուսինն՝ արեգակնակամբ ուռճացեալ. և զշողք արեգականն՝ յԱրփայինն Երկնեւ հի՛կէն, Արփւոյն հեղեալ զծագումն յերկրաքանչիւր զօ-տիսն. և զանցն իւր զօտիքն՝ 'ի ձեռն արեգական ընձայիւն, ըստ ղուսի, ըստ բերման, ըստ ամանակի: Օրինակ իմն՝ այսպէս, և մեք յաւէտախաղաց շնոր-հիւ յոլովացեալ յիմանալի ճառագայ-թից հոգւոր Հօրցն, ըն̄ հարաւային մասանց պարայածել՝ յԵղեսացւոցն հասանէաք քաղաք, թեթեւակի ընդ-խոյս Դիոնանիւն նաւեալ անցաք 'ի Սե-նեղիսն երկրպագել, և մաւլ վայրկեան 'ի Պաղեստինացւոց Հրահանգս. և այն պիսեաւ սաղապատեմ արարաք, մինչ յԵգիպտոս՝ յաշխարհն համբաւաւորն. յանչափից հրաժարեալ ցերտոյ, և ա-թոյ, 'ի հեղեղաց, և յերաշտից՝ 'ի գե-ղեցկուն մասին երկրի զդիրն ունելով.

ամե

ամենաողորմ պատգամք առ լցեալ, և անձեռագործ պարսպեալ Նեղոսիւ. որ ո՛չ պահպանութիւն միայն, այլ և՝ կերակուր նմա բաւական մատուցանել ըզնաւորեաց. և յինքենէ ոռոգմամբ Տէ̃գոլ պատահեալ՝ և չորութիւն, և խոնաւոյ առ երկրին գործաւորութիւն. և զանեղս 'ի նմա դիւրածել գետոյն բխըխուք հոսգիւտ կղզւոյն՝ առատագիւտ առնէ շուրջ պարունակելով. և ը̃ ամ հասելով՝ տորոհմամբ երկոտասանից վըտակացն. բարեխառնար 'ի մեծն Աղէքսանդրեայէ շինեալ քաղաք, բարեձամանակ 'ի մէջ ծովուն, և ձեռագործ լիճ կառուցեալ. յորոց օդոցն քաղցրախառնութիւն փչեցեալ՝ որ 'ի լճէն ըն րանք արձակին 'ի ծովն. և որք 'ի ծովէքն մտեցելոցն, որք ելանեն ստէ'պ ստէպ մղոխք օդոյ, անտասունք այն՝ որ 'ի ծովէն, և թանձունք այն՝ որ 'ի լըճէն, որոց խառնուածն առողջագոյն զհաստատութիւն կենաց գործէ։ Սորա առաջի՝ այժմ, ո՛չ անցեալ նախ Պըղոտեմէոս հնդակատար դագաթամբն՝ զանապառ աշխարհս պատելով, այլ՝ Մարկոս Աւետարանական Քարոզութեամբն. և ո՛չ Վիշապին Դիւաց Գերեզմանք, այլ՝ Սրբոցն Վայելչական Վըկայարանք. և ո՛չ 'ի քնան և 'ի հինկն Տուբի՝ տօնի աղձատանք զըեռնաբարձըս պատկելով դրաստ, և պաշտօն

տայ տանել լռութեան , և անթերաց
տանել բաշխումս , այլ 'ի մեռատանն նո-
րին Տուրքի յայտնութեան Տէն կատարի-
ում ։ զՑաղթօղ Նահատակս դասել ,
և Օտարաց տանել ընդունելութեան , և
յԱղքատս տուր . և ոչ զոհել չար-
ղեքին Սարապեան , այլ զՔն Արքի-
մատուցանել Պատարագ . և ոչ խնդ-
րել Հրաման պատուիրանաց 'ի Մանկա-
րանեան Աստողականաց ; այլ տառա-
նել զզօրութիւն խմաստից 'ի Նորին Պղա-
տանէ , 'ի յիմն անեմ վարդապետէ .
որում ոչ անարժան զտայ Աշակերտ ,
և ոչ անկատար վարժմամբ 'ի յանկ ե-
լեալ արուեստից իւրեն ։ անցաք յԵլլա-
դա նուաճելով յիմաստս բանութիւն հող-
մոյ անկաք . և ողջունեալք 'ի Հան-
դիսան Սրբոցն Պետրոսի , և Պօղոսի .
ոչ բազում ինչ 'ի Հռովմայեցւոցն կա-
ցեալ քաղաքի , անցանելով ընդ Հել-
լադայ յԱտտիկէ , սակաւ ինչ մնացաք
յԱթէնս ։ Եւ 'ի կատարել ձմերայ-
նոյն , դէմ եդեալ 'ի Բիւզանդիոն ե-
լանել , փափաքեալ Մերոց Հայրե-
նեացն ։



Գլուխ 63.

Յաղագս չար նախանձութեան Հայոց , 'ի խորհրդոց հաղորդեան անձանց :

Այս թագաւորն Հայոց Արտաշիր՝ անհնուն սկսաւ ողողանել յանառակ ցանկութիւն , մինչև տաղտկանալ 'ի նմանէ ամ Նախարարացն, որոց եկեալ առ Մեծն Իսահակ՝ զբողոք բարձին, հրաժարելով և զնա յազնականութիւն ինքեանց՝ չարախօսել առ Արքային Պարսից՝ 'ի բաց ընկենուլ զիւրեանց թագաւորն, և Պարսիկ ածել ոստիկան աշխարհին : Այլ՝ նա ասէ , ո՛չ առ սուտ ունիմ զձեզ . իմ իսկ լուեալ զայդպիսի աղէտս ամօթալեաց , և բազում անգամ յանդիմանեալ՝ ուրացաւ. և արդ՝ պարտ է փոքր մի տանել թերութենն առնն , մինչև զելս իրացն խորհել մարթասցուք Կայսերբն Յունաց Թէոդոսիւ. և ո՛չ անօրինաց մատնել 'ի ծաղր և յայպանութիւն : Եւ՛ նոքա ո՛չ կամէին , այլ ձայնային համախորհուրդ իւրեանց՝ զնա առնել. այլ՝ նա ասէ , ինձ քաւ լիցի մատնել Գայլոց զիմ մոլորեալ Ոչխար , և ո՛չ պատել զբեկեալ կամ զհիւանդացեալ. զի եթէ՝ էր հաւատացեալ թագաւորն առաջի , փու

Թայր ,

թայր, և ո՛չ յապաղէր՝ յուսալով ըզ
կանգնումն գլորելոյն. այլ՛ հեթանո
սաց յառաջել կործանումն ո՛չ առնուր
յանձն. ըստ այնմ. թէ՝ մի՛ մատներ
Գուազանաց զանձն խոստովանող քեզ.
քանզի՝ դրոշմեալ է աւազանաւ՝ թէ
պէտ և անառակ է. պոռնիկ է, այլ
Քրիստոնեայ է. գիջացեալ է մարմնով,
այլ ո՛չ անհաւատ ոգւով. զեղխ է վա
րուք, այլ ո՛չ կռապաշտ. աւար է
՚ի կանայս, այլ ո՛չ ծառայ է տարերց:
Ե՞ւ զիարդ լինիցի այդ՝ փոխանակել զիմ
ախտացեալ ոչխարն՝ ընդ առողջ գա
զանին, որոյ առողջութիւն՝ և մեզ պա
տուհաս: Իսկ՝ Նախարարացն զմտա
ածեալ, իբր թէ՝ խաբկանօք իցէ գործն՝
յապաղել զնա, զի զթագաւորն պա
րաստեցուսցէ ինքեան. վա՛ զի ո՛չ հա
մակամեցար չթագաւորել նմա, արդ՝
և մեք կամեցաք չՔահանայանալ
մեզ: Եւ միաբանեալ ամենեքին՝ ան
ցին առ Արքայն Պարսից՝ հանդերձ
Սուրմակաւ ոմամբ Արձակեցի՝ Փա
ռամու Իրիցու, չարախօսել զԱրքայէն
իւրեանց՝ զԱրտաշրէ, և զՄեծէն Ի
սահակայ՝ զՅունօք գլեալ խորհրդոյն.



Գլուխ 64.

Յաղագս բառնալոյ Թագաւորութեան Հայոց՝ ի Տաճկաց ձեռաց, և անուրգելոյ Աշոտոյ Եպիսկոպոսապետութեան ։

Յայնժամ՝ Արքային Պարսից՝ Վռամայ, կոչեալ ՚ի Դուռն զԹագաւորն Հայոց՝ զԱրտաշիր, և զՄեծն Իսահակ. և խնդրէին ՚ի նմանէ դամբանել զԱրտաշիր. և նա հրաժարէր ՚ի նոյն ասել ինչ չար, կամ բարի. այլ նա հրամայեաց Հազարապետին Արեաց՝ որ էր Սուրէնն Պահլաւ, զի հաւանեցուսցէ զնա խրատու ներելութեան, ոտն՝ զԱրքային ։ Եւ Մեծն անգիտաց ՚ի բանս հրապուրանաց՝ ասելով. զի Սուրէն իմ եմ՝ և հարազատութի, զբարին քո խորհեալ ասեմ, եթէ միայն այժմ մխիթարանեսցիս ՚ի Նախարարաց, և մեծարեալ լիցիս յԱրքայէն Արքայից. և զԹոռն քո զՎարդան կարգեսցէ ՚ի վերայ Հայոց՝ Զուգահաւասար Թագաւորին, և Համապատիւ ։ Այլ նա ո՛չ առնոյր յանձն. ասելով, զի՞ ամօթ վս սնափառութեան ; և իշխանաւորութեան չարաբանիցեմ զընկերն. կամ ընդէ՞ր ձեր այդպիսի յօժարութեան ընկենուլ զԱրտաշիր. զի ես զնա ամբաստ

տան

տանութեն ինչ խորհուրդ ո՛չ գիտեմ։
ապա եթէ վն̃. անառակ վարուց՝ զոր
նոքա ամբաստանեն, պատուո՛յ արժա
նի է 'ի ձէնջ՝ ըստ ձերում անմաքրասէր
օրինացդ, թէպէտ ըստ մերումն՝ դա
տապարտի. բայց սակայն՝ յինէն ո՛չ ինչ
էք լսելոց ամենևին։ Ապա՝ զայրացեալ
Վռամայ, 'ի Մեծի Հրապարակին ա_
րարեալ քննութի. և ո՛չ գնելով ունկն
Արտաշրի, յօժարութե̃ լսէր Զարա_
խօսացն. առաւել ևս՝ յոյժ ատելու
թե̃ բանիցն Սորմակայ. քանզի՝ զԱ_
թոռ Եպիսկոպոսութեն էր խոստա_
ցեալ նմա Նախարարացն՝ Թշնամանա
կամացն, և Ոստխասերացն։ Վն̃ որոյ՝
ինքնասիրութե̃ պատրաստեաց զկե_
զուն իւր՝ Սուսեր սատակիչ. մինչև
հրամայեաց Վռամ՝ առնուլ զթագա
ւորութին յԱրտաշրէ, և անդէն ար_
գելուլ զնա, և զամ̃ ինչս նորա ազգին՝
ունել յարքունիս։ Նոյնպէս՝ և զմեծն
Սահակ, և զտունն կաթուղիկոսական՝
ունել յարքունիս, և տալ փոխանակ
նորա՝ յաթոռ Եպիսկոպոսութեն՝ ընդ
Սորմակն զայն։ Ե՛ւ մեծապարգև ընդ
Նախարարարսն արձակեալ՝ Պարսիկ
Մարզպանաւ, որում անուն էր՝ Վեհ
միհր Շապուհ։ Բայց Սորմակայ՝ ո՛չ
տեւելի տևեալ՝ քան զմի ամ, 'ի նոցին
Նախարարացն հալածեցաւ յԱթո_
ռոյն. որ ապա՝ զիւրոյ Գաւառին զԵ

պիս

պախակապետութեան Բզնունեաց 'ի Պարսից Արքայէն եղիտ ունել ազգաւ : Իսկ՝ Նախարարքն մեր խնդրէին 'ի Վռռամայ Այլ Աթոռակալ : Եւ նա ետ ըզ Բրքիշոյ ոմն՝ Ասորի : Սա եկեալ՝ վատթար ընկերակցօք, ածեալ ընդ կիքեան կանայս անառակաւորս անժուժկալս, և անուղղօք, և յափշտակութե վախճանեցելոցն մեծակաց, վարեալ ամս՝ երիս. որում ո՛չ կարացեալ տանել Նախարարացն, դարձեալ աղաչեն զՎռամ՝ փոխել զնա, և տալ զայլ ոք՝ ըստ կամաց նոցա. և կոչեցին 'ի նոցանէ՝ զմեծն Սահակ :

Գլուխ 65.

Արշակունի 'ի Պարսից Մեծին Խոսրովայ, հանդերձ Համատէլեան Աթոռակալաւ :

Ո րպէս ասացաք՝ երկուս բաժանել Նախարարքն Հայոց. յերկաքանչիւրոցն առաքեցին՝ խնդրել Աթոռակալ յԱրքայէն Պարսից : Վաչէ՝ Արծրունեաց Տէր, և Համայեակ՝ Աշոցաց Տէր, զոր ոք՝ և կամեցի Արքայ : Իսկ Մազէն Ապահունեաց Տէր, և Սպանդարատ՝ Արշարունեաց Տէր, զՄեծն

Սահակ. նա և Զօրավարին Յուսկա
Անապատաւորայ 'ի Կարնոյ գեղջէ, Աշ-
սայ. Աղձոյ. զի եթէ' ո՛չ իցէ նոր հա-
ճոյ ամենայն յիւրում բանմնին, գրեալն
նա մասին Յուսկայ: Յիշեցին և զսո-
մութիւնս Եպիսկոպոսացն հանգերձ Ե-
րանելեաւն Մեսրոպաւ, և զովան-
ղակ Ոսկեայն՝ Եկեղեցւոյն մաղթեցին,
զՔահանայսն Տէրունի՝ զորդին Մա-
ւշակին 'ի Զարիշատէ Վանանդայ: Ա-
որոյ հաւանեալ վարդան՝ զերկաքեա-
չեւրոցն կատարեաց խնդիրս. առ կա-
յԱթոռ Եպիսկոպոսութեան զայլ ա-
Ասորի՝ Շամուէլ անուն, զի լիցի ըն-
դիմախառ նեծին Իսահակայ՝ Հայկ-
ական Աթոռ. և զործ նմա զատուցանէ
ընկերել Մարզպանին, կալ 'ի վերայ
բաշխից հարկաց խնդրեցելոց, և զա-
տաստանաց, և այլ աշխարհական կա-
ռաց. և զմեծն Սահակ արձակեալ՝ թո-
ղու 'ի նա զեօղս սակաւս 'ի Նորին Տա-
նէ, զի նստցի միայն յինքեան, եխա-
նութեն ունել միայն Վարդապետութեն
Սովորական կրօնիցն, և ձեռնադրու-
թեն զայնոցիկ՝ զորոց և Շամուէլն յա-
ձըն առնուցու: Բայց յարձակեցին զն-
յանդիմանել իւր արարեալ 'ի Բագմա-
կայս Անտենին, ասէ. երջանկացուցա-
նեմ զքեզ 'ի քոյին հաւատ, միանգա-
կալ 'ի ծառայութեն մեռամ, և ո՛չ ես-
հիւ ապստամբութեն պատրել 'ի մեղա-

Հաւատակցութեան Յունաց, և լինել պատրաստ կորստեան 'ի մէնջ Հայոց աշխարհիս, փոխել զբարերարութիւն մեր 'ի չարութիւն: Յայնժամ կանգուն կացեալ մեծին Սահակայ՝ պարկեշտ, և նախանձելի զինուքն ցուցեալ 'ի Բեմասացութեան ձեռի, համեստ հայեցուածովք, համեստապաղոյն և ձայնիւ՝ սկսաւ ճառել զերախտիս ծառայութեան. և զապերախտիս 'ի նոցանէ լինել. ընդ նմին՝ և զկեղծաւոր քաղցրաբանութիւն նոյն դիմանելով, և զդառնութիւն խորհրդոց՝ և զգործս չարաչարս. յարելով 'ի նոսին՝ զընդդիմաբանել անմիտ հայհոյութեցն արտաճառեցելոց, զոր արաց մոլար Հաւատացութե. և զնոցայն խայտառակելով զպաշտամունս՝ կատարել 'ի Հրաշալի Ընծաբանութե՛ ըստ հանդուրժելոյ հեթանոսական լսելեաց. և ո՛չ բովանդակ զբանին այս ծառայութե անհաւատիցն արկանել առաջի՝ յայտնութե, այլ զմարգարիտ 'ի խոզից կոխումն. այլ՝ այնչափ կայծակնաձանձանք ցուցեալ, որով զաղաղացան Մոգուցն լեզուք: Եւ՛ հնացեալ պակեալ խնքն Թագաւորն, և ամ բազմութե հրապարակին՝ անձնադեղացն Պարսից՝ յանձնիւ կալով ցանկանցել. մինչև հրամայեաց Վռամ արծաթ բազում տալ նմա, երբեմն Քաջարագին, և Ոժգնաւորն Սննն՝ Համարձակախօ

տողի տուայցէ Այնքանեայ Թագաւորին։ Այլ՝ նորա ո՛չ առնել առէ, ցՀա-մազդէն խոր՝ Սուրէն Պալհաւ, որ-ծաթ նի՝ նմա լեցի. բայց դու հաւա-նեցուցանես զնա՝ առ իւն զերկու-ղայս միայն. զՆախարարաց Նախարա-րացն Հայոց, ոչ կարգեալ յԱրտաշ-րէ՝ վարեցան մինչև ցայժմ, նորին այժ-նակաւ. Հրամայեաց և առ յապայ, զի մարզպանք Պարսիկք մի՝ կարասցեն ծանուցումն՝ առնս այնր առանելով ինչ դերագանցորէն՝ փոփոխել ըստ կամաց իւրեանց։ Եւ՝ միւս, զի՝ դարձուցէ զՏուն Աշդաւականի իմ, և քո՛ զման-կանն Գուրդաւոնի՝ զօրդւոյն Հրահա-ռայ. Թէ և ո՛չ յիւրում է, եւեր զԱր-շակունեաց յաջողեալ անուն, զէթ՝ ի կարգն կեցեալ՝ ընդ այլ Նախարարա-թուեացի, յորում եւեր ինքն կամե-ցի, ոչ՝ Համազինքն Կամսարականն, կամ զԱմատունին, Թափեալ՝ի հարցն պատուոյ, և յառաջամանին Գահոյէ ՚ի ստորնականայքնն։ Եւ կամ զրեթէ, իբրև զարքունի գործակալութի նմա հաւատասցէ, և նորան զաւակաց հա-մանմանակի ընտանութե. մինչև Ած քաղցրացի դարձուցանել՚ի կարգ հայ-րենի ընդ ձեռն՝ որ և է Թագաւորի։ արդ՝ ջանասջիր դու՝ Թողեալ զօրէն Համազասպեր Թովչի։ Այնմ լսող ե-ղեալ Վռամայ, հրամայէ՝ զամենայնն

կատարել . և դարձեալ՝ հաստատե-
լով զԹոռն նորա՝ զՎարդան Սորա
տեղւոյն 'ի Տէրութենէ իւրոյ ազգէն Մա
միկոնէից՝ արձակէ 'ի Հայս ։ Բայց
Թէ՝ ասիցէ ոք, պարտ է մեզ՝ զատա-
ցեալսն մեծին Իսահակայ 'ի Պարսից
Հրապարակախօսութենն գրել . գիտաս
ցէ, զի ո՛չինչ 'ի լսելիս մեր հասեալ է
բովանդակն ճշմարտութե յումեքէ, և
ո՛չ մեք 'ի Պատմութենս հիւսել հաւա
նիմք ։ Ձի և ես այր եմ ծերացեալ, և
հիւանդոտ, և անպարապ 'ի Թարգմա
նութենց, և զերկպատելն միայն խոկացի,
ո՛չինչ մաքրագունից պարապեալ բա-
նից . զի և քո կամքդ կատարեսցին,
և ես ճողոպրեցայց 'ի քոց հարկեցու-
ցանող բանից՝ և աղաչանաց . մարդ ըզ
քեզ վարկանելով՝ կամեցութե մեզ
հաւատարել . և որպէս Քերթօղքն
ասեն , Մերձազաւակք , և Մօտա-
ւերք գոլ , և Նշմաներմանք Առա-
ւածոց Իշխանք ։



Գլուխ 66.

Գործք Ղամուէլի՝ անարժան Հայոց իշխանին։

Եկեալ Ղամուէլի՝ կալաւ զԱթոռ Եպիսկոպոսութեանն, հեռացեալ վարուցն Քրիստո-նէի, և առաւել ևս ագա-հութեանն մասամբ. զի նա՝ զԱթախծա-նեալ Եպիսկոպոսացն միայն յափշտա-կեաց զԱթոռն, այլ առ՝ և զկենդա-նեացն. քանզի՝ և փոխանորդ մեւե-լոցն՝ ոչ տայր թոյլ ձեռնադրել մե-ծին Իսահակայ։ և զկենդանեացն՝ զայլն ինչ զատեալ պատճառս խափան-ման Հայրկայն Արքունի, հալածա-կանս առնէր, յինքն կորզելով զամենե-ցուն տունս։ Այս որոյ՝ անեցեալ ՚ի Թը-նաւ Եպիսկոպոսացն՝ արհամարհեալ-նէր. զի թէև ընդդիմադարձ չարիս ՚ի նմանէ կրէին, ոչ երբեք՝ չարիս ՚ի նմա-նէ կրէին, բայց ՚ի Սորմակայն յայնմա-նէ, զորոյ և մեծացոյց իւր զվիճակն՝ Արքունի Հրամանաւ, հանեալ զբազ-մաց՝ նմա հաւատայր. ընդ որ նախան-ձեալ և այլ Եպիսկոպոսացն՝ ժողովե-ցան զնոյն առնել, խնդրելով ՚ի Պապ-էից Արքայէն՝ օգնութիւն իւրաքանչիւր Իշխանաց։ Այլ՝ մեծն Իսահակ ոչ էինչ

կատարեաց՝ զհոգևոր կաթն զդպրեցուցա-
նել Մանկանց Եկեղեցւոյ՝ հանդերձ
Մեսրովբաւ, զոր թողեալ՝ խարբը
խեաց յԵկեղեցւոյն կաթուղիկէ, որ
'ի Վաղարշապատ քաղաքի. ինքն կա-
լով 'ի Բագրևանդ գաւառի 'ի տեղ-
ւոջն, ուր ծագեաց Լոյս յԵրկնից՝ 'ի
Մկրտել Սրբոյն Գրիգորի՝ զՏրդատ
Արքայ, և զբովանդակ Հայս։ Բայց՝ Շա
մուէլ կեցեալ ամս հինգ, մեռանի 'ի
մերում աշխարհիս։ Յայնժամ, 'ի միա-
սին ժողովեալ ամ̃ Նախարարացն՝ չո-
գան առ մեծն իսահակ, և զմեղանս
յանձն առեալ, աղաչէին զնա՝ դարձել̃
ունել զաթոռն. խոստանային՝ 'ի Պար-
սից Արքայէն հաստատել զնա. Մուր-
հակ ամենեցուն կնքեալ ազգաւ՝ տալ
Թղթովանց նր̃ զնոյն իշխանութի̃, այլ
նա ոչ առնոյր յանձն։ Եւ 'ի բազում
թախանձելոյ նց̃, հարկաւորեալ՝ պատ-
մեաց զտեսիլն, որ յառաջ քան զբա-
զում ժամանակս՝ երևեցաւ նմա
'ի քուն՝ ապագայցն յայտնութիւք։ Զոր
լուեալ Նախարարացն, և գիտացեալ
թէ՝ յԱծային հրամանէ դադարեաց
յԱզգէ նր̃ Քահանայապետութիւնն,
յարտասուս հարեալ՝ աւաղելով զին-
քեանս՝ ըստ Աստուածայնին բանի. Թէ՝
հարկ է գալ գայթակղութեան, բայց
վայ այնոցիկ, ը̃ որ ձեռն գայցէ գայ-
թակղութիւն. Թողլ ետուն նմա,

Գլուխ 67.

Փոխումն յաշխարհէս Մեծին Յոհաննայ՝ և Մեսրովբայ Երանելեաց։

ԶՔսան և մի ամ Թագաւորելն
Պարսից՝ Վռամ Երկրորդ,
մեռանի՝ Թողլով զՏէրութին
որդւոյ իւրում Յազկերտի.
որոյ մոռացեալ զհաշտութին, իսկ և
իսկ ընդ Թագաւորելն՝ դիմէ 'ի վերայ
Յունաց զօրուն, որք առ Մ՟ծբին.
հրամայելով Գնդին Ատրպատականի՝
'ի մեր աշխարհս ելանել. որք եկեալ՝
անկարգապէս բանակեցան առ Բագ-
նացն Աւանի։ Յայնժամ, հասեալ մե-
ծին Իսահակայ հիւանդութի մահու,
և առեալ զնա Աշակերտացն՝ տարան
'ի Գեօղն, որ կոչի Բլուր, ոչ թէ՝
'ի վայր՝ և յընտանեգոյն և 'ի զերծ տե-
տեղի մատուցեալ՝ 'ի զօրացն Պարսից՝
կատաղաց զնա, ուր և՝ եհաս վախճանն.
կեցեալ Եպիսկոպոսութի՝ ամս յի-
սուն և մի. սկսեալ յերրորդ ամի Վերջ-
նոյ Խոսրովայ Արքայի Հայոց, մին-
չև ցսկիզբն Երկրորդին ամի Յազկեր-
տի՝ Պարսից եղելոյ Թագաւորի. յելն
ամսոյն Նաւասարդի ; յաւուր իւրոյ
ծննդեանն, որ մահկանացու ծնեալ՝
անմահ զիւրն յիշատակ եթող։ Պատ-

ուեաց

ունեաց զՊատկերն․ պատկառեաց 'ի կոչնականէն․ փոխանորդեաց զԿեանս, և այնքան կենցաղաւորեաց, եթէ՝ զի՞ ո՛չ պակասութիւն երբեք մասն 'ի ծերութենէն եղանիլ, և ո՛չ առ 'ի յախտից առ 'ի յընդունիլ: Զորմէ պարտէր մեզ հրաշափառագունիւ անցանել քանիւ՝ ըստ արժանեաց Սբյ Հօրն Դրունատից, այլ զի մի՛ յերկարութիւն ճառիցս լինիցի ձանձրութիւն ընթերցողաց․ այլում տեղւոյ, և ժամանակի յայնմիկ թողցուք արտաքոյ այսոց գրոց, ուր սկզբանն հրաւիրեցաք առնել թելադրութիւն: Բայց զպատուականն մարմինն նր՝ քարձեալ Սարկաւագապետին նորին Երեմիայի՝ համդերձ Աշակերտակցօքն, և Տիկնաւն Մամիկոնէից՝ նորին Նունաւ, որում անուն էր՝ Դստիկ, կին Վարդանայ Ստրատելատի, տարեալ հանգուցին յիւրեանց Գեօղն յԱշտիշատ՝ որ է 'ի Գաւառին Տարօն: և ցրուեալ Աշակերտաց նր՝ կրօնաւորաց ապադէնից 'ի գաւառս իւրաքանչիւր, շինեցին Վանորայս: Եւ զկնի վեց անցանելոյ ամսոց՝ կատարման Սրբոյն իսահակայ․ 'ի տասն և երեքն Մեհեկանի՝ Երանելին Մեսրոբ յաշխարհէս փոխեցաւ, 'ի Վաղարշապատ Քաղաքի․ գերապանծեալ քան զամ, որք զայնր ժամանակաւ էին առաքինիք: Քանզի՝ ամբարտաւանութիւն, և մարդահաճու

թէ առ 'ի նորա վարս տեղի գտանել անձանց ոչ կարացին. այլ՝ Բագրեւանդ, եւ Հեր, եւ Երկրպագութեան զօրավ. եւ Եկեղեցեացն զարդարանէ ամփոփութեամբ՝ զինչս բովանդակ ցուցանէր։ Զի 'ի գոյր Տեառնս Հրեշտակական, Մոսէ ծննդեան դակ, Բանին Պայծառ, Գործովն ժամանակս, Մարմնով Առաքելական, Սատանայի Անձնառ, խորհրդականութեան մեծ, Հաւատով Ուղիղ, Յուսով Համբերողական, Սիրով Անկեղծաւոր, Ուսուցանելով Անհամեմատութ։ Այլ քանզի զաղալ նորա ասացուածն՝ ոչ եմ բաւական ասել. 'ի հանդիստ նորա Նշխարացն զարմանալեաց զօրան, որ լրումն 'ի քաղաքաց, եւ 'ի Հաւատալի Արանց. եւթէ՝ եկաց Նոյն Շաղապէտ է աղօտ նշան խաչի 'ի վերայ Տանն, որ Երեւեցին զՀոգին աւանդեաց. ոչ փոյթ ընդ փոյթ լեալ՝ եկաց ծառայութեան, կամ սակաւուց անտանելի, այլ՝ անմնայն բարերարութեան, մինչ շարժեց մերակն յանհնարաւոր։ Յայտնեալ, լեալ աղմուկ շփոթի ամբոխութեան, բառնանելով յերկիր գանձսն՝ փախան հանգուցանելոյ զՊարկեշտ զայն զՄարդիկն, եւ նախ քան զմահն կրելով 'ի մեռելութէ։ Կէսքն առանցին՝ առնել 'ի Բիւզանդաւանն խաղ Տարօն. եւ ոմանք 'ի Նորա Աշակերտաց Գողթն. եւ այլքն՝ անդէն 'ի նմին՝ 'ի Վաղարշապատ Քաղա

քի, 'ի Սրբոցն Գիրս: Բայց յաղթեաց
քաջն Վահան Ամատունի. զի էր Զօ
րաւոր հաւատովք, և ճոխութե՛ մարմ-
նաւորաւ. վ՟ զի՝ 'ի ժամանակին յայն-
միկ՝ նմա էր հաւատացեալ 'ի Պարսից
Հազարապետութիւն աշխարհիս Հայ
ոց: Որով քաջձեալ՝ տարաւ զնա ար
ժանի յուղարկմամբ յիւր Գեօղն Ոշա
կան. և նոյն Տեառն Ղեւոնդեան խա-
չեն 'ի վերայ երթալով Դագաղացն
յանդիման ամ՟ ժողովրդեանն, մինչև
'ի հանգիստ զնա փոխեցին Վահան, և
թաղեցին նորին Արքանեակք. և ա-
պա՝ նշանն աներևոյթ լինէր: Իսկ՝
զԱթոռ Եպիսկոպոսութեն՟ և տեղա
փոխութե՟ յաջորդեաց Հրամանաւ Ե-
րանելւոյն Մեսրոպայ՝ նորին Աշա
կերտն Յովսէփ Քահանայ՝ 'ի Վայոց
Ձորոյ, 'ի Հողոց Գեղջէ:



Գլուխ 68.

Ողբ վասն բառնալոյ Թագաւորութեան Հայոց՝ յԱզգէն Արշակունեաց, և Եպիսկոպոսապետութեան՝ յԱզգէ Սրբոյն Գրիգորի:

Ողբամ զքեզ Հայոց աշխարհ, ողբամ զքեզ՝ Հանուրց Հիւսիսականաց Վերադոյն. զի բարձաւ Թագաւոր, և Քահանայ, խորհրդական, և խրատատուն Ուսուցող. Վրդովեցաւ խաղաղութիւն. Արմատացաւ անկարգութիւն. Դղրդեցաւ Ուղղափառութիւն. Կաչկայեցաւ տգիտութեամբ Չարափառութիւն: Ողբամ քեզ՝ Եկեղեցի Հայաստանեայց, խրթնացեալ 'ի պարեզարդութենէ Բեմին. 'ի Քաջէն զրկեալ 'ի Հովուէ, և 'ի Հովուակցէ: Ո՛չ ևս տեսանեմ ըզ Բանաւոր քո Հօտ՝ 'ի վայրս դալարւոջ, և ո՛չ 'ի ջուրս հանգստեան տածեալ, և ո՛չ 'ի փարախ հաւաքեալ՝ ըզգուշանալով 'ի գայլոց. այլ՝ ցրուեալ ցանապատ, և դահավիժութեանց: Երանի առաջնոյ, և երկրորդի փոփոխմանն. զի՝ էր ինչ ժամանակ հեռանալոյ փեսային, և փեսաւորին, և Հարսնդ համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութեն պահելով, ոչ Ո՞ն նախ քան ըզ

մեզ իմաստասիրեաց ։ Դարձեալ՝ մինչ
երբեմն Ոմն սեղեխաւրար յանդգնեալ՝
յարձակեցաւ յանարատ առագաստդ,
և Հարսնդ ո՛չ աղտեղացայր ․ Թէպէտ՝
և բռնութեն զփեսայն՝ ի բաց վարեաց
որդւոց բարձրացելոց՝ անարգելով ըզ
ծնօղն ․ Համայն՝ և խորթոցն, ըստ որ
ժամանակաց՝ զօտար հայրն, և զերկամուսա
յօրայն ։ Այակայն՝ դաս և ո՛չ յայնմ ա-
մենայնի զքեզ քոլորիցն ցուցեր, զանդ-
րէն քոյոյն յուսալով զալուստն դարձ
Հովուկցաւն, ո՛չ ոչ Տագերք, այլ ոչ
նոյնազաւակ զուգահարբ զմանկունսն
փայփայեցեր ։ Իսկ յեհրդ հեռացեալս,
ո՛չ է ակնկալուն դարձի, լուծել՝ ի մարմ
նոյ ընկերաւն՝ գործակցաւնն իւր քնն լաւ
է նոյ քնակիւ և յԱբրահամեան հանգչել
՚ի գոգս, և զհրեշտակացն տեսանել պա
տուորութեն ։ Բայց՝ անհոգօղ զուս այ
րուն, և եղկելիք մեք, որք զրկեալ եմք ՚ի
Հայրենի Վերակացութենէն ։ Ջի՝ ո՛չ ոչ
՚ի Հնումեն ժողովրդեանն, այլ՝ առա
ւել մերս է Թշուառութիւն ․ վասն զի՝
Մովսէս բարձեալ լինի, և Յեսու ո՛չ
յաջորդէ՝ առաջնորդել յերկիր Աւե-
տեաց ․ Բորբոքեալ մերժեցաւ յերկնից ժո
ղովրդեանն, և փոխանորդեաց որդին
Նաքասստայ ․ և զայրն Այ ծախեաց՝
ո՛չ առիւծ, այլ կատարումն ժամանա
կի ․ Եղիա համբարձաւ, և Եղիսէոս
ո՛չ մնաց կրկին ոգւով օծանել զՅէու ․

այլև՝ Ազայեւ հրաժարեցաւ ՚ի կատա-
րել զինել. ՚ի գերութիւն վարեցաւ Մե-
ղեկլիս, և Զօրաբաբէլ ո՛չ ուրեք գոյ,
որ նորոգէ զպետութիւն. Անտիոքոս
բռնադատէ թողուլ զՕրէնս Հայրե-
նիս, և Մատաթիա ո՛չ ընդդիմանայցէ.
Պատերազմ մեզ շուրջ պաշարեաց, և
Մակաբէ ո՛չ փրկէ։ Այժմ մարտք
՚ի ներքուստ՝ և արհաւիրք արտաքուստ.
արհաւիրք ՚ի Հեթանոսաց, և մարտք
՚ի Հերձուածողաց. և խորհրդական
չէ ՚ի միջի՝ որ խրատէ, և յորդորէ ՚ի
պատերազմ։ Աւաղ զրկանացս. աւաղ
թշուառական Պատմութեանս։ Որպէս
զախտս հանդուրժեցից բերել. զիա՞րդ
զմիտս իմ, և զլեզուս պնդեցից, և հա-
տուցից զպարտս Հարցն, փոխանակ ծննդ-
եանն, և սնընդեանն. քանզի՝ ծնան
զիս խրատոնց Վարդապետութեանն, և
սնուցին զիս՝ առ այլս աճապարելով՝ ածեն
ցուցանել։ Եւ մինչ՝ նոքա զմերն յու-
սային դարձ, և պատրաստէին խնդալ
ամենախնամատ արուեստիս, և կատարե-
լագոյն յարմարութեամբ. համարին և մեք
փութայցես դիմեալք ՚ի Բիւզանդիոն,
յուսացեալք հարսանեաց պարել՝ ան-
վեհեր երգոցութեամբ, կրթեալք՝ և տա-
գաստի ասել երգս։ Արդ՝ փոխանակ
խրախճանութեան, ՚ի վերայ գերեզմանի
ողբս ասել ողորմելի հառաչեմ. ուր
և ո՛չ տեսութեան ժամանեցի, և աչացն

կատարուցման, և լսել զերկրպագին բանին,
և զօրհնութիւն ։ Աստուածաբանեաւ անձկաւ
հեղձամղձուկ եղեալ՝ փղձկիմ կարօ_
տութեամբ մերոյ Հօրն ։ Ո՞ւր է քաղցր ա_
ռաջին հանդարտութիւն առ ուղիղս, և
ախտահարութիւն առ թիւրս ։ Ո՞ւր է զու_
արթն շրթանցն ժպտութիւն՝ առ բարի ա_
շակերտացն հանդիպողութեան ։ Ո՞ւր է խելն
պատմիչ ոսկի՝ ընդ ուսնօղ աշակերտացն ։
Ո՞ւր է երկայն համբերութիւն յոյսն, և հեշ_
տացուցիչ աշխատութեանց հանգուցանօղ ։
Կորեաւ Ծաղկաքաղն. Թաքեաւ Ծիծեռնն.
Թաքեաւ Նաւահանգիստն. Եղև Օգնա
կանն. Լռեաց Ձայնն Յորդորեցու_
ցիչ ։ Ո՞վ այսուհետև զմերս յորդորե_
ցէ զուարթունս. Ո՞վ ուրախասցի ընդ ա_
ռաջադիմութեան աշակերտաց. Ո՞վ զՀայ
րենականն բարբառեսցի զուարճութիւն՝
մատուցանէ յաղթահարեն յորդորանօք. Ո՞վ
կարկեսցէ զյանդգնութիւն ընդդէմ ա_
ռողջ Վարդապետութեան հակառակ յա
րուցելոցն. որք մեծ բանիւք քահանայք,
և քաջքաջանք, յաւելուն փոփոխեն Վար
դապետս, և բաղում Գիրս. որպէս՝
առաջաց մեն 'ի Հայոցն՝ առ մեծ բանն [illegible]
[illegible] զծնուարքն. և չար արհեստակ ան
ձանց գրեն զարդարը՝ [illegible] զմեզ՝
և զարդհամարհեալն, խաբեն [illegible]
[illegible], և որ ոչ մինչ աշխատանացու առ_
նիցի արուեստ ։ Ո՞վ զնոսա ընդարձա_
նեսցէ սաստելով, և զմեզ սփոփեսցէ

գովելով, և չափ դնիցէ բանից, և լռութեան: Զմտաւ զայսոսիկ ածելով՝ Հառաչումն յիս 'ի ներքս ընթանայ, և արտօսր. և կամեցուցանէ՝ բարբառել Բան Տխրական, և Սգաւոր: Ե՞ր ո՛չ գիտեմ, եթէ զիա՞րդ յարմարեցից զողբերգութիւս, և կամ զո՛վ արտասուեցից. զՀէ՞քն իմ Սահակ, և Թագաւոր՝ զխորհրդակցութիւն ժամանակաց ազգաւ՝ 'ի բաց ընկեցիկ՝ և նախ քան զըմահուան մեռելութեան, անփառութիւն յԱթոռոյն 'ի վայր կործանեալ. Եթէ զիս ինքն. զի վերացաւ 'ի դիտացս փարթամացուցիչ Գ՛ոակն գեղեցիկ, և կենցաղօգուտ: զՀա՛յրն, և Քահանայապետ, զմիտս վերմացեալք. որ երբեմն՝ աներկատարեալ բանին, որով վարէր՝ և յարմարէր. և զերասանակ 'ի բուռն առեալ՝ ուղղէր զդէպսն, և կամ զմէսպսըն. և սահմանահարէր զնեղուս. ունայնաձայնեալս: Եթէ զիս՝ Թափուր 'ի Հոգւոյն մնացեալս խանձոր, և ցանկանեալ: զծնօղն իմ, զաղքատ վարդապետական զարդարութեան ոռոգօղ, և հեղեղաւ զամբարշտութիւն արտաքս սահմանելով: Եթէ զիս՝ եղբայրացեալ, և Թարշամեալ պասքութեամբ արբուցմանց խրատու: Զաշխարհիս եկեալ զաղէ՞տս. եթէ զապագայիցն անկնկալութեան: Ո՞վ մեզ զայսոցիկ ճառակցէ, Հաւասարելով տրտմութեա. և օգնեա

ցէ ախտակցելով ասիցս. կամ յար_
ձանս փորագրել: Զարթի՛ր, զար_
թի՛ր Երեմիա, զարթի՛ր, և ողբա՛
հանդերձ մարգարէանալով, որ ինչ
թշուառացաք, և որ ինչ թշուա_
ռանալոց եմք. գուշակեա՛ զյառնել
Հովուաց Տգիտաց. ո՜վ երբեմն Զա
քարիա Մարգարէ յԻՆի: Վարդա_
պետք՝ Տիմարք. Ինքնահաճք. անձամբ
առաքեալ պատրիս, և ո՛չ յԱՅ կոչեցեալ.
արծաթով ընտրեալ՝ և ո՛չ Հոգւով.
Ոսկեսէրք. Նախանձոտք. Թողեալ
զհեզութիւն, յորում բնակէր ԱԾ. և
Գայլք եղեալ՝ զխնքեանց Հօտս գիշա
տելով: Կրօնաւորք՝ Կեղծաւորք, Անձ
նացոյցք, Սնափառք, Պատուասէրք,
քանթէ Աստուածասէրք: Վիճակա
ւորք՝ Հպարտք, Դատարկակացք, Զր
րաբանք, Ծոյլք, Ատեցօղք արուեստ
ից, և Վարդապետական բանից, և
Սիրօղք վաճառաց, և կատակերգու_
թեց: Աշակերտք՝ Հեղգք առ 'ի յու_
սումն, և փոյթք առ 'ի վարդապետել.
որ նախ քան զտեսութիւն Ածաբանք:
Ժողովրդականք՝ Վէսք, Սնահաւատք,
Մեծախօսք, Անվաստակք, Արբե_
ցօղք, Վնասակարք, Փախչօղք 'ի ժա
ռանգութենէ: Զօրականք՝ Անարիք,
Սնապարծք, Զինատեացք, Պղերգք:
Հեշտասէրք, Անժուժկալք, Կողոպ_
տիչք, Գինարբուք, Յուզարկուք, Հա

մարտաբարք Աւազակաց : Իշխանք՝ Ապս-
տամբք՝ Գործակիցք Գողոց, Կեղեքիչք,
Կորզիչք, Ժլատք՝ և Ագահք, Ցանկա-
ցողք, Աւարառուք, Ծառայից
Համախոհից, Աղանդաւորք : Դատա-
ւորք՝ Տմարդիք, Ստողք, Խաբօղք, Կա-
շառառուք, Անընտրօղք իրաւանց, Ան-
հաստատք, Հակառակօղք . և ընդհան-
ուր Համառօտաբան՝ յամենեցունց սէր և
ամօթ : Երբ՝ ապա՝ յանդգնութիւն
այրացին զենս . Եթէ ոչ անդէն ա-
նէրս Ա՜յ, և աւուրց փոխել զընթացս
խաբեալ : Գարունն երաշտացեալ . Ա-
մառն անձրեւայոյզ . Աշուն ձմեռնա-
ցեալ . Ձմեռն սաստկակառոյց՝ մրրկա-
լից յերկարաձգեալ . Հողմք բքաբերք՝
անսասահաւարք . Ամպք Հրաշէկք, կարկ-
տաբերք . Անձրեւք անժամանակք,
և անպիտանացեալք . Օդք դառնաշունչք, և
եղեամնաբերք . Ջրոց առաւելուլ անօ-
գուտ, և նուազեալն անհնարաւոր . Երկ-
րի անպտղութիւն պտղոց, և անաճելու-
թիւն կենդանեաց : Այլ և՝ շարժմունք,
և դղրդմունք . և՛ ի վե՛ր այսոր ամենի՝ խռո-
վութիւնք յայլ կողմանց . ըստ ասելոյ, թէ
չիք խաղաղութիւն ամբարշտաց : Զի թա-
գաւորք անօրէնք եղեալ իշխեսցեն, և չարաչարս
բեռինս բառնալով ծանունս, և դըժ-
ուարակիրս . Հրամանս տալով խստակ
և անտանելիս : Վերակացուք անհաւա-
թարարք, անողորմք : Սիրելիք դաւա-

ճանեալք, և թշնամիք զօրացեալք: Հաւատ վաճառեալ ընդ սնոտի կենցաղոյս: Հէնք եկեալ անհամարք, և յոլովից կողմանց: Գերփումն տանց, և յափշտակութիւն ստացուածոց: Կապումն գլխաւորաց, և բանտք յայտնեաց: Յօտարութիւն վտարումն Ազատաց. և անթիւ նեղութիւն Ռամկաց: Առումն քաղաքաց, և քանդումն ամրոցաց: Աւերումն աւանաց, և հրդեհումն շինուածոց: Սովք անբաւք, և հիւանդութիւնք, և մահք բազմօրինակք: Աստուածպաշտութիւն մոռացեալ, և ակնկալութիւն գեհենի: Յորմէ պահեսցէ ըզմեզ Քս Ած, և զամենեսեան՝ որք երկիրպագանեն նմա ճշմարտութբ. և նմա փառք յաւիտեանս. Ամէն:

ՎԵՐՋ:

Երրեակ հատուածք սոյն Մատենի Վիպագրութե.
է Մովսէսի Խորենացւոյ Գերաւլրա ջան:
Յորս և պատմէ շփծյ քաջաց մեր նախնեաց.
առ ՚ի նոյնէ սերունդք զարմից Յաբեթեան:
Որք փերսաՔ բընկէին հայկայ զաւըխուրհս եալեան.
Մինչև յԱրշակ Արքայ հզօրդ Պարթևեան:
Որդի ընհայր ծոխանաւեալ հեփեա ջան.
բարեբախտեալ թողին զանուն յաղթողեան:


Արիութիւն · Արդարութի · Խոհեմութիւն
Լեր միշտ խոհեմ Արդարաբան
Եղցես պըսակ Արիութեան

ՀԵՏԵՒԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ:


Յորում ընձեռի՝ զՄասանց Աշ-
խարհի. և զՆշանաւոր Գաւա-
ռաց, Քաղաքաց, և Գետոց:

Արարեալ Ի Նորին Հեղինակէ Մով-
սիսէ Խորենացւոյ, Քաջիմաստ
և Յօգնահանճար Վար-
դապետէ:

Տպագրեցեալ հետեւապէս՝ Աշխա-
րհագրութեն, և Արդեամբ այնո
ցիկ, որոց Անուանքն նշա-
նակեցան 'ի յսկզբանն:



'Ի ՎԵՆԵՏԻԿ:



Հուր
Ջերմութի
Չորութի
կարելի
Հող
Օդ
Խոնաւութի
Ցրտութի
կարելի
Ջուր



ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ

Մովսէսի Խորենացւոյ։



ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐՀագրութեան՝ յԱծային գիրս ո՛չ ուրեք գտանեմք ոճով ասացեալ. այլ դոյզն ինչ՝ դո՛ւն ուրեք, և այն դժուարահաս՝ և տաժանելի։ Արդ՝ վն զի անհասք դոցա եղեալ մեզ, յարտաքինն հարկաւորիմք ձեռնարկել. որով զաշխարհագրութիւն յարմարեցին 'ի ճանապարհորդութէ՝ և 'ի նաւարկութէ, և ստուգեցին յերկրաչափութէ. և ինքն երկրաչափութիւն՝ գտաւ յաստեղաբաշխութէ։ Քանզի՝ ո՛չ եղեալ առաջին քըն խոկային, թէ ո՛րք տեղիք երկրի, ընդ որովք են կացեալք մասամբք երկնային բոլորակին. և զմեծութիւն

տունջեան և գիշերոյ ։ և զոր ՚ի վերայ
երկրի , և զոր ՚ի ներքոյ երկնից միշտ
բերելով , յայտնեն և զբնակութիւն
մարդկան . ՚Ի միջօրական գծէն զգիծն
առնելով՝ առապարիզական շաւիղ , ըստ
ճանապարհորդութեն , և ըստ նաւար-
կութեն . իմացեալ զկայանսն և զփոփո
խումն , զայլ՝ այլ ուր այլապէս երևեալ ։
Քանզի ՚ի վն այրեցածին բերրին կենդա
նատեսակքն՝ մասանեն և ծագին ։ Բայց
փոքր արջն՝ գեր ՚ի վերոյ կացեալ լինի
երկնի ՚ի հիւսիսային կողմանն՝ առապա
րի զօք հինգհարիւր և երկու հնգերեկօք ։
Եւ անդէն Թուլէս կղզի , որ մեկնէ ըզ
հիւսիսականացն , և ծանուցելոյ երկ-
րի իբրև զգետ՝ ըստ լայնութեն շաւիղ ,
ոչ ՚ի միջօրէական շրջանակին երեքհա
րիւր և վաթսունօրեկաւ բերուքն վեցհա
զարեկօք մասամբք , հինգհարիւր շա-
փուց առապարիզաց . մեծ շուրջանելու
թե ։ Իսկ ՚ի հարաւայինն՝ խառնարհէ ՚ի
սուզականն , և այլակերպ զայլսն երևե
ցուցանէ . ուր Թէոդորոս Սամոսա
ցի պատմէ զՀնդկաց . Թէ ՚ի Լիմիմեա
կանն նաւելով յերկիրն , առնելով զՏա
ռանն միջերկնեայ՝ և զԼուսնոյ ընդ մէջ
կիսուրդոյ ։ Իսկ յԱլիոյ ընդ մէջ նաւե
լով երկրականն , զՏանամիրոս առաջ՝
որ է պղոր , ՚ի նոցանէ երթեալ , և ՚ի
մէջ նր Ապոլինիկոն հնչականն . և այլ
բազում իրս ։ Եւ զցամաքեալ գօտին

բերելով ընդ մէջ տիեզերականին՝ առ ևթէօպացւոց ճանապարհորդութենէ՝ յԱկիւզէբրայ աշխարհէն. և զՏռաաոն ծայր է ձմեռնային շաւղօք՝ յաներևականն, և 'ի սուղականն կոյս ։ Քանզի և յեօթնէ նահանգէն, մինն տուեալ է հարաւային միջօրէականի գծին, և զայլ ևս վեցն 'ի նմանէ յարջայինն կոյս ։

Այսպէս, և երկու ընդային ժամս ունելով. երեք ընդ Աղէքսանդրիայ, կիսաժամաւ յառաջ մատուցեալ՝ ոմ և մ. Չորս Պոնտոս, որ է միջին նահանգացն, ըստ գնտակին յայտնութեց ։ Հինգ ընդ Հռոմ. Վեց է Կոստանդնուպօլիս. Եօթն ընդ Սկիւթիայ. և մ աշխարհաց դոցին դառեցան ։ Յորս նախ առնելի է զտիեզերաց ստորագրութիս, նմանութի երկու գնտական ստողականաւ, զկէս շրջանակին մեծի՝ ունելով հարիւր և ութսուներեք բնակութի մարդկան ։ Եւ զվերաչափութի առնելով ժամագիտականաւն, 'ի ձեռն երևելոյ Աստուորոն, և Եկիթիռոն գործարանաց. բայց կարևոր է Պտղոմեոսայ առ 'ի ցամաքաչափութի ։ Որ է Պտղոմէոս, և Կղօդէոս՝ չափեալ ասպարիզօք զամ բնակութի մարդկան. Երկայնութի յԱրևմտից սկիզբն արարեալ՝ որ է ծով անծանօթ Ովկիանոս, 'ի ծայրէ անծանօթ աշխարհին մինչև յԱրևելյեզր անծանօթ երկրի, մասունս հա-

ըմբռնութեան : Այսպէս և լայնութեան
օրինակն աստարեալ չափեցելոյ գօտւոյն՝
չափեալ զՀիւսիսային, անծանօթ ծով
և երկիր՝ մասունս վաթսունեւհինգ :
և դարձեալ յայլեալ գօտւոյն ՚ի Հա-
րաւային չափեալ յանծանօթ երկիրս, մա-
սունս տասնեւհինգ, լինի ամ լայնու-
թեն՝ մասունս ութսուն : Եւ՛ առաւել
յարգանաց կայս քան զայս՝ չէ ուրուք
զերդ երկրի ունենալ, և կամ գիտացել
ում առէ Պտղոմէոս : Այլ ծանօթ կա-
ցի երկիրդ և ամփոփման. յորս երկրագրք
բոլորականն ամէնգերբագրութեցն առնել
Պտղոմէոս Աղեքսանդրացւոյ Համառօ-
տագրոյ երկրագրութեանն : Յորմէ մեր
ծայրաքաղ արարել զմեծամեծսն և զը-
նշանաւորսն միայն. և զչափս որչա-
փութեցն, ո՛չ բաւ յատակէ երկրի, այլ
ըստ բարձրացեալ լերանց ունելութեն,
ընդ օդս անցանելով ՚ի ձեռս զօրծա-
րանաց. Նկարելով զնշոյլս արեգական
և լուսնի՝ և աստեղաց, ըստ առանց ի-
բեանց եօթն նահանգացն՝ փոփոխման
առհմանաց : Եւ՛ է սահման՝ բան կար-
ճառօտ յայտնիչ բնութեան ինքնութեան է-
րաղութեն, որ զերբքն 'ի ներքս փակէ՝ և
զայլն 'ի բացօրոշէ՝ և չափէ զմասն : Եւ՛
է մասն՝ հինգ հարիւր ասպարէզ : և Աս-
պարէզն է հետագնացութե, այսինքն
է՝ վտաւան մի : Եւ՛ է ասպարէզն բաս
օդաշափութեն՝ քայլք հարիւր. և քայլն

վեց ոտն. և ոտն վեց մատն: Մղոնն
ասպարէզ մի. իսկ ասպարիզաց ասպա
րէզն՝ հարիւր և քառասուն երեք քայլ:
և մղոնն է եօթն ասպարէզ. ոմն լինիւ
գետնաչափութեամբ՝ մղոնն հազար քայլ:
և փարսախն երեք մղոն է: Բայց օդա
չափութեամբ՝ է մասն հինգհարիւր ասպա
րէզ ՚ի լայն երկրաչափութեան, և նոյն
չափ է երկայնութիւնն չորեքկուսի.
որպէս զի լինիլ մասին եօթանասուն և
մի մղոն. չորք եօթն, քսանևութն:
Արդ՝ այս չափովս չափեցին զերկիր՝ և
զծով, ակնդետ աշխարհաւ յայտնեցելոյ
գօտւոյն՝ զոր կոչեն միջօրական գիծ.
յորում բնաւին ո՛չինչ բուսանի, յա
ղագս միշտ յաճախելոյ ընդ նմա արեգա
կանն՝ յամառնային եղանակն զեղանակ
ձմերնային փոփոխել, և անդրէն դարձել
Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոք
րագոյն քան զերկիրս զայս լինել. քան
զի՝ վեցերորդ, կամ երրորդ լինել արե
գական. զերկուս նահանգսն ասելով
բովանդակութեան արեգական, այսինքն
է՝ օթևանս քառասուն. յորմէ ըստ հեղ
ման օդոյն նրբացեալ բորբոքութեան
ասացին զայրեցականն գօտին, և ասա
և անդ: Ե՛ւ նորա զՈվկիանոս ընդ մի
ջեռլով ՚ի բնակութենէն, և հարաւային
կիսագնտին, զոր ընդդէմ երկրի կոչե
ցին, բնակելոյ երկիրս մեծութեամբ՝ ո՛չ
ըստ ոմա, այլ հիւսիսային կիսագնտին՝

զոր

զոր կոչեն գոյացեալ ։ քանզի ՚ի նմա
առացին փոքրագոյն գծագրեալ՝ վասն
անձուկ գոլոյ բոլորակին. և զդէմսն
նմանապէս ՚ի նորին հարաւային եզրն՝ զոր
կոչեն ցամաքեալ։ Եւ ոչ միայն զայրե-
ցեալ գօտեւն ասեն զովկիանոս՝ և
զամ. երկրաւն շուրջ գալ. զոր և Կղա-
տանդիոս Անտիոքացի ՚ի քրիստոնէա-
կան աւանդութեան ասէ՝ յաղագս տա-
պանակին անցելոյ՝ յարևելեան երկրէն
առ մեզ՝ ՚ի մէջս կոյս ։ Բայց Պտղո-
մէոս՝ որոյ արք բազմաշրջութեան զնմ-
տափեցին, ոչ ասեն շուրջ լինել զով-
կիանոս, այլ ՚ի միոյ կողմանէ անկեան
հիւսիսոյ արևմտից. և տարածէ յա-
րևելակոյս ընդ հիւսիսի, յերկուց մա-
սանցն՝ մասն մի ընդ արևմուտս. ՚ի հա-
րաւակոյս ՚ի չորս մասանցն, երբեք մի-
սունքն՝ որք ՚ի նմանէ սկսեալք զանծա-
նօթ երկիրէ ասէ շրջապատեալ զքնա-
կութի մարդկայինս բնութեն ։ Եւ զի-
րից ծովուցն մեծամեծաց՝ զՀնդկայնոյն
ասեմ, և զՅունականէն, և զԿասպիա-
նին ծով. և երկիր բնակութե մարդ-
կան ասէ շուրջ լինել զնոքօք, և է ծայր
մարիտ ։



Աշխարհագիր · հաւաքումն երկրորդ ։

Քանզի զՅունականաւն, և ըզ զկասբիականաւն, և մերոց իսկ արեանց պատահեցաւ շուրջ անցանել · յորոյ վարկանիմ և զՀնդկայնոյն նոյնպէս լինել ։ Եւ ո՛չ ոպ ումանք ասացին՝ Ովկիանոսի պարունակեալ զամ · այլ հաւանեալ եմ Պտղոմեայ պատմութեանն, որոյ արք՝ զայրեցեալ զօտեաւն անցին ՚ի հարաւոյ կոյս · և զազգսն զայնոսիկ ճշգրտեցին · և զսահմանս ծարակաց նոցա չափեալ՝ Յանկիզիաբերայ մինչև ՚ի լուսնի լերանն, և անդր ևս յանծանօթ երկիր ։ Եւ շուրջ նկեալ զանծանօթ երկրաւն՝ յՈվկիանոսէ մինչև ցՈվկիանոս՝ և զևս առաւելն լռեաց · զորս ո՛չ երբեք կոխեաց ոտն, և կամ ետես ակն մարդոյ · որում Ածային գրոց ՚ի ձայն գան վկայութիւք · ո՟պ Յոբ ասէ · թէ ձգեաց զհիւսիս զոչընչիւ · և եթէ՝ հրամանն պատեաց զերեսս ջուրց, այսինքն՝ եթէ հրամանն Տնրաւական է ունել զեզր ջրոց անծանօթի ծովու · ո՛չ պիտոյացեալ անցանել երկրի, և ո՛չ եզր սպառումն ածի անծանօթի երկրի պիտոյացեալ ջրոյ ։ Բայց թէ և՝ է զանծանօթ երկրաւ ծով, կամ շուրջ զանծանօթիւ՞ ծովու երկիր · մեք ո՟պ անհաս եղեալ

մտածութեանց՝ լուեմք. և դրեմք զայս միայն, զոր կոխեաց ոտն, և ետես ակն մարդոյ ։

Նորդ՝ սկսցուք ըստ Պապայ Աղէքսանդրացւոյ երկրագծութենն, որ ըստ ինքնագիր բոլորակին Կղօդիայ Պտղօմեայ ոտեղեկագրութեանցն չափուց. զոր սկըսեալ յայրեցելոյ գօտւոյն կրկնակի, և ՚ի Հիւսիսոյ ; և ՚ի Հարաւոյ ։ Բայց սկըսանի յայրեալ գօտւոյն՝ յանծանօթ երկրէն Սինեացւոց, անցանելով Է Տաբրոբանի կղզւոյ սորբոսն. և ընդ Նեղոս գետոյ վտակն, և ընդ մամ Եթէօպայս՝ ըստ Հարաւոյ կողմանէ Թէոքիմայ լերինն, որ կոչի սառուցոյ աթոռ. ընդ ձկնակեր Եթէովպայեցիսն, յանծանօթ երկիր ։ Իսկ յՈվկիանոսէ, զկողմամբք Զեփիւռոս հողմոյ սկսանի, քանակեկ մասնէ լայնութենն աձկնակերովք Եթէովպայեցովքն՝ և Թէոքիմաց լերամբք. և պատէ զարեմուտս՝ մինչև իսպառ լայնութիւն չափու. և դառնայ առ Հիւսիսի յարևելս՝ մինչև վախճանն մասն լայնութենն, որ է հանդէպ Կարկինէտեան ծոցոյն Պոնտոսի առ Քեռսոնի. և անտի յաւաղ անծանօթ երկիր ։ Եւ պատէ զմնացեալ մասունսն Հիւսիսոյ, և զարևելս, և զհարաւ՝ քսան մասն յարևելից մինչև ցնոյն Ովկիանոս. իսկ զաւելին քան զայսս

որկ՝ չէ՛ ուրուք տեսեալ, և կամ ծանուցեալ. վս՟ այնորիկ անծանօթ կոչի երկիր։ Եւ Ովկիանոս ծանօթ նաւագնացութն. և կղզիք երեք հանդէպ ներք սագոյն Լիբիոյ, որք Երանելեաց կըղզիք կոչին. և դոցա ըստ արևմտից վեց կղզի՝ այլ է. և դոցա 'ի հիւսիսային՝ չորս կղզիք հանդէպ Մօրիտանեաց, և մի ներքուցն՝ որ կոչի սեպտէ, այսինքն եօթնեակ. քանզի զեօթն մղոն ունի լայնութիւն տեղւոյն՝ որ գետաբար ելանէ յՈվկիանոսէ, և ծնանի զլուսնայ ծովն. ուրոյ յարևմտից կղզի կայ այլ մի ևս։ Իսկ Ովկիանոս երթեալ ընդ հիւսիսի, և դարձեալ ընդ արևելս՝ առնէ երկուս կղզիս մեծամեծս, որք կոչին Բրիտանացւոց աշխարհք, և զԹուղիս մեծ կղզի, որոյ հասարակն անծանօթ երկիր համարեալ է. և կղզի մի այլ՝ որ Սկանդիրէ անուանի, յորում Գութք լեալ են. և քան զայս կղզիս այլ նաւագնացութիւն չկայ, և ո՛չ հասեալ է ումն մարդոյ. վս՟ այնորիկ կոչի անծանօթ ծով։ Մտանեն և գետք քսանևմէկ՝ յարևմտէ յՈվկիանոս։

Իսկ երեք ծովք, որովք երկիր շուրջ է։ Առաջին ծով՝ Հնդկայինն. որ կոչի կարմիր ծով, յորմէ ծոցս ելանեն պարսից, և արաբացւոց ծովք. և սահմանի 'ի հարաւոյ անքնակ, և անծանօթ

երկրաւ ։ Իսկ յարեւմտից՝ Մինեցւոց աշ-
խարհաւ . եւ 'ի հիւսիսոյ՝ Հնդկօք, եւ
Պարսիւք, եւ Արաբացօք ։ Իսկ յարեւմը
տից՝ Եգիպտացօք, եւ Եթէովպացօք ։

Երկրորդ ծոցն Յունաց՝ որ ծնանի
յՈվկիանոսէ, եւ լայնացեալ ձգի մին-
չեւ յԱսորիս. եւ սահմանի յարեւելից՝ Ա-
սորօք, եւ Փիւնիկեցօք ։ Իսկ յարեւելից
Հրէաստանի՝ հարաւոյ մինչեւ յԵգիպ-
տոս ։ Իսկ յարեւելից հիւսիսոյ՝ միջեր-
րօք մինչեւ զՔաղկեդոն, յորմէ ծոցոյ
ելանէ Պոնտոսի ծոցն ։ Իսկ 'ի հիւսի-
սոյ՝ Եւրոպիւ մինչեւ զՍեպտէ ։ Իսկ 'ի
հարաւոյ՝ Լիբիւ մինչեւ ցնոյն Սեպտէ ։

Երրորդ ծովն Վրկանի, որ կոչի Կասբից
ծով . եւ ձգի երկայնութիւն նորա 'ի քերա-
նոյ Երասխայ, եւ Կուր գետոյ մինչեւ ցը
մուտս Պօղէտիւէօմէտայ գետոյ ։ Եւ
սահմանի յարեւմտից՝ Հայօք . Իսկ յարե-
ւմտից հիւսիսոյ Աղվանիւք, եւ Մասք-
թօք ։ Իսկ յարեւելից հիւսիսոյ՝ Սկիւ-
թացօք . Իսկ յարեւելից ազգաւն՝ որ կո-
չի Արիականք ամբոստակէք ։ Իսկ յարե-
ւելից հարաւոյ՝ Վրկան ծով ։ Իսկ 'ի հա-
րաւոյ՝ Մարօք, Դելփօք, եւ Դելմօք,
եւ Կասբիւք . մինչեւ 'ի մուտս Երասխայ ։

Նոյնպէս եւ չորրորդ բաժանեալ յերիս .
յԵւրոպիայ, 'ի Լիբիայ, եւ յԱսիայ . եւ
ունի զարեւմտականն հիւսիսայինն կողմանէ

Եւրո

Եփրատիս մինչև 'ի Տօնաւիս գետ։ Եւ
զարևմտականն հարաւայնով կողմամբ Լի
բեայ՝ մինչև ցկարմիր ծովն։ Իսկ այսոցիկ
սահմանաց յարևելակողմ՝ զՀիւսիս և
զՀարաւ զմէջ՝ Ասիա ունի մինչև ցանծա
նօթ երկիր. վն որոյ մեծագոյն է քան
զայլ հատուածսդ։ Իսկ միջոց ծէ բնա
կուն մարդկան Պտղոմէոս՝ զԵրջանիկն
զԱրաբիայ ասէ. բայց 'ես ո՛չ հաւա
տամ։ քանզի՝ Աւետարանն զԵրջանիկն
Արաբիայ՝ ծագս երկրի կոչէ, ուստի եկն
դշխոյն հարաւոյ։ Բայց մէջ լսի՝ որ ըզ
միաչափ հեռակացութի ունի 'ի ծայ
րիցն, և յեզերացն. և այն է յԵՀմ, ո
րում և ծմայինք գիրք վկայեն. Թէ
պէտ զչափուցն Պտղոմեայ երկայնա
տարած յարևելս կոյս։ Այլ զերկուս
չափս 'ի մի դնելով. նկարագրեսցուք
այսպէս. և հարաւայինն ութ աւելի
գայ քան զՀիւսիսայինն՝ ըստ Պտղոմէա
կանն չափուն. զոր երկու 'ի մի եդեալ,
կերպագրեսցուք զերկայնութիւն չա
փուցն, ութսունն ամբողջ պահեսցուք,
վն զի նեղ է։ Եւ զՀարիւրն կրկնեսցուք՝
լինի յքսուն, և այնպէս նմանագրեսս
ցուք։ Նոյնգունակ և ըստ հարաւոյ
յայրեցականն գօտեաւն կրկնեսցուք
զութն 'ի չորս. և բերէ ստուգապէս
զնմանութի զՊտղոմէական երկրագրու
թեանն։ Եւ արդ՝ որովհետև բովանդա
կեցաք զհամառօտակախօսութիդ. այսու

հետև սկսցուք պատմել զաշխարհս առանձինն՝ բաց յերից անդադրութեանցն Պապայ անջքանդրացւոյ ․ սկիզբն արարեալ յարևմտէ յՈվկիանոսէ, 'ի Սպանիոյ աշխարհէ ։

Ամփանօք աշխարհն Եւրոպիոյ ։

Սպանիա՝ է երեք անկիւնի իմն ձևով, կալեալ 'ի մէջ ծովուց որպէս կղզի ․ սահմանի յարևմտից, և հիւսիսոյ՝ Ովկիանոսիւ ․ իսկ յարևելից Պիւրենեայ լերամբ ․ իսկ 'ի հարաւոյ՝ Ցունաց ծովուն ։ Եւ բաժանի նա յերեք աշխարհս փոքունս ․ որք ունին զաւատս բազումս, և քաղաքս ․ զորս անուանեմք յիշատակել աշխատութիւն անշահ համարեցաք ։ Եւ ո՛չ միայն զգաւառս, և զքաղաքս, այլև խորհեցաք միայն գրել զերկիրս անուանիսն՝ և զգետս հզօրս, և զքաղաքս հռչակաւորս ․ և եթէ այլ ինչ նշանաւոր իցէ ։ Թողլով 'ի բաց զԹիւս, և զչափս, և զմանրամասնաբար պատմութիւնս ։

Որքաանանացւոց՝ որք են երկու կղզիք 'ի հիւսիսայնոյ Ովկիանոսի 'ի վերոյ կողմանէ Սպանիոյ ։ Եւ անուն յարևմտեան կղզւոյն՝ Նիուեմբաւանիա ․ և է պարեհատաձև ճղճիկէն, յորում գետք հզօրք սաւան

և վէց, և ազգք բազումք ։ Իսկ անուն արևելեայն կղզւոյն՝ Արիաւրոն, որ է մեծ քան զնա, և է աղրկանձև բազմանձիւղ · յորում գետք հզօրք քսան և հինգ, և յոյժ մեծամարք անտառք · և շուրջ զկղզեաւն մանունք կղզիք՝ քառասուն և հինգ, և Թուղիս մեծ կղզի ։

Գաղղիա՝ յարևելից կալով Սպանիոյ · և սահմանի հիւսիսոյ, և յարևմտից Ովկիանոսիւ · իսկ 'ի հարաւոյ յարևելից Յունաց ծովուն։ Ե՛ բաժանի Գաղղիա յաշխարհս չորս, յորում լերինք մեծք, և գետք հզօրք քսանևինն · և կղզիք շուրջ զիւրեաւ՝ տասնևչորս։ Ունի քաղաքս, և ազգս բազումս՝ և հզօրս, զազգն Փռանգաց ։ Լինի 'ի նմա զօմէշ ապխտակ և սպանող։

Գերմանիա, յելից կալով Գաղղիոյ առ հիւսիսային Ովկիանոսիւ՛ մինչև ցՍարմատացւոց լերինսն, և ցԴանուբ գետ, որ է Յօզու Ռուսաց · Գայ և մտանէ 'ի Պոնտոս ծովն · և սա մեծ է քան զՏօնաւիս։ Ունի Գերմանիա ազգս եօթն, յորոց մինն Գունդք ։ Ունի լերինս անուանիս երեք ։ ունի և գետս հզօրս՝ տասնևմի, և կղզիս ինն · և անտառս չորս՝ յոյժ մեծամարս · ունի և զերկաթահատութիւն ։

Դաղմատիա՝ յելից կալով Գառինթեայ, և
և առ երի Գերմանիոյ : Եւ՛ սահմա-
նի յարևմտից՝ ափամբք Դանուբայ գե-
տոյ . իսկ 'ի հիւսիսոյ և յարևելից՝ նոյն
Դանուբայ դարձուածօքն . իսկ 'ի հա-
րաւոյ՝ Յունական ծոցովն : Եւ՛ ունի Դաղ-
մատիա աշխարհս վեց , քաղաքս , և գա-
ւառս բազումս . ունի և լերինս վեց ,
և գետս քսան . և կղզիս եօթն : Եւ՛ է-
նի 'ի Դաղմատիայ գազան , որ զերգն
Բանոնոս անուն , որ ղկուն ձգէ որ-
սորդաց իւրոց , և այրէ :

Իտալիոյ՝ է յարևելից Գառինթեայ, և առ-
երի Դաղմատիոյ 'ի հիւսիսոյ կուսէ :
Եւ՛ սահմանի ը̅ն̅ արևմտից և հիւսիսոյ
Ալպաիացօք , և Ռհոսէ լերամբք . իսկ
ըստ հիւսիսոյ և յարևելից , Յունա-
կան և Ադրիանական խորշիւն . իսկ ը̅ն̅
հարաւոյ՝ Միջերկրական Պէղագոսիւն :
Եւ՛ ունի Իտալիայ աշխարհս վեց . քա-
ղաքս և գաւառս բազումս : ունի և լե-
րինս . և գետս տասնևվեց . և կղզիս
տասնևեօթն . յորոց մինն Պօնտոիայ ,
ուստի Պիղատոսն էր : Ունի և մայրա-
քաղաքս երկուս . զհոյակապն Ռովմայ ,
և զմեծն Հռօմ . Բայց են յիտալիայ և
այլք աշխարհք Կօրիկ անուն , 'ի Սիկիլիա-
նոս կղզւոջն , չորսհարիւր մղոնաւ շըր-
ջապատեալ . յորում գաւառք տասնև-
չորք , և գետք վեց , և մի Ոսկի անուն

լեառն

լեառն, ուր ոսկի, և արծաթն հատանի՝ երկրաբուսակ իբրև ծնեբեկ :

Սարդոնիա՝ է մեծ կղզի, հուպ կալով ՚ի Ակիւռնոս կղզին ընդ հարաւոյ. երկայն թուով ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւակոյս: Եւ ունի գետս չորս. և լերինս դժուարս, և ամուր տեղիս. յորում քաղաքք լինին, և գաւառք քսան, մանունք կղզիք լինին. և շրջապատութիւն Սարդոնիոյ՝ եօթնհարիւր ութսուն մղոն:



Սիկիլիա՝ է մեծ կղզի, յարևելից կալով Սարդոնիոյ կղզւոյն: Եւ է Սիկիլիա երեք անկիւնի ձևով. ՚ի ծայրէ ՚ի ծայր հարիւր մղոն: յորում գաւառք եօթն. քաղաքք լինին. գետք տասնևութն. կղզիք տասն և վեց: Լերինք երկու, և Պառթէնոս՝ յորմէ գետք բղխեն, և Բառկանոս՝ որոյ կատարն հրով առոջորի. և է Սիկիլիա յոյժ արգաւանդ:

Սարմատացւոց՝ Ե, որոյ հատուածքն յարևելից կալով Ջաղուրայ, որ է Պուլղարք Գերմանացւոց, առ Հիւսիսայն Ովկիանոսի՝ մինչև ցանծանօթ երկիր. զոր Պալաք կոչեն, և Յուպիա լեառն, յորմէ ելանէ Տանայիս գետ: Եւ ունի Սարմատիա աշխարհս փոքունս, և քրիստոնէից՝ զՔեռսոն Խրիմն, որ է ցամաք

բեւր ութեան։ Այնպէս և լայնութեն օձիցդն արարեալ շարժեցելոյ գօտւոյն՝ չափեալ զՀիւսիսին, անծանօթ ծով և երկիր՝ մասանեա վաթանութենհիւք։ և դարձեալ յայլեալ գօտւոյն ՚ի Հարաւկոյս չափեալ յանծանօթ երկիր, մասանսա տատանեհիւք, լինելյ նմ լայնութեն՝ մասնանա ութեան։ Եւ տասուել յարգասալս կոյս քան զայս՝ չէ ուրուք զեզր երկրի տեսեալ, և կամ գիտացեալ ով աւէ Պտղոմէոս։ Այլ ծանօթ կամի երկիր՝ և ամփոփանոս. յորս երկրագիր բոլորակին ափեզերագրութեցն ասէ Պապպայ Աղեքսանդրացւոյ համառօտագոյն երկրագրութեան։ Յորմէ մեր ծայրաքաղ արարեալ զմեծամեծսն և զնշանաւորսն միայն. և զչափս որչափութեանցն, ոչ քաջ յստակի երկրին, այլ բստ բարձրացեալ լերանց տեսութեն, ընդ օդս անցանելով ՚ի ձեռս դարձարանաց. նկարելով զնշոյլս արեգական և լուսնոյ՝ և աստեղաց, բստ տանց ուղեանց եօթն նահանգացն՝ փոփոխմանն ասհմանաց։ Եւ է սահման՝ բան կարճառօտ յայտնիչ բնութեն ենթակայ իրողութեն, որ զէութն ՚ի նմանէ փակէ՝ և զայլսն ՚ի բացորոշէ՝ և չափէ զմասն։ Եւ է մասն՝ հինգ հարիւր ասպարէզ։ և Ասպարէզքն է հեռաւորութեան, այսինքն է՝ վտաւանն մի։ Եւ է ասպարէզն բստ օգտակարութեն՝ քայլս հարիւր. և քայլն

վեց ոտն. և ոտն վեց մատն։ Մղոնն ասպարէզ մի. իսկ ասպարիզաց ասպարէզն՝ հարիւր և քառասուն երեք քայլ։ և մղոնն է եօթն ասպարէզ. ո՛չ լինիլ գետնաչափութեամբ՝ մղոնն հազար քայլ։ և փարսախն երեք մղոն է։ Բայց օդաչափութեամբ՝ է մասն հինգհարիւր ասպարէզ 'ի լայն երկրաչափութեան, և նոյն չափ է երկայնութիւնն չորեքկուսի. որպէս զի լինիլ մասին եօթանասուն և մի մղոն. չորք եօթն, քառնեւութն։ Արդ՝ այս չափովս չափեցին զերկիր՝ և զծով, սկիզբն առարեալ յայրեցելոյ գօտւոյն՝ զոր կոչեն միջօրականն գիծ. յորում բնաւ իւրն ո՛չինչ բուսանի, յաղագս միշտ յաճախելոյ ընմա արեգականն՝ յամառնային եղանակն զեղանակ ձմեռնային փոփոխել, և անդրէն դրձուլ ՎՃ որոյ ասացին զարեգական շատ փոքրագոյն քան զերկիրս զայս լինել. քանզի՝ վեցերորդ, կամ երրորդ լինել արեգական. զերկուս նահանգսն ասելով բովանդակութեան արեգական, այսինքն՝ է՝ օթեւանս քառասուն. յորմէ ընդ հեղձման օդոյն նրբացեալ բորբոքութեան ասացին զայրեցական գօտին, և ասա և անդ։ Եւ՛ նորա զՈվկիանոս ընդմիջելով 'ի բնակութենէն, և հարաւային կիսագնտին, զոր ընդդէմ երկրի կոչեցին, բնակելոյ երկիրս մեծութեամբ՝ ո՛չ ըստ ոմա, այլ հիւսիսային կիսագնտին

զոր կոչեն գոյացեալ ։ քանզի ՚ի նմա ատացին փոքրագոյն գծագրեալ՝ վասն անձուկ գոլոյ բոլորակին . և զդէմսն նմանապէս նորին հարաւային եզրն՝ զոր կոչեն ցամաքեալ ։ Եւ ո՛չ միայն զայրեցեալ գօտեւուն ասեն զովկիանոս՝ և զնմ՝ երկրաւն շուրջ գոլ . զոր և Կոստանդինոս Անտիոքացի ՚ի քրիստոնէական տաղագրութեն ասէ՝ յաղագս տապանակին անցելոյ՝ յարևելեան երկրէն առ մեզ՝ ՚ի մէջս կոյս ։ Բայց Պտղոմէոս՝ որոյ արք բազմաշրջութբ զնմ ստիպեցին , ո՛չ ասեն շուրջ լինիլ զովկիանոս , այլ ՚ի միոյ կողմանէ անկեան՝ հիւսիսոյ արևմտից . և տարածի յարևելակոյս ընդ հիւսիսի , յերկուց մասանցն՝ մասն մի ընդ արևմուտս . ՚ի հարաւակոյս ՚ի չորս մասանցն , երեք մասունքն՝ որք ՚ի նմանէ սկսեալք զանծանօթ երկրէ ասէ շրջապատեալ զբնակութի մարդկայինս բնութե ։ Եւ զերից ծովուցն մեծամեծաց՝ զՀնդկայնոյն ասեմ , և զՅունականէն , և զՎրկանին ծով . և երկիր բնակութի մարդկան ասէ շուրջ լինիլ զնոքօք , և է ճշմարիտ ։

Աշխարհագիր · Համառօտ երկրորդ :

ՔԱնզի զՅունականաւն, և ըզ զԿղաւդիոսականաւն, և մերոց իսկ արանց պատահեցաւ շուրջ անցանել · յորոյ վարկանիմ և զՀնդկայնոյն նոյնպէս լինել: Եւ ո՛չ ոպ ոմանք ասացին՝ Ովկիանոսի պարունակեալ զամ · այլ հաւանեալ եմ Պտղոմեայ պատմութեն, որոյ արք՝ զայրեցեալ գօտեաւն անցին ՚ի հարաւ-ւոյ կոյս · և զազգսն զայնոսիկ ճշգըրտեցին · և զանհնարին ճարակաց նոցա չափեալ՝ Յանկիզիափերայ մինչև ՚ի լուսնի լեառն, և անդր ևս յանծանօթ երկիր : Եւ շուրջ եկեալ զանծանօթ երկրաւն՝ յՈվկիանոսէ մինչև ցՈվկիանոս՝ և զեւս առաւելն լռեաց · զորս ո՛չ երբեք կոխեաց ոտն, և կամ ետես ակն մարդոյ · որում Ածային գրոց ՚ի ձայն գան վկայութիւք · ոպ Յօբ ասէ · թէ ձգեաց զհիւսիս զոչընչիւ · և եթէ՝ հրամանն պատեաց զերեսս ջուրց, այսինքն՝ եթէ հրամանն Տէրունական է ունել զեզր ջրոց անծանօթի ծովու · ո՛չ պիտոյացեալ անցանել երկրի, և ո՛չ եզր սպառուածի անծանօթի երկրի պիտոյացեալ ջրոյ: Բայց թէ և՝ է զանծանօթ երկրաւ ծով, կամ շուրջ զանծանօթիւ ծովու երկիր · մեք ոպ անհաս եղեալ

մտածութեանց՝ լուեմք. և գրեմք զայս մասին, զոր կոխեաց ոտն, և ետես ակն մարդոյ:

Նորդ՝ սկսցուք ըստ Պապայ Աղէքսանդրացւոյ երկրագծութենն, որ ըստ ինքնագիր բոլորակին Կղօդիայ Պտղոմեայ աշխարհագրութեանցն չափուց. զոր սկըսեալ յայրեցելոյ գօտւոյն կրկնակի, և 'ի Հիւսիսոյ, և 'ի Հարաւոյ: Բայց սկըսանի յայրեալ գօտէն՝ յանծանօթ երկրէն Սինեացւոց, անցանելով է Տապրոբանի կղզւոյ ստորոտն. և ընդ Նեղոս գետոյ վտակն, և ընդ ամ Եթեովպայս՝ ըստ Հարաւոյ կողմանէ Թւեռքիմայ լերինն, որ կոչի լուսածոց աթոռ. ընդ ձկնակեր Եթէովպացիսն, յանծանօթ երկիր: Իսկ յՈվկիանոսէ, զկողմամբք Զեփիւռոս հողմոյ սկսանի, քանզի մանէ լայնութիւն աձկնակերովք Եթեովպացովքն՝ և Թւեռքիմաց լերամբք. և պատէ զարևմուտս՝ մինչև իսպառ լայնութիւն չափու. և դառնայ առ Հիւսիսի յարևելս՝ մինչև վախճան մասն լայնութեան, որ է Հանդէպ Կարքինէտեան ծոցոյն Պոնտոսի առ Քեռսոնէսիւ. և անտի յառաջ անծանօթ երկիր: Եւ պատէ զմնացեալ մասունսն Հիւսիսոյ, և զարևելս, և զՀարաւ՝ քան մասն յարևելից մինչև ցնոյն Ովկիանոս. իսկ զաւելին քան զայսա

սկի

ռին՝ չէ՛ ուրուք տեսեալ, և կամ ծանու-
ցեալ. վա՛ն այնորիկ անծանօթ կոչի եր-
կիր: Եւ Ովկիանոս ծանօթ նաւագնա-
ցութեն. և կղզիք երեք հանդէպ ներքս-
սագոյն Լիբիոյ, որք Երանելեաց կըղ-
զիք կոչին. և դոցա ըստ արևմտից վեց
կղզի՝ այլ է. և դոցա 'ի հիւսիսային՝ չորս
կղզիք հանդէպ Մօրիտանեաց, և մի
նեղուցն՝ որ կոչի սեպտէ, այսինքն եօթ-
նեակ. քանզի զեօթն մղոն ունի լայնու-
թին տեղւոյն՝ որ դեռաքար ելանէ յՈվ-
կիանոսէ, և ծնանի զլյունաց ծովն. ո-
րոյ յարևմտից կղզի կայ այլ մի ևս: Իսկ
Ովկիանոս երթեալ ընդ հիւսիսի, և
դարձեալ ընդ արևելս՝ առնէ երկուս
կղզիս մեծամեծս, որք կոչին Բրիտա-
նացւոց աշխարհք, և զԹուղիս մեծ
կղզի, որոյ հասարակն անծանօթ եր-
կիր համարեալ է. և կղզի մի այլ՝ որ
Սկանդիրէ անուանի, յորում Գունթք
լեալք են. և քան զայս կղզիս այլ նաւա-
գնացութին չկայ, և ո՛չ հասեալ է ոտն
մարդոյ. վա՛ն այնորիկ կոչի անծանօթ
ծով: Մտանեն և գետք քսանևմէկ՝ յա-
րևմուտէ յՈվկիանոս:

Իսկ երեք ծովք, որովք երկիր շուրջ
է: Առաջին ծով՝ Հնդկայինն. որ կո-
չի կարմիր ծով, յորմէ ծոցք ելանեն
պարսից, և արաբացւոց ծովք. և սահ-
մանի 'ի հարաւոյ անքնակ, և անծանօթ

երկրաւ։ Իսկ յարեւմտից՝ Միջնեցւոց աշխարհաւ. եւ 'ի հիւսիսոյ՝ Հնդկօք, եւ Պարսիւք, եւ Արաբացօք։ Իսկ յարեւմտից՝ Եգիպտացօք, եւ Եթէովպացօք։

Երկրորդ ծովն Ցունաց՝ որ ծնանի յՈվկիանոսէ, եւ լայնացեալ ձգի մինչեւ յԱսորիս. եւ սահմանի յարեւելից՝ Ասորօք, եւ Փիւնիկեցօք։ Իսկ յարեւելից Հրէաստանի հարաւոյ մինչեւ յԵգիպտոս։ Իսկ յարեւելից հիւսիսոյ՝ միջերրօք մինչեւ ցՔաղկեդոն, յորմէ ծոցոյ ելանէ Պոնտոսի ծովն։ Իսկ 'ի հիւսիսոյ՝ Եւրոպիւ մինչեւ ցՍեպտէ։ Իսկ 'ի հարաւոյ՝ Լիբիիւ մինչեւ ցնոյն Սեպտէ։

Երրորդ ծովն Վրկանի, որ կոչի Կասբից ծով. եւ ձգի երկայնութիւն նա 'ի բերանոյ Երասխայ, եւ Կուր գետոյ մինչեւ ցբմուտս Պօղէտիմէտայ գետոյ։ Եւ սահմանի յարեւմտից՝ Հայօք. իսկ յարեւմտից հիւսիսոյ Աղուանիւք, եւ Մասքթօք։ Իսկ յարեւելից հիւսիսոյ՝ Սկիւթացօք. իսկ յարեւելից ազգաւն՝ որ կոչի Արիականք ամբաստանկէք։ Իսկ յարեւելից հարաւոյ՝ Վրկան ծով։ Իսկ 'ի հարաւոյ՝ Մարօք, Դելփօք, եւ Դելմօք, եւ Կասբիւք. մինչեւ 'ի մուտս Երասխայ։

Նոյնպէս եւ զերկիր բաժանեն յերիս. յԵւրոպիա, 'ի Լիբիա, եւ յԱսիա. եւ ունի զարեւմտակն հիւսիսային կողմանէ

Եւ՛ րոպիա մինչև 'ի Տմնաւիս գետ։ Եւ՛ զարևմտականն հարաւայնով կողմամբ Լիբիայ՝ մինչև ցկարմիր ծովն։ Իսկ այսորցիկ սահմանաց յարևելակողմ՝ զհիւսիս և զհարաւ զմէջ՝ Ասիա ունի մինչև ցանծանօթ երկիր. վ՟ն որոյ մեծագոյն է քան զայլ հատուածսդ։ Իսկ միջոց ծի՛ բնակութ՟ն մարդկան Պտղոմէոս՝ զԵրջանիկն զԱրաբիայ ասէ. բայց 'ես ո՛չ հաւատամ։ քանզի՝ Աւետարանն զԵրջանիկն Արաբիայ՝ ծագս երկրի կոչէ, ուստի եկն դշխոյն հարաւոյ։ Բայց մէջ լսի՝ որ ըզ միաչափ հեռակացութ՟ն ունի 'ի ծայրիցն, և յեզերացն. և այն է յԵդեմ, որում և ամենայնք գիրք վկայեն. թէպէտ զչափուցն Պտղոմեայ երկայնատարած յարևելս կոյս։ Այլ զերկուս չափս 'ի մի դնելով. նկարագրեսցուք այսպէս. և հարաւայինն ութ աւելի գայ քան զհիւսիսայինն՝ ըստ Պտղոմէական չափուն. զոր երկու 'ի մի եդեալ, կերպագրեսցուք զերկայնութիւն չափուցն, ութսուն ամբողջ պահեսցուք, վ՟ն զի նեղ է։ և զհարիւրն կրկնեսցուք՝ լինի յիսուն, և այնպէս նմանագրեսցուք։ Նոյնգունակ և ըստ հարաւոյ յայրեցականն գօտեաւն կրկնեսցուք զութն 'ի չորս. և բերէ ստուգապէս զնմանութ՟ն զՊտղոմէական երկրագրութեանն։ Եւ՛ արդ՝ որովհետև բովանդակեցաք զհասարակախօսութիւնդ. այսու

հեռու սկսցուք պատմել զաշխարհս ա-
նձինն՝ քան զկէս տեղագրութեանցն Գա-
ղիայ ամ̃էքանդբացւոյ ։ սկիզբն արա-
րեալ յարեւմտէ յՈվկիանոսէ, 'ի Սպա-
նիոյ աշխարհէ ։

Ամփանօր աշխարհն Եւրոպիոյ ։

Սպանիա՝ է երեք անկիւնի իմն
ձեւով, կալով 'ի մէջ ծովուց
որպէս կղզի ։ սահմանի յա-
րեւմտից, եւ հիւսիսոյ՝ Ովկ-
կիանոսիւ ։ իսկ յարեւելից Պիրենէ-
նէ լերամբ ։ իսկ 'ի հարաւոյ՝ Յու-
նաց ծովուն ։ Ե՞ւ բաժանի նա յե-
րիս աշխարհս փոքունս ։ որք ունին
զաւառս բազումս, եւ քաղաքս ։ զորս
անուանք յիշատակել աշխատութիւն
անչափ համարեցաք ։ Ե՞ւ ո՛չ միայն
զգաւառս, եւ զքաղաքս, այլեւ խորհե-
ցաք միայն գրել զերկրին անուանսն՝ եւ
զգետս հզօրս, եւ զքաղաքս հոյակապս ։
եւ եթէ այլ ինչ նշանաւոր իցէ ։ Թող-
լով 'ի բաց զթիւս, եւ զչափս, եւ զման-
րամասնաբար պատմութիւնս ։

Բրիտանացւոց՝ որք են երկու կղզիք
'ի հիւսիսայնոյ Ովկիանոսի 'ի վերոյ կող-
մանէ Սպանիոյ ։ Ե՞ւ անուն յարեւմտեան
կղզւոյն՝ Հիբեռնիա ։ եւ է պարեհա-
տաձեւ ձղձկէն, յորում գետք հզօրք տամն

և վեց, և ազգք բազումք: Իսկ անուն արևելեայն կղզւոյն՝ Արիուրոն, որ է մեծ քան զնա, և է ազրկաձև բազմանկիւն. յորում գետք հզօրք քսան և հինգ, և յոյժ մեծամեծ անտառք. և շուրջ զկղզեաւն մանունք կղզիք՝ քառասուն և հինգ, և Թուղիս մեծ կղզի:

Գաղղիա՝ յարևելից կալով սպանիոյ. և սահմանի հիւսիսոյ, և յարևմտից Ովկիանոսիւ. իսկ 'ի հարաւոյ յարևելից Յունաց ծովուն: Եւ բաժանի Գաղղիա յաշխարհս չորս, յորում լերինք մեծք, և գետք հզօրք քսանևհինգ. և կղզիք շուրջ զիւրեաւ՝ տասնևչորս: Ունի քաղաքս, և ազգս բազումս՝ և հզօրս, զազգն Փռանգաց: Լինի 'ի նմա գօմէշ սպիտակ և սպանօղ:

Գերմանիա, յելից կալով Գաղղիոյ առ հիւսիսային Ովկիանոսիւ՝ մինչև ցՍարմատացւոց լերինսն, և ցԴանոբ գետ, որ է Յօղու Ռուսաց. Գայ և մտանէ 'ի Պոնտոս ծովն. և սա մեծ է քան զՏօնաւիս: Ունի Գերմանիա ազգս եօթն, յորոց մինն Գունդք: Ունի լերինս անուանիս երեք: ունի և գետս հզօրս՝ տասնևմի, և կղզիս ինն. և անտառս չորս՝ յոյժ մեծամեծս. ունի և զերկաթակորութիւն:

Դաղմատիա՝ յելից կողմ Գաղղիոյ, և առ երի Գերմանիոյ: Ե՞ւ սահմանի յարևմտից՝ ակամբք Դուանոբայ գետոյ. իսկ 'ի հիւսիսոյ և յարևելից՝ նոյն Դուանոբայ դարձուածօքն. իսկ 'ի հարաւոյ՝ Յունիան ծոցովն: Ե՞ւ ունի Դաղմատիա աշխարհս վեց, քաղաքս, և գաւառս բազումս. ունի և լերինս վեց, և գետս քսան. և կղզիս եօթն: Ե՞ւ լինի 'ի Դաղմատիայ գաւառն, ամ̄ զեղն Բանոնեա անուն, որ ղկուն ձգէ որսորդաց իւրոց, և այրէ:

Իտալիայ՝ է յարևելից Գաղղիոյ, և առ երի Դաղմատիոյ 'ի հիւսիսոյ կուսէ: Ե՞ւ սահմանի ընդ արևմտից և հիւսիսոյ Ալպաիացօք, և Ռէկուէ լերամբք. իսկ ընդ հիւսիսոյ և յարևելից, Յունական և Ադրիանական ծովովն. իսկ ընդ հարաւոյ՝ Միջերկնական Պերդագօսին: Ե՞ւ ունի Իտալիայ աշխարհս վեց. քաղաքս և գաւառս բազումս: ունի և լերինս. և գետս տասնևվեց. և կղզիս տասնևեօթն. յորոց մինն Պոնտոսայ, ուստի Պիղատոսն էր: Ունի և մայրաքաղաքս երկուս. զՀռոմայեցւոյն Հռոմայ, և զմեծն Հռովմ. Բայց են յիտալիայ և այլք աշխարհք Կորսիկ անուն, 'ի Սկիւնոս կղզւոջն, չորսհարիւր մղոնաւ շըրջապատելով. յորում գաւառք տասնև չորք, և գետք վեց, և մի Ոսկի անուն

լեառն, ուր ոսկի, և արծաթն հատանի՝ երկրաբերուսակ իբրև ծներբեկ:

Սարդոնիա՝ է մեծ կղզի, հուպ կալով ՚ի Սկիւռնոս կղզին ընդ հարաւոյ. եր կայն թևով ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւկոյս: Ե՛ւ ունի գետս չորս. և լերինս դըժ ուարս, և ամուր տեղիս. յորում քաղաքք լինին, և գաւառք քսան, մանունք կղզիք լինին. և շրջապատութիւն Սարդոնիոյ՝ եօթնհարիւր ութսուն մղոն:

Սիկիլիա՝ է մեծ կղզի, յարևելից կողմ Սարդոնիոյ կղզւոյն. Ե՛ւ է Սիկիլիա երեք անկիւնի ձևով. ՚ի ծայրէ ՚ի ծայր հարիւր մղոն: յորում գաւառք եօթն. քաղաքք լինին. գետք տասնևութն. կղզիք տասն և վեց: Լերինք երկու, և Պառթենոս՝ յորմէ գետք բղխին, և Բուռկանոս՝ որոյ կատարն հրով տոչորի. և է Սիկիլիա յոյժ արդաւանդ:

Սարմատացւոց՝ Ե, որոյ հատարածին յարևելից կողմ Զաղուրայ, որ է Պուլղարք Գերմանացւոց, առ Հիւսիսային Ովկիանոսիւ՝ մինչև ցանծանօթ երկիր. զոր Պալաք կոչեն, և Ցուլիա լեառն, յորմէ ելանէ Տօնաւիս գետ: Ե՛ւ ունի Սարմատիս աշխարհս փոքունս, և քրիստոնէից՝ զՔետաոն խորին, որ է ցամաք

կղզի. և 'ի հեթանոսաց բազմամբ: Ունի լերինս հինգ. գետս տասնևերկու. փոքր լիճ մի. և կղզիս երկուս: Ունի և քաղաքս երկուս; մինն կոչի Աղեքսանդրու, և միւսն Կեդարու:

Թրակացւոց աշխարհն՝ յարևելից կալով Դալմատիոյ: Ե՛ւ ունի Թրակիոյ փոքր աշխարհս հինգ, և մի մեծ. յորում են Մակեդոնացւոց ազգք՝ քսան և հինգ. որոց փոխանակ մտին Գաւառք: Ունի լերինս, և գետս՝ և քաղաքս՝ և կղզիս՝ և լիճս. և մայրաքաղաք զերջանիկն Կոստանդնուպօլիս:

Մակեդոնիայ՝ ելից կալով Յունականն Պիղապոնիսն, առ երի Դալմատիոյ և Թրակիոյ, 'ի հարաւ թողլով զԵլլադայ: Ե՛ւ ունի Մակեդոնիայ լերինս վեց. և գետս չորս. գաւառս երեսուն. քաղաքս տասնևեօթն. ծովս երեք. կղզիս չորս: Ե՛ւ լինի 'ի Մակեդոնիայ՝ Մարմարիօն կանաչ՝ սպիտակախայտ:

Ելլադայ՝ առ երի կալով Մակեդոնիոյ՝ 'ի մէջ Պիղապոնացն: Ե՛ւ ունի Ելլադայ փոքր աշխարհս վեց. զԵպիռուզ. զԱքայիայ. զԱտտիկէ. զԵւբիայ զապառաժ. զԿրիտէս մեծ կղզի. և Սպելոպոնիսոս ցամաք կղզի: Ունի

լերինս, և գետս, և գաւառս, և քա-
ղաքս, և կղզիս բազում յոյժ ։ Ունի և
մեհեանս երիս, զԻռայ (զհրէ) և զԱր
տեմիս, և զՊօնեդոնաս. ունի և մայրա
քաղաք զհոյակապն՝ զԱթէնս. ունի
և ջուրս ՚ի կղզւոջն զՍ՚իւռս, որ ան-
պատճառ այսր անդր հոսի, ուր խո-
րասոյզ եղև Արիստոտէլ ։

Աշխարհ Լիբէացւոց ունին ։

Առաջինն է՝ որ է, Ուինկուրու-
րա Մօրիտանիայ Տինգա-
նի, տարածի ՚ի Սեպտէէ առ
հարաւակողմն արևմտեայ Ով-
կիանոսի ։ Եւ՛ ունի Մօրիտանիայ՝ լե-
րինս վեց. գետս տասնևերեք. ազգս
տասնևվեց. և զՊռանիոն, որ է հրա
գայն դաշտ ։ Մ՚օրատատռնիայի Կիա-
ռայն Իաայն, յելից կալով Տիգոնուոյ՝
և տարածանի ՚ի հարաւակողմն՝ առ ՚ի
Ըեղղելէօք ։ Եւ՛ ունի գետս տասն և
եօթն, և փոքր լերինս երեք, և լերինս
հինգ. և քաղաքս բազում, և գաւառս
քսանևհինգ, և զպղնձափորանոց եր-
կերն ։ Լինի ՚ի լերինս այսմիկ՝ ընտիր Տի
նաքարուխս. այսինքն է՝ դեղ կարմիր ։

Ափրիկէ՝ յելից կալով Մօրիտանիոյ
առ ծովեզերբն ։ Եւ՛ բաժանի Ափրիկէ
յերկուս աշխարհս. և մի այլ առանձ

նակի, որ Տրապօզիտ անուանի ։ Ե՛ւ ու-նի Ամերիկէ լերինս ութն․ գետս տասն և ինն․ գաւառս քառասուն և մի․ լիճս ութն․ ծովս եօթն․ կղզիս տասն և վեց․ և քաղաքս բազումս․ և զԵրար-կեղոնիայ մայրաքաղաք ։ Լինի յԱմե-րիկէ՝ բանջար ինչ Լոսատա անուն․ զոր եթէ ոք ուտէ, զՀայրենիս մոռանայ․ լինի անդ և կարմիր յակինթ՝ և եղանա․ լինի անդ Ոսկեայն՝ քոյս փայլուն ՚ի ծովն, որ ելեալ յարեւէ յօդ՝ կարծես ցեալ քարանայ ։

Աբիսինականն, որ է Պենտապօլիս՝ յելից կողմն Ափրիկոյ յերի ծովե-զեր ։ Ե՛ւ ունի Պենտապօլիս՝ գաւառս տասն և հինգ․ և գետս երեք․ և լիճ մի․ կղզիս երկու․ և քաղաքս բազումս, և Հերակլեայն լերինս․ և զԱնդաբեր երկիրն․ և տեղիս ինչ Նորակերպս գա-զանսուտս․ և զԵրեկորնական պարտէզ-սն․ և քարայրս Լակինեցւոց ։

Մարմարական Լիբէա՝ և նմ Եգիպ-տոս, յելից կողմն Կիւրենական ծին՝ և առ երի ծովեզերն յարեւմտէ՝ խորշ երկ-ճրղի կորմբր ծովունն․ և ունի Եգիպտոս լե-րինս տասն և երկու․ և գուբս երկուշէ-նուածոյս․ և լիճս երեք ինքնեղս․ և ե-րեք լիճք այլք՝ զորս Նեղոսի վտակքն առնեն․ և գետ ունի զՆեղոս, որ է

Պեհճոն: ունի և գաւառս քառասուն և մի. և քաղաքս բազումս. և մայրաքաղաք՝ զմեծն Աղեքսանդրիայ: Ունի և կղզիս ՚ի Յունաց ծովուն՝ տասն և մի. և ՚ի Կարմիր ծովուն՝ երեք. ունի և զաւազուտ, և զանանձրև երկիրն:

Ենտոս Լիբէ, որ թարգմանի Ներքսագոյն Լիբէ, յելից կալեալ արևմտակողմն Ովկիանոսի՝ յերբ կալեալ Աֆրիկոյ. և սահմանի Ներքսագոյն Եթէովպաւ առ այրեցեալ գօտեաւն: Եւ ունի Ենտոս Լիբէ՝ լերինս ութն. գետս քըսան և մէկ. լիճս վեց. կղզիս տասն և երեք: Եւ ծարակեն Ենտոս Լիբէ՝ ազգք տասն և վեց: լինին և թզուկք՝ մօտ Ովկիանոսի ՚ի Սպիտակ լերինն: Անցանեն ընդ Ենտոս Լիբիայ՝ և Թինկեղջերք գազանք յՈվկիանոսէ ՚ի Նեղոս. ուր կոկորդիլոս գազանն, և այլք գազանք՝ անցանեն ընդ Ենտոս Լիբիա, որք կոչին Նափինթք. մարդակերպք են և գինէսէրք:

Վերինն Եթէովպիա՝ յերբ կալեալ Ենտոս Լիբիոյ, և վերնոյն Եգիպտոսի առ Կարմիր ծովուն, անցանելով զայրեցելով գօտեաւն ՚ի հարաւակողմս առ Ներքսագոյն Եթէովպացօքն՝ ցսոյն սահման Ենտոս Լիբիոյ: Եւ ունի Եթէովպիա փոքր աշխարհս երեք. զԲնաւ-

բառ

բռանայ, և զԱզանեայ, և զԱռմօլօղս յերկիկէ. և գաւառս ազգաց երեսունև վեց: ունի և գետս երեք. և լերինս տասն. ունի և կղզիս յԱրաբացւոց ծոցին՝ քսանև հինգ: և ունի զՇմանաբեր երկիր, և զԽնկաբեր, և զԿինամոմոնաբեր գաւառսն:

Ներքին Եթէովպիայ՝ սկսանի յարևմըտականն անծանօթ երկրէ, յերի կալով Ովկիանոսն, և Ենոսս Լիբիոյ. և 'ի հարաւայ սահմանի անծանօթ երկրաւ. առ որով բնակեալ են Երէկորնականն քըն Եթէովպայեցիք՝ 'ի հարաւայ այրեցելոյ գօտւոյ կողմանէ, մերկք, վեշապամարտք: Եւ յերի նոցա ըստ հիւսիսոյ առ Ովկիանոսին՝ ձկնակեր Եթէօպացիքն. յորում կենդանի ինչ՝ Տուբուռ անուն, աշխարհանման՝ երկակենցաղ՝ և ձկնակեր: Առ որով Սեթակենք Եթէովպացիք. յորում առիւծաշուն գազանն: Որոյ ըստ հիւսիսոյ յերի՝ Եղջերք Եթէովպացիք, յորում կենդանի ինչ՝ նման Ջանալութոյ, մարդամարտն, և անուշահոտ: Առ որով Գետրայիկէ, և Գերմունայք. յորում աղծառաւաերք՝ մարդամարտք՝ ընձուղտք: Որոց 'ի հարաւոյ մինչև ցՆեղոս աշխարհ մի Եթէովպացւոց, յորում Փիղք սպիտակք. Եղջերակնձիթք, և Վագերք. յորոց յարևելից լերինն՝ յորում Վագերաձիք,

և

և Աշտամարդք, և Ինձք գեղեցկախայ_
տուցք։ Եւ՛ սոցա 'ի Հարաւոյ՝ աշխարհ
մի առ անձանօթ երկրաւ. յորում է
գազան ինչ՝ կանացի ունելով զգլուխ
և ձեռս, և զանձն չորքոտանի. այլ մար_
դակերպք ինչ մերկ գազան շանակնճիթ՝
և մեծականջ, ագեօք՝ ոտս զառիւծա_
կապիկ։ Որոց յետոյ՝ բարձրագագա_
թունք Եթեօպացիք, և այլք՝ մինչև
ցլուսնի լեառն. յորում լինին քօշք որ_
պիտանիք՝ զօրաւորք՝ և բռնաւորք. ո_
րոց յետոյ կուսէ՝ Գարամացիք, և 'ի ներ_
քոյ սոցա՝ մարդակեր Եթեօպացիք. յո_
րում գազան ինչ՝ հրաշունչ՝ վարազա_
նման. և Սաղամանդր գազան, որ նը_
ման է կովիդիեցի. անցանէ ընդ հուր՝
և շիջուցանէ զնա։

Աշխարհ ընդհանուր Ասիացւոց։

ԱՌաջին բաժին երկրի՝ ընդհա_
նուր Ասիա է։ և ունի կող_
մունս. և նախ զկողմն մի_
ջերկրայս, որք մտանեն ընդ
մէջ Յունաց ծովուն, և Պոնտոսի։

Բիւթանիայ, յետոյ կալով Թագաւո_
րական քաղաքին Կոստանդինուպօլսի.
և ունի Բիւթանիայ՝ լերինս, և գետս,
և լիճս, և կղզիս. ունի և մայրաքա_
ղաքս մեծամեծս երեք՝ զՆիկիայ. ըզ

Քաղկեդոն . զՆիկոմիդեայ՝ որք ունին ընդ իւրեանս քաղաքս տասն և երեք . և զգիւղաքաղաքս ծովեզերեայս, և վաճառատեղիս : Լինի և 'ի Բիւթանիայ Հող ապիտակ, զոր մանր աղացեալ և ցանեալ 'ի քանդուկս 'ի վերայ ցորենոյ , ճճի ո՛չ ուտէ :

Միւսիայ՝ որ կոչի Ելլիսպոնտոս , առընթեր կալով Բիւթանիայ . և ունի Միւսիայ՝ լերինս երեք . գետս հինգ . կղզիս երկու . քաղաքս քառասուն և մեկ . և մայրաքաղաք ծովեզերեայ՝ զԿիզիկոն, յորում տաճարն է Աստուծոյ անուանեալ Հրաշից :

Ասիա առանձնակի՝ յերի կալով Միւսոյ առ ծովուն . և ունի Ասիա փոքր աշխարհս չորս . զԼիդիայ . զԵւոլիս . (զԷօլէոյ) զՅոնիա . զԿարիայ : Ունի Ասիա լերինս եօթն . կղզիս տասն . գետս եօթն . քաղաքս տասն և հինգ . և Մայրաքաղաք զԵփեսոս , և այլ ևս մեց : Եւ լինի յԱսիայ Մաղնաքէ՛ իւր մէ ծառոց :

Լիկիա՝ յեզերց կալով Ասիոյ : և ունի Լիկիայ լերինս երկու . գետս երեք . կղզիս հինգ . քաղաքս երիս . և մայրաքաղաք՝ զՄիւռնիայ . և լինի Լիկիայ խունկ Ջիւզգին , և Տրամէ . 'ի ծառոյ

ծովելոյ՝ որպէս զխիժ, լոյծ ոսկ̃ մեղր, և որպէս մքուր:

Փռիւգիայ՝ յելից կալով առանձնականն Ասիոյ՝ յերի Լիկիոյ: և ունի յինքեան Փռիւգիա աշխարհս երիս. զՊիտինիայ՝ որ ունի մայրաքաղաք զՆիկոմիդիայ, ուր ասեն շինեալ զտապանն Նոյի, և այլ քաղաքս քսան և վեց: Նաև՝ յորոց մայրաքաղաք Լաւոդիկիայ, և այլք քաղաքք փառաւորք, և աշխարհք երեք: Մաքսւսալիայ. որոց Մայրաքաղաք Սեղոնիա. և այլ քաղաքք երեսունք: Եւ ունի լեառն զԴիդիոն. և գետս հինգ. և լիճս տասն և չորս. և դաշտս մեծամեծս:

Ոնորիա՝ յելից կալով Բիւթանիոյ. և առ երի Փռիւգիոյ, մինչև ցՊոնտոսի ծովն: Եւ ունի Ոնորայ՝ մայրաքաղաքս զԿղօդիուպօլիս. ընդ որում այլ քաղաքք հինգ. և գետ ունի զՊարթենիոս զերիք վտակեան. յայնմ աղբեր երդնուին դևք՝ վասն այնչափ ցրտութեանն:

Պափղագոնիայ՝ յելից կալով Ոնորիոյ աշխարհին, որ է 'ի ծովուն Պոնտոսի: ունի գետս երկու. և մայրաքաղաք զԳերմանուպօլիս. որոյ բերդն Գանգր. և քաղաքս հինգ. և բեր-

դըս

ղըս տասն և մի. գաւառս վաթսուն և մէկ:

Գաղատիոյ առաջինն՝ յելից կալով Փռիւգիոյ, և առ երի Պամփիղագոնիոյ. և լեառն ունի զերկրորդ Ոլիդէմոն. և գետ Ջինոն, որ յառաջասացեալ աշխարհս թափի:

Գաղատիոյ երկրորդ՝ յելից կալով Փըռիւգիոյ. և առ երի առաջնոյ Գաղատիոյ, մինչև 'ի Պամփիւլիայ: Ունի լերինս, և գետս մանունս, որք յառաջացեալ գետն անկանին, և որք ընդ լըճս առնեն:

Պամփիւլիայ՝ յելից կալով Լիկիոյ, և առ երի Գաղմատիոյ, ունի յինքեան աշխարհս փոքունս հինգ. և լեառն մէկ. գետս երեք. և կղզիս երկու. և քաղաքս: Լինի 'ի սմա խունկ Տիւռակիթոյ՝ 'ի փորոյ կերածոյ ճիճոյ:

Սօրիայ՝ յելից կալով Պամփիւլիոյ, առ երի ծովուն հանդէպ Կիպրոս կղզւոյ. և ունի լեառն զՏօրոս: Եւ գետս ընդ Ոիմադոս. և է 'ի նմա մայրաքաղաք Սելևկիա. և այլ քաղաքք քսան և չորս. և լինի յայսմիկ խունկ դիւրակոճապս Ոպոդոմփիւտ, Կաղամբի. ամենեքեան 'ի ծառոյ ծորելոյ 'ի ճճոյ միոյ կերուածոյ:

Լիկոնիա՝ յելից կալով Գաղատիոյ, և առ երի Սօրիոյ, ունելով զտարածումն իւր 'ի դաշտս ընդարձակս ․ և զնոյն գետ ․ և լերինս փոքունս ․ և լիճս երեք ։

Կապադովկիայ երկրորդ, յելից կալով Գաղատիոյ, և առ երի Լիկոնիոյ ․ ունելով լերինս մանունս, և գետս ․ և լայնութեն տարածել 'ի դաշտս արձակս ։

Ելինոպոնտոս, յելից կալով Պամփի ղագոնիոյ, և առ երի Կապադովկիոյ՝ և ծովու ․ ունի լերինս փոքունս բազումս ․ և գետս Հզօրս, և Նիւռիս ․ և այլ մանունս ։

Կապադովկիայ առաջին, յելից կալով երկրորդ Կապադովկիոյ, և առ երի Պօլիմոնականն Պոնտոսին ։ Ունի լեառն զԱնտիտօրոս, և այլս փոքունս ․ և գետս՝ զՄեղոս, և զԱլիս ։

Պոնտոս Պելիմոնական, յելից կալով Ելինոպոնտոսի, առ երի Պոնտոսի ծովու ․ ունի լերինս փոքունս և դժուարավայրս ․ և գետս զԹոռմոնոս, և այլ մանունս ։

Կիլիկէ ա̄ ինքեան առաջին և երկրորդ՝ յելից կալով Լիկոնիոյ, և Սօրիոյ՝ յերի

Կա

Կապադովկիոյ առաջնոյ ։ լեառն ունի զՏօրոս ․ և գետս վեց ․ և մայրաքաղաքս երկու՝ զՏարսոն, և զԱնարզաբայ ; և այլ քաղաքս բազումս ․ և բերդս երեքհարիւր վաթսուն և հինգ ․ և դրունս երկու՝ ելանելոյ ասորեաց ։ Եւ է Կիլիկէ՝ ամենաբեր, հանգոյն երկրին յորդանանու ։

Կիպրոս կղզի՝ յելից կալով Պամփիւլիական Պիդագոսին՝ առ երի Սօրիոյ, և Կիլիկիոյ․՝ և ունի Կիպրոս լեառն զՈւեմպօս․ և գետս երեք ։ Լինի 'ի նմա Աղանգանայն 'ի ցօղոյ անկեալ զխոտով կռուի․ թափիչ մարոցս՝ և մօրուս քօշից ։ Եւ ունի Կիպրոս զատահմանս իւր յերկայն մասունս երեքհարիւր երեսուն մղոն․ իսկ 'ի լայնն՝ մասն մի ։

Հայք՝ յելից կալով Լիկիոյ առ Տօրոս լերամբ․ և ունի լերինս երիս․ գետս չորս ։ և դրունս երկուս՝ ելանելոյ Ասորւոց ։

Առաջին Հայք՝ յելից կալով առաջնոյ Կապադովկիոյ՝ առ երի երրորդ Հայոց․ և սահմանի յելից Եփրատաւ․ և լեառն ունի զԱռգէոս․ և գետ զԱլիս․ և այլ մանունս ։

Երկրորդ Հայք են, որք կան յելից

Կապադովկիոյ. և երկայն տարածի մին_
չև ցԵփրատ. և ունի այլ գետս եր_
կուս. և լերինս քաղաքս մեծամեծս քը_
սան և երկուս :

Պոնտոս Կապադովկիոյ (Կապադովկիոյ). յելից կալով Պօղեմոնական Պոնտոսին՝ առ երբ ծովուն 'ի ցամաքական լերինսն. որք բաժանեն ընդ նա, և ընդ Մեծ Հայս : ունի լերինս երկուս. և գետս չորս :

Ահա կատարեցան զԵւրոպէայքս կոչեցեալք :

Սարմատացւոց երկիրն հասարակին է, որ բաժանեալ է արևելեան ծայրիւն, և Ցուպիաւ լերամբ, և Տօնայիս գետով, և Մէօտիս ծովակաւ. և անտի ընդ Կովկասային լերինսն առ Վրօք, և Աղուանիւք, մինչև ցԿասբից ծովն: Եւ ունի Սարմատիայ լերինս՝ ըզՀալթարինն, և զՉիակւոնն. և զայլ լերինս. և գետս բազումս. զեօթանասնավտակն Էթիլ, յորում ամբանայ ազգն Բարսղաց : Եւ բնակին 'ի Սարմատիայ ազգք բազումք. որք են այսոքիկ : Խազիրք. Բուլխք. Բարսելք. Ափշեղք. Ափխազք Թագաւորականն. Սարմատք. Չիակերք. Նախճամատեանք. Ողակերք. Միւսօրկացիկ. Մեւլթուրգացիք. Ամազոնք.

Աղու

Աղուանք. Խեթուրք. Քուրդեր. Սկիւ-
թեք. Արդուեւոք. Մարդոյլք. Թակ-
ուիք. Արդաղք. Պուճանք. Փինչք.
Պուճալք. Հոնք. Ոսփուրք. Ծանարք՝
յորում Աղուան դուռն, և Ծաքան
դուռն. Թուշք. Խուշք. Քուտոք.
Մարդակերք. Ցխուտոք. Գուղամա-
կարք. Պուճիճակք. Պիղայք. Ղէք.
Կաստապատականք. Աղուանատականք.
Խենոթք. Շիղայք. Ճիւղայք. Խե-
ղայք. Կազբք. Փուխք. Շրուանք.
Խարանք. Թաւասպարայք. Հեճմա-
տակք. Իժմաղք. Փասխք. Խուխս.
Փիքոնաք. Բայքանք. Մազքութք,
մինչև ցԿասբից ծովն, յորս և քաղաքն
Կովկասու հայի. ուր ածեալ է պա-
րիսպն Դարբանդայ. աշտարակաւ հա-
գին 'ի ծովուն կացեալ։ Իսկ 'ի հիւսի-
սոյ նորա՝ Հոնք, և քաղաք նոցա Վա-
ռաչան, և այլք ընդ նմա. և Թագա-
ւորն հիւսիսոյ է Խականն, որ է Խազ-
րաց տէր. և գշխոյն Թագուհի է Խա-
թունն, որ է կինն Խականայ 'ի Բարս-
ղաց ազգէն։

Կողքիս է՝ այսինքն է Եգեր, յելից կա-
լով Պոնտոս ծովու՝ առ երի Սարմա-
տիոյ. և ունի Եգեր փոքր՝ աշխարհս
չորս. զՄանձնեւրիս. զԱգուարիկէ. զԼ-
խաղիկ. զԾանիկ, որք են Խաստիք։
Ունի լերինս քաղաքս. և գետս. և

գաւառս. և քաղաքս. և բերդս. և այլ գիւղաքաղաքս, և այլ վաճառատեղիս։

Իբերիայ, այսինքն է՝ Վիրք. յելից կալով Եգերայ, առ երի Սարմատիոյ՝ առ Կովկասու, մինչև ցաղուանից սահման առ Կուր գետով։ Եւ գաւառք են՝ի Վիրս այսորիկ. Կղարջք. Արտահան. Շաւշէթ. Ջաւախ. Սամցխէ. Աճարա. Թուրգա. Կաթխոս. Տառնէտաս. Մանկղեաց փոր. Քուէշփոր. Փողնափոր. Թրեղք. Կանգարք. Տաշիր. Խաչաւ, և Դուման. Էտիմս. Քոդիթ. Կրիղս. Կոսխ. Սածխաւմէթ. Կուռէթ. Երծայ. Խերկ. Թիանէթ. Կանխոս. Ցխնաւածմայ. Բազալէթ. Ծափան. Քեթ. Չելթ. Վելեցխէ. Քուշէդա. Շալք. Պարուար. Ծորբափոր. Չորափոր. Խանցիխ. և Քաղաք Վրաց Տփխիս. Համշողդէ. Միթայ, ուր ոք խաչն է։ Ունի և բերդս և գետս, և ծովս լի ձկամբք։

Աղբանիայ. այսինքն Աղուանք՝ յելից կալով Վրաց, առ երի Սարմատիոյ՝ առ Կովկասու մինչև ցԿասբից ծով, և ցՀայոց սահմանս առ Կուր գետով։ Եւ ունի Աղուանք՝ դաշտս արգաւանդս. և գետս բազումս, և եղեգունդս հըզօրս. և քաղաքս, և բերդս։ և գաւառք են այսորիկ. Նիբուխ. Քան-

բրճան · Հողմաղ · Շաքէդ · Եռօռ · Շա-
քէ սստան · Համբառի · Մարծպանեան ·
Քաղաղաշտ · Իրաղական · և այլք գա-
ւառք, զորս 'ի Հայոց հանեալ են · Շի-
կաշէն · Գարդաման · Կողթ · Քու-
տի · Փառնէզ · Կաղթաղուռէ · Ջա-
ւէ · Թաւկքաստակ · Ուտոռուատակ · Ռօս-
պայիտակ · Մեծ Կափանք · Մեծիրանք ·
Պարծկանք · Մոխանք · Պխանք · Հարջ-
լանք · Վակունիք · Փոքր համանող · Ըս-
տրաականն · Ռաստատաստառի · Բեր-
ձորս · Սատասառուս, մինչև ցխառ-
նումն Երասխայ 'ի Կուր գետ :

Մեծ Հայք՝ յելից կալեալ Կասպուտա-
կերոյ, և փոքու Հայոց՝ առ Եփրատ
գետով, մերձ 'ի Տօրոս լեառն, որ բա-
ժանէ զնա 'ի միջագետաց : Եւ 'ի հարա-
ւոյ՝ սահմանի առ Ասորեստանիւ · և
դառնայ առ Ատրպատականաւ ընդ
Մարս՝ մինչև 'ի մուտս Երասխայ 'ի
Կասպից ծով : Իսկ ընդ հիւսիսոյ՝ առ
երիկալեալ Աղուանից, և Վրաց · և Ե-
գերայ՝ մինչև ցնոյն դարձուածն Եփ-
րատայ 'ի հարաւ կոյս : և ունի Հայք
լերինս անուանիս, և գետս մեծամեծս
և մանունս, և ծովակս երեք : Եւ ու-
նի Մեծ Հայք՝ փոքր աշխարհս ատան
և մէկ · որք են այսոքիկ :

Առաջին՝ Բարձր Հայք · այսինքն՝ Կար

նոյ կողմն։ Չորրորդ Հայք. Աղձնիք. Տուրուբերան. Մոկք. Կորճայք. Պարսկահայք. Վասպուրական. Սիւնիք. Արցախ. Փայտակարան. Ուտիք. Գուգարք. Տայք. Այրարատ.

Արդ յաղագս ծանրածանօթութեանց պատմել. թէ և սահման ինչ աշխարհիցն 'ի կէտ և 'ի շրջէն։

Որ ունի բարձր Հայք գաւառս ինն. Դարանաղի. Արիւծ. Մնձուր. Եկեղեաց. Մանանաղի. Դերջան. Սպեր. Շաղգոմք. Կարին։ և ըստ անուանց արդարև՝ բարձր է Հայք քան զամ երկիր. քանզի Է չորս կողմանս արձակէ գետս։ Ունի և լերինս երեք. և երէս բազում. և հաւս պիտանիս, և ջերմուկս, և աղս, և զայլ պարարտութիւնս. և քաղաք զԿարնոյ, որ է Թէոդուպօլիս։

Չորրորդ Հայք՝ յերի կայ բարձր Հայոց. և գաւառս ունի ութն։ Խորձեն. Հաշտեանք. Բաղնատուն. Բալահովիտ. Ծոփք. Ճաղախ. Հանձիթ. Գորեք. Դեղիկ։ Եւ ունի չորրորդ Հայք՝ բերդս. և գետս. և լերինս. և թիւրեղս։ ունի և երէս, և հաւս, և ձկունս. և 'ի գաւառանաց զԱրիւծ։

Աղձնիք՝ առ Տիգրիս գետով կայ. գաւառս ունի տասն. զԱրզն. զՆփըրկերտ. զՔեղ. զԿելթէկ. զՏատիկ. զԱզնուաց ձոր. զԽերհեթօ. զԳըզեխ. զՍալնոյ ձոր. և զՍասուն: Ունի զնաւթ, և զերկաթ, առաւել ես զխթոր. և հաւ՝ զԴեզակ:

Տուրուբերան. յերրի կայ չորրորդ Հայոց. և գաւառք են ՚ի նմա տասն և վեց: Խոյթ. Ասպականիք. Տարօն. Աշմունիք. Մարդաղի. Դասնաւորք. Տուարածատափ. Դալար. Հարք. Վարաժնունիք. Բզնունիք. Երևարք. Աղիովիտ. Ապահունիք. Տկորի. Խորխոռունիք: Ունի և ծով զԲզնունեաց. յերկայն հարիւր մղոն, և ՚ի լայնն վաթսուն: Ունի և զզազպէ. և զմեղր. և զմաշկամորթ. և զսպիտակ նաւթ. և զերկաթ.

Մոկք՝ յելից կողմ Աղձնեաց. ունի ամուրս Տօրոս լերինն. գաւառս ունի ինն. զԻշայր. զՄիւս զիշայր. և զԻշոց գաւառ. զԱռուենից ձոր. զՄեջա. զԱռանձնակ մոկս. զԱրքայից գաւառ. զԱրգաստովիտ. զՋերմաձոր: Ունի և մրգաց՝ զՀրշակ (ծահրաշակ). և զմանրագոր. և ՚ի գազանաց՝ զինձ գեղեցկախայտուց. և ՚ի հաւուց՝ ըզ կաքաւ:

Կորճայք՝ յելից կայ Մոկաց առ Ասո-րեստանիւ։ և Գաւառս ունի տասն և մէկ. զԿորդուս. զԿորդրիս. զԱտրուանս. զՄոդոզանս. զՊոխրմանս. զԿարթունիս. զՃահուկ. զՓոքր Աղ-բակ. և ունի զԱռնի. և ի պարզաց Հազամանակ.

Պարսկահայք՝ յելից կայ Կորճէից, և առ Ատրպատականաւ։ Գաւառս ու-նի ինն. Այլի, որ է Կուճիճան. Մա-րի. Թրապէր. Այցուերս. Ըռնա. Տան-բեր. Զարեհաւան. Զարուանդ. Հեր։ և ունի կէրէ՝ զՅերա. և զԱյծեաւան։

Վասպուրական է՝ ի մէջ Պարսկա-հայոց, և առ երի Կորճէից։ Գա-ւառք են նորա երեսուն և եօթն, և են այ-սոքիկ. Ըռշտունիք. Տոսպ. Բուժու-նիք. Արճիշակովիտ. Աղուախս. Բառի-զակովիտ. Կաղանովիտ. Դառնի. Բա-ղխովիտ. Առբերանի. Բաժունիք. Ըռնոյանն. Անձեւացիք. Ատրպա-տունիք. Երուանդունիք. Մարդաս-տան. Արտազակէ. Աղբակ մեծ. Ան-ձախաձոր. Թոռնաւան. Ճուաշռոտ. Կրճունիք. Մեծնունիք. Պալունիք. Գուկան. Աղուանդրոտ. Պարսպատ-ունիք. Արտաշէսեան. Արտաւանեան. Բոգան. Գաբիթեան. Գազրիկեն. Տանկրկայք. Վարաժնունիք. Գողթն

գինեւէտ . Նախչուան յորում քաղաքն
է, և Մարանդ .

Սիւնիք՝ յելից կայ Արարատայ ընդ մէջ Երասխայ, և Արցախայ . և ունի գաւառս երկոտասան . Երնջակ . Ճահուկ . Վայոց ձոր . Գեղարքունի . և ծովն Սոդք . Աղահէճք . Ծղուկք . Աբանդ . Բաղքձորք . Արեւիք . Աւսական . լինի՛ ի նմա մուրա, և գերերէ . և նուռն, և ամուր տեղիք .

Ուտիք՝ յերի կայ Սիւնեաց, և գաւառք են նորա տասն և երկու . զոր Աղուանք ունին : Միւս Հաբանդ . Վակունիք . Բերդաձոր . Մեծ Իրանք . Մեծ Կուանք . Հարճլանք . Մուխանք . Պիանք . Պայծկանք . Սիսական . Քաղտակ . Քաւստիմ . Փառնէա . Կողթ, յորում լինի քարախունկ :

Փայտակարան՝ յելից կայ Ուտեաց առ Երասխաւ : Գաւառս ունի տասն և երկու, զոր այժմ Ատրպատականք ունին . Հրաքոտ . Պերոժ . Վարդանակերտ . Եղթնփորակեան բագինք : ունի Ռոտիբաղայ . Բաղանռոտ . Առոտ . Բրժանհանհանի . Ալթլի . Բագաւան . Սպանդարանպերոժ . Որմզդպերոժ . Ալեան : լինի՛ ի նմա Բամբակ անբաւ, և Գառնի խնքնաբոյս :

Ուտի՝ առ մաւտ կայ Երասխայ, ընդ մէջ Արցախայ, և Կուր գետոյ. ունի գաւառս՝ զոր Աղուանք ունին եօթն. Աթանռոտ. Տռի. Տոպացեան. Աղուէ. Տուչքատակ. Գարդման. Շիկաշէն. Ուտի առանձնական, յորում Պարտաւ քաղաք։ լինի 'ի նմա Ջիթենի, Վարնկենի. և 'ի հաւուց կատակ։

Գուգարք՝ 'ի մաւտից կայ Ուտւոյ. և ունի գաւառս ինն, զոր Վիրք ունին։ Ձորոփոր. Ծոբոփոր. Կողբոփոր. Տաշիր. Թռեղք. Կանգարք. Արտահանք. Ջաւախք. Կղարջք։ Լինի 'ի նմա Անալութ. և Հաճարածառ. և Մերգևիլ. և Տօտախ։

Տայք՝ առ երի կայ Գուգարաց, ամրացօք և բերդօք կառուցել։ Ե՛ւ ունի գաւառս ինն. զԿողբ. զԲերդացփոր։ և զՊարտիզացփոր. զԾակատս. զԲուխայ. զՈքաղէ. զԱզորդ. զԿափոր։ Ե՛ւ լինի 'ի Տայս՝ Թուզ, և Նուռն. Աղաօր. Մերկևիլ. Պողախակ, և Նուշ։

Այրարատ՝ 'ի մէջ կայ յառաջասացեալ աշխարհացդ. և գաւառք են 'ի նմա քսան. Բասենք. Գաբեղեանք. Աբեղեանք. Վահագունիք. Արշարունիք. Բագրևանդ. Ծաղկոտն. Շիրակ. Վանանդ. Արագածոտն. Ճակատք. Մա-

սեացոտն․ Կոգովիտ․ Աշոցք․ Նիգ․
Կոտայք․ Մազազ․ Վարաժնունիք
Ոստանն Դվնայ՝ մինչեւ ցդաշտն Շա-
րուր։ Եւ ունի Արարատ լերինս, և
դաշտս, և զամ պարարտութի․ և ծո-
վակն Գայլատոյ։ Եւ որդն սիզաբերել
յարմատոյ առ՚ի զարդ կարմրութեան
դունոյ։ և Մայր եկեղեցացն՝ ՚ի թագա-
ւորաբնակ՝ և յարքայանիստ Վաղար-
շապատ քաղաքի։

Ահա կատարեցան ամ Հայոց։

Ասորիք՝ յելից կալով խուրեանց ծո-
վուն, և հիւսիսոյ Հրէաստանի։
և ունին Ասորիք փոքր ծա ութն․ և
լերինս անուանիս՝ զԼիբանան, և ըզ
Կարմեղոս․ և գետ հզօր՝ զՅորդանան․
և քաղաքս բազումս․ և Մայրաքա-
ղաք՝ զԱնտիոք․ և զԴամասկոս․ ըզ
Կոնշրին․ զՍամարիայ․ և դրունս եր-
կու․ և վայրս ընդարձակս, և պէտա
նիս, և բարիս։

Հրէաստան՝ յելից կալով Փիւնիկական
Պիղագոսին, և սահմանի Եգիպտոսի,
և Ապառաժ Արաբիա։ և ունի Հը
րէաստան՝ աշխարհս երեք․ զԳալի-
լիայ․ զՍամարիայ․ զԵդոմայ։ և
Լիճս երկու․ զՏիբերիադա, և զՄե-
ռեալ ծովն․ և գետ՝ զՅորդանան․ և

մայ

մայրաքաղաք՝ զՄեմֆն Եդէմ։ Եւ է Հերքա-
տան քաղցրաբեր, և պտղաբեր. և է ա-
նուշահոտ, որ բղխէ զկաթն և զմեղր։

Ապառաժն Արաբիոյ՝ յելից կողմն
Եգիպտոսի, և արևմտեան ծոցոյ կար-
միր ծովուն, ընդ որ անցին ի յե-
րի կողմն Ասորւոց, և Հրէաստանի։
Եւ ունի Արաբիոյ Ապառաժն՝ փոքր աշ-
խարհս հինգ. զՏաճկաստան. և զի
փառանիտիս, ուր զոտոն Աբրահամու
բաղդատեն. և այլևս երեք աշխարհս.
և գետս ոչ մի.

Միջագետն՝ յելից կողմն Ասորւոց առ
Եփրատ գետով. և մինչ Ասորեստա-
նի. առ Դիկղաթ գետովք. յերկու կողմն
մեծ Հայոց։ Ունի լերինս երկուս. և
գետս երկու. և քաղաքս բազումս.
յորոց մինն է Ուռհայ, ուր անձե-
ռագործ Պատկերն փրկչին։

Բաբելոն՝ յելից կողմն Միջագետաց
առ Կզօղաւ, մինչև ցՊարսկային ծոցն.
և ունի աշխարհս չորս. զԴեղղա. զԳեա-
րա. և զԲաբելոն. զՏիզբոն. և գետս
ունի զԵփրատայ վտակսն, և զԴիկղա-
թայ. ունի և այլ քաղաքս բազումս
և գաւառս. և լինի ի սահմանս այսո-
սիկ՝ անին Սարդիսոն, և Ոսկեքար։ Եւ է
Բաբելոն ամենայնից վաճառօք, և եկք

նաւուց 'ի Հնդկաց, և յամենայն կողմանց յարեւելից:

Անապատն Արաբիա՝ յերի կալով Միջագետաց ընդ Հիւսիսոյ. յելից կալով Ապառաժ Արաբիոյ, և 'ի մէջ Խուժաստանի և ունի Արաբիա ազգս ցեղս. բայց լեառն, գետ և ոչ մի:

Երջանիկն Արաբիա. յերի կալով Ապառաժ, և Անապատն Արաբիոյ, մնանէ ընդ մէջ խորշից Կարմիր ծովուն որպէս ցամաք կղզի. և ունի յինքեան ազգ մի. և գաւառս տասն և չորս. լերինս տասն. գետս չորս. աղբիւրս մի. և կղզիս բազումս. և աշխարհն ամենաբեր և ամենագիւտ. և է որ յիւրմէ աշխարհէն է, և է որ 'ի վաճառուց եկեալ 'ի Ճենաց, և 'ի Հնդկաց. գտանի անդ ոսկի, և ակունք պատուականք. խունկք բազումք. և իւղ քանուշունք. փայտք անփուտք. և անտի էր Տիկին Սաբայ. և բնակիչք աշխարհին ամենք քաջամակք, և ունին սպիտակամակք. Թխագոյնք քան զմեզ. և իւղք անուշք 'ի նմա, և ծաղիկք տասն և վեց. զՀալէ. Ջափու. Մաղապ. Խախխակ. Քեդէ. Ախուանա. Խալար. Բուխտակ. Նարդոս. Բալասան. Բան. Ցամմիկ. Նարգան. Վարդ. Մանուշակ. Մարզգուշ:

Մարք, որք կոչին Քուստիքապկոխ՝ յերի կալով Հայոց, և առ երի կողմից ծովուն : ունի աշխարհս ս զայսոսիկ . զԱտրպատականն . զՌէ . զԳիլան . ըզ Մուկան . զԴէլմունս . զԱհմատան . զԴամբեվար ; զՍպարապատան . զԱմլ . զՔշօշ . զՌուան : Ունի և լերինս և գետս . և զծովակն՝ որ կոչի Քապոտան . ունի և քաղաքս բազումս . յորոց մինն Գանձակ շահաստան :

Խուժաստան՝ որք կոչին Ասորեստան . այսինքն՝ Մուծղ . յելից կալով Միջագետաց՝ առ երի Հայոց : ունի լերինս և գետս . և քաղաքս զՆինուէ :

Ելիմացիք են, որք կոչին Քուստիխորասան . յելից կալով Դիգղաթայ . և 'ի մտից Պարսից : Եւ ունին Ելիմացիք աշխարհս փոքունս զայսոսիկ . զԽուժաստան . զՄաժ . զՄասպան . զՄիհրան . զՔրտակ . զՔաշքար . զԳարմական . զԵրանշաստան . զԿարկաւստ . զՆստաքո . զՇիրականն . զՄարձին . զԱրհէշ : և ունի և քաղաքս հինգս . և գետս չորս . յորոց մինն է Գունդէ Շապուհ, յորում աղնիւ Շաքարն գործեն . ունի և կղզիս երկու հանդէպ իւր՝ 'ի Պարսկային ծովին :

Պարսք՝ որք կոչին Քուստինեմուող .

յեզերց կողմն Խուժաստանի , և առ երի Մարաց . ունի յինքեան փոքր աշխարհս բազում . զԳաբա . զԱսպահան . զՄեշուն . զՀամակար . զԳանձայիա . ԶԷ Կրման . զԿաբրան . զՄակուրան . ԶԷ Սեզ . զՀեռ . զԼրան . զԳէտմաշա . զՍագստան . զԱպլաստան . զԻհեր . զՄեղ . զՄահեկ . զՄասն . զԽուզիս բաստան . զԳալհ . զԵրբաւհայ : ունի և գետս , և քաղաքս բազմամարդս . յորոց մինն է՝ Ուեշիր պարհաւն քաղաք , յորում աղնիւ Մարգարտեան երանել . և Գոհար մարգարիտն՝ այս է զրահրելեց զանդգեան . ապա բառատաճ հառաջ Գուրմայ . հիմդ հոգեր . Միջադիա երեք զանկա . չորս Պարմաշքա . Պարմաշքա . Հաւթագրում . Հաշտարգրում . Դասհագրում :

Նորէք , որք կոչին Քուստի Խորասան . յերրի կողմ Մարաց , և Պարթեից , մինչև ցՀնդիկս . և յերի Վրկանի ծովուն : Են աշխարհք են Աշնագաւորքի . Կոմշ . Վրկան . Աշխարհաշխ . Մըրում . Աբրուստա . Հրեկանաշան . Նասիձանակ . Թմիկ . Սաջստան . Դաշկան . Անդալհ . Հրում . զԱմիխարա . Նաքիձեր . Դուղի . Աշագալ . Վարջան . Մանտան . Ջակապան . Թոհլի . որք են Պարթեւք . Դամիան . Լարիմանակ . Ճերի . Բարբկան . Գամբան :

Եւ ունի Արիք՝ լերինս, և գետս, և կղզիս բազումս․ լինի Հրամաշկ, թէ-պէտ և ո՛չ այնքա՛ն․ և կղզի մի է Հան-դէպ Արեաց ՚ի Հնդկաց ծովուն, յո-րում Թագուհիք լինին՝ երբեք Թղեանս Հա-ստկաւ․ որք և պատերազմին ընդ Խոր-թոց Հատուց՝ վասն ձարակելոյ նոցա զանդրաստանս Թղկաց ։

Սկիւթիա՝ որք են Ասիականք․ այ-սինքն՝ Թաւրք․ որք սկսանին Եթիլ գե-տոյ մինչև ցԵմաւոն լեառն․ և անդր ձգի մինչև ցԾենս ։ և Եմաւոն է լեառն բարձր, և երկայն քան զամ լերինս․ և ունի Սկիւթիա ազգս բազմատուն և չորս․ Սոգդք․ Թուխարիք․ Հեփթաղք․ և այլք խուժադուժք անուանք ։ Եւ ու-նի Սկիւթիա լերինս․ և գետս բազումս և Հզօրս․ և դաշտս անապատս․ և ջերմ երկիր և անջուր․ և է ՚ի նմա Հը-րադոյն դաշտս․ և են Սոգդիք՝ Հարուստք, և արուճեստաւորք, վաճառականք, որք բնակեալ են ՚ի մէջ Թուրքաստանի, և Արեաց աշխարհին ։

Հնդկաստան՝ յելից կողմ Արեաց աշ-խարհին, և առ երի Սկիւթացւոց․ և է Հնդիկք բաժանեալ յերկուս աշ-խարհս, զորս բաժանէ Գանգէս գետ, որ է Փիսոն․ և արևմտեան կողմն ու-նի ազգս յիսուն և հինգ․ իսկ արևե-

լեանն՝ եօթանասուն և երկու. անունք
Մարգարէքն են. և անունք Վայրենա
կերըք. անունք Աշաւորք. և այլք կար
ճանհատակք, Տափակաքիթք, Լայնե-
րեսք, Սպիտակք. և անունք Մերկի
իմաստասէրք, որք գործս անօրէնութեան
ո՛չ գործեն, և զմարմինս կենդանեաց
ո՛չ ուտեն։ Ոմանք Հնդիկք ընտրեն, և
զեռս, և կղզիս բազումս. Լինին ՚ի Հըն-
դկիս երէ Յամաքատեղեան սահմանքն, որ
սպանանէ զԱբուծ. և Հրեշ էրէ. և
այլ պատանոսնանն Աբուծու. բայց կըն
ճիթն նոսա է, և երկայն. և Ընծուղաք.
և Կորեանք. և Կապիկք. և Աքաղաղք
փետրաձօրանք. և Փիղք. և Վագերք.
և Վիշապք. մեծ Մըջմունք. և Մըջմէ-
նաւխուծք. և Մկունք. Բեշչկ մշկայ.
և Կոկորդիլ գազան. և Մեղեքերու,
որ է մեծ քան զմի գազանս, և ՚ի վե-
րայ ողերն ճանք. և զՓիղն լեզուն
Սպանանէ. և Պատկուճ հաւ. և Մաւշկ
երէ. և Հըշ եղջերաւոր։ Լինին անդ Թո-
կի. Արծաթ. Պղպեղն. Ակնք. Մար-
գարիտ. և Ականս անգնահաւը։ Լինին և
Պղպեղ. և Մնդրուկ. և այլ Թուլա-
ծաղք։ Հալուէ. Փայտադամանդ.
Քաֆուր. Ջնջղան. Նայլքոնակ.
Հընդունակ. Գաղտերոնակ. Գոյներ-
ուակ. Կապոյտներ. Գողաղակ. Ճահճա-
ճար. Մարգարիտաչար. և բաղասմնորդեղ
բժշկականք։ և զուհարք հաղւէից

չորս, Ինդքէ. Սանդր. Ասպարաղ. ժե
ռաւոր. Ծովակոտկէն՝ ընդ որն արժէ եօթն
դահեկան. Ծամփիմարխայ. Նմին է
Ծանդր, ընդ որն արժէ չորս դահեկան:
Քողակ, չէկ է և Թեթև. և արժէ
ընդ որն չորս դահեկան:

Տապրոբանիա՝ է մեծ կղզի քան զամ
կղզի. հազար և հարիւր մղոն երկայն
է, հինգ հարիւր և տասն և 'ի լայնն,
յեւէից կողմ: և ունի այլ կղզիս շուրջ
զիւրեաւ մանունս, հազար երեք հա-
րիւր եօթանասուն և երկու. ունի և
լերինս, և գետս, և այդս տասն և եր
կու: Լեռն 'ի նմա Ոսկի, և Արծաթ, և
Ակուանք պատուականք. և Բռոլիճայք.
Փիղք, և Վագերք. և այրք աշխարհին
վարսիւք կնոջ պսակեն զգլուխս իւր-
եանց: Այս տասն զինկունն սատանայի:

Ճենաստան, յեւէից կողմն Սկիւթիա
մինչև յանծանօթ երկիր: Ե՛ է Ճենա-
տան ընդարձակ դաշտ տարածեալ, և
են 'ի նմա ազգք քսան և հինգ. յորոց
միոյն մարդակերք: Ե՛ ունի Ճենք լե-
րինս, և գետս բազումս. յինի 'ի Ճենաց
աշխարհին՝ Դարիճենիկ. և Հողաբոյկ.
և Բռունքճենիկ. և Կասիմոն. և Սու-
կոն: Ունի և Հրէշ, և Մուշկ. և Սիրա
մարգ. շատ. Քրքում անդստ. Ապրի
շում շատ, և ազնիւ. վասն որոյ և ընտակէչքն

արուես

արուեստաւորք, կերպասագործք, հարուստք, ընչեղք. որոց Արքայն կոչի Ծիրնակուր, որնստի 'ի քաղաքին Սիւռիայ՝ առ անծանօթ երկրաւ:

Մէնեացուցն՝ առ երի կալով Ծենից մին չէ ցանծանօթ երկիր, յորում բնակեալք են ազգք եօթն: Ունի լերինս, և գետս բազումս. բայց անտի յանծանօթ երկիրն՝ որ ինչ պատմի, անհաւատալի է: Գազանք անծանօթ մարդակերպք. կիսանձնեայք. երկդիմիք. վեցձեռնիք. փոկոտունք. վիշապատունք. կիսահաւք. կիսանդամք. անգլուխք:

Այս հաւարեցան թէ փեղերք՝ և դատմութենէ խօսից:



Հա կամիմ զչափ աշխարհիս համառօտել զմղոնախազաց ոտնաչափութիւն ուղղեկաբար, ասպարիզաձեւ դրութեամբ:

'Ի դո՛ւնայ մղոն երկու հարիւր 'ի Կարնոյ քաղաք.

Անտի մղոն հարիւր և քսան 'ի փոքր աշխարհն Հայոց, և Յունաց:

Անտի մղոն իննսուն 'ի Կոդոնիոյ բերդն:

Անտի մղոն հարիւր 'ի Նիկիսար:

Անտի մղոն ութսուն յԱմասիայ:

Անտի մղոն հարիւր և երեսուն 'ի Գանդզրայ ։

Անտի մղոն ութսուն յԱնկիւրիայ ։

Անտի մղոն երեք հարիւր քսան 'ի Կոստանդինուպօլիս ։

Անտի մղոն վեց հազար 'ի Հռոմ ։

'Ի Դուինայ մղոն հարիւր և եօթանասուն 'ի Խլաթ ,

Անտի մղոն ութսուն 'ի Բջիմար ։

Անտի մղոն հարիւր և ութսուն 'ի յՈւռհայ ։

Անտի մղոն քառասուն յԵփրատ գետ ։

Անտի մղոն հարիւր և յիսուն յԱմասիայ ։

Անտի մղոն հարիւր 'ի Դամասկոս ։

Անտի մղոն իննսուն 'ի Թիրօրլեանս ։

Անտի մղոն հարիւր 'ի քաղաքն յԵրուսաղէմ ։

'Ի Դուինայ մղոն վաթսուն 'ի Բերք-կոչնան ·

Անտի մղոն հարիւր և վաթսուն 'ի Պարտաւ ։

Անտի մղոն իննսուն, 'ի ծովն Կասպից ։

'Ի Դուինայ մղոն եօթանասուն 'ի Նախջաւան ։

Անտի մղոն հարիւր և քսան 'ի Գանձակ Շահաստան ։

Անտի մղոն երեք հարիւր և եօթանասուն 'ի Տապղոն ։

Անտի մղոն եօթանասուն ՚ի Յա-
կոբոն :

Անտի մղոն հարիւր և քառասուն՝
՚ի Պասարայ :

Անտի մղոն քսան ՚ի ծովն Պարս-
կային :

Դարձեալ՝ ՚ի Գանձակայ մղոն հա-
րիւր ՚ի Նինուէ :

Անտի մղոն հարիւր և յիսուն Յաւա
հայ :

՚ի Դուռնայ մղոն յիսուն ՚ի Կոզը :

Անտի մղոն հարիւր և հինգ ՚ի Կառ
դեղ :

Անտի մղոն հարիւր և քառասուն ՚ի
Տպխիս :

Անտի մղոն եօթանասուն ՚ի Հաւ-
նարկերտ :

Անտի մղոն հարիւր ՚ի Պարտաւ :

Դարձեալ՝ է յՇէմէ մղոն հինգ հա-
րիւր յԱղեքսանդրիայ :

Անտի մղոն հազար ՚ի Պենտապօլիս :

Անտի մղոն երեք հարիւր ՚ի Տրա-
պօլիս :

Անտի մղոն հազար և երեսուն յԱփ-
րիկայ :

Անտի մղոն հինգհարիւր ՚ի Սեպտէ :

Անտի մղոն հազար յՈվկիանոս ծովն
անծանօթ :

Չորս Գետոցն Եդն։



Փիսոն 'ի Հնդկաց, և յԵթեօպացւոց՝ Գանգէս կոչի. իսկ Յոյնք՝ Հնդկաց գետ անուանեն. ելանէ Աեմաւօն լեռնէ, և զՃամ երկիրն Եւիլատայ շրջապատէ. այսինքն՝ զփոքր Եթեօպիայ, և զմեծ, և զկողմանս Ելեմայեցւոց. և յանցանելն ընդ մեծն Եթեօպիայ, իջանէ Է հարաւ յարևմուտս 'ի ներքոյ Գադիրայ՝ յՈվկիանոս ծովն։

Գեհոն՝ յԵթեօպիոյ փոքուէ իջանէ 'ի Տոքացիսն, և ընդ Բռէմիացիսն, և Յօքոմետոիս. և անոդանէ զԵթեօպիայ. և յԵգիպտացւոց ծովն մտանէ ըստ Երեմիայի. Զի՞ կայ քո և երկրին Եգիպտացւոց՝ ըմպել զջուր 'ի Գեհոն գետոյ 'ի պղտորելոյ։

Տիգրիս՝ 'ի Կորդուաց լերանց ելանէ, և գնայ Է կողմանս Ասորեստանեաց. քանզի՝ ձևէ զկողմանս արևելից. ընկղմի յերկիր, և ելանէ 'ի Կորդիս. և Հայք 'ի միջի մնայ։

Եփրատ՝ դոյնպէս ելանէ 'ի դրախտէն. մտանէ Է երկիրս. և ելանէ 'ի Հայք, 'ի Բագրևանդայ, և 'ի Կարնոյ լերանց. մօտ 'ի Յարծն քաղաք։

Գետք,

Գետք, և գնացք նոցա. Մեծ և անուանա_
նիք, քառասուն և երկու։

ՆԱբանայ և Փարփար 'ի Դա_
մասկոս եղանեն ։ և անցա_
նեն ընդ Դամասկ քաղաք, և ան_
կանին 'ի ծովն Արաբացւոց ։

Յորդանան՝ երկու ակունքն են, իջա_
նեն 'ի Սանիրայ, և 'ի Հերմոն լերանց. և միաւորեալ անկանին 'ի ծովն Արա_
բացւոց (Տիբերիական)։

Տօնաւիս՝ 'ի Գալլիացւոց եղանէ, և անցանի ընդ Տուրաս, և ընդ Սերբոն. և անկանի 'ի ծովն Արաբացւոց մերձ Ցիանիկուրան ։

Տիգրիս՝ եղանէ 'ի Կորդուաց լերանց՝ և անցանէ ընդ Մօսուլ, և 'ի Թեբաղեայ. և Հերձակոտոր առնէ զաշխարհն Ասո_
րեստանեաց, և անկանի 'ի ծովն Հրնդ_
կաց՝ առնուլ քան զՄեծիկօրան։

Արածանի՝ 'ի Հայոց եղանէ 'ի Մեծ_
լերկացն, և միաւորի ընդ Եփրատայ ։

Եփրատ՝ 'ի Կարնոյ եղանէ, և անցա_
նէ ընդ Խաղտեաց. քանզի զՋերմե_
ղեաց, զայ 'ի Սամուսատ, իջանէ 'ի Ճու_
րեպին. և անցանէ ընդ Կարայ. և զնայ 'ի Բաբիլոն. միաւորի ընդ Տիգ_
րիսի. բաժանի 'ի Բառոսայ (Բասրայ). և անկանի 'ի ծով։

Գեհոն՝ 'ի Դրախտէն եղանէ, և անցա

նէ ընդ սահմանաւն Հնդկաց. և անցանի 'ի Սկիւթան. և անկանի 'ի Սողոնիայ. իջանէ յԵգիպտոս. և անցանի 'ի Լոյս, որ թարգմանի արևակաբուղխ. և մտանէ 'ի ծովն հարաւոյ։

Եքսիոս, և փիսօն՝ 'ի դրախտէն ելանեն. և կոչեն նմա Հնդիկէս գետ. և Եթէօպացիք՝ Գանգէս գետ. և Յօտին ծովակ հատանէ. ընդ Ախփինատէս քաղաք անցանի, և ընդ Սեբինատէս անցանի, և անկանի 'ի ծովն Աղտոսիկայ։

Թիւամիս գետ՝ 'ի Բալուծայ ելանէ. և ընդ մբար, և ընդ Բաբիլօն անցանի. և ձգի 'ի Գանդգիրոն 'ի ծովն հարաւոյ։

Արտակաղիս գետ՝ 'ի Մարմարիտէս քաղաքէ ելանէ. նա ոչ ունի կերպարանս գետոյ, այլ ծովուն նմանակ է. զի տասն վտաւան է խորութի նորա, և եօթն վտաւան լայնութի նորա. և ընդ Բիւրիտոն անցանէ մերձ յԵթէօպիայ, և անկանի 'ի ծովն հարաւոյ։

Տուռէս, և Հեղինիկոս արքայ՝ 'ի Պարսից 'ի Բակտրոնայ ելանեն. և անցանեն ընդ Ասուրիայն, և անկանին 'ի ծովն Կասբից։

Գանդէս, և Նեղիմաս գետք. որոց խորութին մինչև յանդունդս է, և բաւ ծաւալեալ մինչև յերկինս. և լայնութի նորա երեսուն մղոն. անցանի ը

Ճենաս քաղաք . երթայ 'ի Սապուապիոն 'ի Սապու, և Ցակեսպոն . անցանի 'ի խորքն Հնդիկս՝ մերձ 'ի Խոթէբաստն՝ 'ի Համագունան, որ թարգմանի կանանց աշխարհ՝ մօտ յանծանօթ երկիրն . և անկանին 'ի Հետամետոն ծովն :

Ակոն, և Հինէս, և Քերմիստէա՝ սոքա երեքեանս 'ի մի 'ի հիւսիսային լերանց ելանեն . և Օպաս՝ 'ի մօրեաց 'ի վայր իջանեն, և ընդ միմեանս խառնեալ՝ ընդ աշխարհն Աղուանից, անցանին մերձ 'ի Լիկէթ, և անկանին 'ի ծովն Ապրապատիկոս :

Տարտարիկոս՝ և Սորկաոս՝ Պատկէրոս՝ և Օքոս : Սոքա չորեքեանս յարևմտից իջանեն 'ի Պերիմոս լեռնէ, որ կոչի այրեցեալ գօտի արեգականն . և անցանին ընդ Լիկոն, և ընդ Սպանիայ . մերձ 'ի Քիտոքան, և անկանին 'ի ծովն Երեկոյին :

Երասխ՝ 'ի Բասինոս ելանէ . Մեծամօրն՝ 'ի Դունայ ելանէ . Կուր գետ՝ յԱկոուռն ելանէ . Ճորոխ գետ՝ 'ի Սենիաց ելանէ . Հուրաստան գետ՝ 'ի Գեղարքունեաց ելանէ . Գինէգոյն գետ՝ յԱնիուռոյ ելանէ : Սոքա ամենեքեան ընթանան, և յԵրասխ խառնին 'ի Նախջուան, և 'ի Մօրանդ՝ 'ի Ղարուանդ՝ 'ի Թուրքէշ . 'ի Պարսաւիսխտուս . 'ի Սագաստան . յԱպլաստան . 'ի Տուանս . 'ի

Մատուրան. 'ի Սամուրան. 'ի Դիլմաս-
տան. 'ի Դարական. 'ի Փայտակարան.
և անկանին 'ի ծովն Երեկորին, արևմը-
տից երեկային ։

Ապիրեկէս, և Ալէս՝ 'ի Սեբաստիայ
ելանեն, և ընդ Գամրաց աշխարհն ան-
ցանեն, և երթան մերձ 'ի Նիկոմիդիայ
քաղաք յարևմուտս կոյս. և ոլորի ընդ
Հիւսիսային կողմանն. և անկանի 'ի
ծովն Պոնտոս ։

Զաբատեկան գետ՝ յԷկոնիոն գաւա-
ռէ ելանէ, և ընդ Տրապոլիս երթայ 'ի
Լիդիայ՝ մերձ 'ի Հելլէնս. և անկանի 'ի
ծովն Բուզան,

Կաւստրոս, և Լուկարպրիս գետն՝ 'ի Խո-
նասայ ելանեն, և ընդ Թրակէս անցա-
նեն, մերձ 'ի Վատոնիայ. և անկանին 'ի
ծովն Եփեսացւոց ։

Դանուբիկ՝ որ ընդ Հոսէ ելանէ. և
Տօնաւիս Յակադոնացւոց. և գան յան
դիմանն արևելից մինչև յաշխարհն Բուլխ
րաց, և առ Ղօվորն. և Եւստոռա-
լիան. և Եւստադատարծն, և անցանի
յաշխարհն Գլթայց, և մտանէ 'ի ծովն
Բասոդայց ։

Տեբերիոս գետ՝ ելանէ 'ի Կապուտ
լերանց Հիւսիսոյ, և անցանէ ընդ մէջ
Հռօմայ, և անկանի յԻտալիայ. և մը-
տանէ 'ի ծովն արևմտից ։

Սկամանդրոս գետ՝ 'ի Փռանկաց ելա-
նէ. և ծակամուտ լինի մտան մերձ 'ի

Տապրիկ. և 'ի Վէրիկանիք. և մտանէ 'ի ծովն Երեկորի արևմտից:

Տանաչիւ. և Պօնոռ՝ և Հնդիկնացօ ռոս, յանծանօթ երկրէն ելանեն. և է անմարդ անապատ անցանեն ընդ Քարանձաւս. և ընդ Բերդուկս. ընդ Խաւխուեւս. և ընդ Քարաքիթս 'ի վայր վայթին. և անկանին 'ի ծովն համատարած, որ է ակն ծովուց. և պատէ զերկերծագեան աշխարհս մեծ: Ընդ մեծ միահամուռն, ենդեոք քառասուն և երկու՝ մեծամեծք. որք ելանեն 'ի ծովէ. և չորս 'ի դրախտէն ելանեն, և շրջին ընդ ծովուն. և դարձեալ մտանեն անդրէն առ ծնօղն և մայրն խորհանց համատարած ծովն,

Սքանչելագործ արարչին ամենայնի փառք:

Անուանք քաղաքացն Հնդկաց, և Պարսից:



Անխան քաղաք՝ ութսաւուրց ճանապարհ ընդ ցամաք առ տոյ է ընթանալ. Պանխանա զաւառքն Հնդիկք են. քայց 'ի խմաչնոյ թեամն խօսի. զի 'ի վաղնջուց հաւանեցուցեալ է Պարսիկն, և առեալ այլ երկրին բնակիչքն Հնդիկք են:

Տիգնաւոյ քաղաքն է մեծ, և ինքն 'ի խաչնոյ խօսի, և երկրին բնակօղքն Հնդի

կիք

ղիկք են. կան և ազգ մի Պարսիկք՝ վեց
աւուր քան զԽազնիայ 'ի վայր է:
Գոյստ քաղաք է մեծ, մեծագանձ, և
մեծահարկ. և ունի զԹէմ ընդարձակ.
և ճանապարհ չորից աւուրց է 'ի Տիգ-
նաւէ 'ի Բոստ. և այս երկրիս բնակիչքն
Հնդիկք են, և 'ի խազնի խօսին:
Պուրշայուր Մեծաշահ քաղաք, և
Թէմ ընդարձակ. եղանէ յիւրմէ շատ
Լեղակ. և Հինա աղեկ. 'ի Խազանոյ
'ի Պուրշայուր՝ տասն և հինգ աւուր ճա-
նապարհ է.
Քապուլէ՝ է քաղաք մեծ, և մեծա-
շահ, և մեծահարկ. եղանէ յիւրմէ Հլէ-
լէճ, և Քապուլէ. և այլ օգտակար
դեղք. քառասուն փարսախ է 'ի Պուր-
շայուրէ մինչև 'ի Տիգնաւէ:
Լահուր քաղաք է մեծ, և մեծագանձ
աշխարհ, և երկիր ընդարձակ. գեղել
ունի չորս հարիւր հազար: Մահմու-
տ սուլթանն է զիւրեանցն հարկատու ա-
րարեր, և հաւանեցուցեր, են ամք վեց
հարիւր. է մեծաշնորհ քաղաք. և որ
ինչ զամ երկիր պատուական և հարկա-
ւոր իրք լինին, ամենն 'ի քաղաքն գտա-
նի. զի անդ բերեալ ծախեն վաճառա-
կանքն. և ամ վաճառականքն անտի քա-
ղեն զամ ինչ, զի 'ի մէջ ճանապարհին է
քաղաքն. և Թագաւոր է մեծազօր:
Խշմիր քաղաք մեծ է. և դաստա-
ունի հարուստն՝ և մեծաշահ. 'ի Լա

հուրքէն քառասուն օրն երթան՝ ի Խըր-
միր. մուշկնի հիւալի առնեն՝ ցան մուշք
է. նա անդ շատ գտանի. նմանէ Սըն-
ֆուլ. եւ Խարաֆուլ. եւ այլ որ ինչ պի-
տոյ է մարդոյ դեղեր՝ մարդկան հա-
մար. քաղաքն լեռն է՝ եւ մօրի՝ եւ կա-
պաննի։

Պանկլար՝ քաղաքէ մեծ, եւ բնակիչք
քաղաքին Հնդիկք հարուստք, եւ մե-
ծաշահք. եւ մայրին ինքեան մօտ է. եւ
մայրուղին փայտն ամենն ծխանելի է.
եւ բնակիչք երկրին գտանեն ղաղէկ ծը-
խանելին ի ցեխսն թաղած։ Իւրեանց
թագաւորն ունին հազար փիղս ունի.
մեծ թագաւոր է եւ հարուստ, եւ ամ
պատուական իր գտանի յիւր քաղաքն։

Ի Խշմիրայէ երեսուն աւուր ճանա-
պարհ է մինչեւ ի Պանկլար. եւր մարդ՝
այլ ճանփով ի Նահրուալայ կամի գը-
նալ՝ քսան եւ հինգ օրն երթայ ի Մուլ-
թան քաղաք։

Նահրուալայ, եւ Մուլթան քաղաքք
են մեծամեծք եւ մեծաշահք. ունին մի-
ղարձակ գաւառս, եւ դեօղս երեք հա-
զարս. եւ ի խաղնի խօսին. եւ բնակիչք
երկրին Հնդիկք են։

Աւրուլ քաղաքէ մեծ՝ եւ մեծագանձ,
քառասուն աւուր ճանապարհ է ի Տե-
պուլայ ի Սնդին. քաղաքէ Տեպուլ եւ
մայրիքն ղժուար՝ եւ ճանապարհքն՝ եւ

Կապադանիկի, և լերինք. և 'ի մէջ փոքր Ծե-լուլ դետոյն է շինեալ Ալելուլ քաղաք. բայց 'ի Նահրուալայ թեմն խօսի։

Սումնաթ՝ քաղաք է Հնդիկ 'ի ծովե-զերին Հնդկաց, և է բազմագանձ քա-ղաք և մեծաշահ. Հնդկաց հաճիքն 'ի հօն գան յուխտ. իւրեանց երկեցանց և աղօթերոյն Բահրամայ կոչեն. ամէն քա-ղաքն նոքա են։

'ի Սօմնաթայ՝ շատ գողեր եկանեն նա-ւով. և 'ի մէջ ծովու շատ ծեծ առնեն. և 'ի Նահրուալայ խօսին։

Գորատա՝ քաղաք է փոքր, և ծովե-զեր. և մօտ է 'ի Նահրուալայ։

Քամպայթ՝ քաղաք է 'ի ծովեզերի, և մերձ է 'ի Գորատա քաղաք։

Գուրճ քաղաք է ծովեզեր, և Նահ-րուալայ խօսին. և մերձ է 'ի Քամ-պայթ. և երկու աւուր ճանապարհ հե-ռի են 'ի միմեանց։

'ի Գուրճ քաղաքն՝ յամէն չորս տարի ԱԾ մի պաշտեն. և 'ի յաւուրոսել չորս ամի; փոխեն. նոքա բարբառնչեն թէ ըրհեզերդն առ մեզ չէ եկեալ։

Ալայոլ՝ մեծ քաղաք է, և ծովեզեր է, և մեծաշահ. շատ շաքար, և շատ լեղակ ելանէ յիւրմէ. և շատ պատուա-կան իրք գտանին անդ։

'ի Գուրճ քաղաքէ երթայ մարդ 'ի Ջոլմուտրայ. և անտի երթայ ճանա-պարհորդն 'ի Պլտորայ.

Պլոտորայ քաղաք է ծովեզերի՝ մեծ, և մեծաշահ, և բազմադամանն. այս քաղաքնիս Նահրուանայ խօսին. Հարիւր հազար դեօղ ունի այս քաղաքս. և ամենն շուրջ ծովեզերովն շինած. այս քաղաքքս, և իւրեանց վաճառականնաւերն՝ ընդ ամ երկարութի ծովու վաճառով ընթանան։ Այս քաղաքնիս և այս գեղերս՝ երկու հարիւր հազար շաքմի են. և Հնդիկ լեզուաւ են. և ամենն Հաքմի խօսին։

Մելապարն՝ քաղաք է մեծ. մեծադամանմ, և մեծաշահ, և առաջին քաղաք։ 'Ի Մելեպարէ երթայ ճանապարհորդն 'ի Տաբուլ՝ որ է մեծ քաղաք. անտի երթայ 'ի Մուֆրայ. 'ի Մուփրայէ երթայ 'ի Թանայ. անտի 'ի Փոնաւէ. և 'ի Փըռնաւոյ՝ 'ի Մանդապուր, ուր շատ պղըպեղն լինի, և այլ պիտանի համեմունք. և ամէն Քաղաքնիս հեթանոսաց են։

'Ի Մանդապուրէն երթայ ճանապարհորդն 'ի Պանքուր քաղաք. և անտի 'ի Պանկլուր. և անտի Ցեպնիթոն. և անտի 'ի Զլխայ. և անտի 'ի Փանդրինէ. և անտի 'ի Շինկլ. 'ի Շինկլէ շատ Քրիստոնեայք կան, և շատ եկեղեցիք. և ամէնն Մելեպան դաւառի խօսին. Զոլխանդ անուն է Թեմին. 'ի յայս Թեմս է որ առաքելոյն Թօմա վկայեն. Թեմին առաջին քաղաք։

Պլինճ՝

Պլինձ՝ մեծ և մեծաշահ. 'ի Պլինձու երթայ ճանապարհորդն 'ի Պնիսպոլթին 'ի տասն օրն. անտի 'ի Խուսոյն քա_ ղաք օր մի. անտի 'ի Նախէպոլթին օր մի։

Նախէպոլթին քաղաք է մեծ. շատ եկեղեցիս, և շատ Քրիստոնեայս ու_ նի ընդ ինքեամբ. և նման քաղաքնիս ծովեզերք են։

'ի Նախէպոլթոյն երթայ երկու օրն 'ի Հահպալթին. անտի երթայ 'ի մէջ Ա_ ռաքելոյ գերեզմանն։ և ասեն անուն քաղաքին Մալապ, ծովեզերը է քաղաքն. և ծածկեալ է յինքն տակաւ մի քրիստո նեայ։ 'ի Մալպայէ երթայ մարդ 'ի Զուձր. այս քաղաք է մեծ՝ և մեծա_ գանձ և մեծաշահ. 'ի Մլապ քաղաք՝ ուր մէջ Առաքելոյն գերեզմանն է Թու մայի, աղբիւրքն ամէնն աղբրակ եռա_ ցուցանեն. բայց միայն յայն աղբերէն, որ մերձ է 'ի գերեզմանն Թումայի. Այն աղբեր ջուրն յստակ է և բարե համ, և մէջ է 'ի ողբկէ. այս նման քա_ ղաքս Զոլիան կոչի։

Մելան կղզի՝ Հնդիկ անուանի է. և Սառնատիպ՝ տաճիկ անուանի. 'ի յայս կղզիս ասեն Հնդիկք՝ թէ երբ էհան Ած զԱդամ 'ի դրախտէն, նա աստ բը նակեցոյց. պատուհական դօհար ելանէ յայն կղզւոյն. և կարմիր Յակուտնդ քա

զուժէւ ակն՝ որոյ ասեն հնդկերէն Կատ
ար . իսկ տաճկերէն Ալիփլիհօր : և
այլ ակն ելանէ . զոր պարսկերէն ա_
սեն՝ Չաշմիդուրպայ . և այլ ակն ելա
նէ , որոյ անունն է փէլ . իւր գոյնն կա
պուտ լենի . և անուանեն Հնդիկք Նիլ_
աէ : և այլ ակն ելանէ դեղին . Պոյա_
րոյ ասեն իւրն . և կարմիր Յակունդ
ելանէ , որ քան զամ ակունս՝ և յա_
կունդս հարկաւոր է և մեծագին . և այլ
պատուական իր՝ որ Թիփորաց անդ է :

Ոսկեգետոյն գաւառին , Բեմինզար՝ ասեն
իւրն . զի քաղաքում տակի ելանէ յիւրմէն՝
քանի աշխատիլ ոչ կարէ . և Ոսկեգետո
նին են անուանքս այս :

Առաջին քաղաք և կղզի Լամիբրին . աս
ոտ ելանէ շատ բրդն . փայտ Պզկամ .
և այլ պատուականք իրքս . ատամն եղ_
Թայ մարդ 'ի Պարչուբ . այս քաղաքն
և կղզի մեծաշահ . պատուական Քա
փուրն անտի ելանէ : 'ի Լամիբրու մեն
կղզի կայ՝ զանուանն Քրոնա անեն . Հա
ներ Թեթեւադին անտի ելանէ , և ռոնդ
կազմի :

Քրուդայի քաղաք է մեծ . և մերձ
'ի նմա կղզի մի է՝ Սամաւր անեն . մե_
ծագին , և մեծաշահ . և իւր ներքոյ
այլ կղզի կայ՝ որ կոչի Պուրէ . և զամ
պատուական իր՝ զոր խնդ ուզէ մարդն
գտանէ 'ի կղզւոյն . Եւ իւր ներքոյ ,

Եփա

Եփանէս կղզի. 'ի յայն կղզւոյ ելանէ բազում Քրլաֆուր. և'ի ներքոյ Պղայոյ է Թագաւորն Ոսկեգետին: 'ի Պղայոյ կղզին Նատի Զապիճաց Թագաւորն. երբ իւր հայրն մեռանի, կամ մայրն. փոխանակ ծնողացն 'ի չափս նոցին կուռս շինէ Ոսկի. սոցա ազգքն կռապաշտք են. և չեն Հնդիկք: սոքա Զապէճ կոչին. և միս մեռելոտի՝ զոր գտանեն, ուտեն. և զիւրեանց մեռեալս, և զայլ ատհմանաց մարդ, զորս կալնուլ կարեն, որս համարին:

Ե՜ւ յորժամ ընդ այլ ազգի կռուին, և յաղթեն. զայոյ կոտորեալսն՝ զոքիւ բոց է, և զոր Թշնամեացն՝ զամէնն ուտեն. բայց վաճառականք, և ճանապարհորդք ո՛չ մեղանչեն. զի իւրոց ապուքն 'ի վաճառականաց լինի:

Ռամնի կղզին է. և իւր ներքոյ այլ կղզի կայ՝ Քաղաքփանչի անուն. մերձ 'ի սա կղզի մի այլ. յայս կղզիքս ելանէ կլայեկ շատ. և ամ պատուական իր հօն գտանի, հանց՝ որ Թագաւորաց վայելէ. և մերձ այս կղզիսէ Յալա. և Քալա. և Կակուլէ:

Այս է Ոսկեփետնի քաղաքքն, և կղզիքն, և գաւառքն. և ազգքն՝ որք բնակեալ են. Զապէճ լեզու են.

Չին և մաչին՝ երեք հազար և ութ հարիւր քաղաքք են՝ և բազմաբարիք գաւառք. ամենն կռապաշտք են. և

երկիրն ցամաք . բայց չեն հաւատնիր ո՛չ որք ազդէ . զի իւր Թագաւորն բազում և զաղանաբարոյ հեծեալս ունի . և սիրեն զքրիստոնեայսն . և լաւ ընդունին՝ յԱղեքսանդր Թագաւորէն 'ի վեր . զի 'ի նմանէ շատ ազէկ են պահեալ և ազատութին . և զհասանն 'ի խիստ սիրեն :

Եւ այն սերեն, զոր Հնդիկք ունին . զկեր անտունն Թմբուլ ասեն . իւրեանց նոցա, և աղուր այն է . և առողջութին տայ . և մեծրիկ է և կարմիր , և անուն Զուճրասեն : Եւ Մոզան ծառայն ասեն , որ իւր տերեւն հինգ կանգուն է . ասեն բնակիչք , թէ նոյ տերեւովն ծածկեցաւ Ադամ , յորժամ 'ի դրախտէն ելաւ : Հնդիկք երեցանցն բաժհրամայ կոչեն . և կաոցն դէ :

Ային քաղաք է 'ի Թուրքստան . անուր լեառն . և շատ քրիստոնեայք կան 'ի յայն գաւառն . Սամողրջէ ասեն քաղաք . ելանէ մուշկն խաւնիկ , և Սարգս . Մկռնդրոլէ այս քաղաքք են Հնդկաց , և Պարսից : Եւ Յե Քե արարչէն նմ արարածոց փառք յաւէտենից յաւիտեանս :

Վ Ե Ր Ջ :





ՀԱՄԱՌՕՏ ՑԱՆԿ

Ե՛ւ ցուցակ իրաց գլխաւորաց, որք պարունակին յայսմ գրքոյ Պատմութեանց։

Թիւք ընծայեցեալքս՝ զթղթահամարն, ցուցանեն։

Ապա

Ենան

Կադ

Սո

Փո

Թեանն

Սա

թա

ՎԱԽՃԱՆ ՑԱՆԿԻ։



Ուղղագրութիւնք ոմանց բառից ներկայի Պատմագրութեանս, որք կան այլայլես եղեալք էին ՚ի նախկին տպագրեցելումն յԱմստէլօդամի, եւ կամ ՚ի բաց թողանեցեալք։ Եւ ուղղագրեցեալ բառքն նոքօք գրով եղեալն՝ առ ՚ի պարզապէս ծանուցանել։ Ուստի նախկին թիւն ցուցանէ զերեսն թղթոց, եւ երկրորդն՝ զտողն երեսոյ։

9. 13. եւ արժանի գրոց յիշատակի։
10. 3. որ ՚ի սեփհական Պարսա՛։
10. 28. եւ անզգամ հեշտութիւն։
12. 28. համեմատեն հուռն թուոց։
13. 11. Սորա երկրանոյն յարձանաւ՛։
13. 14. թէպէտ ուրն անդայոց։
15. 11. ՚ի տրամութէ ձեռաց ծերոց։
17. 19. Ուռզման ամս 130։
18. 29. եւ ոչ ՚ի ժամանակագրաց։
21. 16. յառաջապեալ զծիծմարքա բանս անխտրժեալ փոփոխել։
23. 1. զոր առա ութէն Զորագաշա։
27. 20. ՚ի հովուացն հարստութէ։
30. 21. զմեր հեշտութէ՝ որ ՚ի։
31. 31. յօրամ է ակիզբն բանից։
35. 5. ջեռուցեալ ծերէ՝ պչրութէ։
35. 16. յերկիրն Արարատեայ՝ մերձ ՚ի փառնն կապիոյ։

39. 18. Հաստատեն ՚ի վերայ նոցա դաշ-տամձև։
37. 24. տարաբաղդութք յարձակմամբ զեփ-ռամբք արշաւանքին։
41. 19. և անտանելի չեն յերբ անմասն։
41. 30. զն Հայոց արկածքն է՝ ասէ։
52. 6. զփառաց արէ։
43. 17. Անտիոքային կոչեն։
43. 21. ոչ Աղեքսանդրացին։
44. 3. դիպաչափութք նետից կարողք։
44. 29. Թէ կամիցիս սրտոտեաց պայծառելիկ գլոց։
45. 8. ժամ զառ ՚ի յայլոցն, որ ՚ի կե-րակրոց։
45. 23. զբաղմունթեան ընդանէ արտաքոյ քաղաքաց։
45. 28. խոկ եբեղեանցս ՚ի սեղան՝ և պաշտօն"։
46. 6. Քուշանաբար ցնծոյ ամբարձեալ"։
46. 15. ցեց վայրենայ եգիպտի ընդ ձոր-կատան։
46. 18. և զաշխարհն էր մինչև ՚ի լեռանն։
46. 26. որսալ զյաջողութէ առաջց։
46. 29. եղբօր կատակածանաց հարցո-ւած լեալ։
55. 26. յԱստուածաստանեայց, և այլոց եղեռնեցելոց, և վերջնադրելոյ եր-կրոյն ընտրեալոց։
56. 3. անծեալ լինելն քաղծութք խառ-նաղանձից։
56. 5. բաղդեալ լայնութէ, և քաղց-րութք։

57. 6. կրկնապատկս, եւ եռապատկս : ը
57. 16. զայլն զեզերբ ծովափնէիցն յաջմէ,
եւ յահեկէ քաղաքին, եւ ի բուն
դաշտ Շրջակային յարեւագոյն. եւ
զեմ արեւելեան, եւ Հիւսիսային,
եւ Հիւսիսարեւմտեան տեղւոյն զարդարեալ :
57. 19. Հանապազանէտոյ ՚ի պատուղս՝ եւ ՚ի
ծերկեա :
57. 24. բազմութիւն մարդկան ՚ի ներքս
ընակեցուցանէ :
57. 30. զմուշտարամուտս, ոմանս, եւ
դծոխելանելեօ .
59. 20. վաճառ տօռօփէ, եւ վավաշտո
պոռնկական :
68. 16. ՚ի Քաղաց, եւ ՚ի Պէտանեաց
աղանց :
69. 30. քանզի՝ ինչ այսոքիկ արք, ՚ի
մերոց :
70. 14. զանուն մա՚ի ներքոյ դրոշմեացուք
72. 14. ցուցումն զոյ նմանութէ յա_
սացեալդ :
73. 24. յարկեմտից հարաւոյ մերոյ :
74. 8. լինի՛ զԱրծրունիս, եւ զԳնունիս :
74. 17. յաղագս Տիրանայ, եւ որ ՚ի նմա_
նէ գործս :
76. 2. եւ ազգերեկ. ծայրիւ հերոց Ե_
րուանդեանս :
76. 8. որք բոլորամէն երգեկին :
76. 17. զկենցաղ մնացն ընձիւղ կըւեր
ոչ ըստ լաւագոյնս խանդայր,
եւ ոչ :

76. 21. յառաջագոյն դաշնաւոր՝ որ 'ի
Մարացն էր Աժդահակայ եղեւ:
78. 3. դիպուածն էառ տեսանել սքան
չելի:
78. 25. սրտին խորհրդութք՝ և նոսոյն
ընդ նմին, և զիրս աւհագին:
83. 20. զչարութիւն 'ի ներքոյ ստորայն
հինա:
84. 14. և զկործանումն խաղաղանալեալն:
87. 9. յուղարկել Թագաւորացն ըզ
քոյր իւր:
92. 24. իմաստուն՝ կամ հանճար առ_
տանօք:
93. 18. առաւել քան զԹագաւորութիւն առ_
նեա:
96. 13. արտաքս բերէ լեզուաւ:
97. 1. ումեք ոչ է հարոց ինէ:
100. 12. Փիլիպպեայ, և Ողիմպիադայ:
106. 10. հաստատէ յանդուգն յարձակն":
108. 7. ազգն՝ որ 'ի դաշտին Հերովսիայ:
109. 15. և որձանի քանից տղորկագու_
նաց:
111. 1. որք պարծանօք առաջին նորա
կրէին:
113. 9. զԱռան առ մեծ գետովն:
116. 1. և այսպիսեաց չորեցունց մր_
ժամանաւոր:
119. 9. և առ յապայ օրէնս 'ի մէջ
Արշակունեաց:
122. 3. յԵղեսեայ Գոհարինին լինել:
124. 2. զԿրիւսոս Թագաւոր Լիւդեացւոց:

129. 9. 'ի քառասներորդ ամի :
129. 23. Քրիստոնեայքն՝ որ եկեալ էին 'ի Յու-
նաց :
130. 18. և առաջի մեծամեծացն Թագաւորին :
131. 9. դշխոյին Հրէից Աղեքսանդրիա :
132. 10. պատերազմել ընդ Տիգրանայ ,
որոյ եկեալ՝ և ոչ պատահեալ Տիգ-
րանայ :
135. 18. իշխանութիւն գաւառին՝ ի նմանէ :
140. 13. ընդ զօրս Հայոց , որոյ հա-
սեալ յԱսորիս , փախստական ա-
նէ զզօրս Հայոց , և զՄեհրուժան թո-
ղեալ ընդդիմակաց Հայոց՝ մերձ
յԵփրատ :
141. 20. յանձնէ Անտոնիոս զՀերովդ-
դէս Սոսիոսայ :
142. 17. Բայց այլ ոչինչ գործ արար :
145. 8. եղև մեծ ցասումն Արշամայ
'ի վ̄ր Եդեսացւոց :
147. 7. ոչ վստահանալ 'ի նա արքայ ,
այլ առաքէ զնա 'ի հայս հաւա-
տարիմ նմա :
148. 22. ոչինչ կարէր առնել քաղաքին :
151. 17. առեալ պահապանութիւն զնդին
Հայոց :
152. 12. որք են Կարենեանք , և Սու-
րէնեանք , յայլոց
158. 16. Հրէայք փրկեցին զնա :
160. 11. եմուտ 'ի սուրբ Տաճարն իշխա-
նաւ Հրէից :
160. 27. Աշակերտն օրհնելոյն Յի , զոր

առաց

տալոյ տառապել ինչ այլոց , և .
161. 25. Թաղէի զԽոսրովայ ամն մե-
տաքսապատած ։
162. 28. Տէրութիւն քո գիտէ՛ որ ինչ
արժան է հրամայել ։
163. 15. Հաւատարիմ եղև քաղձոյ թէ
Աստուած է ։
164. 22. առաքել շայէոս յՆէմ փոխա-
նակ Պիղատոսի , զի լուծցի
նա պանդրգանօս յիշխանութէն ։
166. 4. լուծեալ է ժա. վմ ՅՆ ՔՆ ։
168. 14. Հրամայեաց մնալ ՚ի զինուորը
բացն ։
180. 6. իսկ ՚ի Հաւրանոյ կարքնաքելան
դաշտաց ։
182. 26. քեռաւուն Միհրդատայ . իսկ
յետ մահուանն Միհրդատայ՝ ոչ
ումեք տուեալ լինէր ։
183. 1, և զօրացն ամենեցուն պար-
գևս տատապաղէս ։
185. 13. կոտորուած անհնարին գնդին
Երուսաղեմայ ։
188. 8. պատժոց տալ դահճեկին ։
191. 28. յինքենէ յօժիւ իւրև ղեա-
ղաք Արքայանիստ ։
194. 16. Տեղ ոսկի՝ տեղայր ՚ի Փե-
սայութէն Արտաշիսի . տե-
ղայր մարգարիտ ՚ի Հարսնութէ
Սաթինկան ։ Քանզի ։
194. 27. անկածս այլ թուել բազց
զինելն ։

195. 7. Նախանձ բերելով ընդ ծերո-
նայն արգամայ ։
196. 16. բայց միայն անմշակք ոմանք,
և կրատերքը ։
198. 18. որ անուանեալ կոչի խորենոյց
վիղան՝ Պատիժահարգայաւառ,
որ է 4եղմանց լեառն ։
198. 22. ապստամբէին ՚ի նմանէ. և ՚ի
մերոյն արքայէ ։
200. 11. Քարձամայ ուրումն Արքայի
Վրաց, ապստամբեցուցանէ ։
201. 12. Զի թէև ծերագոյն էր՝ է-
րփառաւորդաղէս յորդորեաց ։
206. 22. քանզի ոչ այսպիսի էին ճա-
նաչիւր առ նոսա ։
208. 17. հանդերձ խորոյն Զիւգոս-
տանօք ։
214. 20. և կորէ զգեղջան հերան ։
217. 8. յաղջկանէ մօջէ իշխեցելոյ
կողմանցն ։
217. 12. նուաճեաց զՀայս, և արձա-
կեաց զՏիգրան ։
217. 26. պատերազմեալ Է նոյնս, որք
՚ի Կորճէից ։
219. 31. Այս-երուանդ առաջինն է
Սակաւակեացն ։
220, 10. Բայց Բէ՝ ըոչ ոյլք չեցին, ա-
սեմ զաա և կեալ ։
220. 22. և արամբք մարտիկօք, ցէր տեա-
թաւալ չայցաւցանէր զամբոխն ընդ
երեսս դաշտին, և ծիգ զհեա ։

221. 30.

221. 5. մի 'ի Հարիւրոց յամենեցունց
դեփանեայն պատանդս առնու։
224. 8. դարձուցից 'ի ձեզ, և զնեղ
թագաւ վաստաւորեցէց. վն որոյ
յանձն առեալ։
238. 26. որ սպանաւ յերկրոյն 'ի Ճա_
նիմ։
239. 11. անդրէն դարձուցանէ, և զամ
բաշխանոն 'ի վայր իջուցանէ բաց
'ի Նախարարէ։
243. 10. Մարկոսի Միաբանակեցի 'ի
Յագուածանէ։
244. 27. զհետ ընթանայ միասորի տու_
րումն, որում անուն էր Նի
կոմաքոս, և առաքէ յանապատ.
ինչ անդրանիկն։
247. 11. երդուեալ նմա Հօրն իմոյ 'ի
լոյսն, այլ վն անխտող զնեղ առ
նելոյ, հալածեցի զնա։
447. 26. անբաւութ ամօթոյ՝ և հրեշից։
252. 27. Կռուցեալ մարդասիրեաց նդ։
253. 21. Հրապուրեալ Սըոյն՝ նահա_
պետ ազգին Սկունեաց։
254. 4. որ անուանեալ կոչի՝ Սչխոն։
258. 25. և 'ի նախարարաց՝ յընկերաց երա
նելւոյն Նոունէոյ. ընդ որ հիա
ցեալ։
266. 5. Ամասիոյ Պոնտացւոց Եպիս_
կոպոս։
399. 12. Յովսէփ. քարեյարմար 'ի մեծ։



Ուղղագրութիւն սխալից առաւելց ՚ի վրիպ
մանէ աչաց տեսացելոց յայտնի
տպագրութեան մերում ։

	Ուղղագրելի ։	Ուղղագրեցեալ ։
24.	ղծառաւանութիւն .	ղժառաւանդութիւն .
51.	յայտնապէս .	յայտնապէս ։
57.	գրամբք ,	գրամբք ։
68.	Մեզացի .	Մեզացի ։
69.	Քաղզեացւոց .	Քաղդէացւոց ։
71.	Երուանդա .	Երուանդա ։
74.	ղանդեղ .	ղանդեղ ։
82.	յօժարութիւն .	յօժարութիւն ։
90.	կամաք .	կամօք ։
108.	արհանէ .	արձանէ .
121.	վրայ .	վկայ ։
124.	Արտաշէս .	Արտաշէս ։
133.	Թագաւորին .	Թագաւորին ։
135.	Քեռնւոյն .	Քեռւոյն ։
144.	Զ քաղանեմիդի .	՚ի քաղանեմիդի ։
167.	Սանատոռուկ .	Սանատրուկ .
168.	յղեաց ա—	Ադդէ ։
178.	՚ի քաղաքն .	՚ի քաղաքն ։
186.	՚ի դաստակերտսն .	՚ի դաստակերտացն ։
200.	Եղմուկ .	Աղմուկ ։
202.	Հռոմայեց .	Հռոմայեցւոց ։
202.	արարացեն .	արարացես ։

	Ուղղագրեմ ։	Ուղղագրեցեալ ։
205.	Զսորա .	'ի սորա ։
213.	զօրհնաւորքն .	զօրհնաւորն .
218.	'ի մէջ .	'ի մէնջ ։
224.	ժամանակին .	ժամանակիւ ։
226.	պատրաստօք .	պատարաղօք .
234.	Թագաւորու_ րութեն .	Թագաւորու_ թեն ։
251.	Հանդիպերաւ .	Հանդիպեցաւ ։
252.	յարեւամբ .	արեւամբ ։
255.	կարծանեաւ .	կործանեցաւ .
262.	միահմուռ .	միահամուռ .
274.	վաախճանեաւ .	վախճանեաւ ։
277.	կատադեաւ .	կատարեաւ ։
279.	զադդիտութեն .	զարդիտութեն ։
289.	Թուղթ .	Թուղթ ։
289.	Հաս Հաստատեաւ .	Հաստատեաւ ։
299.	հեփեօղ .	։ ։
300.	Համանէր .	Հաստանէր ։
305.	Լսողաց .	Լսողաց ։
311.	յերկիրս .	յերկրիս ։
322.	ապաքեաց .	առաքեաց ։
332.	մինջե ,	մինչե ։
333.	կշտամբէ .	կշամբէ ։
339.	դուամարեաց .	դուամարեաց ։
343.	ծառաց .	ծառոց ։
348.	աղաչակաց .	աղաչանաց ։
352.	'ի ժառայութեն .	'ի ծառայութեն ։
353.	Հեթանոոաց .	Հեթանոսաց ։

Ուղղագրելի :	Ուղղագրեցեալ :
358. Վահանայ .	Վահանայ :
367. Ճգնէին .	Ճգնէին :
370. Յարգոյ .	Յարգոյ :
380. Երթիցէք .	Երթիցիր :
388. Վրդպետել .	Վարդապետել :
393. գնդաւ .	գնդաւ :
393. գաղթն .	գողթն :
410. [illegible]էր .	լինէր :
417. զերկամաւս .	զեկամուաւ :
422. Հակառակօք .	Հակառակօղք :

յԱւելուածոյն :

5. Պառառու .	Պառաւոռ :
6. ոպ .	ո՛պ :
7. ատն .	ատն է :
7. Հմերնայմ .	Հմերային :